ՀՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Դոցենտ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

(1—429 թ. թ.)

ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1945

ՀՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(47.925)
Հ-41

Դոցենտ Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձեռագրի իրավունքով

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

(1—429 թ. թ.)

1273

ՀՍՍՀ ԳԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆ-Տ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т востоковед. АН Арм. ССР

ՀԵՌԱԿԱ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1945

Ա). ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ՀԻՄՆՈՒՄԸ ԵՎ ՏՐԴԱՏ Ա-ԻՆԸ

Հայաստանի քաղաքական դրությունը 1—50 թ.թ.

8 թվին Մ. (թ. ա.) Հռոմի և Պարսկաստանի միջև կնքվում է պայմանագիր, ըստ որի Պարթևները չպետք է միջամտեին Հայաստանի գործերին։ Այդ պայմանագրով դիվանագիտական խոշոր հաղթանակ էր տանում Հռոմի Օգոստոս կայսրը դրանով նա աստիճանաբար տիրում էր Հայաստանին, մի երկիր, որը ռազմա-ըստրատեգիական կարևոր նշանակություն ուներ Միջագետքի, Սիրիայի (Ասորիքի) և Փոքր Ասիայի վրա իշխելու համար։ Հայաստանի համար իրար դեմ մրցող երկու հզոր պետությունները՝ Հռոմը և Պարսկաստանը, աշխատում էին իրենց գերիշխանության տակ պահել այդ երկիրը, որպեսզի ապահովեն իրենց գրավումները Մերձավոր Արևելքում։ 8 թվի պայմանագրով՝ Պարսկաստանի չեզոքացումից հետո, Հռոմեական կայսրության դեմ պայքար մղող Արտաշիսյան դինաստիայի անկումը դառնում է անխուսափելի, և մեր թվականության սկզբին Հռոմը վերջ է տալիս Հայկական պետությանը։

Արտաշիսյան դինաստիայի անկումից հետո Հայաստանն ավելի քան 60 տարի կռվախնձոր է դառնում Հռոմի և Պարսկաստանի միջև. երկրի բախտը շատ հաճախ կապված էր այս կամ այն հզոր պետության քմահաճ կամքից։ Հայաստանն առաջին հերթին ընկավ Հռոմի գերիշխանության տակ։ Մեր էրայի մեկ թվականին՝ Արտաշիսյան դինաստիայի վերացումից հետո, Հռոմեական կայսրությունն աշխատում էր իր լիակատար տիրապետության տակ առնել Հայաստանը և դարձնել պրովինցիա։ Սակայն, հայ ժողովուրդը կայսրության այդ ձեռնարկումների մեջ տեսնելով իրեն սպառնացող վտանգը՝ կազմակերպում է ուժեղ դիմադրություն։ Մի կողմից այս, մյուս կողմից Հայաստանում հռոմեական քաղաքականության հաղթանակը Պարթևա-

կան Պարսկաստանի համար նշանակում էր Մերձավոր Արևելքում իր շահերի վտանգում, ուստի Տիգրոնի արքունիքն ամեն կերպ աշխատում էր արգելք հանդիսանալ այդ գործին։

Հռոմն իր լեգեոնների միջոցով վերջ տալով հայկական պետությանը, փորձում է Հայաստանը միացնել իր վասալ Մարաստանի թագավորությանը։ Օգոստոս կայսրն իր որդեգիր թագաժառանգ Գայոս Կեսարին արտակարգ լիազորություններով և մեծ բանակով ուղարկում է Արևելք՝ Առաջավոր Ասիայի մի շարք երկրները նվաճելու։ Մեր էրայի 2 թվին Գայոս Կեսարը Եփրատ գետի կղզիներից մեկում տեսակցություն է ունենում պարսից թագավոր Հրահատ 4-րդի հետ, որի նպատակն էր խաղաղ ճանապարհով լուծել երկու պետությունների միջև եղած վիճելի հարցերը։

Երկու պետությունների վիճելի խնդիրներից մեկը Հայաստանի հարցն էր։ Այս տեսակցությամբ բարձր կողմերը պայմանավորվում են, որ Հռոմն այլևս չի խառնվի պարթևների պետության ներքին գործերին, իսկ Պարսկաստանը չի խառնվի Հայաստանի գործերին, որով Հայաստանը փաստորեն անցնում է Հռոմի գերիշխանության տակ։

Գայոս Կեսարը հիմնվելով վերոհիշյալ համաձայնության վրա, նույն թվականին Հայաստանի թագավոր է նշանակում Ատրպատականի գահակալ Արիոբարզանին, որ ծագումով մար էր. Արտավազդի որդին և թշնամին էր Հայոց Արտավազդ 2-րդ թագավորին։ Սա ստացել էր հռոմեական կրթություն և հուսալի անձնավորություն էր կայսրության համար։ Սակայն, շատ շուտով հայ ժողովրդի մեջ բորբոքվեց վրեժխնդրության և անկախության ոգին, նա դիմեց զենքի և դուրս քշեց Արիոբարզանին, որը հազիվ մի տարի իշխեց (2—3)։ Հռոմեական թագաժառանգ Գայոս Կեսարը իր զորքը մտցրեց Հայաստան՝ ճնշելու հայերի ապստամբությունը և տիրելու այդ երկրի գանձերին, բայց Արտագերս բերդի պարիսպների տակ սպանվեց հայ նշանավոր զորավար Ադդոնի ձեռքով։ Հռոմայեցիները պատժեցին հայ զորավարին, ճնշեցին հայերի ապստամբությունը և կրկին անգամ Արիոբարզանին հաստատեցին հայկական գահի վրա, որը երկար չիշխեց, որովհետև հանկարծամահ եղավ։ Դրանից հետո Հռոմի ծերակույտը Հայաստանի գահը հանձնեց Արտավազդ 3-րդին, նպատակ ունենալով երկու թշնամի երկրները միավորել մի թագավորության մեջ։ Սակայն, հայերը 10 թվականին դարձյալ

ապստամբեցին Հռոմի այդ թեկնածության դեմ և սպանեցին Արտավազդ 3-րդին, որը նույնպես Ատրպատականի թագավորն էր, ծագումով մար։

Օգոստոս կայսրը դիմեց խորամանկության, նա 11—13 թ.թ. Հայաստանի գահի վրա նստեցնել տվեց իբր թե հայ գահաժառանգի, բայց իրականում նա ուներ հրեական ծագում։ Հայերը Հռոմի այս գործակալին դուրս քշեցին երկրից։ Այս անգամ խնկապես Հռոմի սենատը հայերի ըմբոստ ոգին հաշվի առնելով՝ ստիպված եղավ Հայաստանի գահը հանձնել Արտաշիսյան տոհմի ներկայացուցիչ Էրատո թագուհուն։ Սա, որ մի անգամ իր եղբայր Տիգրան 4-րդի հետ իշխել էր, այս անգամ երկար չի կարողանում կառավարել երկիրը, հազիվ մի տարի (14—15) հետո հեռանում է հայկական գահից։ Ըստ երևույթին նրա դեմ նույնպես դժգոհություններ են եղել։

Դրանից հետո Հայաստանի գահի վրա մոտ մի տարի նստում է Պարսկաստանի թագավոր Վոնոնը, որը հռոմեական քաղաքականություն վարելու համար գահընկեց էր եղել պարսկական մեծամեծների կողմից առաջ քաշված Ատրպատականի թագավոր Արտավան 3-րդի կողմից։ Արտավան 3-րդի և հայ իշխանների պահանջով Տիբերիոս կայսրը Վոնոնին հեռացնում է Հայաստանից, բայց Հայաստանում ուժեղանում է պարթևական ապդեցությունը, որին չէր կարող հանդուրժել Հռոմը։ Այդ պատճառով Տիբերիոս կայսրը 17 թվին մեծ լիազորություններով ու համապատասխան զորաբանակով, Արևելք է ուղարկում իր որդեգիր և թագաժառանգ Գերմանիկոսին, որին նույնպես՝ խնդիր էր տրված՝ նվաճել Արևելքը։

Գերմանիկոսի Արևելք գալով Կապադովկիայի և Կոմագենի պետությունները վերանում են և այդ երկրները դառնում են Հռոմեական կայսրության նահանգներ։ Հռոմի այս նոր դիկտատորն իր բանակով մտնում է նաև Հայաստան և հաստատվում Արտաշատ մայրաքաղաքում։ Նրա նպատակն էր Հայաստանի գործերը լուծել խաղաղ ճանապարհով և կարճ ժամանակվա ընթացքում, այդ երկիրը դուրս բերել պարթևների ազդեցությունից։ Նա պետք է նկատի առներ հայ ժողովրդի ազատագրական ձգտումները և Հայաստանի գահի վրա դներ մի այնպիսի անձնավորություն, որը պետք է հաշվի նստեր թե հայերի և թե հռոմայեցիների հետ։ Այդ թեկնածուն հանդիսացավ Պոնտոսի Պոլեմոն թագավորի որդի Զենոնը։ Հայերը մեծ ուրախությամբ ընդունեցին նրան,

որովհետև Զենոնը երկար ժամանակ եղել էր Հայաստանում, մեծացել ու սովորել էր այնտեղ և մանուկից էր եղել հայերի նիստ ու կացին, սովորություններին, որսորդություններին ու զվարճություններին։ Նա մանկուց ծանոթացել էր հայ ղեկավար կազմի հետ։ Հայերը նրա թագադրությունն ուրախությամբ ողջունեցին և նրան կոչեցին Արտաշես 3-րդ։ Զենոնը միաժամանակ ազգակցական կապ ուներ Հռոմի կայսերական ընտանիքի հետ և դրանով էլ մարմնավորում էր երկու երկրների շահերը։ Պարթևներն Արտավան 3-րդի գլխավորությամբ նույնպես ընդունեցին Զենոնի թագավորությունը, ուստի և միաժամանակ Մերձավոր Արևելքում և Հայաստանում խաղաղություն տիրեց։

Զենոն Պոնտացին 15 տարի (18—34) խաղաղ կառավարեց Հայաստանը, նա իր շուրջը համախմբեց երկրի ղեկավար կազմին, մասնակցում էր նրանց ուրախություններին, որսորդություններին և զինավարժություններին ու դրանով էլ ավելի էր գրավում հայ արիստոկրատ խավին։ Սրա ժամանակ թեթևանում են նաև Հայաստանից գանձվող հարկերը, որոշ չափով կարգավորվում է հողային խնդիրը։ Այդպիսով Զենոնի թագավորության տարիներին միաժամանակ դադարում է Պարսկա-հռոմեական մրցակցությունը Մերձավոր Արևելքում և Հայաստանում, որովհետև համաձայն կնքված պայմանագրի՝ պարթևները չպիտի միջամտեին Հայաստանի ներքին գործերին, իսկ Հռոմն էլ իր հերթին պարտավորվում էր չմիջամտել Պարսկաստանի ներքին գործերին։

Հռոմը հայերի հետագա ապստամբությունները կանխելու նպատակով Հայաստանում պահում է հռոմեական հատուկ բանակ և Գառնին դառնում է այդ բանակի կայանը։

Պարսկա-Հռոմեական համաձայնությունն իր ուժը պահում է մինչև Զենոնի (Արտաշես 3-րդի) մահը (34)։ Նրա մահվանից հետո Պարթևական Պարսկաստանի թագավոր Արտավան 3-րդն աշխատում է իր ազդեցության տակ դցել Հայաստանը։ Այդ նպատակով խախտելով համաձայնությունը՝ 34 թ. Արտավան 3-րդն իր եղբայր Արշակին բարձրացնում է հայկական գահի վրա։ Կայսրությունը չէր կարող հաշտ աչքով դիտել այդ երևույթը։ Ժամանակի կայսր Տիբերիոսն աշխատում է Վրաստանի Փարսման թագավորի միջոցով իր գործերը կարգավորել Հայաստանում։

Հայաստանից դեպի հյուսիս՝ Քուռ գետի ավազանում ձգված Վրաստանը բաժանված էր երկու մասի՝ դաշտային և լեռ-

նային։ Դաշտային մասում բնակչությունն զբաղվում էր երկրագործությամբ և նման էր հայերին ու մարերին, իսկ լեռնային մասում մեծ մասամբ հաստատված էին սկյութացիներ, սարմատացիներ, որոնք զբաղվում էին անասնապահությամբ և երկրագործությամբ։ Ստրաբոնի ասելով՝ մեր թվականությունից առաջ առաջին դարում Վրաստանի բնակչությունը բաժանվում էր չորս դասակարգերի. առաջինը դա ազնվականներն էին՝ թագավորի գլխավորությամբ։ Երկրորդ դասակարգը քրմերն էին, երրորդը զինվորականներն ու երկրագործները և չորրորդը՝ հասարակ ժողովուրդը, կամ արքայական ստրուկները։ Վրացիներն ապրում էին տոհմերով և ցեղերով, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր տոհմապետն ու ցեղապետը, որոնք կառավարում էին ցեղը կամ տոհմը և պահում նրա ունեցվածքը։ Վրաց ազգային ավանդության համաձայն՝ նրանց պետությունը կազմակերպել է Փառնավազը 3-րդ դարում մեր էրայից առաջ։ Մեր էրայի առաջին դարում Փարսմանը Հռոմի օգնությամբ Վրաստանի տարբեր մասերն իրենց ցեղերով ու տոհմերով միացրեց և ստեղծեց մի ուժեղ պետություն։ Ահա վրացական այս թագավորին են դիմում հռոմայեցիներն Արշակին Հայաստանից դուրս քշելու համար։ Դա միաժամանակ ցույց է տալիս, որ Վրաստանը որոշ կախման մեջ էր գտնվում Հռոմից՝ սկսած Պոմպեոսի դարաշրջանից։

Վրաց Փարսման թագավորը Հռոմի թելադրությամբ Կովկասյան մի շարք ցեղերից հավաքում է ռազմական ուժեր, կազմում մի մեծ բանակ և հարձակվում է Հայաստանի վրա։ Հայերը մի քանի ճակատամարտերում ջարդում են պարթևներին և դուրս քշում Հայաստանից, իսկ Արշակը հազիվ կարողանում է մի տարի իշխել, որովհետև Փարսմանի արշավանքի ընթացքում թունավորվում է իր դրանիկների կողմից։ Փարսմանը Հռոմի համաձայնությամբ Հայաստանի գահը հանձնում է իր եղբայր Միհրդատ Վրացուն (35)։ Պարթևաց թագավոր Արտավան 3-րդի դրությունն այդ ժամանակ ծանր էր ու խառը, որի համար ստիպված եղավ համաձայնվել Հայաստանում կատարված դեպքերի հետ։ Սակայն Հռոմի կայսր Կալիգուլան իր երկրի ծանր դրությունը հաշվի առնելով՝ Հայաստանը զիջում է պարթևներին, իսկ Միհրդատ Վրացուն Հռոմ կանչելով աքսորում է։ 37—41 թ. թ. Հայաստանը դուրս է գալիս Հռոմի ազդեցությունից և կառավարվում է պարսիկների կողմից նշանակված փոխարքաներով.

որոնք ինքնուրույն էին։ Սակայն, երբ Հռոմում Կալիգուլային հաջորդում է Կլավդիոսը, նա ուշադրություն է դարձնում Արևելքի վրա, աքսորից ետ է կանչում Միհրդատ Վրացուն, զորք է տալիս նրան և հրամայում գրավել Հայաստանը և դառնալ թագավոր։ Միհրդատն իր եղբայր Փարսմանի օգնությամբ հռոմեական և վրացական զորքերի գլուխն անցնելով՝ մտնում է Հայաստան, հաղթում փոխարքա Դեմոնաքին և պարթևներին դուրս քշում երկրից ու կրկին անգամ թագավոր դառնում (41)։ Դրանից հետո նա մոտ տասը տարի կառավարեց Հայաստանը, որովհետև Պարսկաստանը զբաղված էր արևելյան կողմում պատերազմներով և ներքին կռիվներով։

Սակայն, Միհրդատի թագավորության վախճանը եկավ իր սեփական տոհմից։ Փարսմանի փառասեր որդին՝ Հռադամիստն անհանգիստ էր անում հորը՝ ցանկանալով տիրել նրա գահը։ Ծերունի հայրը վախենալով փառասեր որդուց՝ նրան ցույց տվեց Հայաստանի գահը, որտեղ իշխում էր իր հորեղբայրը։ Հռադամիստը հոր հետ գաղտնի պայմանավորվելով, բայց իբր թե հորից հալածված, փախչում է Հայաստան և ապաստան խնդրում Միհրդատից։ Վերջինս ոչ միայն սիրով ընդունում է Հռադամիստին, այլև իր աղջիկ Զենոբիային տալիս նրան ու դարձնում իր փեսան և ավելի է ամրապնդում բարեկամությունը։ Սակայն, այդ կրկնակի ազգակցությունը չխանգարեց Հռադամիստին իր գաղտնի ծրագիրն առաջ տանելու։ Նա խորամանկությամբ ու շողոքորթությամբ իր կողմը գրավեց մի շարք հայ մեծամեծների, որոնք դժգոհ էին Միհրդատի քաղաքականությունից, ապա հոր հետ հաշտվելու պատրվակով մեկնեց Վրաստան, այնտեղից զորք վերցնելով գաղտնի հարձակվեց Հայաստանի վրա։ Միհրդատը սարսափած՝ իր կնոջ ու երեխաների հետ ապաստան գտավ Գառնի բերդում, հռոմեական կայազորի մոտ։ Հռադամիստը նախ գրավեց Արտաշատը, ապա պաշարեց Գառնին։ Խորամանկ Հռադամիստը կաշառեց Հռոմի բերդապահ զորավարին, որը նենգությամբ Միհրդատին համոզեց դուրս գալ ամրոցից և ապավինել Հռադամիստի մեծահոգությանը։

Հորեղբոր և եղբոր որդու կամ թե փեսայի ու աներոջ տեսակցությունը տեղի ունեցավ Գառնիի մոտ գտնվող անտառներից մեկում։ Փեսան պատվեց աներոջը, գրկեց ու համբուրեց և խոստացավ սրով ու թույնով չվնասել նրան։ Դրանից հետո տեղի ունեցան հաշտության բանակցությունները։ Սակայն, այդ

բանակցությունների ընթացքում Հռադամիստի մարդիկը հանկարծ գետին գլորեցին Միհրդատին ու շղթայեցին, ապա կնոջ հետ միասին գորգերի ծանր ծալքերի տակ խեղդեցին, առանց սրի ու թույնի։ Վերջում էլ սպանեցին նրա երեխաներին, որոնք փորձ էին արել ողբալ իրենց ծնողների վրա։ Հայ ժողովուրդը ոչ միայն դիմադրություն ցույց չտվեց Հռադամիստին, այլև քաջալերեց ու շատ դեպքերում էլ օգնեց նրան։ Այդ մասին Տակիտոսն ասում է. «Հասարակ ժողովուրդը, որին Միհրդատը դաժան էր պահում, հայհոյանք է թափում և սպառնում ծեծով...»։ Դա ցույց է տալիս, որ Միհրդատը իր դաժան քաղաքականությամբ ու ծանր հարկային կեղեքումներով ժողովրդին թշնամացրել էր իր դեմ։ Հռոմն էլ իր հերթին չպատժեց Հռադամիստին, որովհետև նա շատ շուտով հպատակություն հայտնեց կայսրությանը։ Վերջինիս համար միևնույն էր, թե Հայաստանի թագավորը կլիներ հորեղբայրը, թե եղբորորդին։ Նույնիսկ հռոմայեցիները գտնում էին, որ ինչքան շատ լինեն նման ոճիրները բարբարոսների մեջ, այնքան լավ կլիներ Հռոմի համար։ Այդպիսով 50 թվականին Հայաստանում արյան գնով թագավոր դարձավ Հռադամիստ Վրացին, որին, սակայն, չէր վիճակվել երկար իշխել այնտեղ։

Այդպիսով 1—50 թ.թ. թեև Հայաստանը կռվախնձոր է լինում պարսիկների և հռոմայեցիների միջև, բայց և այնպես հիմնականում գտնվում է հռոմեական տիրապետության ու ազդեցության տակ, որովհետև Հայաստանում գերազանցապես իշխում են կայսրության կողմից նշանակված թեկնածուները։ Սակայն, այստեղ պետք է ընդգծել երկու կարևոր հանգամանք։ Առաջին. այդ 50 տարիների ընթացքում Հայաստանում թագավորում են 13 գահակալ, որոնցից յուրաքանչյուրը միջին թվով իշխել է 3—4 տարի։ Այդ գահակալները, Զենոն Պոնտացուց բացի, բոլորն էլ սպանվել կամ դուրս են քշվել երկրից։ Երկրորդ, հատկանշական կողմն այն է, որ Հռոմը Հայաստանի գահը հերթականությամբ հանձնում էր հարևան երկրների գահակալներին կամ թագաժառանգներին, սկզբում՝ Ատրպատականին, հետո Պոնտոսին, ապա Վրաստանին, իսկ վերջում էլ՝ Կապադովկիային։ Կայսրության նպատակն էր այդ միջոցով իր տիրապետությունը հաստատ պահել Հայաստանում։ Վերոհիշյալ հանգամանքները ցույց են տալիս, որ հայ ժողովուրդը չի հանդուրժել օտար գահակալների տիրապետությունը։ Ճիշտ է, այդ

ղանակալների մի մասին երկրից դուրս են քշել Հռոմայեցիները կամ պարսիկները, բայց և այնպես հայ ժողովրդի մղած ազատագրական պատերազմները վճռական դեր են կատարել։ Դրանք միաժամանակ ցույց են տալիս, որ անկախության ձգտումները մեծ են եղել ժողովրդի մեջ. նա աշխատել է ձեռք բերել իր ազգային անկախությունը։

Տրդատը Հայաստանում

40-ական թվականներին Պարսկաստանի ներքին և արտաքին քաղաքական վիճակը դարձյալ ծանր էր, այդ պատճառով նա չկարողացավ գրավել Հայաստանի խնդրով և Միհրդատ Վրացին հնարավորություն ունեցավ երկրորդ անգամ իշխել ևս տասը տարի։ Տիգրոնի արքունիքը մի կողմից պատերազմական գործողություններով էր զբաղված արևելյան ժողովուրդների ու ցեղերի հետ, մյուս կողմից զբաղված էր ներքին դահակալական կռիվներով ու փոխարքաների ապստամբությունները ճնշելով։ Սակայն, Վոնոն 2-րդի որդիներից Վաղարշը (Վոլոգոզը), շնորհիվ իր եռանդուն գործունեության՝ կարողացավ ճնշել երկրի ներքին խռովությունները և վերջ տալ արևելյան պատերազմներին, իսկ 50 թվականին գրավեց պարթևների գահը։ Պարսկական դաժան ու գիշատիչ թագավորների մեջ սա միակն էր, որ շատ դեպքերում իրավունքն ուժից ավելի էր գերադասում։ Նա առաջ քաշեց ու մեծ տեղ տվեց զրադաշտական կրոնին, բարձրացրեց քրմերի հեղինակությունը երկրի ներսում։ Բայց դրանով նա իր թագավորությունն ապահով չէր համարում, վախենում էր, որ իր եղբայրները՝ Բակուրն ու Տրդատը գահի համար խռովություններ առաջ կբերեն իր դեմ։ Դրա առաջն առնելու համար նա պարսկական մեծամեծների համաձայնությամբ Բակուրին հռչակեց Ատրպատականի թագավոր, իսկ Տրդատին որոշեց տալ Հայաստանի գահը։

Վաղարշ թագավորն իր այս քաղաքականությամբ մի ձեռքով երկու ձմերուկ էր բռնում։ Նախ՝ դրանով իր եղբայրներին հեռացնում էր Պարսկաստանից և կանխում հնարավոր խռովությունները և երկրորդ՝ ուշադրություն էր դարձնում Հայաստանի վրա, ձգտելով դուրս բերել նրան կայսրության ազդեցությունից։ Վաղարշի այս ծրագիրը նույնպես Հռադամիստի նման հաջողությամբ են վերջանում 50—51 թ. թ. Պարսկաստանում։

Պարթևների այդ նոր քաղաքականությունը շատ սուր ընթացք է տալիս հայկական խնդրին և Հայաստանը կրկին ան-

գամ պայքարի առարկա է դառնում Հռոմի ու Պարսկաստանի միջև։ Վերոհիշյալ պայքարի մեջ պարթևների կողմից ոչ այնքան Վաղարշն էր, որքան վայելչակազմ ու գեղեցկատեսիլ գահի թեկնածու պատանի Տրդատը, որը պաշտոնով քուրմ էր։

Երբ Հռադամիստը նենգ ճանապարհով գրավեց Հայաստանի գահը, իսկ հռոմայեցիները փաստորեն լոկ դրդողի դերում մնացին, Վաղարշը դա համարեց Հռոմի թուլություն, և իր եղբայր Տրդատին 51 թվին բանակ տալով ուղարկեց Հայաստան՝ տիրանալու իրեն տրված գահին։ Հռադամիստ Վրացին առանց լուրջ կռվի պարտվեց և փախավ Վրաստան, իսկ հայերը ոչ միայն չօգնեցին նրան, այլև Արտաշատի ու Տիգրանակերտի դռներն ուրախությամբ բաց արին Տրդատի առաջ։ Հայ ժողովուրդը հանձինս Տրդատի տեսնում էր մի ուժ, որի միջոցով պիտի վերականգներ 50 տարի առաջ իր կորցրած անկախությունը։

Տրդատին ուրախությամբ ընդունելը և հռոմեական դահակալին Հայաստանից դուրս քշելը արդյունք էր ոչ թե Տրդատի անձի նկատմամբ ունեցած համակրանքի Հռադամիստի նկատմամբ ունեցած անձնական հակակրանքի, այլ արդյունք էր երկու երկրների վարած քաղաքականության տարբերության։ Խնդիրն այն է, որ Հռոմը և նրա գործակալը Հայաստանում վարում էին ծանր կեղեքման ու ստրկատիրական կարգեր տարածելու քաղաքականություն, այն ինչ Տիգրոնը և նրա դահակալ Տրդատն այդ նպատակը երբեք չեն հետապնդել։ Վերջիններիս ցանկությունն էր՝ վերականգնել Հայաստանի անկախությունը, նրա ռազմական ուժը և Հայաստանը պլացդարմ դարձնել Հռոմի դեմ, որը միշտ իր արշավանքներով սպառնում էր պարթևներին։ Այդ էր պատճառը, որ հայերը ավելի բարյացակամ էին դեպի պարթևները, որ մատնացույց է անում նաև Տակիտոսը։ Նա ասում է. «հայերը իրենց տեղադրությամբ և բարքերի նմանությամբ պարթևներին ավելի մոտ էին կանգնած և խառնված էին նրանց հետ ամուսնություններով...» (Տակիտոս)։ Իսկ Հռոմի պատմության մասնագետ Թ. Մոմզեն գրում է. «Թեև հելլեն ազգաբնակությունը Սև ծովի հարավային ափերին, Կապադովկիայում և Կոմագենում այնպիսի հաստատ հիմք է բռնել, որ կարող էր հռոմեական գերիշխանության դեմ դնել, բայց Հայաստանը հռոմեական բազմամյա իշխանության տակ դարձյալ անհելլեն երկիր մնաց, անխզելի կապերով կապված պարթևների պետությանը՝ հավատի ու լեզվի ընդհանրությամբ և ազնվական

ընտանիքների բազմաթիվ կապերով, տարազով ու սպառազինությամբ»։

Անշուշտ, վերոհիշյալ երկու հեղինակների տվյալների պատմական ճշմարտությունն այն է, որ, իրոք, հայերը սովորություններով, նիստ ու կացի որոշ նմանություններով, խնամիական կապերով կապված էին պարսիկների հետ և իրենց երկրի աշխարհագրական դիրքով մոտ էին Պարսկաստանին։ Բայց երկու հեղինակներն էլ սխալվում են, երբ այդ հանգամանքներն են պատճառ համարում նրանց մոտիկության։ Թե հայերի ու պարսիկների մոտիկության պատճառն ինչ է եղել, մենք արդեն նշել ենք։ Այստեղ որոշ անճշտություններ կան նաև Մոմզենից մեջ բերված հատվածի սկզբի մասում։ Նա շփոթում է հռոմեական ազդեցությունը հելլենիզմի հետ։ Ճիշտ է, հռոմեական պետությանը հաջողվում է իր քաղաքականությունը տարածել ու ամրապնդել Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում, սակայն նա անհաջողության է ունենում Հայաստանում։ Իսկ հռոմեական ազդեցության տարածումը հելլենիզմ չէ։ Ինչ վերաբերում է հելլենիզմի տարածմանը, ապա կարող ենք ասել, որ Հայաստանը նույնիսկ Հռոմից էլ առաջ իրենից ներկայացնում էր հելլենիստական երկիր։

Տրդատը Թեև 51 թվին աշնանը թողեց Հայաստանին, բայց սովի և ժանտախտի պատճառով շատ շուտով ետ վերադարձավ։ Դրանից օգտվելով՝ Հռադամիզը նորից ներխուժեց Հայաստան, թողեց այն և անխտիր սկսեց կոտորել, տանջել ու կողոպտել ժողովրդին, որպես պարսիկներին համակիրների։ Բայց լցվեց համբերության բաժակը, ոտքի կանգնեց ըմբոստ ժողովուրդը և Հայաստանից դուրս քշեց Հռադամիզին։ Տրդատն այդ իմանալով՝ անմիջապես իր զորքով նորից մտավ Հայաստան և աշխատեց ամրապնդել իր իշխանությունը հայերի օգնությամբ։ Հռոմեական օգնությունների սպասելով՝ Հռադամիզի հետ փախչում էր նրա կին Զենոբիան, որը հղի էր և չէր կարող տանել ճանապարհի դժվարությունները։ Թշնամիների ձեռքը գերի չընկնելու համար, կնոջ պահանջով, Հռադամիզը սրախողխող է անում Զենոբիային և ձգում Արաքս գետը։ Բայց հայ հովիվները գետափին կիսամահ վիճակում գտնում են Զենոբիային, պահում իրենց մոտ, վերքերը բուժում և երբ Տրդատը կրկին անգամ մտնում է Հայաստան, նրան են հանձնում Զենոբիային, որին Տրդատը մեծ հարգանքով պահում է Արտաշատ մայրաքաղաքում։ Սա ցույց է տալիս, որ ինչքան Հռադամիզն ու հռոմայեցիները դաժան էին դեպի անմեղ ժողովուրդը, այնքան հայերը և Տրդատը բարի են եղել և Զենոբիայի նկատմամբ։

Տրդատը 52 թվին տիրելով Հայաստանին՝ ոչ միայն ընդմիշտ վռնդում է Հռադամիզին, այլ և հենվելով հայերի լայն աջակցության վրա՝ սպառնում է Հռոմեական կայսրության Փոքր Ասիայի հողերին։

Պարթև-հայկական այս հաջողությունները լուրջ վտանգ էին սպառնում Հռոմեական կայսրության ասիական պրովինցիաներին։ Մանավանդ Հայաստանում պարսկական ազդեցության հաստատումը սպառնալիք էր դառնում Հյուսիսային Միջագետքի և Ասորիքի համար։

Կորբուլոնի արշավանքը

Հռոմեական կայսրությունն այս շրջանում գտնվում էր իր զարգացման բարձր կետում։ Արիստոկրատ խավը և կայսերական պետական ապարատը պահանջում էին խոշոր միջոցներ։ Այս բանն ըմբռնելու համար կարևոր է հիշատակել հետևյալ մոմենտները։ Հռոմը դարձել էր աշխարհի խոշոր տնտեսական, քաղաքական կենտրոնը, ուր հոսում էին զանազան ապրանքներ ոչ միայն նրան ենթակա վայրերից, այլ և հարևան երկրներից։ Համաձայն Պլինիուսի վկայության՝ Հռոմը խոշորագույն սպառման շուկա էր չինական մետաքսի, իսպանական բրդի, Ալեքսանդրյան գեղեցիկ գույնզգույն ապակեղենի և նուրբ կտավի, հունական կղզիների գինու և ձկնեղենի, ալպյան պանրի, արաբական համեմունքների, անուշահոտ իրերի և այլ վայրերից բերված թանգարժեք քարերի, մարգարիտների ու մարմարիոնի։ Հռոմի արիստոկրատիան, որը հիշյալ ապրանքների սպառողն էր, կարիք ուներ խոշոր միջոցների։ Ոչ պակաս միջոցներ էին անհրաժեշտ «հաց ու զվարճալիք» մատակարարելու այն ապաղասակարգայնացած մասսային, որը գոյացել էր դեռևս հանրապետության ժամանակ քայքայված մանր արտադրողներից և որը շարունակվում էր աճել կայսրության օրոք, քանի որ շարունակվում էր լատիֆունդիաների ընդարձակումը։ Վերջապես հսկայական միջոցներ էին կլանում նաև կայսերական գվարդիան, բազմամարդ արքունիքը, մանավանդ բանակն ու վարչական բարդ ապարատը։

Այդ բոլոր միջոցները ձեռք էին բերվում տարկական հոծ մասսայի գիշատիչ, անողոք ու սիստեմատիկ շահագործման և

հատկապես ասիական պրովինցիաների դաժան կեղեքման միջոցով։ Վերոհիշյալ տարրերի ու գավառների շահագործման վրա էր հիմնված Հռոմի կայսրության ուժը, այդ կայսրության հենարանը հանդիսացող ստրկատեր կալվածատերերի, վաշխառուների ու վաճառականների սոցիալական հզորությունը, ինչպես և նրա ամբողջ կուլտուրան։

Ահա թե ինչու Պարթևական Պարսկաստանի կողմից Առաջավոր Ասիայում հռոմեական պրովինցիաներին ու նրա գերիշխանության տակ գտնվող երկրամասերին սպառնացող վտանգն անհրաժեշտ էր դարձնում, որ կայսրությունը լուրջ և վճռական գործողությունների դիմեր, մանավանդ, որ 52—54 թ. թ. անհաջողության էին մատնվել վրաց Փարսման թագավորի միջոցառումները՝ պարսկական ազդեցությունը Հայաստանից վերացնելու ուղղությամբ։

54 թ. Կլավդիոսի մահվանից հետո Հռոմում կայսր է հռչակվում 17-ամյա Ներոնը, որը Բյուրոս և Սենեկա խորհրդականների ցուցումներով պատերազմական պատրաստություն է տեսնում Պարթևների դեմ։ Նա ամրապնդում և պատրաստ է պահում Հայաստանը շրջապատող և Հռոմին ենթակա երկրների ռազմական ուժերը, ինչպես նաև Սամոսատից մինչև Եփրատ տարածվող Կոմագենի, Ծոփաց աշխարհի, Փոքր Հայքի, Պոնտոսի և Վրաստանի թագավորությունները։ Հռոմը միաժամանակ 58 թվին Արևելք է ուղարկում մի խոշոր բանակ, հրամանատար նշանակելով Կապադովկիայի և Գաղատիայի կուսակալ, Արևելքին լավ ծանոթ Դոմիտիոս Կորբուլոնին, տալով նրան մեծ լիազորություններ ու դիկտատորի իրավունք։ Արևելյան բոլոր վասալներին անխտիր հրամայված էր իրենց զորքերով օգնել նոր զորավարին։

Կորբուլոնը նախքան պատերազմական գործողություններ սկսելը, հաշտության բանակցություններ է առաջարկում Պարսկաստանին։ Վաղարշն այդ միջոցին զբաղված լինելով իր երկրի ներքին ապստամբությունները ճնշելու գործով՝ ընդունում է Կորբուլոնի առաջարկությունները, ուղարկում է դեսպաններ, բայց հաշտության ձևակերպումը ձգձգում է և Տրդատին էլ չի կանչում Հայաստանից։ Հռոմեական զորավարը շուտով համոզվում է, որ պարթևները փաստորեն իրեն խաբում են, խզված է հայտարարում բանակցությունները, ապա պատերազմ է հայտարարում Տրդատին և 59 թվին 30 հազարանոց բանակով Եկեղյաց գավառից մտնում է Հայաստան։ Միաժամանակ տարբեր կողմերից ներխուժում են նաև Հռոմի վասալ երկրների զորքերը։ Վրաց Փարսման թագավորը, որը Հռոմին դուր գալու համար գլխատել էր իր որդի Հռադամիսին, հարձակվում է Հայաստանի հյուսիսային գավառների վրա, ապա հարձակում են գործում Մոսխերի և Կոմագենի թագավորների զորքերը։ Տրդատը Վաղարշից անհրաժեշտ օգնություն չստանալով՝ կռվում է միայն հայկական զորքերով, օգտվելով երկրի նպաստավոր պայմաններից։ Նա աշխատում էր թշնամուն նեղել մանր կռիվներով, հանկարծակի հարձակումներով և ուտելիքի ու ռազմամթերքի պաշարները ոչնչացնելով, հռոմայեցիների կապը Սև ծովից կտրելով, որպեսզի այնտեղից պարեն չստանան։

Սակայն, Տրդատի ռազմական ուժերը գնալով սկսում են թուլանալ, թշնամին մտնում է Բարձր Հայքը։ Տրդատը նեղն ընկնելով՝ ստիպված է լինում ետ քաշվել, բայց միաժամանակ դեսպանների միջոցով սպառնում է Կորբուլոնին, թե երբ Վաղարշից օգնություն ստանա, այն ժամանակ վատ կլինի հռոմայեցիների դրությունը, որոնք չեն հարգում նրա պայմանագրերն ու խաղաղասիրական ձգտումները։ Հռոմեական զորավարն իր հերթին դեսպանների միջոցով տեղեկացնում է Տրդատին, որ եթե նա ուզում է գործը խաղաղությամբ վերջացնել, ոչ թե դիմի պատերազմի, այլ պետք է Հայաստանի թագը կայսրից խնդրի։ Այդ պայմանին համաձայնվելով՝ Տրդատը նշանակված վայրում ներկայանում է Կորբուլոնին, բայց նրան շրջապատված տեսնելով մեծ զորաբանակով, կասկածելով նրա անկեղծությանը հետ է վերադառնում իր բանակը։ Դրանից հետո Կորբուլոնն անցնում է հարձակման, իսկ Տրդատը հայկական զորքերը մի քանի մասերի բաժանելով՝ աշխատում է դիմադրություն ցույց տալ և կասեցնել թշնամու հաղթարշավը, մինչև որ Վաղարշն օգնություն ուղարկեր։

Տրդատի բոլոր միջոցառումները թույլ չտալ թշնամուն առաջ շարժվել, մատնվում են անհաջողության. հայկական փոքրաթիվ զորքերով հնարավոր չէր կռվել թշնամու գերազանց ուժի դեմ։ Կորբուլոնն արագ զորաշարժումներով գրավում է մի շարք ամրոցներ ու բերդեր, Տրդատը ստիպված է լինում քայլ առ քայլ ետ քաշվել դեպի Արտաշատ, իսկ նենգավոր թշնամին կրնկակոխ հետապնդելով նրան՝ մտնում է Այրարատյան երկիրը և հասնում մայրաքաղաքի պարիսպներին։ Տրդատը վերջին փորձն է անում կանգնեցնել թշնամուն Արտաշատից քիչ հեռու,

բայց ուժ ու կարողություն չունենալով՝ ստիպված է լինում 59 թվի վերջին թողնել Հայաստանը և գնալ Ատրպատական, իր եղբայր Բակուրի մոտ, իսկ Կորբուլոնը գրավում է Արտաշատը և 59—60 թ. թ. ձմեռում այնտեղ, ապա գարնանը, կարգադրում է ոչնչացնել ու այրել քաղաքը։

Նա խորտակել տվեց ամուր պարիսպները, միջնաբերդը հոյակապ շենքերը, որոնք ամրոցների տեղ կարող էին ծառայել։ Իր այդ բարբարոսությունն արդարացնելու համար նա ասում էր, թե քաղաքը շատ մեծ է, ինքն էլ անհրաժեշտ քանակով զորք չունի, որ թողնի մայրաքաղաքի պաշտպանության համար։ Դա, իհարկե, արդարացում չէր, այլ իր վայրագությունը քողարկելու հիմար պատճառաբանություն։ Իրականում նա ավերեց քաղաքը, որպես ռազմական ամրություն երկրի կենտրոնում, որպեսզի Հայաստանի միջնաշխարհը զրկվի անվտանգ գործներ կայսրության համար։

Կորբուլոնը մայրաքաղաք Արտաշատն ավերելուց հետո բանակը շարժում է դեպի հարավ՝ գրավելու Տիգրանակերտ քաղաքը։ Նա ճանապարհին ապստամբ է սփռում չորս կողմը, ամենուրեք ավերում ու թալանի է ենթարկում երկիրը, կոտորում բնակչությանը, հատկապես նրանց, որոնք համակրել էին Տրդատին, մինչև անգամ թագավորանոցներից հայերին հանում է և կոտորում։ Սակայն, ժողովուրդը հեզ ու խոնարհ չի մնում այդ բարբարոսի առաջ. նա դիմում է զենքի։ Ճանապարհին Մարդ ցեղը, որ ռազմիկ տոհմ էր Հայաստանում և բնակվում էր Մարդաղի գավառում, որը տարածվում էր Արածանիի վերին հովտում, կազմակերպեց ուժեղ դիմադրություն։ Հայ ժողովրդի ազգային-ռազմական խոշոր կենտրոն էր Տարոնը։ Այստեղ հայ իշխանները նույնպես կազմակերպեցին ուժեղ դիմադրություն, բայց դաժան թշնամին կանգ չէր առնում ոչ մի բանի առաջ, թեկուզ իր համար ծանր կորուստներով նա առաջ էր տանում իր ծրագիրը։ Կորբուլոնը բարբարոսաբար հաղթահարելով հայերի դիմադրությունը՝ գրավում է Մարդաղի գավառն ու Տարոնը և անխնա կոտորած սարքում, մինչև անգամ բնակիչներին ամրոցներից, բերդերից, լեռնային քարանձավներից դուրս է հանում ու կոտորում։ Իր այդ վայրենի արարքով ու հաղթանակներով թշնամին հասնում է Տիգրանակերտ, Հայաստանի երկրորդ կենտրոնը։ Կորբուլոնն առանց լուրջ դիմադրության գրավում է քաղաքը, բայց հայկական զորքը միջնաբերդում ամրանալով շարունակում է դիմադրել։ Հռոմեական լեգեոնները մեծամեծ կորուստներով

միայն կարողանում են ընկճել այդ դիմադրությունը և գրավել քաղաքի միջնաբերդը։ Կորբուլոնը պատժում է անխտիր բոլոր ըմբոստներին ու Տրդատին համակրողներին, արյունոտ դատաստան է տեսնում հայերի հետ ու ճնշում նրանց բոլոր դիմադրությունները։ Տրդատն Ատրպատականից փորձ արեց ետ գրավել իր գահը, բայց պարտվելով նորից ետ շպրտվեց Հայաստանի սահմաններից։ Այդպիսով Կորբուլոնը տիրում է Հայաստանին և իր տարած հաղթանակների մասին մի ընդարձակ զեկուցագիր է ուղարկում Հռոմ, կայսրին։ Հայաստանի ետ գրավման առթիվ Հռոմում տեղի են ունենում ցնծության և ուրախության տոներ։

Դրանից հետո Կորբուլոնը Ներոնի հրամանով հռոմեական քաղաքականության հին եղանակի համաձայն Հայաստանի թագը հանձնում է Կապադովկիայի Արքեղայոս թագավորի թոռ Տիգրանին, որը մեծացել ու կրթվել էր Հռոմում։ Ներոնի կարգադրությամբ Կորբուլոնը միաժամանակ ի հաշիվ Հայաստանի հողերի առատ պարգևներ տվեց իր վասալ տերություններին։ Այդպիսով փաստորեն երկրի ծայրամասային գավառներն անջատվում են և Հայաստանը որոշ չափով անդամահատվում է։ Կորբուլոնը, հայ ժողովրդի այդ ոխերիմ թշնամին, իր բացառիկ դերն ավարտելուց հետո անցնում է Սիրիա, որի կառավարիչ-կուսակալն էր նշանակվել կայսրի կողմից։ Նա Տիգրան 6-րդի տրամադրության տակ թողնում է 1000 զինվոր, իսկ մնացած զորամասերը տանում է իր հետ։

Հայ ժողովուրդը չհամակերպվեց Տիգրանին և չիրեց նրան. նրա դեմ նորից սկսեց դժգոհել և բարձրացնել ապստամբություն։ Տիգրանը կարողացավ իշխել հազիվ մեկ ու կես տարի (66—61 թ. թ.)։

Տրդատի վերադարձը Հայաստան եվ Պետոսի արշավանքները

Պարթևները տրտնջում էին Հայաստանում տեղի ունեցած անցքերի մասին, պարսից ավագանին դժգոհում էր Վաղարշ թագավորից, դժգոհում էր հատկապես Տրդատը, որը փաստորեն զրկվել էր Հայաստանի գահից։ Պարսկաստանում առանձին լուրջ դժգոհություն առաջ բերեց նորապսակ Տիգրան 6-րդի արշավանքը դեպի Ադիաբեն—Ասորեստան։ Տրդատը դժգոհելով ասում է. «...անգործունեությամբ չէ, որ պահվում են մեծ պետությունները, այլ մարդկանց ու զենքերի մրցակցությամբ։ Մարդկանց բախտի գագաթնակետում

ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА

այն է ավելի արդարը, որն ավելի ուժեղ է: Մասնավոր ընտանիքների գործն է՝ իրենը պահել, իսկ ուրիշինը վեճի առարկա դարձնելը կազմում է թագավորների փառքը» (Տակիտոս):

Վաղարշ Թագավորը, հաշվի առնելով վերոհիշյալ դժվարությունները, վերջ է տալիս վրկանների հետ տեղի ունեցող պատերազմներին և իր ուշադրությունը դարձնում է դեպի Արևմուտք: Նա հրավիրում է պարսից մեծամեծների ժողով, որտեղ ասում է. «Հռոմայեցիները խանգարում ու խախտում են խաղաղությունը, որը երբեք չեն խախտած իրենց համար հաջող կերպով, իսկ այժմ խախտել են իրենց ի կորուստ: Ես չեմ բացասում, որ ես միշտ ավելի ցանկացել եմ մեր պապերի նվաճումը պահել արդարությամբ՝ քան արյունով, իրավունքով՝ քան զենքով: Եթե դանդաղկոտությանս պատճառով բաց եմ թողել, կուղղվեմ արիությամբ» (Տակիտոս): Այս ասելուց հետո նա մեծամեծների ներկայությամբ Տրդատին օծում է Հայաստանի թագավոր և նրա գլխին դնում է թագ: Այսպիսով Տրդատը, որ մինչ այդ Հայաստանի գահի թեկնածու էր, այժմ դառնում է թագավոր: Միաժամանակ նրան տալիս է զորք և 61 թվին ուղարկում է Հայաստան՝ դուրս քշելու այնտեղից Տիգրան 6.-րդին, իսկ ինքն էլ առանձին զորաբանակով շարժվում է դեպի Հյուսիսային Միջագետք: Խորամանկ Կորբուլոնը երկու լեգեոն զորք է ուղարկում Տիգրանին օգնելու և դիմում է կայսրին՝ պատերազմը վարելու և Կապադովկիան կառավարելու համար նոր զորավար ուղարկել, իսկ ինքն իր զորամասերով մոտենում է Եփրատին, որպեսզի պարսկական զորքերը չմտնեն Սիրիա: Կայսրին գրած նամակում նա պատճառաբանում է, որ ինքը Սիրիայի կուսակալն է. հազիվ կարողանա իր երկրի սահմանները պաշտպանել պարսիկների հարձակումներից, բայց իրականում նա երկյուղ էր կրում, որ գալիք պատերազմներում տանուլ կտա նախկին պատերազմներում հեշտությամբ ձեռք բերած փառքը:

Թեև Կորբուլոնը պատերազմական գործողությունների լուրջ պատրաստություն է տեսնում, բայց վախենալով, որ կարող է այս անգամ պատերազմը տանուլ տալ, դեսպան է ուղարկում Վաղարշի մոտ՝ գործը հաշտությամբ լուծելու համար: Իսկ մինչ այդ, Տրդատը, Հայաստան մտնելով, պաշարում է Տիգրանակերտ քաղաքը, որտեղ ամրացել էր Տիգրանը:

Հռոմայեցիներն ամուր պահպանեցին քաղաքը. պարսիկները շատ հաճախ ջարդ կրելով հետ էին շպրտվում քաղաքի պարիսպ-

ներից: Պարսկական զորքը միաժամանակ նեղվում էր ուտելիքից, որովհետև մորեխը ոչնչացրել էր հացահատիկի արտերը: Վաղարշը, հաշվի առնելով վերոհիշյալ աննպաստ պայմանները պարսիկների համար, համաձայնվում է հաշտություն կնքել Կորբուլոնի հետ, պայմանով, որ նախքան կայսրի հետ դաշնագրություն կնքելը Տիգրան 6-րդը ետ կանչվի Հայաստանից, Հայոց թագավոր ճանաչվի Տիգրանը, որն իր հերթին պատրաստ է ճանաչելու նաև Հռոմի գերիշխանությունը, իսկ պարթևները պետք է վերացնեն Տիգրանակերտի պաշարումը:

61 թվին Կորբուլոնն ընդունեց Վաղարշի առաջարկած պայմանները, հռոմեական զորքերը դուրս հանեց Տիգրանակերտից, հայերն էլ համակրելով պարթևական թեկնածուին՝ զենքի դիմելով դուրս քշեցին Հայաստանից Տիգրան 6-րդին, և Տրդատն իր զորքով մտավ Տիգրանակերտ:

Ներոն կայսրը մերժեց Կորբուլոնի կնքած վերոհիշյալ պայմանագիրը, այդ պատճառով պարթևները նոր պատերազմ հայտարարեցին հռոմայեցիներին: Կայսրն այս անգամ պարթևների դեմ պատերազմական գործողությունները ղեկավարելու գործը հանձնեց Պետոսին, որը մի մեծամիտ և ապաշնորհ զորավար էր: Պետոսին տվեց երեք լեգեոն և Կապադովկիայի, Պոնտոսի ու Հռոմի մյուս վասալների զորքերը: Նա ծրագրում էր կարճ ժամանակվա ընթացքում դուրս մղել պարթևներին Հայաստանից, վերջ տալ հայերի ինքնավարության ու անկախության ձգտումներին և Հայաստանը դարձնել Հռոմեական կայսրության մի նահանգ:

61 թվի աշնանը Պետոսն իր բանակն անց է կացնում Եփրատ գետը և մի քանի գավառ ու մանր բերդեր գրավելուց հետո անմիջապես իր հաղթանակի մասին փքուն զեկուցումներով տեղեկացնում է Հռոմին: Այս բանակը շարժում է դեպի Տիգրանակերտ, որտեղ գտնվում էր Տրդատը՝ հայ-պարթևական զորքերով: Բայց շուտով հարավից Տրդատին օգնության է հասնում Վաղարշն իր զորամասերով և երկուսով միասին մեծ ջարդ են տալիս Պետոսի բանակին ու քշում մինչև Տավրոսի լեռները: Դրանից հետո հռոմեական զորքերը շարժվում են դեպի հյուսիս: Բայց վրա հասնող Հայաստանի ցրտերի պատճառով ձմեռում են Արշամաշատ բերդում ու Հռանդեա վայրում, այժմյան Խարբերդ քաղաքի մոտերքը:

62 թվի գարնանը պարթև-հայկական զորքերը հանկար-

ծակի հարձակվում են հռոմայեցիների վրա և մեծ ջարդ են տալիս ու շրջապատում Պետոսի բանակը: Սարսափահար եղած Պետոսն օգնություն է խնդրում Կորբուլոնից: Վերջինս, որ թշնամություն ուներ Պետոսի նկատմամբ, խոստանում է օգնել, բայց չի կատարում իր խոստումը, նա միայն բավարարվում է Եփրատի անցքերը պահպանելով: Սակայն, իմանալով, որ հռոմայեցիների դրությունը ծանր էր, դանդաղ շարժվում է դեպի Հայաստանի սահմանները: Բայց մինչ Կորբուլոնի օգնության հասնելը Պետոսը, որ իր բանակով շրջապատված էր հայ-պարթևական զորքերով, նեղն ընկնելով հաշտություն է խնդրում: Վաղարշը հայոց Վասակ զորավարին և Ադիաբենի թագավորին, որպես հայերի և պարթևների կողմից դեսպան ուղարկում է Պետոսի մոտ՝ պայմանագիրը կնքելու: Այդպիսով 62 թվին կնքվում է երկրորդ դաշնագրությունը, ըստ որի 1. Հռոմեական բանակը պետք է հեռանա Հայաստանից և վերադարձնի գրաված բոլոր վայրերն ու բերդերը: 2. Հռոմեական բանակը պետք է զինաթափ լինի, բոլոր զենքն ու ռազմամթերքը և պարենը հանձնի Հայաստանին: 3. Պարթևներն ու հայերը հանձն են առնում օգնել զինաթափ եղած հռոմայեցիներին՝ ապահով կերպով հեռանալու Հայաստանից: 4. Հռոմեական զորավարները պետք է օժանդակեն հայ-պարսիկ դեսպաններին՝ կայսրի մոտ պայմանագիրը շուտով հաստատելու:

Վերոհիշյալ պայմանագիրը հայ և պարթև դեսպանների միջոցով Վաղարշն ու Տրդատն անմիջապես ուղարկում են Հռոմ հաստատելու: Բայց նախքան նրա վավերացումը հայերն ու պարթևները Վաղարշի և Տրդատի գլխավորությամբ սկսում են կենսագործել Հռադամիայի պայմանագիրը: Հայերը շրջապատելով հռոմեական բանակը և կտրելով բոլոր ճանապարհները, սկսում են զինաթափ անել զինվորներին: Հռոմեական զինվորներից խլում են զենքերը, ուտելիքն ու պարենը, հագուստը և նրանց կողոպտած բոլոր ավարը: Հայերը մինչև անգամ զինաթափ արված զորքին ստիպում են անցնել իրենց սրերի տակից, որը հավասար էր ստրկության: Հռոմեական բանակը այդ անպատվությունից ազատվելու համար փախուստի է դիմում. ցրիվ են գալիս լեգեոնները և հեռանում Հայաստանից, իսկ Տրդատը տեր է դառնում երկրին:

Նահանջի ճանապարհին Պետոսը հանդիպում է Կորբուլոնին և խնդրում նրան, որ միասին նորից հարձակվեն Հայաստանի

վրա և նա գրավեն այն, սակայն Կորբուլոնը մերժում է, ասելով, որ կայսրից հրաման չունի:

Հռոմում տեղեկություն չունեին, թե ինչ է կատարվել Արևելքում: Աշխարհակալ մեծ պետության մայրաքաղաքը Պետոսի ուղարկած զեկուցագրի հիման վրա, որ 15 օր առաջ էր տեղ հասել, զբաղված էր հաղթական կամարներ կապելով և հաղթանակի տոների նախապատրաստություններ տեսնելով: Ահա այդ ժամանակ հայ-պարթևական դեսպանները հասան Հռոմ և հայտնեցին Պետոսի կնքած անպատվաբեր պայմանագրի մասին: Արևելքում տեղի ունեցած Հռոմի համար ամոթալի անցքերը, ծանր տպավորություն թողին քաղաքացիների վրա: Զարմացավ կայսրը, զարմանք հայտնեցին և նրա սենատի անդամները: Հռոմն այդ անպատվեր դաշնագրությունն ընդունել չէր կարող: Ուստի թե կայսրը և թե սենատը մերժեցին պայմանագիրը և նորից Կորբուլոնին հրամայեցին նվաճել Հայաստանը և վերջ տալ Հռոմա-պարթևական վեճերին Արևելքում: Միաժամանակ նրանք հայ ու պարթև դեսպաններին հասկացրին, որ եթե Տրդատն անձամբ Հռոմ գնա, կճանաչեն նրան Հայաստանի թագավոր: Սա ցույց է տալիս, որ Հռոմն իր դիրքերն արդեն զիջելու էր հայ-պարթևական ռազմական ուժի առաջ:

Հռանդիայի դաշնագրությունը

Կորբուլոնն ստանալով կայսերական բարձրագույն հրովարտակը և պարթևների հետ կնքած պայմանագրի բովանդակությունը՝ մի նոր և ավելի մեծ բանակ է կազմում և 63 թվի ամռանն անցնում է հարձակման, Մելիտենե քաղաքի մոտից նա անցնում է Եփրատ գետը և մտնում Հայաստան: Նորից նա սկսում է նեղել հայերին ու նրանց իշխաններին: Բայց հայ ժողովուրդը, տարված իր անկախության գաղափարով, նորից զենք է բարձրացնում դաժան թշնամու դեմ: Սկսվում են կատաղի կռիվներ: Կորբուլոնը նեղում է հայերին, պատրաստվում է Ծոփաց աշխարհի վրայով մտնել պարթևների երկիրը և լուրջ հարված հասցնել Վաղարշին: Բայց շուտով նրա մոտ են գալիս հայ-պարթև դեսպանները և հաշտության առաջարկ անում: Կորբուլոնը որ նման առիթի էր սպասում, քանի որ քաջ գիտեր, որ վերջի վերջո պարտվելու է, անմիջապես դադարեցնում է պատերազմական գործողությունները, պատանդ է ուղարկում պարթևների մոտ և իր մոտ է կանչում Տրդատին՝ բանակցություններ վարելու համար:

Կորբուլոնի և Տրդատի տեսակցությունը տեղի է ունենում այն վայրում, որտեղ ջարդվեց Պետոսի բանակը, այսինքն Հռանդիայում: Բարձր կողմերը 63 թվին համաձայնության գալով՝ առանց երկար ու բարակ վեճերի կնքում են մի նոր պայմանագիր, որ հայտնի է դառնում Հռանդիայի անունով: Ըստ այդ պայմանագրի՝ Հայաստանի թագավորը պետք է լիներ Տրդատը, իսկ թագը պետք է ստանար Հռոմից: Պայմանագիրն ստորագրելուց հետո կողմերը համբուրվելով բաժանվում են:

Երեք օրից հետո տեղի է ունենում զորահանդես. մի բարձր բլուրի վրա դրված էր կայսրի պատկերը: Տրդատը զոհեր է մատուցում, ապա զորքի ներկայությամբ խոստում է տալիս, որ պետք է գնա Հռոմ և անձամբ կայսրի ձեռքից ընդունի Հայաստանի թագը: Ապա գլխից վերցնում է արքայական խույրը, դնում կայսրի պատկերի առաջ և ասում, թե այլևս այդ խույրը չի կրի, մինչև այն նորից անձամբ կայսրից չընդունի: Այնուհետև Կորբուլոնն ի պատիվ Տրդատի՝ մեծ ճաշկերույթ է տալիս, տեղի են ունենում խնճույքներ, ուրախություն, որից հետո յուրաքանչյուր կողմը վերադառնում իր է տեղը: Այդպիսով 63 թվի Հռանդիայի դաշնագրությամբ վերջանում են Պարթևա-հռոմեական այն երկարամյա պատերազմները, որոնք մղվում էին Հայաստանի համար, բայց փաստորեն կռվող կողմերից ոչ մեկին չհաջողվեց գրավել Հայաստանը:

63 թվին Հռանդիայի դաշնագրությունը մի կոմպրոմիս էր Հայաստանի համար մրցող երկու երկրների միջև, դա հատկապես մեծ զիջում էր Հռոմի կողմից: Պարթևները թագավորացնելով՝ ենթադրում էին, որ Հայաստանը կպահեն իրենց ազդեցության տակ, իսկ հռոմեացիները թագ տալով, կամ թե թագի իրավունքն իրենց ձեռքը պահելով՝ մտածում էին, թե Հայաստանին ենթակա կպահեն իրենց գերիշխանության ներքո, որովհետև կարծում էին, թե Հռոմից թագ ստացող Հայաստանի գահակալը չի կարող դուրս գալ Հռոմի քաղաքականության ազդեցության տակից: Այդպիսով Հռանդիայի պայմանագրի երկյակի բնույթով յուրաքանչյուր կռվող կողմն իր շահերի պաշտպանությունն էր տեսնում: Բայց իրականում, եթե խորամուխ լինենք վերոհիշյալ պայմանագրի բովանդակությանը, պարզ ու որոշ կտեսնենք, որ մրցող երկու երկրներն էլ ձեռք են քաշում Հայաստանից, զիջելով այն իր բնիկ տերերին՝ հայերին, այսինքն Հռանդիայի պայմանագրով փաստորեն հաղթանակով դուրս է

գալիս հայ ժողովուրդը, որովհետև Հայաստանը մի կողմից դուրս է գալիս Հռոմի գերիշխանությունից և դադարում է նրա պրովինցիա լինելուց, իսկ մյուս կողմից՝ դուրս է գալիս Պարսկաստանի խիստ ազդեցությունից և ձեռք է բերում անկախություն միայն բուֆերային վիճակով:

Հռանդիայի դաշնագրությունը վերջացավ կոմպրոմիսով, որովհետև երկու երկրներից որևէ մեկին չհաջողվեց մյուսի ձեռքից խլել Հայաստանը և ենթարկել իր ազդեցության. միայն մեկը գահի թեկնածուն, իսկ մյուսը թագ տալու իրավունքն իր ձեռքը պահելով ձևական իրավունք ունեին Հայաստանի վրա, մի իրավունք, որ վճռող դեր չէր կարող կատարել հայ կյանքի համար:

Անշուշտ, Հռանդիայի դաշնագրության կոմպրոմիսային բնույթով վերջանալու գործում մեծ դեր խաղաց ինքը՝ հայ ժողովուրդը, մի բան, որ շատ ուսումնասիրողներ անտես են արել: Իր երկրի անկախությունը վերականգնելու համար պարթևական զորքերի հետ կողք-կողքի՝ Կորբուլոնի և Պետոսի զորաբանակների դեմ 50-ական թվականներից սկսած՝ կռվում էր նաև հայ ժողովուրդը: Պետոսի լեգեոններին շրջապատելու, զինաթափ անելու, նրանց գրաված կողոպուտը խլելու գործում մեծ դեր խաղացին հայ գյուղացիները: Մենք արդեն նշել ենք, որ Տրդատը թեև Պարսկաստանից էր գալիս, բայց նա չէր եկել որպես պարթևական արքունիքի կառավարիչ: Հայաստանը պարթևական պետության մի նահանգի վերածելու, երկիրը ճնշված պահելու ու մշտապես պարթևներին ենթակա դարձնելու համար: Նա եկել էր Հայաստան՝ այնտեղ ստեղծելու իր համար առանձին թագավորություն, որ շատ քիչ կախում ունենար պարսկական պետությունից, որովհետև նա իր եղբայր Վաղարշի հետ կնքած պայմանագրով պետք է ստանար ոչ թե Հայաստանի կառավարչի պաշտոնը, այլ այդ երկրի գահը, որտեղ պիտի ստեղծեր իր սեփական ինքնուրույն թագավորությունը: Այդպիսով, Տրդատի թագավոր դառնալու սուբյեկտիվ անհատական ձգտումները համընկնում էին հայ ժողովրդի իղձերին ու գաղափարներին: Պարզ էր, որ նա պետք է սիրվեր հայերի կողմից և Հռանդիայի դաշնագրությունը պիտի բխեր հայերի ու Տրդատի առաջադրած պայմաններից: Տրդատը իր գործունեությամբ փաստորեն արտահայտում էր հայ ժողովրդի ձգտումներն ու իղձերը: Հռանդիայի պայմանագիրը դա հայ ժողովրդի երկարամյա պայքարի արդյունքն էր, պայքար, որ նա մղում էր հռոմեական նվաճող-

ների դեմ, իր կորցրած անկախությունը վերականգնելու համար:

Տրդատի մեկնումը Հռոմ եվ վերադարձը

63 թվի Հռանդեայի դաշնագրությունից հետո Տրդատը մոտ երկու տարի զբաղվեց Հայաստանի ներքին գործերով, պետական ապարատի կազմակերպումով, բանակի ստեղծումով, հողային խնդիրը և իշխանների իրավունքները կարգավորելով: Դրանից հետո նա մեկնեց Պարսկաստան, տեսակցեց իր մոր ու եղբայրների հետ, ապա նորից վերադարձավ Հայաստան, կազմեց մի մեծ շքախումբ, բաղկացած 3000 հոգուց, որի կազմի մեջ մտնում էին իր կինը, Վաղարշի և Բակուրի որդիները, հայ և պարթև ազնվականներ, իշխաններ ու զորավարներ և շատ ու շատ հռոմայեցի ուղեկիցներ:

Տրդատն իր այդ շքախմբով 65 թվի աշնան շատ հանդիսավոր կերպով ճանապարհ ընկավ դեպի Հռոմ: Կայսրը կարգադրել էր հայոց թագավորին ցույց տալ շքեղ ընդունելություն: Յուրաքանչյուր իշխանում նրան ընդունում էին արքայավայել: Նա գնում էր ցամաքով, որովհետև որպես զրադաշտական կրոնի պաշտոնյա-քուրմ, հրաժարվեց ծովով գնալ. ջրով ճամփորդելը համարվում էր պղծություն: Հայաստանից մինչև Հռոմ նա գնաց ցամաքով — ձիով: Նրա կողքից գնում էր իր կինը՝ դեմքը քողով ծածկված, գլխին դրած ոսկե սաղավարտ ապարոշի նման: Ճանապարհը տևեց ինը ամիս, ճանապարհածախսը, օրեկան երկու հարյուր հազար ֆրանկ, հոգում էր Հռոմը:

Հռոմայեցի պատմագիրները Դիոն-Կասիոսը մանրամասն նկարագրել է Տրդատի ճանապարհորդությունը: Նրա ասելով, երբ շքախումբը հասնում է Իտալիա, կառք նստելով ուղևորվում է դեպի Նեապոլ քաղաքը, որտեղ գտնվում էր Ներոնը: Տրդատը կայսրին ներկայանալիս հռոմեական սովորության համաձայն վայր չի դնում իր սուրը, այլ բավականանում է միայն պատյանի մեջ խրելով և կայսրին երկրպագություն անելով, որովհետև Վաղարշը պահանջել էր, որ Տրդատն ընդունվի իբրև հյուպատոս, ոչ իբրև պարտվող: Ներոնը, ի պատիվ Տրդատի, կազմակերպում է սուսերամարտերի շքեղ խաղեր ու պատիվներ: Ապա այնտեղից նրան առաջնորդում է Հռոմ՝ թագադրելու համար:

Երբ հասնում են Հռոմ, ողջ քաղաքը դուրս է գալիս տեսնելու հայոց թագավոր Տրդատին, որն իր բարձր հասակով ու գրավիչ տեսքով հիացնում է քաղաքացիներին: Թագադրու-

թյունը պիտի տեղի ունենար Հռոմի գլխավոր հրապարակում — Ֆորումում, բայց նշանակված օրը ամպամած ու անձրևային եղանակ էր, ուստի հետաձգեց և կազմակերպեց մոտակա մի հարմար օր, երբ երկինքն ավելի պայծառ էր ու արևոտ, որպեսզի թագադրությունը շքեղ լինի և շատ մարդ դուրս գա հրապարակ տեսնելու այդ ակտը: Գայ-Սվետոնի տրակվելն իր «12 ցեզարների կենսագրությունը» աշխատության մեջ Ներոնի բաժնում հետևյալ ձևով է նկարագրում Տրդատի թագադրությունը Հռոմում:

«Նրա (Ներոնի) սարքած հանդեսներից խիստ արժանի է հիշատակության նաև Տրդատի մուտքը Հռոմ: Հայաստանի այս թագավորին նա հրապուրեց գեղեցիկ խոստումներով և մտադրվեց կայսերական հրամանով նշանակված հատուկ մի օր ժողովրդին ցույց տալ այդ բանը: Սակայն, ամպամած եղանակի պատճառով նա հետաձգեց այդ օրը, բայց այդ երթը կազմակերպեց մոտակա մի հարմար օր: Ֆորումի հրապարակում տաճարների շուրջը կանգնեցված էին զինյալ պատվո պահակներ, իսկ ինքը (Ներոնը) նստել էր գահի վրա և հագած էր հաղթական զգեստ, շրջապատված ռազմական զինանշաններով ու դրոշներով:

Տրդատը դեպի նա առաջացավ մի թեք կամրջակով և ծունկ չոքեց նրա առջև: Ներոնը վերցրեց նրան աջ ձեռքով և համբուրեց: Թագավորը՝ Տրդատը դիմեց նրան (Ներոնին) մաղթանքով, իսկ Ներոնը վերցրեց նրա գլխից խույրը և դրեց ապարոշ (դիադեմ) ըստ որում, նրա մաղթանքը նախկին պրետորը լատիներեն թարգմանելով արտասանեց ժողովրդի առջև: Ապա նրան տարան թանգարան, որտեղ նա դարձյալ մաղթանքով դիմեց Ներոնին, վերջինս նորից նստեցրեց նրան իր աջ կողմը: Այդ առթիվ ժողովուրդը ողջունեց նրան, որպես իմպերատորի, նա Կապիտոլ տարավ դափնե պսակը և փակեց Յանուսի կրկնակի դռները, «որ կարծես թե ոչ մի պատերազմ չէր եղել»:

Ինչպես երևում է նկարագրությունից, Տրդատի թագդրության օրը շատ շքեղ է եղել Հռոմում: Ոչ միայն ոսկով ու ծիրանով էր զարդարված Ֆորումի հրապարակը, այլև մոտակա կտուրները լիքն էին բազմությամբ, և Տրդատի թագադրության օրը հռոմայեցիները կոչեցին «ոսկե օր»:

Ներոնը Տրդատի թագադրության առթիվ նրան ասում է.

«Իմաստությամբ վարվեցիր, որ անձամբ եկար ինձ մոտ, որովհետև այն թագավորությունը, որ ես եմ տալիս քեզ, ոչ հայրդ է քեզ թողել և ոչ էլ եղբայրներդ են քեզ համար ձեռք բերել։ Ահա ես եմ քեզ տալիս հայոց թագավորությունը և կարգում հայոց թագավոր և դու էլ, եղբայրներդ էլ, իմացեք, որ ես թագավորություն խլելու և պարգևելու իշխանություն ունեմ»։ Այդ ասելով՝ նա թագը դնում է Տրդատի գլխին և նստեցնում իր կողքին դրված գահի վրա, որն ավելի ցածր էր իր գահից։ Ժողովուրդն այդ ակտը ընդունում է մեծ ուրախությամբ ու աղաղակներով։ Դրանից հետո զորահանդեսը վերջանում է, իսկ սենատը, ի պատիվ Տրդատի թագադրության Պոմպեոսի անվան թատրոնում կազմակերպում է թատերական խաղեր, որոնց մասնակցում է նաև Ներոն կայսրը, որ շատ վատ տպավորություն է թողնում հայոց թագավորի վրա։ Այսպես տրվում են ճաշկերույթներ, տեղի են ունենում տոնակատարություններ և զորահանդեսներ։

Այժմ հարց է առաջ գալիս. ինչ նպատակ էին հետապնդում Ներոն կայսրի վերոհիշյալ ձեռնարկումները, որ Տրդատին մի թագ տալու համար Հայաստանից բերել տվեց մինչև Հռոմ և կատարեց մեծամեծ ծախսեր։ Անշուշտ, ինչքան «անխելք էր» Ներոնը, այնքան խելոք էր Հռոմի սենատը, որը միշտ էլ կարող էր խելքի բերել «անխելք» կայսրներին։ Այստեղից էլ պարզ է, որ կայսրն ու սենատն այդ բոլոր գործողություններն ու ծախսերը կատարում էին որոշ նպատակների համար, որ ցույց տան Հռոմի քաղաքացիներին, թե հռոմեական լեգեոններն Արևելքում Հայաստանի համար կռվելիս, չեն պարտվել, որ Արևելքի թագավորները նորից գալիս են Հռոմ, չոքում են կայսրների առաջ և թագ են աղերսում, որ Ներոնը կարող է մարդկանց ու երկրներին թագավորություն շնորհել ու վերցնել, ինչպես ինքն է ասում։ Դրանով նա ուզում է բարձրացնել Արևելքում ընկած իր սրի ու զորքի հզորության փառքը և ցույց տալ քաղաքացիներին, որ Հռոմը դեռևս շատ ուժեղ է։ Բայց այժմ հարց է առաջ գալիս. իսկ ինչ պատճառով էր Տրդատն իր ընտանիքով մեծ նեղություններ կրելով գնում Հռոմ։ Անշուշտ նա էլ իր նպատակն ուներ։ Տրդատի խնդիրն էր՝ գնալ Հռոմ, ստանալ հայոց թագը, ձեռք բերել Հռոմի վստահությունը և ապահով կերպով թագավորել Հայաստանում։ Միաժամանակ Հռոմից ձեռք բերել մեծ գումար՝ Կորբուլոնի կողմից քանդված ու

ավերված երկիրն ու Արտաշատ մայրաքաղաքը վերաշինելու համար։ Իսկապես, Տրդատը ոչ միայն ստացավ առատ նվերներ ու պարգևներ, այլև պատկառելի մի գումար, քանդված Արտաշատ քաղաքի վերաշինության համար և մեծ թվով վարպետ բանվորները, որոնք պետք վերակառուցված քաղաքը շքեղացնեին արձաններով, Հռոմի հոյակապ արձանների նման։ Համանաբար այդ ժամանակ է քանդակվել Տրդատի մարմարյա արձանը, որ գտնվում է Փարիզի Լուվրի նշանավոր թանգարանում։ 66 թվին Տրդատի շքախումբը մեծամեծ նվերներով ու գումարներով վերադառնում է Հայաստան և իրավականորեն հիմք է դնում հայ Արշակունիների դինաստիային Հայաստանում, բայց Տրդատը փաստորեն իշխում էր 63 թվից։

Տրդատ 1-ին

Տրդատ 1-ինի (66—100) հիմնած հայ Արշակունյանց թագավորությունը Հայաստանում, որը պարթև Արշակունիների մի ճյուղն էր, կես դարից ավելի խաղաղ կյանք ունեցավ։ Թեև այդ թագավորության թագի իրավական տերը Հռոմն էր և Հայաստանի ռազմական ուժերը մնում էին Կապադովկիայի հռոմեական զինվորական միավորման մեջ, բայց Հռոմը չէր խառնվում երկրի ներքին կյանքին։ Տիզբոնի պարթևական արքունիքը նույնպես չէր միջամտում Հայաստանի ներքին գործերին։ Տրդատ 1-ինը և նրա մի քանի հաջորդները փաստորեն անկախ քաղաքականություն էին վարում։ Ինքը Տրդատը քանի որ իր թագադիր կայսր Ներոնը (54—68) և եղբայր Վաղարշ 2-րդը (50—78) կենդանի էին, հաշվի էր առնում երկուսի կարծիքներն էլ։ Բայց երբ նրանք մահանում են, Հայոց թագավորը դուրս է գալիս թե Հռոմի և թե Պարսկաստանի ազդեցությունից ու լրիվ կերպով վարում է ինքնուրույն քաղաքականություն, մի քաղաքականություն, որը բխում էր Հայաստանի ընդհանուր պահանջներից։

Տրդատը Հռոմից վերադառնալուց հետո առաջին հերթին զբաղվում է պետական ապարատի և հողային հարցի կարգավորմամբ։ Դեռ նախքան Արշակունյանց դինաստիայի հաստատումը՝ Հայաստանում պայքար էր գնում երկրի հողերի շուրջը։ Հնագույն շրջանի «մախաղները», «ասպետները», «տերերը», «սատրապները», որոնք ցեղերի առաջնորդների տիտղոսներն էին Հայաստանի էթնիկական տարբեր կազմ ունեցող շրջաններում, պայքարում էին իրենց գավառների ինքնուրույնության համար։ Նրանցից, ոմանց հաջողվում է պատմական Հայաստանի սահ-

մանային մասերում իշխել որպես բդեշխներ, որոնք դեռ իրավական հող էին ստացել Տիգրան 2-րդի ժամանակ։ Այսպես, Գուգարաց, Ծոփաց, Աղձնյաց, և Նոր-Շիրական բդեշխները, Արտաշեսյան դինաստիայի անկումից հետո, իրենց երկրամասերում դառնում են անկախ իշխաններ։ Նույն ձևով երկրի կենտրոնական մի շարք գավառներում առաջ են գալիս առանձին իշխանություններ՝ նախարարություններ։ Առաջին դարի (70-ական թ.թ.) հեղինակ Պլինիուսին ասելով՝ Մեծ Հայքը բաժանված էր պրեֆեկտուրների, որոնք ստրատեգներ էին կոչվում և նրանց թիվը հասնում էր 120-ի։ Վերոհիշյալ ստրատեգները, մեր էրայի առաջին դարում, արդեն ձեռք էին բերել հողային տարածություններ և բացի զինվորական ուժ ունենալուց, ունեին նաև սեփական հողային կալվածք։ Յուրաքանչյուր ստրատեգ իր տիրապետած հողում կամ գավառում իր համար շինում էր բերդեր, ամրոցներ, որոնց շուրջը համախմբվում էին գյուղերը։ Արտագերս ամրոցի ստրատեգ Ադդոնը, որը սպանում է հռոմեական զորավար Գայոս Կեսարին, ձեռք էր բերել հողային մեծ տարածություն։ Պլինիուսի մատնանշած ստրատեգներն աստիճանաբար ձևավորվում են որպես գյուղացիությանը շահագործող դաս։ Այս դասն էր, որ Տրդատի պարթևական զորքերի հետ կողք-կողքի կռվում էր հռոմեական լեգեոնների դեմ։ Տրդատ 1-ինը պարթևական օրինակի հիման վրա, վերոհիշյալ ստրատեգներին ձևակերպում է որպես երկրի հողատեր կալվածատերեր և նրանց վրա հիմնված կառուցում է իր պետական ապարատը պարթևական պետության ձևով։ Հիմնում է արքունիք՝ համապատասխան պալատականներով ու խորհրդականներով և կազմում է արքունի զինվորական գնդեր՝ իրենց համապատասխան հրամանատարներով ու զինվորականներով։

Անշուշտ, Տրդատն իր հետ Պարսկաստանից բերում է որոշ քանակի պարթև ազնվականներ ու պաշտոնյաներ, սակայն դրանք հետագայում բոլորն էլ ձուլվում—Հայանում են։ Այս շրջանից հայոց լեզվի մեջ մուտք են գործում պարսկերեն շատ բառեր, հատկապես անուններ և պետական նշանակություն ունեցող տերմիններ։

Պատմահայր Մովսես Խորենացու պատմության մեջ Վաղարշակ թագավորին վերաբերող բոլոր գործերը, մեր կարծիքով, վերաբերում են Տրդատ 1-ին։ Խորենացու ասելով՝ Վաղարշակը, ըստ մեզ՝ Տրդատը, կենցաղային կարգեր է հաստա-

տում Հայոց աշխարհում, սահմանում է թագավորական օրենքներ, զինվորական կարգեր՝ երկրի տարբեր մասերում։ Տրդատ 1-ինի ժամանակաշրջանում աստիճանաբար կազմավորվում են Արշակունիների դինաստիայի շրջանի ֆեոդալական ֆորմացիայի գրեթե բոլոր նախադրյալները։ Այդ ֆորմացիան—հասարակարգը Հայաստանում իր արտահայտությունն է գտել նախարարական կարգերի մեջ, որը ձևակերպվում է հայ Արշակունիների ժամանակաշրջանում։

63 թվին Կորբուլոնի և Տրդատի միջև Հռանդիայում կնքված դաշնագրությամբ Պարսկաստանի և Հռոմի միջև վերջնականապես կարգավորվում է Առաջավոր Ասիայի երկրներին տիրապետելու հարցը։ Այդ դաշնագրության հետևանքով հյուսիսային Միջագետքի մեծ մասը և Ասորիքը (Սիրիան) մնում է Հռոմեական կայսրության տիրապետության տակ, իսկ Հայաստանի հարցը, ինչպես տեսանք, կարգավորվում է մի կոմպրոմիսով, որն ապահովում է երկու մրցակից տերությունների շահերը Հայաստանում։

Արշակունիների դինաստիայի շրջանում հայկական պետության սահմանները կազմում էին, արևմուտքից՝ Եփրատ գետը, Փոքր Հայքը և Կապադովկիան, հյուսիսից՝ Մոսկիքյան և Թրիալեթի լեռների հարավային փեշերը, Սոմխեթի լեռները և Վրաստանը, արևելքից՝ Կուր գետն ու Աղվանից աշխարհը, հարավ-արևելքից՝ Ատրպատականը և Ուրմիո լճի հարավ-արևմտյան ափերը, իսկ հարավից՝ Կորդվաց լեռները և Հյուսիսային Միջագետքը։ Հայաստանի հարավ-արևմտյան մասերում Ծոփք, Անգեղտուն, Աղձնիք, Կորդուք և Ծավդեք գավառները մշտապես վեճի առարկա են եղել Հռոմի և Պարսկաստանի միջև և Հայ Արշակունիների տերության ժամանակ հաճախ դուրս էին մնում Հայաստանի սահմաններից։

Հռանդեայի դաշնագրությունից հետո կես դարից ավելի տևող խաղաղ ժամանակաշրջանում երկրի ազգաբնակչությունը հնարավորություն է ձեռք բերում լծվելու շինարարական աշխատանքի։ Տրդատ 1-ինի, իբրև Արշակունիների դինաստիայի հիմնադրի և պետության կազմակերպչի գործունեության մասին հիշատակություն պահպանվել է հայ ժողովրդական ավանդությունների մեջ, որոնցից օգտվել է Մովսես Խորենացին, որը ինչպես նշեցինք, Արշակունիների դինաստիայի հիմնադրին շփոթում է Վաղարշակի հետ։ Այդ ավանդությունների մեջ խոս-

վում է բերդաքաղաքների կառուցման, շինարարական աշխատանքների ծավալման և որ, կարևորն է, մարդաշատ ու գլխավոր գյուղերի ու ավանների առաջացման մասին։ Մարդաշատ գյուղերի ու ավանների վերաբերյալ տրված այդ տեղեկությունները վկայում են տնտեսական կյանքի զարգացման մասին, առանձնապես գյուղատնտեսության բնագավառում։

Արշակունիների թագավորության առաջին շրջանում, ինչպես նշել ենք, իրական ձևավորում են ստանում նոր կազմավորող ֆեոդալական հարաբերությունները։ Այս հանգամանքը մեծապես նպաստավոր էր առանձին գավառների տերերին ուժեղացնելու իրենց հողամասերի վրա ապրող բնակչության կախյալ դրությունը։ Այս են հաստատում Արշակունիների դինաստիայի առաջին շրջանի նախարարությունների ձևակերպման և Արշակունիների արքունիքում մտցված կարգերի մասին Խորենացու և Փավստոս Բյուզանդի տված վկայությունները։ Առանձին գավառների տերերը կարգվում են որպես նախարարներ, որոնց արքունիքում տրվում են պաշտոններ, կարգավորվում են նախարարների և արքունիքի փոխ. հարաբերությունները։

Հարևան պարթևական Պարսկաստանի, Ատրպատականի և Աղվանքի թագավորությունների միջև ստեղծված բարեկամական հարաբերությունները և Առաջավոր Ասիայում՝ տիրող խաղաղությունը նպաստում են Արևելքի և Արևմուտքի միջև կատարվող տրանզիտային առևտրի զարգացմանն ու ընդարձակմանը։ Մեր էրայի առաջին դարի երկրորդ կեսից Մոնսուն քամու գյուտով խոշոր չափով ծավալվում է նավային հաղորդակցությունը Պարսից ծոցի և Հնդկաստանի միջև։ Եփրատի վրայով անցնող երկու առևտրական ճանապարհներից Մծբինից (Նիսիբինից) Միջերկրական հասնող տրանզիտային առևտրական ճանապարհը խոշոր նշանակություն է ստանում։ Դրանով է մասամբ բացատրվում այն ուժեղ ու երկարատև պայքարը, որ հետագայում մղվում են Պարսկաստանի և Հռոմի միջև հյուսիսային Միջագետքին և Ասորիքին տիրելու համար։ Պարսկաստանն աշխատում էր իր պետության արևմտյան սահմանը հասցնել Եփրատին, իսկ Հռոմը ձգտում էր իր պետության արևելյան սահմանը հասցնել մինչև Տիգրիս գետը։

Կորբուլոնի կողմից հրկիզված ու քանդված Արտաշատ մայրաքաղաքը , Ներոն կայսեր տված դրամով և Հռոմից իր հետ բերած վարպետների միջոցով Տրդատ 1-ինը վերակառուցում է

և անվանում Ներօնեա։ Բայց քաղաքի հին Արտաշատ անունը մնում է գործածական։ Վերաշինվող Արտաշատ քաղաքը դառնում է Եկբատանից դեպի Սև ծովը և Վրաստանը գնացող տրանզիտային առևտրի երկրորդ հիմնական քարավանային բազան և ռազմական ճանապարհի հանգույցը, որով Արտաշատը կապվում է Արևելքի և Արևմուտքի հետ։

Տրդատի ժամանակ շինվում են նաև այլ քաղաքներ, քաղաքատիպ վայրեր, գյուղեր, ավաններ, բերդեր և ամրոցներ։ Այդպիսով, հարավի քաղաքատիպ բնակավայրերի աստիճանական զարգացման հետ միասին Հայաստանի միջնաշխարհը դառնում է երկրի տնտեսական զարգացման գլխավոր կենտրոնը։ Տրդատ 1-ինը Հռոմից իր հետ բերած վարպետների օգնությամբ Հռոմեական գառնիզոնի վայրում, այժմյան Գառնի գյուղում, կառուցում է Գառնիի հեթանոսական հոյակապ տաճարը, որը հայտնի է Սարավույթ Տրդատա, կամ թե, ինչպես ժողովուրդն է անվանում, Տրդատա քախս անուններով։ Տրդատը միայն այդ աղոթատեղի տաճարը չէ, որ կառուցել է տալիս։ Նա Գառնիում շինում է ամառանոց, ամռան ամիսներին այնտեղ անցկացնելու համար, որովհետև ամառային շոգերին Այրարատում դժվար էր ապրել։ Դժբախտաբար Տրդատի կառուցած քաղաքացիական շենքերից ոչինչ չի հասել մեզ, Տրդատա քախտ ժողովրդական անվանումը ցույց է տալիս, որ Գառնին եղել է Տրդատի ամառանոցը։

Արշակունյաց դինաստիայի հաստատումից հետո հռոմեական բանակը հեռանում է Հայաստանից, որ երկար ժամանակ հաստատված էր երկրում և կեղեքում էր ժողովրդին։ Նոր դինաստիան, որ հաստատվում է 66 թվին, գնալով մերվում է հայ ժողովրդի հետ և արագ թափով հայանում։

Տրդատ 1-ինի իշխանության շրջանում երկրում տիրող խաղաղությունը խանգարվում է ալանների արշավանքների պատճառով։ Ալանները, որոնք այժմյան օսերի նախահայրերն են, բնակվում էին Կովկասյան լեռների հյուսիսային և հյուսիս-արևմտյան կողմերում։ Ալանները շատ անգամ են օգտագործվել թե Հռոմեական և թե Պարթևաց պետությունների կողմից։ Նրանք հաճախ արշավանքներ էին կատարում դեպի Առաջավոր Ասիա՝ Աղվանից երկիրը, Մարաստան, Հայաստան, Պարսկաստան և մյուս կողմից՝ դեպի Պոնտոս և մեծ ավերածություններ էին

կատարում։ Այդ արշավանքները կազմակերպվում էին Դարիալի (Ալանաց դուռ) և Դերբենտի (Ճորպահակ) կիրճերից։

Հայոց Տրդատ թագավորի ժամանակ 72 թվին ալանները կազմակերպում են նոր արշավանք դեպի Պարսկաստան ու Հայաստան, Վրացական թագավորի թելադրությամբ, որը թշնամական հարաբերությունների մեջ էր պարթևների հետ։ Ալանները Կասպից ծովի ափով Դերբենդի կիրճով ներխուժում են Աղվանք, Մարաստան, Պարսկաստան և ապա՝ Հայաստան։ Ատրպատականի թագավոր Բակուրը, որ դուրս էր եկել ալանների դեմ, պարտվելով փախչում է լեռները, իսկ թագուհին գերի է ընկնում, որին ազատում են միայն մեծ փրկանք տալով։ Մինչ Հռոմեացիներից օգնություն էին խնդրում, ալանները հարձակվում են նաև Հայաստանի վրա և մեծ վնաս պատճառում երկրին։ Տրդատն իր կազմակերպած հայկական նոր բանակով դուրս է գալիս ալանների դեմ։ Արյունահեղ կռիվ է տեղի ունենում Կուր գետի ափին։ Ալանները փորձ են անում շրջապատել Տրդատին, թշնամու մի զինվոր պարան է գցում հայոց թագավորի վրա, և նա գերի կընկներ, եթե արագությամբ սրով չկտրեր պարանը և չազատվեր։ Թեև ալաններին հաջողվում է կողոպտել նաև Հայաստանի արևելյան և հյուսիս արևելյան գավառները, բայց Տրդատի ցույց տված դիմադրության հետևանքով չեն կարողանում մտնել երկրի խորքերը և կողոպուտն ու ավարը վերցրած վերադառնում են իրենց երկիրը։

Ալանների արշավանքը Տրդատի ժամանակ կրկնվում է 75 թվին, սակայն Պարսկա-հռոմեական ուժերի օգնությամբ հայոց թագավորը հետ է մղում թշնամուն և Դերբենտի կիրճում պահում է հատուկ զորք ու ամրացնում կիրճը։ Ապա Պարսկաստանին և հռոմեական հողերին վտանգ սպառնացող այդ արշավանքների դեմ դուրս գալու նպատակով երկու պետությունների միջև կնքվում է համաձայնություն, որով Հռոմեական կայսրությունը հանձն է առնում տարեկան որոշ գումար վճարել Դերբենտի կիրճը պաշտպանելու համար։

Տրդատ թագավորը շատ սիրելի է դառնում հայերին, որովհետև նա վերականգնում է նրանց կորցրած անկախությունը և իբրև այդպիսին, ժողովրդական երգերի ու վեպերի նյութ է դարձել։ Այն, որ Խորենացին վերագրել է Վաղարշակին և Արտաշեսին, մեծ մասամբ վերաբերում են Տրդատին։ Սրա մահվան թվականը հայտնի չէ. ենթադրում են, որ նա իշխել է մինչև 100 թվականը։ Տրդատի, ինչպես նաև նրա հաջորդներ՝ Աշխադարի և Պարթամասիրի ժամանակ, Հայաստանում խաղաղությունը շարունակվում է, իսկ երկրի տնտեսական կյանքը շարունակում է զարգանալ։ Տրդատի հիմնադրած դինաստիան, թեև օտար էր, բայց իսկապես նա ազգային դունավորում է ստանում և դառնում է Արտաշեսի հիմնադրած պետության շարունակողը։

Բ) ՀԱՅԱՍՏԱՆԸ II ԵՎ III ԴԱՐԵՐՈՒՄ

Տրդատ Ա-ինի հաջորդները և Տրայանոս կայսրի արշավանքները

Տրդատ թագավորի հիմնադրած պետությունը Հայաստանում տևում է ավելի քան 360 տարի, այդ երկար տարիների ընթացքում հայկական պետության գլխին մշտապես կախված էր արտաքին վտանգը, մի հանգամանք, որ երկիրը շատ հաճախ դնում էր բուֆերային դրության մեջ։ Բայց երկրի կենսատու ուժերն աշխատում էին պահպանել երկրի ինքնուրույնությունը և դուրս բերել նաև բուֆերային դրությունից։

Տրդատի հիմնադրած հայ Արշակունյաց թագավորությունը բաժանվում է երկու շրջանի կամ էտապի։ Առաջին շրջանը տևվում է շուրջ 160 տարի, այսինքն 66—226 թ. թ. ժամանակաշրջանը, որն ավելի կարճ էր քան երկրորդ շրջանը։

Այս շրջանի բնորոշ կողմն այն է, որ հայ Արշակունիների թագավորությունը հիմնականում պահպանում է իր անկախությունը, հաճախ միացած պարթևների հետ, դուրս է գալիս հռոմայեցիների դեմ։ Սակայն այդ պայքարի ընթացքում երբեմն կորցնում էր իր անկախությունը կամ թե դառնում էր բուֆեր Հռոմի և Պարսկաստանի միջև։ Այս շրջանում Հռոմեական կայսրությունը Հայաստանի նկատմամբ շարունակում էր իր նվաճողական քաղաքականությունը, իսկ պարթևները, ընդհակառակը, Հայաստանի նկատմամբ վարում էին պաշտպանողական քաղաքականություն, աշխատում էին պաշտպանել Հայկական պետությունը, որպես պատնեշ հռոմեական ագրեսորների առաջ։

Հայ Արշակունյաց պետության երկրորդ էտապը, որ տևվում է 226—429 թ.թ.-ի ժամանակաշրջանը, ավելի քան 200 տարի, բնորոշվում է նրանով, որ հայկական թագավորությունը հիմնականում պահպանում է իր անկախությունը որոշ բուֆերային դրությամբ, բայց այս անգամ միանում է Հռոմի հետ և դուրս է գալիս Պարսկաստանի դեմ, որովհետև 226 թվին Իրա-

նում պարթևներին փոխարինող Սասանյան դինաստիան Հայաստանի նկատմամբ վարում էր նվաճողական քաղաքականություն և միաժամանակ սպառնում էր Հռոմին Մերձավոր Արևելքում: Հռոմեական կայսրությունը 3-րդ դարից սկսած մտնում է իր քայքայման պարաշրջանը և նույնիսկ չի կարողանում պաշտպանել իր սահմանները արտաքին հարձակումներից: Այդ պատճառով վերջ է տալիս Հայաստանի նկատմամբ ունեցած իր նվաճողական քաղաքականությանը և բռնում է պաշտպանողական դիրք, շատ դեպքերում դաշնակցած հայ Արշակունյաց թագավորության հետ՝ պայքարում են Սասանյանների դեմ: Այս շրջանում կարևոր մոմենտներից մեկն էլ այն է, որ հայ Արշակունյաց դինաստիան ավելի ազգայնանում է, այսինքն հայանում է:

Տրդատ 1-ինի թագավորությունը մոտավորապես տևում է մինչև 100 թվականը: Նրա մահվանից հետո պարթևաց Բակուր 1-ին թագավորը (90—108) Հռոմի համաձայնությամբ Հայաստանի գահը հանձնում է իր որդի Աշխադարին (100—110): Սրա թագավորության շրջանը նույնպես անցնում է խաղաղ և երկիրը անտեսապես ու կուլտուրապես շարունակում է զարգանալ: Սակայն, երբ Պարսկաստանում իշխանության գլուխ է կանգնում Բակուր թագավորի եղբայր Խոսրովը (108—121), և իր շահերի տեսակետից Աշխադարին գտնում է ոչ նպատակահարմար, նրան հեռացնում է հայկական գահից և նրա տեղ, առանց Հռոմի համաձայնության թագավոր է կարգում Բակուրի մյուս որդի Պարթամասիրին (110—114): Հայաստանում տեղի ունեցած թագավորների փոփոխությունը պարթևների և հռոմայեցիների միջև մի նոր պատերազմի առիթ է դառնում: Փառասեր Տրայանոս կայսրը (98—117), որ դժգոհ էր 63 թ. Հռանդեայի դաշնագրությունից, ծրագրում է չեղյալ հայտարարել այդ պայմանագիրը և իր պետության սահմանները հասցնել մինչև Զագրոսյան լեռները, Պարսից ծոցը և հաստատվել Հնդկական օվկիանոսի ափին: Ծերունի կայսրն իր իշխանության վերջին տարիներին ձգտում էր հասնել Ալեքսանդր Մակեդոնացու փառքին: Նա մեծ բանակով շարժվում է Արևելք: Պարթևաց Խոսրով թագավորը ձգտում է խաղաղ միջոցներով կանխել Տրայանոսի ձեռնարկած արշավանքը: Նա մեծամեծ նվերներով դեսպան է ուղարկում Աթենք՝ կայսրի մոտ, հայտնում է, որ Հայոց թագավորը՝ իր ազգական Պարթամասիրը պատրաստ է ճանաչելու Հռոմի գերիշխանությունը և թագ ստանալու կայսրից: Բայց Տրայանոսը,

որ նպատակ ուներ իրագործել իր քաղաքական ծրագիրը, անուշադիր է թողնում Խոսրովի դեսպանության դիմումը, 114 թվին մտնում է Ասորիք և պատերազմ է հայտարարում պարթևներին ու հայերին: Նրա նպատակն էր վերացնել կայսրության արևելյան սահմանների մոտ գտնվող Հռոմի շահերին հակառակ գործող փոքր պետությունների անկախությունը, որոնց թվում նաև Հայաստանը դարձնել հռոմեական գավառներ:

Պատերազմն սկսվում է: Եփրատի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարթևները պարտվում են: Տիզբոնի արքունիքում խռովություններ են սկսվում Խոսրով թագավորի դեմ: Տրայանոս կայսրն առանց լուրջ դիմադրության հանդիպելու իր գրավումները շարունակում է Եփրատի հյուսիս-արևմուտքում, ապա Եփրատն անցնելով՝ 115 թվին Բարձր Հայքի կողմից մտնում է Հայաստան:

Հայոց թագավոր Պարթամասիրը զրկված լինելով պարթևների օգնությունից և չկարողանալով դիմադրել հռոմեական լեգեոնների ճնշմանը, կրկնում է իր դիմումը առանց «Հայոց թագավոր» տիտղոսի, խնդրում է Տրայանոսի թույլտվությունը՝ Հայաստանում թագավորելու և միաժամանակ ցանկություն է հայտնում տեսակցելու կայսրի հետ: Կայսրի թույլտվությամբ Պարթամասիրը ներկայանում է նրան Բարձր Հայքի Եկեղյաց գավառում: Տրայանոսն ամբողջ բանակի ներկայությամբ հայտնում է Պարթամասիրին՝ թե ինքը վճռականապես որոշել է վերցնել Հայաստանի թագավորությունը: Պարթամասիրը բողոքում է կայսեր այդ հայտարարության դեմ և հեռանում, բայց շուտով սպանվում է հռոմայեցիների հետ տեղի ունեցած ընդհարման ժամանակ: Իսկ Տրայանոսը գրավում է Հայաստանը, վեր է ածում այն մի գավառի, կցում կայսրությանը և նշանակում է առանձին կառավարիչ 115 թվին: Նույն վիճակին են ենթարկվում պարթևական տոհմի թագավորներով կառավարվող Ատրպատականն ու Ադիաբենը: Տրայանոսը տարբեր վերաբերմունք է ցույց տալիս Իբերիայի, Կոլխիդայի, Աղվանքի և Կովկասյան այլ ցեղերի ու ժողովուրդների թագավորներին, որոնք իրենց հպատակությունն էին հայտնել կայսրին և մնում են իրենց պաշտոնների գլուխը, որպես Հռոմի վասալներ: Հայաստանը գրավող Տրայանոսն իրեն հատկացրեց «Հայերին հաղթող» տիտղոսը: Այդ առթիվ Հռոմում դրամներ կտրվեցին, որոնց վրա պարտված Հայաստանը ներկայացված էր խորհրդանշաններով.

«Հայաստանը կապված ու կծկված մի կնոջ նման էր, որի շուրջը գրված էր «Հայաստանն ու Միջագետքը Հռոմի ժողովրդի իշխանության տակ ընկած»։

Այնուհետև Տրայանոս կայսրը մտնում է պարթևների երկիրը, գրավում է Միջագետքը, Տիգրիս գետի վրա հիմնում է մաքսատներ, ապա գրավում է պարթևների մայրաքաղաք Տիզբոնը և կողոպտում ու տանում է այնտեղից պարթևների ոսկե գահը և հասնում Պարսից ծոցին։ Պարթևների Խոսրով թագավորը մեծ ջանք է գործադրում խաղաղությամբ վերջ տալու պատերազմներին, երբ Տրայանոս կայսրը գտնվում էր Պարսից ծոցի մոտ, բայց մերժում է ստանում։ Դրանից հետո Խոսրովին և հայ իշխաններին հաջողվում է հռոմայեցիների թիկունքում, իրենց անկախությունը կորցրած երկրներում ապստամբություններ բարձրացնել իրենց բազաներից կտրված հռոմեական զորքերի դեմ։ Ապստամբություն է բարձրացնում նաև Հայաստանը։ Հայկական ազատագրական ապստամբության գլուխ է կանգնում Պարսից թագավոր Խոսրովի որդի Պարթամաս-Պատը՝ որը հայկական զորագնդերով իջնում է Միջագետք՝ հռոմայեցիների հետ կռվելու։ Տրայանոսն ստիպված է լինում վերադառնալ Տիզբոն և ճնշել ապստամբությունները։ Բայց Իտալիա վերադառնալու ճանապարհին հիվանդանում և մահանում է Կիլիկիայում 117 թվին։ Մահվանից առաջ նա տեղեկանում է, որ իր գրաված բոլոր երկրներում նորից ապստամբություններ են ծագել, հատկապես Հայաստանում։ Վերոհիշյալ ապստամբական տրամադրությունները հաշվի առնելով՝ նոր կայսր Ադրիանոսը (117—138) դաշնագրություն է կնքում պարթևական թագավոր Խոսրովի հետ։ Երկու պետությունների միջև սահմանը դառնում է Եփրատ գետը, ինչպես որ գոյություն ուներ առաջ։ Հռոմեական կառավարիչն ու հռոմեական զորամասերը հեռացվում են Հայաստանից, հայերի ապստամբության հետևանքով կրկին անգամ վերականգնվում է հայկական թագավորությունը և թագավոր է դառնում Վաղարշակ Առաջինը (117—140) Հռոմի համաձայնությամբ, իսկ Պարթամաս-Պատը հետ է կանչվում Տիզբոնի կողմից։ Հռոմեա-պարթևական այս դաշինքին հաջորդում է 40 տարվա խաղաղության մի շրջան։

Վաղարշակ 1-ինի իշխանության ժամանակ 135 թվին, ալանները վրաց Փարսման 2-րդ թագավորի դրդումով, հարձակվում են Աղվանքի վրա, ապա մտնում են Մարաստան, Հայաս-

տան և Կապադովկիա, կողոպտում ու թալանի ենթարկում վերոհիշյալ երկրները և մեծ վնաս հասցնում ազգաբնակչությանը։ Պարթևների և հայերի թագավորները բողոքում են հռոմեական կայսրին և այդ աղետի համար մեղավոր են համարում վրաց թագավոր Փարսման 2-րդին, որին հանձնված էր պահպանել Դարյալի կիրճը, բայց նա ոչ միայն չէր պաշտպանել, այլև նըպաստել էր ալանների արշավանքներին։ Փարսման 2-րդը թեև կանչվում է Հռոմ պատասխանատվության համար, բայց փոխանակ պատժվելու, նոր նվերներ ու երկրամասեր է ստանում։ Սակայն, չնայած դրան, Հռոմի կայսրը Կապադովկիայի թագավորին կարգադրում է իր բանակով դուրս գալ ալանների դեմ։ Ալաններն այդ իմանալով և երկյուղ կրելով՝ վերադառնում են իրենց երկիրը, մեծ վնաս հասցնելով Հայաստանին։

Վաղարշակ 1-ին թագավորի ժամանակ, նրա հրամանով նախկին Վարդգեսավանը վերաշինվում, ընդարձակվում, պարսպապատվում ու դառնում է քաղաք և թագավորի անունով կոչվում է Վաղարշապատ (այժմյան Էջմիածինը)։

Հայաստանի քաղաքական դրությունը երկրորդ դարի կեսին

Պարթևա-հռոմեական խաղաղ հարաբերությունները խանգարվում են Անտոնիոս Պիոս կայսրի ժամանակ (138—161 թ. թ.), երբ հռոմայեցիները Հայաստանից հեռանում են, հայոց Վաղարշակ 1-ին թագավորին և նրա փոխարեն Հռոմի անունից 140 թվին Հայաստանի թագավոր են նշանակում Սոյեմոսին, որի Արշակունյաց տոհմի ծագում ունենալը կասկածելի էր։ Վերոհիշյալ դեպքն առիթ է ծառայում պարթևաց Վաղարշ 3-րդ թագավորի (149—191) համար, որ պատերազմ հայտարարի հռոմայեցիներին և բռնի ուժով ետ գրավի ոչ միայն Հայաստանը, այլև Ասորիքն ու Կապադովկիան։

162 թվին Վաղարշ 3-րդի զորավար Խոսրովը մեծ բանակով մտնում է Հայաստան և դուրս է քշում այնտեղից Սոյեմին, որ ապաստան է գտնում Կապադովկիայի հռոմեական զորավար Սևերիանոսի մոտ։ Վերջինս ճակատամարտ է տալիս պարթևների դեմ Հայաստանի Եկեղյաց գավառում, բայց պարտություն կրելով ետ է քաշվում։ Սոյեմն անօգնական մնալով փախչում է Հռոմ, իսկ Վաղարշ 3-րդը Հռոմից ետ գրաված Հայաստանի գահը հանձնում է իր եղբայր Բակուրին (162 թվին)։ Այնուհետև պարթևները հերթականությամբ գրավում են Կա-

Հռոմի կայսր Մարկոս Ավրելիոսը (161—180), պարթևնե-
րին ջարդելու և նրանց գրաված երկրները ետ նվաճելու համար
մի մեծ բանակ է ուղարկում Արևելք։ Հռոմեական բանակը Վե-
րոս զորավարի գլխավորությամբ մտնում է Ասորիք, մի շարք
ճակատամարտերում հաղթում է պարթևներին ու ետ գրավում
նրանց նվաճած երկրները։ Հռոմեական բանակի մի զորամաս
Պրիկոս և Մարտիոս Վերոս հրամանատարների գլխավորությամբ
163 թվին արշավում է դեպի Հայաստան և համառ կռիվներից
հետո գրավում այն, կողոպտում և հիմնահատակ կործանում Ար-
տաշատ մայրաքաղաքը, որի փոխարեն հռոմեական կայազորի
համար ավելի ընդարձակվում և ամրացվում է Վաղարշապատը և
կոչվում է Նոր քաղաք (Կայնոպոլիս)։

Պարթևների կողմից Հայաստանում նշանակված Բակուր
թագավորն իր բանակով ամրանում է Հայաստանի արևելյան
գավառներում և հայերի միջոցով հռոմայեցիների դեմ կազմա-
կերպում ապստամբություններ, բայց պարսիկներից անհրաժեշտ
օգնություն չստանալով՝ հայերը պարտվում են։ Հռոմի զորավար
Թուքիդիտեսը, որը միաժամանակ հայտնի դիվանագետ էր, ոչ
միայն իր լեգեոններով ճնշում է հայերի ապստամբությունները,
այլև իր վարած մեղմ քաղաքականության շնորհիվ լեզու գտա-
նելով հայ իշխանների հետ՝ կրկին անգամ Սոյեմին թագավոր
է նշանակում Հայաստանում (164—185)։ Սա իր գահանիստն է
դարձնում հռոմեական կայազորի վայր՝ Նոր քաղաքը (Կայնո-
պոլիս-Վաղարշապատը), որովհետև Արտաշատն ավերված էր։
Վաղարշապատում հայտնաբերած երկրորդ դարի վերջին քարե-
դին վերաբերող արձանագրությունները հաստատում են պատ-
մական վկայությունները, որ Նոր-Քաղաքը (Վաղարշապատը) ե-
ղել է հռոմեական զորքերի կայան։ Այժմյան Էջմիածնից մեկ
կիլոմետր դեպի արևելք 1914—1915 թ.թ. հայտաբերած ար-
ձանագրություններից իմանում ենք, որ հին Վաղարշապատում
եղել են հռոմեական 15-րդ Ապոլոնյան լեգեոնի զորամասերը։

Այնուհետև հռոմեացիները շարունակելով իրենց կռիվները
պարթևների դեմ, ետ են գրավում ոչ միայն Կապադովկիան, այլև
Ասորիքը և մտնում Միջագետք, գրավում են Սելևկիա և Տիզբոն
քաղաքները, կողոպտում և ավերում։ Պարթևների Վաղարշ 3-րդ
գոռոզ թագավորն ստիպված է լինում իրեն համար խիստ ան-
նպաստ պայմաններով հաշտություն կնքել և զիջել Հռոմին ոչ

միայն իր գրաված երկրները, այլև Միջագետքի արևմտյան մա-
սերը և Օսրոյենի թագավորությունը, սահման ընդունելով Տիգ-
րիս գետի վերին հոսանքը։ Մարկոս Ավրելիոսը և Լուկիոս Վե-
րոսը նորից ստանում են «պարթևական» և «հայկական» պատ-
վավոր տիտղոսներ։ Հռոմում նորից դրամ է կտրվում ի հիշա-
տակ հաղթված Հայաստանի, որը ներկայացնում է կնոջ կեր-
պարանքով, նստած հռոմեական դրոշի առջև և որի տակ գրված
է Armenia (Հայաստան)։ Այդ դաշնագրությունից հետո մոտ քա-
ռորդ դար տարձյալ աղբյուրները գրեթե տեղեկություններ չեն
տալիս Հայաստանի մասին։ Եղած տեղեկություններից հայտնի
է, որ Սոյեմի մահվանից հետո Հայաստանի գահն անցնում է
Սանատրուկ անունով մի գահակալի (185—196), որն ըստ հայ-
կական ավանդությունների, եղել է քրիստոնյահալած։ Բայց,
չնայած դրան, նրա մասին մեծ գովեստով են խոսում և սիրելի
ու հարգելի է եղել հայերի համար։ Սանատրուկի ժամանակ Ար-
տաշատ մայրաքաղաքը դեռ քանդված էր, իսկ Նոր-Քաղաքը
(Վաղարշապատը), որտեղ նստում էր Սոյեմը, գտնվում էր հռո-
մայեցիների ձեռքին, որովհետև հռոմեական կայազորը շարու-
նակում էր մնալ այնտեղ։ Սանատրուկը, որ վարում էր հակահռո-
մեական քաղաքականություն, չէր կարող նստել Նոր-Քաղաքում։
Այդ պատճառով նա իր գահը հաստատում է հայոց Միջագետքի
Մծբին քաղաքում։ Սրա ժամանակ Եդեսիայում իշխում էր Աբ-
գար թագավորը, որն, ըստ ավանդության, առաջին թագավորն
էր աշխարհում, որ ընդունեց քրիստոնեությունը։

Սանատրուկի ժամանակ ալանները նորից հյուսիսային Կով-
կասից արշավում են Աղվանքի և Ատրպատականի վրա, ապա
մտնում են Հայաստան։ Սանատրուկը հայկական բանակով դուրս է
գալիս ալանների դեմ և արգելում է նրանց մտնել Հայաստան,
բայց մի մեծ ճակատամարտում ինքն սպանվում է։ Նրան թա-
ղում են Դարանաղի գավառի Անի ամրոցում։ Նրա գերեզ-
մանի վրա կանգնեցնում են մի հոյակապ գեղեցիկ մահար-
ձան, որը մինչև 4-րդ դարը պահպանել էր իր գոյությունը։
Սանատրուկին հաջորդում է Վաղարշակ (Խոսրով) 2-րդը (196—215)։

Կարակալայի արշավանքները

Պարթևա-հռոմեական կռիվները նորից սկըս-
վում են 190-ական թվականներին, երբ Ա-
սորիքի հռոմեական զորավար Նիգերը ա-
պըստամբում է նոր կայսր Սեպտիմոս Սևերոսի (193—211) դեմ
և իրեն հռչակում կայսր։ Պարթևների թագավոր Արտավան 4-րդը
պաշտպանում, Հյուսիսային Միջագետքը և Ասորիքը։

(191—199) պաշտպանում է Նիգերին, որպեսզի ներքին կռիվների հետևանքով թուլանա Հռոմը: Նիգերն իրեն օգնության է կանչում նաև Հայաստանի թագավոր Վաղարշակ 2-րդին, բայց նա մերժում է, իսկ Ադիաբենեն և Օսրոյենեն օգնում են Նիգերին: Սակայն Սեպտիմոս Սևերոսը հաղթանակով է դուրս գալիս թե արևմուտքում և թե արևելքում, ճնշում է Նիգերի և նրան օգնող բոլոր երկրների խռովությունները և իր իշխանությունը հաստատում է նաև արևելյան երկրներում: Նա հայոց Վաղարշակ 2-րդ թագավորից խլում է Մծբինն իր շրջակայքով և միացնում կայսրության հողերին: Վաղարշակը դժգոհում է և միանում պարթևների հետ: Կայսրը այդ հանգամանքը հաշվի առնելով և հայոց թագավորի դժգոհությանը վերջ տալու նպատակով Մծբինի փոխարեն Միջագետքից և Փոքր Հայքից նոր քաղաքներ ու հողեր է տալիս և հաշտվում նրա հետ: Ապա Հայաստանից էլ հանում է հռոմեական զորքերը, որոնք տարիներ շարունակ հաստատվել էին Նոր-Քաղաքում, իսկ հայկական զորքն ուժեղացնելու համար կայսերական ռոճիկ է նշանակում: Դրանից հետո Վաղարշակ 2-րդը իր գահը հաստատում է Նոր-Քաղաքում և իր անունով նորից վերանվանում է Վաղարշապատ: Սեպտիմոս Սևերոսն Արևելքում իր իշխանությունն ամրապնդելու համար զիջումներ է անում նաև Ադիաբենեին և Օսրոյենեին: Սակայն, չնայած դրան, պարթևա-հռոմեական պատերազմները նոր փուլի մեջ են մտնում:

Հռոմեական կայսրության անկման նշաններն սկսում են 2-րդ դարի վերջին քառորդում: Կայսրության մեջ աստիճանաբար սկսվում են ստրուկների ապստամբությունները և խռովությունները: Պրովինցիաներում, հատկապես Հրեաստանում՝ Հռոմի բանակի կրած պարտություններն արտաքին թշնամիներից, ստրկական մասսայի հարաճուն նվազումը, ստրկական աշխատանքն ազատ աշխատանքով փոխարինելու անհաջող ճիգերը կալվածատերերի կողմից, մերթ ընդ մերթ կրկնվող անբերրիության, սովի և համաճարակի տարիները գլխավոր պատճառներն են հանդիսանում Հռոմի ստրկատիրական հասարակության անկմանը:

Հռոմեական կայսրության էկոնոմիկայի հիմքը կազմող գյուղատնտեսության անկման մասին գաղափար կազմելու համար բավական է միայն հիշել 2-րդ դարի վերջին անմշակ մնացած հողերի տարածությունը, մի հանգամանք, որ առիթ է տվել կայսրներից մեկին՝ Պերտինակսին 193 թվին հողային սեփականության իրավունք շնորհելու յուրաքանչյուրին, «ով կտիրե և կմշակե անմշակ մնացած դաշտերը»: Բանվորական ուժի պակասությունից և տնտեսական հիմքի վրա առաջ եկած ճգնաժամից Սեպտիմոս Սևերոսը և հատկապես նրա որդին ու հաջորդը՝ Անտոնինոս Կարակալլան (211—217) աշխատում էին դուրս գալ Արևելքում նոր նվաճումներ կատարելով:

Անտոնինոս Կարակալլան, որ հաջորդել էր Սեպտիմոս-Սևերոսին, նոր փառասիրական ձգտումներով տարված՝ աշխատում էր մի նոր Ալեքսանդր Մակեդոնացի դառնալ: Այդ հանգամանքին որոշ չափով նպաստում են Պարսկաստանում առաջ եկած ներքին կռիվները: Կարակալլան 215 թվին մեծ բանակով շարժվում է դեպի Արևելք և կանգ է առնում Սիրիայի Անտիոք քաղաքում: Նա խորամանկաբար իր մոտ է կանչում Եդեսիայի Աբգար թագավորին և վերջ տալիս նրա թագավորությանը: Ապա օգտվելով Հայաստանում՝ Վաղարշակի ընտանիքում տեղի ունեցած խռովությունից, 215 թվին իր մոտ է կանչում արքայական ընտանիքին, իբր թե Վաղարշակին իր որդիների հետ հաշտեցնելու համար, բայց անմիջապես ձերբակալում և ուղարկում է Հռոմ, իսկ Հայաստանը հայտարարում հռոմեական պրովինցիա: Սակայն, հայերը զենքի են դիմում սեփական երկիրը պաշտպանելու համար: Վաղարշակի որդիներից մեկը՝ Տրդատը, որ շնորհալի զորավար էր, փախչում և ազատվում է հռոմայեցիների ձեռքից, գալիս է Հայաստան և գլխավորում ժողովրդի ազատագրական պայքարը: Հայ իշխաններն անմիջապես նրան թագավոր են հռչակում:

Հայերի ապստամբությունը ճնշելու համար Կարակալլան մի զորագունդ է ուղարկում, որը պարտվում է հայերի կողմից: Բայց Տրդատը երկյուղ կրելով գնում է Պարսկաստան՝ աջակցություն խնդրելու: Կարակալլան պահանջում է իրեն հանձնել Տրդատին: Պարթևական թագավորը պատրաստ էր կատարելու կայսեր պահանջը: Եվ Տրդատն ստիպված է լինում նորից փախչել Հայաստան, զորք հավաքել և դիմադրություն կազմակերպել հռոմայեցիների դեմ: Իսկ Կարակալլան, հռոմեական արևելյան երկրների խռովությունների գլխավոր պատճառը համարելով պարթևներին՝ 216 թ. նրանց դեմ պատերազմական գործողություններ է սկսում և գրավում Ադիաբենը, Արբելայում ավերում է արքայական գերեզմանները, ապա նվաճում է Մարաստանը, բայց 217 թվին սպանվում է իր զինվորների ձեռքով:

Պարթևները Կարակալլայի սպանությունը հարմար առիթ համարելով՝ անցնում են հարձակման և մի շարք հաղթական կռիվներից հետո հռոմայեցիներին քշում են Եփրատի այն կողմը: Հռոմի նոր կայսր Մակրինոսը ստիպված է լինում մեծ տուգանք տալով 217 թվին հաշտություն կնքել: Այդ դաշնագրությամբ պահպանվում է Հայաստանի անկախությունը, գահը ստանձնում է Վաղարշակ 2-րդի որդի Տրդատ 2-րդը (217—222), որը կռիվներ էր մղում Հայաստանում հռոմայեցիների դեմ: Մակրինոս կայսրը արքայական թագ է ուղարկում Տրդատին, գերությունից ազատում է նրա մորը (հայրը մահացել էր) և վերադարձնում է Հայաստանից տարած ավարը: Բացի այդ, Տրդատը ստանում է նաև Կապադովկիայում իր հոր ունեցած կալվածները և ամեն տարի ստանում է Հայաստանի զորքի պահպանման նպաստը, որ նշանակել էր Սեպտիմոս Սևերոս կայսրը: Այդպիսով Տրայանոսից հետո Հռոմեական կայսրության երկրորդ փորձը՝ Հայաստանը նվաճել և դարձնել պրովինցիա,—նորից մատնվում է անհաջողության, շնորհիվ հայ ժողովրդի երկարատև ու համառ պայքարի:

Սասանյան դինաստիայի առաջացումը Պարսկաստանում

Պարսկաստանում Սասանյան դինաստիայի հանդես գալը, նոր դարագլուխ է կազմում Առաջավոր Ասիայի պատմության մեջ: Նոր դինաստիայի հանդես գալով տնտեսական, քաղաքական և կուլտուրական մեծ փոփոխություններ են տեղի ունենում ոչ միայն Պարսկաստանում, այլև հարևան ժողովուրդների կյանքում: Այդ դինաստիայի հանդես գալը ճակատագրական նշանակություն է ունենում հատկապես Հայաստանի համար:

Հռոմի դեմ պարթևական դինաստիայի տարած վերջին հաղթանակը ոչ այնքան իրենց շնորհիվ էր, որքան կայսրության մեջ գոյություն ունեցող տնտեսական և քաղաքական ճգնաժամի: Այնուամենայնիվ, թեև պարթևները արտաքին կռիվներից դուրս եկան հաղթանակով, բայց ներքին պայքարում պարտված եղան:

Պարթևական դինաստիայի մղած անընդհատ պատերազմները, ներքին կռիվներն ու խռովություններն աստիճանաբար թուլացնում են Արշակունիների պետությունը Պարսկաստանում: Պարթևների պետությունը բավական մեծ էր և բաղկացած տարբեր ժողովուրդներից ու ցեղերից: Դա մի կոնգլոմերատ էր և

կառավարվում էր «Արքայից արքայի» հզոր բազկի շնորհիվ, զրադաշտական կրոնի հեղինակությամբ: Սակայն, պարթևները պարսիկների, հատկապես նրա վերնախավի աչքին օտար էին իրենց վարած ներքին քաղաքականության պատճառով: Պարսիկ ազնվականության մեջ միշտ պահպանվում էր հզոր Աքեմենյանների հիշատակը: Պարթևներն աստիճանաբար կորցրին իրենց հեղինակությունը պարսիկների աչքում, հատկապես այն ժամանակաշրջանից, երբ ընդունեցին հելլենիստական կուլտուրան, հունարեն լեզուն դարձրին պետական լեզու, թույլ տվին Պարսկաստանում տարածվելու հունական կրթությունը, առևտուրը, գիտությունը, նույնիսկ կրոնը և անտարբեր վերաբերմունք ցույց տվին պարսկական կուլտուրային, կրոնին և ավանդություններին ու սովորություններին:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո հելլենիստական կուլտուրան տարածվեց մի շարք երկրներում և դուրս եկավ հաղթանակով, այն ինչ Պարսկաստանում նա ոչ միայն չհաղթանակեց, այլև հանդիպեց լուրջ դիմադրության, և եթե մասամբ տարածվեց, ապա այդ էլ պարթևների շնորհիվ էր:

Պարսիկ ժողովուրդը դարերի ընթացքում մշակել էր իր ուրույն հասկացողությունը, քաղաքականությունը և կրոնը: Այդ պատճառով պարսիկները չէին համակերպվում Արևմուտքին և միշտ իրենց հեռու էին պահում հույներից ու հռոմայեցիներից, ատում էին նրանց: Այդ ատելությունն այնքան խորն էր, որ առևտրի մեջ հմուտ պարսիկները Հունաստան և Հռոմ չէին գնում, այլ հեռավոր Չինաստանից բերած ապրանքները Միջագետքում ծախում էին հույն և հռոմայեցի վաճառականներին: Այդպիսի ոգով կրթված ու դաստիարակված ժողովուրդը չէր կարող հետևել պարթևների հելլենասիրությանը: Դրան զուգընթաց 2-րդ դարի վերջում և 3-րդ դարի սկզբին Իրանում սկսվում է թափանցել քրիստոնեական կրոնը և որոշ նվաճումներ է կատարում: Այդ ժամանակ Հռոմից մինչև Միջին Ասիա քրիստոնյա քարոզիչները մահու և կենաց պայքարով տարածում էին այդ նոր կրոնը: Զրադաշտական կրոնի երկրպագու քրմերն ու մոլեռանդ կրոնամոլները չէին կարող հանդուրժել և թույլ տալ, որ քրիստոնեությունը տարածվի Իրանում: Այդ պատճառով քրմերը սկսում են ժողովրդի մեջ վառել ու բորբոքել կրոնական զգացմունքները և դուրս բերել քրիստոնյաների դեմ: Իրենց այդ պայքարում նրանք պաշտպանություն չէին գտնում պարթևա-

վան պետության կողմից, այդ պատճառով էլ պարսիկ ժողովրդի մեջ եղած դժգոհությունները ուղղում են նաև պարթևների դեմ և Արշակունիներից դժգոհ ֆեոդալներին տեղ են տալիս բարձրացնելու ապստամբություններ։ 224 թվին պարթևների դեմ եղած հուզումներն ու դժգոհությունները վեր են ածվում ապստամբությունների, առաջին հերթին Ֆարսիստանում։

Ֆարսիստան (Պարսուա) կոչված շրջանը, որի մայրաքաղաքն էր Ստահր (Իստախր), հռչակված էր որպես զրադաշտական կրոնի կենտրոն։ Այդ շրջանի պարթևների վասալ իշխաններից Արտաշիրը, որը Պապակի որդին էր և ըստ ավանդության քրմապետ Սասանի թոռը, օգտվելով այն բանից, որ հին պարսկական զրադաշտական կրոնը պարթևական դինաստիայի ժամանակաշրջանում հելլենիզմի ազդեցության տակ արքունիքում, հարգի չէր, իր շուրջն է համախմբում պարթևներից դժգոհ իշխաններին ու մոգերին և 224 թվին ապստամբություն է բարձրացնում Արտավան 5-րդի դեմ։ Արտաշիրին միանում են հատկապես հյուսիսային նահանգների իշխանները, որտեղ ուժեղ էր մարական տարրը։

Պարթևական դինաստիայի վերջին շառավիղը, Արտավան 5-րդը, թագավորական զորքերով դուրս է գալիս ապստամբների դեմ։ Ժողովուրդն օգնում է Արտաշիրին. Արտավանի զորքերը մի քանի ճակատամարտերում պարտություն են կրում, իսկ 226 թվին Արտաշիրը սպանելով Արտավան 5-րդին, որի գլուխը կտրելով դցում է իր ոտների տակ, տապալում է պարթևներին, ինքն իրեն հռչակում է թագավոր և իր տոհմի անունով հիմք է դնում Սասանյան դինաստիային, որի գոյությունը 400 տարուց ավելի է տևում։ Այդ օրվանից վերջանում է պարթևական դինաստիան Պարսկաստանում և հանդես են գալիս Սասանյանները։ Դինաստիական այդ հեղաշրջումով նոր էրա է բացվում Պարսկաստանի պատմության մեջ։

Սասանյան դինաստիայի օրով զրադաշտական կրոնը կամ կրակի պաշտամունքը ձևակերպվում է որպես պետական կրոն։ Այդ կրոնին սպասարկու մոգերը մեծ արտոնություններ են ստանում և դառնում են Սասանյան դինաստիայի հուսալի հենարանը։ Պետական գործերում նրանք ձեռք են բերում մեծ ազդեցություն։ Հունարենը, որ պարթևական դինաստիայի ժամանակ դարձել էր արքունի պետական լեզուն, վտարվում է արքունիքից, ուժեղ պայքար է ծավալվում հելլենիստական կուլ-

տուրայի դեմ և առաջ են քաշվում հին պարսկական կուլտուրան ու լեզուն և զրադաշտական կրոնը։ Պարթևների շրջանի վարչական բաժանումը՝ սատրապությունները հիմնականում պահպանելով՝ Սասանյանները ճնշում են առանձին սատրապությունների կիսանկախ ֆեոդալներին և նրանց փոխարեն կենտրոնական իշխանության կողմից նշանակում են նոր սատրապներ։ Կարգավորվում և ուժեղացվում է բանակը և վերջ է տրվում ֆեոդալների ռազմական ուժերին։ Սասանյան դինաստիան ավելի միապետական ու կենտրոնաձիգ բնույթ ուներ, քան պարթևականը, որն ավելի ապակենտրոնացած էր և ֆեոդալ իշխանների ներքին իրավունքները լայն էին։

Սասանյան դինաստիայի հիմնադիրն ու նրա հաջորդները ամրացնելով կենտրոնական իշխանությունը՝ արտաքին քաղաքականության բնագավառում դառնում են նվաճող և ձգտում էին վերականգնել Աքեմենյան դինաստիայի նախկին սահմանները։ Առաջավոր Ասիայում մրցակից պետությունների դերերը փոխվում են։

Մինչ 3-րդ դարի I-ին քառորդը Հռոմեական կայսրությունը հարձակողական ու նվաճողական դիրք էր բռնել Առաջավոր Ասիայի նկատմամբ։ Սասանյան դինաստիայի հիմնվելուց հետո Պարսկաստանը հռոմեական կայսրության դեմ հանդես է գալիս հարձակողական դերում, որովհետև Սասանյան թագավորները պարթևներին օտար համարելով՝ իրենց համարում էին Կյուրոսի և Դարեհի հաջորդներ և հետամուտ էին դարեհների նվաճողական քաղաքականությանը։ Նրանք ձգտում էին իրենց պետության սահմանները հասցնել Սև և Միջերկրական ծովերին, դուրս մղել հռոմայեցիներին Ասիայից։ Սասանյանների հարձակողական դերը 3-րդ դարում բացատրվում է նրանով, որ Հռոմեական կայսրությունն ապրում էր սուր ճգնաժամ։

3-րդ դարում կայսրության ապրած ճգնաժամի սոցիալ-տնտեսական էությունն այն էր, որ հասարակական հարաբերությունների սիստեմն իր հիմքում փոխվում և նատուրալ-տնտեսական բնույթ էր ընդունում։ Առևտուրն աստիճանաբար կանգ էր առնում։ Արտադրությունը կրճատվում էր, դրամական շրջանառությունը քայքայվում։ Գալլիեն կայսրի ժամանակ արծաթ դրամը չէր տարբերվում պղնձե դրամից, արծաթը կազմում էր 5 տոկոս։ Նման պայմաններում ոչ միայն անշահավետ, այլև անհնարին էր դառնում նախկին լատիֆունդիալ տնտեսությունն

սարկական աշխատանքի հիման վրա։ Խոշոր կալվածները տրոհվում էին մանր տնտեսությունների, իսկ սարկական աշխատանքի փոխարեն տարածվում էր կոլոնատը՝ ավելի մեծ չափերով։

Այդ հանգամանքն իր հերթին նպաստում էր տնտեսության նատուրալիզացիային։ Քաղաքների բնակչությանը և զորամասերին կենսամթերք մատակարարելու գործը ծայր աստիճան դժվարանում էր։ Ալեքսանդր Սևերի ժամանակ (222—235) Հռոմում բնակչությունը գանգատվում էր մթերքների թանկությունից և պահանջում «ավելի էժան գներ սահմանել»։ Սովը վարակիչ հիվանդությունները նախորդ շրջանում այնքան խրոնիկական բնույթ չէին կրում, որքան այս ժամանակաշրջանում։ Այս բոլոր երևույթների, ինչպես և ներքին ու արտաքին կռիվների հետևանքով խոշոր չափերով նվազում էր ազգաբնակչությունը։ Հռոմ քաղաքի բնակչության թիվը 1—4-րդ դարերի ընթացքում մեկ ու կես միլիոնից իջնում է 500,000-ի։ Հռոմը կորցնելով իր տնտեսական գերիշխող նշանակությունը՝ զրկվում է նաև քաղաքական գերիշխանությունից։ Կայսրության դիրքը խախուտանում է ներքին կյանքում։ Խրոնիկական բնույթ են ստանում սարուկների և կոլոնների ծավալվող ապստամբությունները։ Ապադասակարգայնացած տարրերից, գավառներից, «բարբարոսներից», կազմված զորամասերը կենտրոնական իշխանության հավատարմություն էին ցույց տալիս այն չափով, որ չափով վարձատրվում էին նրա կողմից։ Իզուր չէր, որ Սեպտիմիոս Սևերոսը իր մահվանից առաջ խորհուրդ էր տվել իր զավակներին, թե՝ «եղեք համերաշխ, դրամ բաշխեցեք զինվորներին և էլ ուրիշ ոչ մի բանի մասին մի հոգաք»։ Զինվորներին դրամ բաշխելու համար ազգաբնակչության վրա դրված ծանր հարկերն իրենց հերթին առաջ էին բերում նոր խռովություններ և ապստամբություններ։ Հազվագյուտ չէին այն դեպքերը, երբ միաժամանակ մի քանի կայսրներ էին իշխում, որոնք արյունալի կռվի էին բռնվում իրար հետ, որ տևում էր տասնամյակներ։

Կայսրության դիրքը խախուտանում էր նաև միջազգային հարաբերությունների բնագավառում։ Որքան որ կազմալուծվում, ներքուստ թուլանում էր կայսրությունը, այնքան ավելի էին համախմբվում Հռոմին շրջապատող «բարբարոս» ցեղերը, այնքան ավելի հաճախ էին այդ ցեղերը հյուսիսից ու արևելքից ներխուժում կայսրության սահմանները և ավերում կամ գրավում նրա սահմանամերձ վայրերը։

Ներքին և արտաքին այս պայմաններում ապրող կայսրության վրա էր ահա 3-րդ դարի 30-ական թվականներին իր հարձակումները կատարում Սասանյան Պարսկաստանը։ Այդ հարձակումները հաջողությամբ էին պսակվում մինչև 280-ական թվականները, երբ Դիոկղետիանոս և ապա Կոստանդին կայսրների օրով կայսրությունը վերջին ճիգն էր թափում դուրս գալու տնտեսական փլուզումից։

Հայ Արշակունիները և Սասանյանները

Հայոց Տրդատ 2-րդ թագավորը մեռավ 222 թվականին։ Նա որդի չուներ, այդ պատճառով պարթևաց Արտավան 5-րդ թագավորն առանց Հռոմի գիտության հայոց թագավոր նշանակեց իր եղբայր Խոսրովին, որը հայտնի է Խոսրով Առաջին անունով և իշխել է մոտավորապես 222—252 թ. թ.։ Թեև նրա թագավորությունը մինչև 238 թ. ընդունողներ էլ կան, բայց մեր կարծիքով, ավելի ճիշտ է, որ Խոսրովի թագավորությունը տևած լինի մինչև 252 թվականը։ Հայոց այս թագավորի ժամանակ էր, որ Պարսկաստանում տեղի է ունենում պետական հեղաշրջում, իշխանության գլուխ են կանգնում Սասանյանները։

Այժմ հարց է առաջ գալիս, թե Սասանյանների նկատմամբ ինչ դիրք են բռնում հայ Արշակունիները՝ հանձինս Խոսրով 1-ինի։ Մովսես Խորենացու ասելով՝ հայոց Խոսրով թագավորը լսելով, որ Սասանյանները պարթևների դեմ կռիվներ են սկսել, իր զորքը վերցնում և գնում է դեպի Պարսկաստան, օգնելու իր ազգական պարթևներին։ Բայց, հասնելով Ասորեստան, իմանալով, որ պարթևներն արդեն պարտություն են կրել, ճանապարհից վերադառնում է Հայաստան և թշնամական դիրք բռնում Սասանյանների հանդեպ, որի պատճառները երեք են։ Առաջին, Սասանյան դինաստիան իր արտաքին քաղաքականության հիմքում դրեց նվաճողական քաղաքականություն, այսինքն, ուրիշների հողերը գրավելու և օտար ժողովուրդներին կողոպտելու քաղաքականություն։ Այստեղից էլ պարզ է, որ առաջին հերթին պիտի գրավեին Հայաստանը և նոր պայքար սկսեին Հռոմի դեմ, նրան դուրս հանելու համար Արևելքից։ Այդպիսի քաղաքականությունը ձեռնտու չէր ոչ հայ Արշակունիների պետությանը և ոչ էլ հայ ժողովրդին։ Հետևաբար, պետք է թշնամական դիրք բռնեին՝ Սասանյանների նկատմամբ։ Դա շատ բնական է և հասկանալի։

Երկրորդ, հայ Արշակունիները և հայ ժողովուրդը շարու-

նակում էին հետևել հելլենիստական կուլտուրային, մի կուլտուրա, որ դեռ Սելևկյան և Արտաշիսյան շրջաններում մեծ չափերով տարածվել էր Հայաստանում։ Ինչպես պարթև Արշակունիները, նույնպես և հայ Արշակունիները ոչ միայն հետևեցին այդ կուլտուրային, այլև զարգացրին այն։ Այնինչ Սասանյանները ոչ միայն չհետևեցին այդ կուլտուրային, այլև դուրս մղեցին Պարսկաստանից։ Այս հանգամանքը նույնպես կարևոր պատճառներից էր թշնամացնելու հայ Արշակունիներին Սասանյանների հետ։

Երրորդ, հայ Արշակունիներն ազգակցական կապեր ունեին պարթևների հետ, ուստի նրանց թշնամի Սասանյանները չէին կարող բարեկամ մնալ հայ Արշակունիների հետ, նամանավանդ, որ պարթևների որոշ մասը, չհամակերպվելով Սասանյանների հետ, փախել էր Հայաստան, Խոսրով 1-ինի մոտ և հույս ունեին վերջինի օգնությամբ հետ գրավել կորցրած գահը։ Անշուշտ, վերոհիշյալ պատճառներից կարևորն առաջինն է, որ ճակատագրական էր ոչ միայն հայերի, այլև Առաջավոր Ասիայի մի շարք ժողովուրդների անկախության համար։

Սասանյան դինաստիայի նվաճողական քաղաքականությունը խոշոր սպառնալիք էր առաջին հերթին Հայաստանի անկախությանը։ Առաջավոր Ասիայում տերիտորիալ գրավումներ կատարելու և իր տիրապետությունը հաստատելու տեսակետից Հայաստանը Սասանյանների համար հանդիսանում էր ռազմական կարևորագույն հենակետ։ Ուստի Հայաստանի գրավումը կարևոր նախապայմաններից մեկն էր դառնում Սասանյան դինաստիայի քաղաքական ծրագրի իրականացման համար։

Արտաշիր Սասանյանը համախմբելով իր զորքը՝ առաջին հերթին հարձակվում է հռոմայեցիների վրա, որոնք ամենագլխավոր խոչընդոտն էին Սասանյանների պետության սահմաններն ընդարձակելու գործում և միաժամանակ նեցուկ էին Առաջավոր Ասիայի փոքր պետությունների համար։

Պարսկական զորքերն անցնում են Տիգրիսը, բայց արաբների կողմից դիմադրության հանդիպելով՝ ետ են դառնում և արշավում դեպի Մարաց երկիրը, ուր թագավորում էր Արտավանի որդի Արտավազդը։ Մարաստանը գրավելուց հետո Արտաշիրը զորքը մտցնում է Հայաստան, որտեղ ապաստանել էր պարթևների մի մասը։ Հայոց Խոսրով թագավորը 228 թ. իր բանակով դուրս է գալիս Արտաշիրի զորքի դեմ, ջարդում և ետ է մղում

Հայաստանի սահմաններից։ Արտաշիրը նոր զորաբանակ պատրաստելով՝ հարձակվում է Միջագետքի վրա և պահանջում է հռոմայեցիներից Պարսկաստանին զիջել Միջագետքն ու Անդրեփրատյան հովիտները, որոնք Աքեմենյանների ժամանակ գտնվում էին պարսիկների իշխանության տակ։ Արտաշիրը Հռոմից պատասխան չստանալով գրավում է ամբողջ Միջագետքը և մտնում է Ասորիք։

Ալեքսանդր Սևերը (222—235) մեծ բանակով Արևելք է գալիս պարսիկների դեմ պատերազմելու։ Հռոմեական զորքի մի մասն սկսում է կռվել Ասորիքում և Միջագետքում, իսկ մի մասն անցնում է Հայաստանով և Մարաց երկրով։ Այդ զորամասին միանում է և հայոց զորքը։ Հռոմեական զորքերը ոչ միայն դիմադրում են պարսիկներին, այլև ետ են շպրտում նրանց։ Սակայն, գերմանական ցեղերը այդ ժամանակ Արևմուտքում նեղում են հռոմայեցիներին և Ալեքսանդր Սևերին ստիպում են վերադառնալ Հռոմ։ Գերմանացիների դեմ կռվելիս նա սպանվում է, և Հռոմում վերսկսվում են ներքին խռովությունները։

Արտաշիր Սասանյանը՝ օգտվելով Հռոմի այդ դրությունից, վերագրավում է Միջագետքն ու Օսրոյենի թագավորությունը Եդեսիա մայրաքաղաքով։ Պարսկա-հռոմեական կռիվները շարունակվում են Արտաշիրի հաջորդ Շապուհ 1-ինի ժամանակ (242—272), բայց հռոմայեցիները պարտվելով՝ 244 թվին պայմանագիր են կնքում, ըստ որի երկու պետությունների սահմանը ճանաչվում է Եփրատ գետը։ Պարսիկներին են անցնում Հյուսիսային Միջագետքը, Օսրոյենի թագավորությամբ և Հայաստանը։

Հայոց թագավոր Խոսրով 1-ինը դեմ էր Սասանյաններին։ Նա հենված հռոմեական զորքերի վրա (որովհետև Հռոմը թեև Պարսկաստանի հետ պայմանագիր էր կնքել և ձեռք էր քաշել Հայաստանից, բայց իր լեգեոնները դուրս չէր տարել այդ երկրից) դիմադրում է Սասանյաններին, իսկ Շապուհ 1-ինը երկյուղ կրելով չէր համարձակվում մտնել Հայաստան և սպասեց 3 տարի։ Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ Շապուհ 1-ինը բռնում է հայ իշխաններին սիրաշահելու ուղին, որով փորձում էր Հայաստանում իր համար հենարան ստեղծել և հեշտությամբ առաջ տանել երկիրը Պարսկաստանին միացնելու ծրագիրը։ Շապուհին հաջողվում է իր կողմը գրավել հայ իշխանների որոշ մասը, նրանց միջոցով դավադրություն է կազմակերպում Խոս-

րով 1-ինի դեմ և սպանում նրան (252 թ.)։ Ըստ ավանդության, պարթևական տոհմից Պահլավունի Անակ իշխանը, հայոց թագավորի ազգականը, որը Սասանյանների անից փախել էր Հայաստան, կաշառվելով պարսից թագավորի կողմից՝ սպանում է Խոսրով 1-ինին։ Հայերը զայրանում են Անակ իշխանի դավաճանության վրա, կոտորում են նրա ընտանիքը (ազատվում է միայն մի փոքր տղա՝ Գրիգոր անունով, որին դայակը փախցնում է Կեսարիա), իսկ հայկական գահի վրա նստեցնում են Խոսրով 1-ինի որդի Տրդատ 3-րդին, որը դեռ մանուկ էր և երկիրը պետք է կառավարեր նրա խնամակալը։

Պարսից թագավոր Շապուհ 1-ինը, օգտվելով Հռոմի խառնակ դրությունից, որ գերմանական արշավանքները տակն ու վրա էին արել կայսրության հյուսիսային սահմանները, մեծ բանակով մտնում է Հայաստան, դուրս է քշում այնտեղից հռոմեական զորամասերին և Տրդատ 3-րդին ու նրա տոհմին փախուստի է մատնում դեպի կայսրության սահմանը։ Ըստ ավանդության մանուկ թագավոր Տրդատին, իր քրոջ Խոսրովադուխտի հետ Հռոմ են փախցնում Արտավազդ Մանդակունին և Օտա Ամատունին։ Շապուհն իր կողմնակից իշխանների համաձայնությամբ Հայաստանի թագավոր է դարձնում Արտավազդ անունով մեկին (253), որի ծագումը հայտնի չէ, բայց ըստ գիտնական Գուտշմիդի, նա Խոսրովի սպանողներից մեկը պիտի լիներ, այսինքն, Պարսից թագավոր Արտավան 5-րդի որդիներից մեկը։ Քանի որ ավանդությունը Խոսրովին սպանել է տալիս նրա ազգականների կողմից, մեր կարծիքով այս ենթադրությունն էլ կարող է ճիշտ լինել։

Իրեն ենթակա Հայաստանում ապստամբական շարժումները կանխելու համար, Սասանյան արքունիքը ճշտում է նախարարների հողամասերի սահմանները, նախարարներին վերահաստատում իրենց գավառներում և պահպանում է ֆեոդալական առանձնաշնորհումները։ Հռոմեական ազդեցությունը վերացնելու նպատակով Շապուհը քանդել է տալիս հայկական տաճարները, կրապաշտական կենտրոնները և մտցնում է զրադաշտական կրոնը։ Հայաստանը, ուր նշանակվում են պարսկական վասալ թագավորներ, սկսած Արտավազդից, հարկատու է դառնում Սասանյան Պարսկաստանին։

Հայաստանի գրավումից հետո, պարսկական բանակը մտնում է Միջագետք ու Սիրիա։ Ասպատակող զորամասեր են ու-

ղարկվում Կիլիկիա և Կապադովկիա։ Պարսիկները մի քանի տարի շարունակ կողոպտում և ավերում են կայսրության արևելյան մասերը։ Հռոմի կայսր Վալերիանոսը 259 թվին մեծ բանակով շարժվում է դեպի Արևելք՝ կայսրության դիրքերը վերականգնելու նպատակով, բայց Եդեսիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում չարաչար պարտվում է և ինքը՝ կայսրն էլ գերի է ընկնում։ Այնուհետև պարսիկները կողոպտում են Սիրիայի Անտիոք, Կիլիկիայի Տարսոն և Կապադովկիայի Կեսարիա քաղաքները. Պարսկաստան են տանում բազմաթիվ հույն գերիներ, որոնք հետագայում մեծ դեր կատարեցին քրիստոնեության և հունական կուլտուրայի տարածման գործում։ Հայաստանի գահակալ Արտավազդը մի նամակ է գրում պարսից թագավորին և խնդրում է, որ ազատ արձակի հռոմեական կայսրին և զգուշանա նոր պատերազմից։ Բայց Շապուհը մերժում է Արտավազդի խորհուրդը։ Վալերիանոս կայսրը մնում է գերության մեջ և մեռնում, բայց հայոց թագավորի ենթադրությունը կատարվում է։ Շուտով Սիրիայի ու Փոքր Ասիայի հունական քաղաքների բնակիչները ոտքի են ելնում պարսիկների դեմ։ Հռոմը պարսիկների դեմ է հանում նաև Պալմիրայի արաբներին՝ Օդենատոսի և ապա նրա մահվանից հետո՝ նրա կնոջ Զենոբիայի գլխավորությամբ։ Այս նոր ռազմական ուժի կենտրոնը դառնում է Արաբիայի և Ասորիքի ճանապարհին գտնվող Պալմիրա առևտրական խոշոր քաղաքը։

Օդենատոսը, որ Հռոմի վասալն էր, հեծելազորի գլուխն անցած՝ մի քանի վայրերում ջարդում է պարսիկներին, դուրս է քշում նրանց Սիրիայից, Միջագետքից, ապա գրավում է Խառանը և Մծբինը։ Առաջավոր Ասիայի մի շարք երկրամասերը ենթարկվում են Պալմիրայի նորակազմ պետությանը։ Հայաստանը ևս միաժամանակ ենթարկվում է Պալմիրայի թագավորության (264 թ.)։ Վերջինի հզորացումը նոր սպառնալիք է ստեղծում Հռոմի կայսրության համար Արևելքում։ Այդ պատճառով հռոմայեցիները Էմեսում դավադրաբար սպանում են Օդենատոսին։ Նրան հաջորդում է կինը՝ քաջ ու ռազմասեր Զենոբիան, որին իրենց հպատակությունն են հայտնում Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր երկրները, ինչպես և Հայաստանը։ Զենոբիան ատում էր հռոմայեցիներին, թշնամանում է վերջինների դեմ և դաշինք կնքում պարսիկների հետ։

Հռոմն այլևս չի կարողանում հանդուրժել Զենոբիայի այդ

քայլը։ Ավրելիոս կայսրը բանակով Արևելք է մեկնում, 270 թվին Եփրատ գետի մոտ ջարդում է Զենոբիայի զորքերին և նրան էլ գերի վերցնում, իսկ Պալմիրա քաղաքը հիմնահատակ է անում։ Հայաստանը նորից մտնում է Հռոմի գերիշխանության ներքո։ Սակայն, Հռոմը, Պալմիրան նվաճելուց հետո չկարողացավ երկար ժամանակ իր իշխանության տակ պահել գրաված երկրները, որոնց թվում նաև Հայաստանը։

Այնուհետև Հռոմը մոտ 10 տարի զբաղվում է Եվրոպայում։ Պարսիկները նորից սկսում են իրենց արշավանքները դեպի Արևմուտք և կրկին իրենց են ենթարկում վիճելի երկրները, ինչպես և Հայաստանը, բայց 283 թ. Կարինոս կայսրը պարսիկների հետ կնքում է նոր դաշինք, որով և Հայաստանն անցնում է Հռոմին։

Պարսկա-պալմիրա-հռոմեական երկարատև և համառ պայքարը իր վախճանին է հասնում դարեվերջին, երբ Հռոմում իշխանության գլուխ է կանգնում Դիոկղետիանոս կայսրը (284—305), որը փորձ է անում արևելյան բռնապետական միջոցներով կայսրությունը փրկել փլուզումից։ Նա ուժեղացնում է բանակը, ստեղծում է դաշտային շարժուն զորախմբեր, վերակառուցում է վարչական ապարատը, նոր բաժանումներ է կատարում գավառներում, ստեղծում է եռաստիճան բյուրոկրատական մեխանիզմ կայսրի գլխավորությամբ, որի կարգադրությունները համարվում էին վերջնական, ծանրացնում է հարկերը և մի շարք այլ միջոցառումներ կիրառելով հնարավորություն է ստեղծում ժամանակավորապես համախմբելու կայսրությունը։ Այս միջոցառումները միաժամանակ հնարավորություն են տալիս ճնշելու ներքին խռովությունները և հարձակման անցնելու արտաքին թշնամիների դեմ։

Դիոկղետիանոսի կայսրության առաջին տարիներին (286—288), Սասանյան Պարսկաստանի Վռամ 2-րդ (275—292) թագավորի հետ համաձայնություն է տեղի ունենում Միջագետքի և Հայաստանի սահմանների մասին։ Այդ ժամանակ, այսինքն 287 թվին Հայաստանում թագավոր է նշանակվում Տրդատ 3-րդը, Խոսրովի որդին։ Այս համաձայնությունը խախտվում է, երբ Պարսկաստանում 293 թվին գահ է բարձրանում Շապուհ 1-ինի որդի ռազմասեր Ներսեհ թագավորը, որն անմիջապես պատերազմ է հայտարարում Հռոմին։ Դիոկղետիանոս կայսրը իր հերթին շտապում է մեծ բանակով շարժվել դեպի Արևելք, մտնում է Միջագետք, իսկ իր աթոռակից Մաքսիմիանոս Գալերիոսը մտնում է Հայաստան։ Հայերը Տրդատի գլխավորությամբ անցնում են հռոմայեցիների կողմը։ 296 թվին Հայաստանում տեղի է ունենում արյունահեղ ճակատամարտ, որը լուծում էր Արևելքի և Հայաստանի բախտը։ Այդ ճակատամարտում պարսիկները ջախջախիչ հարված են ստանում։ Գոռոզ ռազմասեր Ներսեհը վիրավորվելով փախչում է, իր թշնամիների ձեռքը թողնելով բանակն ու արքունական վրանները, արքունի գանձերը, հարեմը, թագաժառանգներին և բազմաթիվ պարսիկ մեծամեծներ։ Հայաստանում տեղի ունեցած վճռական ճակատամարտում խոշոր դեր է կատարում հայ ժողովուրդը, որը տարիների ընթացքում կուտակելով իր դժգոհությունը Սասանյան նվաճողների դեմ՝ հարմար առիթի էր սպասում իր զայրույթը հանդես բերելու Տիգրոնի բռնակալների նկատմամբ և ահա այդ տեղի ունեցավ 296 թվին։

Պարտված պարսիկները հաշտություն առաջարկեցին։ Հռոմայեցիները ընդունեցին և 297 թվին Մծբինում կնքվեց պայմանագիր՝ 40 տարի ժամանակով։ Ըստ այդ պայմանագրի՝ երկու երկրների սահմանը ճանաչվում էր Տիգրիս գետը, սկսած Կորդվաց աշխարհից։ Անդրտիգրիսյան հովիտները՝ Կորդուքը, Աղձնիքը, Մոկքը, ինչպես նաև Ծոփքը և Անգեղտունը անցնում են Հռոմին, իսկ դրա փոխարեն Դիոկղետիանոս կայսրը Ատրպատականի հաշվին բավարարում է Հայաստանին և վերջինիս արևելյան սահմանը հասնում է մինչև Զագրոսի լեռները և Ուրմիո լիճը։ Դրանով Հայաստանի և Պարսկաստանի միջև ստեղծվում է վիճելի հողամաս։ Հայաստանը, սկսած 252 թվից, մոտ 45 տարի երկարամյա կռիվների ասպարեզ դառնալուց հետո, նորից վերականգնում է իր անկախությունը և կրկին անգամ հայկական գահի վրա հաստատվում է Խոսրով 1-ինի որդի Տրդատ 3-րդը (297—330), որը դրանից դեռ 10 տարի առաջ իշխում էր Հայաստանում, բայց Ներսեհի արշավանքի պատճառով փախել էր երկրից։

Տրդատ 3-րդը մանուկ հասակից ապրած լինելով Հռոմում՝ կրթվել ու դաստիարակվել էր կայսրության կուլտուրական հռչակավոր այդ կենտրոնում։ Մշտապես մասնակցելով հռոմայեցիների պատերազմներին՝ իր կատարած քաջագործություններով ու սխրագործություններով սիրելի էր դարձել Դիոկղետիանոս կայսրին։ Տրդատ 3-րդի ժամանակ, շնորհիվ ստեղծված երկարամյա խաղաղության, Հայաստանը բռնում է իր անտեսական ու

կուլտուրական վերելքի ճանապարհը և տեղի է ունենում կրոնական հեղաշրջումը:

գ) Քրիստոնեության հաստատվելը Հայաստանում

Հայերի հեթանոսական կրոնը

Հռոմի և Սասանյան Պարսկաստանի միջև 297 թվին Մծբինում կնքված դաշնագրությանը հաջորդող խաղաղության քառասնամյա շրջանի կարևոր երևույթը հայ կյանքի համար քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հայտարարելն էր: Հայաստանի ֆեոդալական դասի իդեոլոգիայի մեջ կատարվում էր մի հեղաշրջում, որը երկար պայքարից հետո ազգաբնակչության լայն խավերի համար դառնում էր պարտադիր: Մինչ այդ տիրող կրոնը հեթանոսական էր, որ բնորոշ է բազմաստվածությամբ և բնության ուժերի պաշտամունքով:

Հեթանոս հայերի հին հավատի մասին տեղեկություններ գրեթե չկան, մեզ հասած տեղեկությունները վերաբերում են հեթանոսական կրոնի ավելի զարգացած ձևերին, բայց դրա մասին էլ դարձյալ բավարար տեղեկություններ չկան: Հայկական հեթանոսական կրոնի հիմքը կազմել է բնության երևույթների պաշտամունքը, որը գալիս է շատ հին դարերից, դեռևս տոհմական շրջանից: Խալդերը ոչ միայն հայերի լեզվի, կուլտուրայի և տնտեսության վրա թողին իրենց ազդեցությունը, այլև կրոնի: Խալդերի և բազմաթիվ այլ ցեղերի և պարսիկների կրոնների ազդեցության տակ աստիճանաբար ձևավորվում է հեթանոս հայերի կրոնը:

Հայաստանում տոհմատիրական հասարակարգում ազգաբնակչությունը, ինչպես նույն տնտեսական զարգացման պայմաններում ապրող այլ երկրների ազգաբնակչությունը, եղել է բնապաշտ: Բնության տարրերը, նրա զանազան երևույթները, կենդանական և բուսական աշխարհը, որոնք կապված են եղել նրա արտադրության և ապրուստի միջոցների հայթայթման հետ և որոնք մեծ չափով կախման մեջ են դրել նրա գոյությունը, դարձել են պաշտամունքի առարկաներ: Այսպես, պաշտամունքի առարկաներ էին դարձել ջուրն ու կրակը, մրրիկն ու կայծակը, լեռներն ու անտառները, արևն ու աստղերը, զանազան կենդանիներն ու ծառերը:

Ժողովրդական հավատալիքների մեջ հնագույն շրջանից

մնացած խոշոր դեր են կատարել ոգիների հավատալիքն ու մեռյալների պաշտամունքը: Մեռած նախնիների խնամքը վայելելու համար նրանց գերեզմաններում դնում էին զանազան կերակուրներով լի կճուճներ, մեռածի զենքերն ու զարդարանքները, նրա հետ թաղում էին նույնիսկ նրա ծառաներին, զանազան կենդանիներ՝ իբրև զոհ: Այսպիսի թաղումների օրինակներ են հանդիսանում Հայաստանի զանազան վայրերում հայտաբերված գերեզմանները:

Լույսն ու խավարը բարի և չար ոգիների գործ են համարվել: Բնության անմեկնելի երևույթները բացատրվել են այդ ոգիներով: Բնության ուժերի դեմ մղած իրենց անհավասար պայքարում, «ճակատագրի ամենազոր կարողությունը», «աստղով բախտավոր» լինելը, «ճակատագիրը», նրանց կյանքում խոշոր դեր են կատարել: Ամուսնության մեջ անբախտացած հայ աղջիկը սրտի կսկիծով երգել է իր բախտը մրմնջալով, թե «ինչ կարող եմ անել հորս և մորս, այս էր գրված իմ ճակատին»:

Դասակարգային հասարակության առաջացմանը և դասակարգային հարաբերությունների զարգացմանը զուգընթաց ստեղծված հայկական աստվածությունների պանթեոնի կողքին հայ ժողովուրդը դարեր շարունակ պահպանել է նախնադարյան շրջանի այդ հավատալիքներն ու սնոտիապաշտությունները: Նույնիսկ քրիստոնեությունը բռնի և նուրբ միջոցներով անզոր է լինում վերացնել նրանց: Վերջին ժամանակներս հավաքված ժողովրդական նյութերը դարերի ընթացքում այդ պաշտամունքների, հավատալիքների և սնոտիապաշտությունների կրած ձևափոխություններով հանդերձ, ցույց են տալիս նրանց հնագույն ծագումը: Քրիստոնեական եկեղեցին իր ազդեցությունն ազգաբնակչության լայն խավերի մեջ ամրապնդելու համար, հնադարյան այդ հավատալիքները ձևափոխությունների ենթարկելով դարձրել է քրիստոնեական եկեղեցու սեփականություն: Ժողովրդագիտական այդ նյութերից բերենք մի քանի օրինակ պարզ գաղափար կազմելու համար հնադարյան բնապաշտական այդ կրոնի մասին:

Ջրի պաշտամունքը Հայաստանի զանազան շրջաններում ամենատարածվածն է եղել: Բազմաթիվ վերապրուկներ ցույց են տալիս, թե Հայաստանի աշխատավոր գյուղացիությունն ինչպիսի սնոտիապաշտություններով և նախապաշարմունքներով անձրևի է սպասել: Այդ մասին հավաքված նյութերում կարդում ենք, որ երաշտ ամռանը և չորային եղանակին Հայաստանի

տարբեր գավառներում կատարվում է «Նուրի»-նի օրը, երբ երեխաները աղջկա ձևով շինած խրտվիլակի ձեռքերից բռնած՝ շրջում էին գյուղի միջով և կանգ առնելով ամեն տան առաջ՝ երգում էին.

«Ծուգլուրուրիկն եկել ա
Երկնքից ցող ա ուզում,
Գետնից պտուղ ա ուզում»:

«Ծուգլուրուրիկ»-ի (Նոր-Բայազետ) կամ «Խորհկուկուլու»-ի «չիչի մամայի» (Արևմտյան Հայաստան) գլխին ջուր ածողները հավատում էին, թե նա անձրև է բերելու և չորացած այգիները զովանալու են:

Քրիստոնեական եկեղեցու սրբագործումն է այս, երբ խրտվիլակին փոխարինում է ձեռքին խաչ բռնած սպիտակ շապիկ հագած պառավը, երբ խրտվիլակի փոխարեն պառավն էր թրջվում աներից նրա գլխին թափած ջրից: Եվ կամ ինչպիսի եկեղեցական թափորներ չեն կազմվել խաչ ու խաչվառով, խունկ ու բուրվառով, հնամենի ժողովրդական այդ սնոտիապաշտությունները նվիրագործելով պաշտոնական եկեղեցու կողմից: Եվ թե ինչպես այդ թափորների ընթացքում կրոնական նախապաշարումներով կաշկանդված հայ շինականը Շիրակի գյուղացիության հետ միասին ջուր, անձրև է աղերսել սրբերից:

«Երկիրս չորացավ, հասկս չի լցվում, տիրամայր ս. Կույս, ջրի ենք կարոտ, անձրևի կարոտ, մեռած չէ մեր հույսը: Մենք վաստակած ենք, մեր աշխատանքը պտղից դեռ զուրկ է:

Տիրամայր սուրբ Կույս, մեր կողմը լսե, դու անձրև ղրկե»:

Եվ այս թափորները գլխավորել են այն եկեղեցականները, որոնք հազար «Նզովք» էին կարդում վանքապատկան առուներից «Ջուր գողացող» գյուղացիների գլխին: Որքա՜ն աղբյուրներ ու կաթնաղբյուրներ «սուրբ» աղբյուրների շարք են դասվել և ինչպիսի՜ այլ սնոտիապաշտություններ են ստեղծվել ջրի կուլտի շուրջը: Հնագարյան ոգիների պաշտամունքն իր արտահայտությունն է գտել ջրի, անտառի, լեռան ոգիների համար ստեղծված «Ջրամարդու», «Հրեղեն աղջիկների», «Բուսկիկ Ջալալի», «Ջրի պառավի», «Հավերժահարսերի», «քաջքերի» և «դևերի» մեջ:

Քրիստոնեական եկեղեցին իր պայքարի սլաքներն առաջին հերթին ուղղել է հեթանոսական շրջանի չար ու բարի ոգիների և քաջքերի դեմ: Եվ երբ եկեղեցին իր պայքարում անզոր է մնացել, «սրբերի» շարքն է դասել լայն ժողովրդականություն

վայելող ոգիներին, որոնցից նշենք «սուրբ Սարգիս»-ի պաշտամունքը, որ հնագույն շրջանում քամու, ամպրոպի և մրրիկի ոգին է ներկայացրել:

Ոգիներից դեպի աստվածությունների ստեղծումը հետագա շրջանում փոխանցման մի քայլ էր միայն: Առաջանում են բազմաստվածությունն ու հայկական պանթեոնը: Այս տեղի է ունենում այն ժամանակ, երբ տոհմատիրական կարգերի քայքայումից հետո նախկին ցեղապետները դառնում են իշխողներ: Հայկական պանթեոնի կազմավորման մեջ զգալի դեր են խաղացել հարևան ժողովուրդների աստվածությունները, սկզբնական շրջանում պարսկական զրադաշտական կրոնը, ապա՝ ասորական և հունական աստվածությունները:

Հայկական հեթանոսական կրոնը իրենից ներկայացրել է աստվածների մի ընտանիք: Այդ աստվածներից յուրաքանչյուրին վերագրել են տարբեր հատկություններ և կարողություններ, ըստ որում, նրանք իրենց կարողություններով առաջնակարգ և երկրորդական խմբերի են բաժանվել: Հայերի մոտ կարևոր առաջնակարգ աստվածությունները հանդիսացել են՝

1) Արամազդը.—աստվածների հայրը, որին համեմատում են պարսիկների Ահուրամազդա (Որմիզդ) աստծո հետ: Արամազդը հանդիսացել է Արարիչը՝ երկրի և երկնքի ստեղծողը, լիություն, բարություն, արիություն և պաշտպանություն պարգևողը: Նա համարվել է «մեծ» և «արի» աստված: Նրա գլխավոր մեհյանը, տաճարը գտնվում էր Դարանաղի գավառի Անի ամրոցում, հայոց արքաների դամբարանների վայրում, որտեղ հայոց Տիգրան 2-րդ թագավորը դրեց Զևսի արձանը: Հայր Արամազդի անունով մեհյաններ էին շինված նաև Արտաշատում և Վասպուրականում: Սկզբում Արամազդին պաշտում էին որպես վերացական էակի, իսկ հայ Արշակունիների շրջանում հույների ազդեցությամբ, Նրա համար արձան են կանգնեցնում:

2) Անահիտ դիցուհի.—Դուստրն Արամազդի, անվանվել է երկրի բարերարը, խնամակալը, կենդանություն տվողը, անվանվել է «Տիկին հայոց», «մայր ամենայն զգաստության» և «ոսկե մայր», ոսկեծին, գույն կիսանդրին ոսկուց լինելու պատճառով, Անահիտը լինելով բերրիության, կենդանության և բեղմնավորման աստվածուհի՝ կազմում էր հայոց երկրի փառքն ու պարծանքը: Նրա պաշտամունքը շատ էր տարածվել ժողովրդի մեջ: Անահիտն իր իմաստուն և քաջ հոր հետ համարվում էր առաքինություն-

ների մի ամբողջություն: Անահիտ զենդերեն նշանակում է անբիծ և անարատ: Հայ թագավորներն Անահիտից իրենց երկրի խնամակալությունն էին խնդրում, իսկ իշխանները նվիրում էին մեծաքանակ զանձեր ու հարստություններ, դրա համար էլ նրա մեհյանները շատ հարուստ էին: Անահիտի գլխավոր մեհյանները գտնվում էին Եկեղյաց գավառի Երիզա ավանում (այժմյան Երզնկա), Արտաշատում և Աշտիշատում: Տիգրան 2-րդը Երիզա ավանում կանգնեցնում է Աթենասի արձանը: Տարին մեկ անգամ մեծ հանդեսներ էին տեղի ունենում աստվածուհու պատվին, որից հետո կատարվում էին որսի հանդեսներ, ձիարշավներ և այլ աշխարհական խրախճանքներ: Անահիտ աստվածուհին իր դերով օտար տարրերի մեծ խառնուրդ է ներկայացնում:

3) Վահագն.—Որդին Արամազդի, քաջության, ուժի, ամպրոպի և կայծակի աստված: Նա կռվում ու պայքարում էր չար ոգիների ու վիշապների դեմ, հաղթում ու կործանում էր նրանց: Այդ պատճառով էլ կոչվում էր Վիշապաքաղ: Վահագնին համեմատում են հունական Հերակլեսի, Ապոլլոնի և պարսկական Վերեթրագնա աստծու հետ (հաղթության աստված): Վահագնի պաշտամունքը նույնպես շատ էր տարածված Հայաստանում, գլխավոր մեհյանը գտնվում էր Աշտիշատում, որտեղ գնում էին թագավորներ և երիտասարդներ՝ ուժ ու քաջություն խնդրելու: Վահագնի ծնունդն այսպես են երգել հայ գուսաններն ու երգիչները՝

Երկնէր երկին և երկիր,
Երկնէր և ծիրանի ծով.
Երկն ի ծովուն ուներ զկարմրիկ եղեգնիկն.
Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,
Ընդ եղեգան փող բոց ելաներ,

Եւ ի բոցոյն խարտյաշ պատանեկիկ վազեր.
Նա հուր հեր ուներ,
Ապա թե բոց ուներ մորուս,
Եւ աչկունք էին արեգակունք:

4) Աստղիկ դիցուհի.—Դուստրն Արամազդի, Անահիտի քույրը՝ սիրո և գեղեցկության աստվածուհի, Վահագնի տարփածուն—սիրուհին, ունի սեմական ծագում, բայց նմանվում է հունական Աֆրոդիտեին: Հայ երիտասարդներն ու աղջիկները շատ հաճախ էին գնում նրա մոտ՝ գեղեցկություն ու սեր խնդրելու: Աստղիկի գլխավոր մեհյանը գտնվում էր Աշտիշատում և

կոչվում էր «Սենյակ Վահագնի»: Աստղիկ դիցուհու մասին ստեղծվել էր այն առասպելը, թե նա առավոտյան միշտ գնում է լողանալու, այն ժամանակ երիտասարդները գնում են տեսնելու և նրա մերկ ու գեղեցիկ մարմինով հիանալու, բայց նա մշուշ է տարածում իր շուրջը և այդպիսով ծածկում է իր մարմինը սիրատենչ երիտասարդների աչքերից: Այդ մշուշից էլ, իբր թե, իր անունն է ստացել Մուշ քաղաքը:

5) Միհր.—Որդին Արամազդի, արեգակի, լույսի և կրակի աստված, պաշտպանում էր արդարությունը, ճշմարտությունը, հավատարմությունը և պատժում էր բոլոր ուխտադրուժներին: Հաշտարարն էր Արամազդի և մարդու միջև: Միհրի գլխավոր մեհյանը գտնվում էր Բարձր Հայքի Դերջան գավառի Բագայառինճ գյուղում: Տիգրան 2-րդն այդ գյուղում կանգնեցնում է Հեփեստոսի արձանը: Միհրը նման է պարսկական կրակի աստված Միթրային:

6) Սպանդարամետ.—Հայերի հասկացողությամբ Արամազդն իբրև հայր՝ ուներ կին ու զավակներ: Նրա կինն էր համարվում Սպանդարամետը, որը հունական ծագում ուներ և նույն գաղափարն է արտահայտում, ինչ որ հին պարսիկների Սպենդա—Տրմայիտը: Նա հողի պտղաբերության գաղափարի մարմնացումն էր: Սպանդարամետի պաշտամունքն ընդհանուր բնույթ չուներ և տարածված էր գլխավորապես Արծրունյաց երկրում:

7) Տիր.—Արամազդի դպիրը ունի իրանական ծագում, հայկական պանթեոնում նա կատարում էր աստվածների պատգամախոսի, երազներ բացատրողի, դպիրի և քարտուղարի պաշտոն: Նա քրմական դասին գիտություն, պերճախոսություն և գուշակություն անելու կարողություն տվողն է և նման է Ապոլլոնին: Արամազդը դատում էր մեռյալների ոգիներին, դրա համար էլ Տիրը կոչվում էր գրող և գրիչ Արամազդի: Տիրի մեհյանը գտնվում էր Արտաշատից Վաղարշապատ տանող ճանապարհի վրա, Երազմույն ավանում:

8) Նանե.—Աստվածուհի, որն ասորական ծագում ունի: Նրա մեհյանը գտնվում էր Բարձր Հայքի Թիլ ավանում, եղել է պատերազմի աստվածուհի: Ասորական ծագում է ունեցել նաև Բարշամ աստվածը, որի մեհյանը գտնվում էր Բարձր Հայքի Թորդան գյուղում:

9. Ամանոր.—Հայկական ծագում ունի, նա համարվել է այ-

գեգործության աստված, նրա տոնը կատարում էին օգոստոսին, պտուղների հասած ժամանակ, Նավասարդի առաջին շաբաթում, Բագրևանդ գավառի Բագավան ավանում: Ամանոր աստծու տոնը շատ շքեղ էր կատարվում և համընկնում էր Վարդավառի տոնին: Հայկական պանթեոնում չարության աստված չկար, հայերը բավարարվել են միայն չար ոգիներով ու աստվածություն չեն ստեղծել նրա համար: Դա միաժամանակ ցույց է տալիս, որ հայկական կյանքը չարության աստծու համար պայմաններ չի ստեղծել:

Հայկական հեթանոսական կրոնի վրա պարսկական ազդեցությունն սկսվում է Աքեմենյանների շրջանից, հունականը՝ Սելևկյան և Արտաշիսյան շրջաններից, իսկ ասորականը մեր էրայի առաջին դարից: Պարսիկները հայերի նման տաճարներ ու արձաններ չունեին, աղոթում ու զոհ էին մատուցում բացօթյա, բարձր տարածությունների վրա. նրանք շինում էին ատրուշան. մեջը կրակ վառում ու երկրպագում, որպես բարու և չարի, լույսի և խավարի խորհրդանշան: Ասորա-բաբելական ազդեցության տակ պարսիկները սկսում են շինել բարձր աշտարակներ և նրանց վրա դնում են ատրուշաններ: Հայերը թեև սկզբում հետևում էին պարսիկներին, բայց շուտով հունականի ազդեցության տակ կառուցում էին մեհյաններ:

Հայկական հեթանոսական աստվածների առաջ ծառայություն կատարողները կոչվում էին քրմեր, որ սիրիական բառ է: Քրմական դասը ժառանգական էր: Քրմերն ունեին հետևյալ պարտականությունները՝ կրոնական զգացմունքները վառ պահել ժողովրդի մեջ, կատարել կրոնական ծիսակատարություններ, աղոթք, զոհ մատուցել, և քարոզության միջոցով թագավորի և իշխանների հեղինակությունը միշտ բարձր պահել ժողովրդի և ստրուկների աչքում: Մեհյաններն ունեին ընդարձակ կալվածներ, որոնք կոչվում էին «սուրբ հողեր»: Հայտնի էր Սոսյաց անտառը Արմավիր քաղաքի մոտ, որի քրմերը ծառերի սոսափյունից գուշակություններ էին անում: Մեհյանները բացի հողերից ունեին նաև մեծաքանակ անասուններ, ոչխարի հոտեր, նախիրներ, ձիերի երամակներ, հանքեր և այլ հարստություններ: Մեհյանական կալվածներում, բացի քրմական դասից, ապրում էին նաև բազմաթիվ գյուղացիներ և ստրուկներ, որոնք մշակում էին մեհենական հողերը և կատարում մնացած աշխատանքները: Տաճարները զոհերի համար պահում էին հատուկ երինջներ:

Կրոնական գործերի գլխավորը քրմապետն էր, որը մեհյանական կալվածներում ուներ անսահման իրավունք, թագավորից հետո նա ամենաազդեցիկ դեմքն էր երկրում: Երբեմն ինքը թագավորը լինում էր նաև քրմապետ: Քրմապետը, բացի մեհյանական կալվածներից ստացվող եկամուտներից, հարկ էր հավաքում նաև ժողովրդից: Ուխտագնացության վայրերում ևս մեծաքանակ նվերներ ու միջոցներ էին կուտակվում: Այդ տեսակետից ամենահարուստ մեհյաններն էին Անահիտ աստվածուհու և Տարոնի, Աշտիշատի Վահագնի տաճարները, որոնք իրենց վրա էին բևեռում օտար զավթիչների ուշադրությունը: Մեհյաններն ունեին իրենց հատուկ դիվանները, գլխավոր դիվանը գտնվում էր Դարանաղի գավառի Անի ամրոցում, որը կոչվում էր «Մեհենից մատյան»: Այդ մատյանում, քրմերն արձանագրում էին կրոնական դեպքերի պատմությունը: Դժբախտաբար այդ մեհյանական դիվաններից ոչ մեկը մեզ չի հասել, նույնիսկ հայտնի չէ, թե ինչ լեզվով էին գրում, հայերեն, թե օտար լեզուներով:

Մեհյաններն ու նրանց սպասարկու քրմերը մեծ ուժ ունեին երկրում և հենարան էին հանդիսանում իշխանների ու թագավորների տիրապետության համար: Քրմերի ձեռքում էին գտնվում գիրն ու գրականությունը, դպրոցները, գիտությունը, բժշկությունը, գուշակությունները, երազների մեկնումը, դիվահալածությունը: Այդ պատճառով էլ նրանց ազդեցությունը մեծ էր ոչ միայն երկրում, այլև իշխանների ու թագավորների վրա: Քրմերը հանդիսանում էին տիրող դասակարգի գաղափարախոսները:

Արտաշիսյան դինաստիայի շրջանում Հայաստանի արևմտյան նահանգները ենթակա էին հելլենիստական կուլտուրայի ազդեցությանը: Աստվածներին արձանների ձևով պատկերացնելը, ինչպես և նրանց պատկերները զանազան թանկարժեք մետաղներից ու նյութերից պատրաստելը հայերը փոխ են առել հույներից: Նախքան հելլենիստական և արամեական կուլտուրաներին ծանոթանալը, հայերն իբրև մազդեական կրոնի ենթակա, իրենց աստվածների համար արձան չէին կերտում: Արտաշիսյան դինաստիայի շրջանում Փոքր Ասիայից Հայաստանի արևմտյան նահանգներն են տեղափոխվում հետևյալ հունական աստվածների արձանները՝ Արտեմիսի, որ համապատասխանում էր հայոց Անահիտ դիցուհուն, արձանը տեղավորվում է Երիզա ավանում, Հեփեստոսի (Միհր) Բագայառիճում, Աֆրոդիտեի (Աստղիկ), Զևսի

(Արամազդը), Աթենասի (հայոց Նանեն), Ապոլլոնի (հայոց Տիր) և Հերակլեսի (հայոց Վահագն) արձանները:

Քրիստոնեության ծագումն ու զարգացումը

Մեր էրայի 1-ին դարում Հռոմեական կայսրությունը տիրում էր իր ժամանակի կուլտուրական աշխարհի երկրների մեծագույն մասին, բայց նրա ազդեցությունն ավելի լայն էր տարածված: Հռոմայեցիների երկարամյա տիրապետությունը ոչ միայն Արևմուտքի՝ այլև Առաջավոր Արևելքի երկրների վրա, ստեղծել էր մի ամբողջական տերիտորիա: Կայսրության տարբեր մարզերն իրար հետ էին կապված շատ բանուկ ճանապարհներով, որոնք ռազմական և առևտրական մեծ նշանակություն ունեին և հատկապես կառուցվել էին այդ նպատակների համար: Այդ ճանապարհներով էին գնում-գալիս նաև կրոնական քարոզիչներն ու առաքյալները: Հռոմեական կայսրությունը տիրելով Հին Աշխարհի մեծագույն մասին՝ ճնշեց ու վերացրեց բոլոր տեսակի ազատագրական շարժումներն ու ստրուկների ապստամբությունները և ամենուրեք ծանր կեղեքման ենթարկեց թե ստրուկներին և թե հպատակ երկրներին: Հռոմը ճնշեց նաև Փոքր Ասիայի ազատ քաղաքների ու Հունաստանի ռևոլյուցիոն շարժումները և ամենուրեք տարածեց ու ամրապնդեց իր կեղեքիչ լուծը ճնշված մասսաների վրա: Իրենց պայքարից պարտված և հուսահատված մասսաներն այս անգամ հանձին երևակայական Քրիստոսի՝ հանդես բերին մի «փրկչի», որը պետք է գար աշխարհ և փրկեր տառապյալներին: Այդ մեսիայի (փրկչի) գաղափարի ստեղծման նախնական հայրենիքը հանդիսացավ Հրեաստանը, որը նույնպես մտնում էր կայսրության սահմանների մեջ:

Հռոմի զորավար Պոմպեոսը իր հաշիվները մաքրելով Արևելքում հայոց թագավոր Տիգրան 2-րդի և Պոնտոսի թագավոր Միհրդատ 6-րդի հետ՝ իր բանակով մտավ նաև Հրեաստան, ոչնչացրեց հրեական ժողովրդի անկախությունը և թողեց միայն Երուսաղեմի քահանայապետությունը: Այսպիսով հրեա ժողովուրդը ևս ընկավ Հռոմի տիրապետության տակ և ենթարկվեց նրա դաժան կեղեքմանը: Իր անկախության համար մղած երկարամյա պայքարի պարտությունից հետո հրեա ժողովուրդը մի կողմից բռնեց իր արտագաղթի ուղին, իսկ մյուս կողմից հանձինս «փրկչի—մեսիայի» իր առաքյալների միջոցով առաջ բերեց նոր ուսմունք, որը շատ շուտով տարածվեց կայսրության տերիտո-

րիայի տարբեր մարզերում և դարձավ համաշխարհային կրոն: Ստրուկ-կեղեքվող մասսաներն ամենուրեք կազմեցին քրիստոնեական համայնքներ՝ այդ նոր ուսմունքին հետևելու համար:

Քրիստոնեությունը սկզբում հանդես գալով որպես Հռոմեական կայսրության լատիֆունդիաներում, հանքերում ու արհեստանոցներում տառապող ստրուկների ազատագրական պայքարի գաղափարախոսություն, դեմոկրատական բնույթ էր կրում: Սակայն ստրուկները չկարողացան և չէին էլ կարող կազմակերպվել իբրև դասակարգ, որպեսզի հաղթանակ տանեն ստրկատերերի դեմ մղած իրենց արյունալի մարտերում: Հասարակական լայն խավերի այդ ապստամբությունները հաճախակի, խրոնիկական էին դարձել կայսրության ապրած ծանր ճգնաժամի դարաշրջանում: Երկրորդ դարի վերջերից, հատկապես երրորդ դարում, կայսրության մեջ տիրող ծանր ճգնաժամն իր արտացոլումն է գտնում նաև իդեոլոգիական բնագավառում:

Հասարակական-քաղաքական հարաբերությունների անկայունությունը ճգնաժամի ընթացքում հասարակական լայն խավերին զրկում էր հոգեկան հավասարակշռությունից: Հուսահատված այդ խավերն անցնում էին նախապաշարումների, միստիցիզմի գիրկը և նրանց մեջ էին որոնում իրենց փրկության ուղին: Այդ հողի վրա էր, որ ծագեցին զանազան աղանդներ, որոնց սուր պայքարն արտահայտվում էր սոցիալական ընդհարումներում: Այս ընդհարումներն իրական կյանքում իրենց լուծումը չէին ստանում, ուստի կրոնական պաշտամունքների պայքարի ընթացքում ավելի ու ավելի մեծ հաջողություններ է ձեռք բերում քրիստոնեությունը, որը հակադրվելով հին, մինչ-քրիստոնեական բոլոր կրոններին՝ անտանելի կացության մատնված հասարակական լայն խավերի համար փրկություն էր խոստանում իրական կյանքից դուրս՝ այն աշխարհում:

Քրիստոնեությունը սոցիալական պայքարի իր այս վերացական, ձևափոխված բնույթով դադարում է ստրուկների գաղափարախոսությունը լինելուց: Շահագործող դասակարգի տարբեր շերտերը թափանցում են քրիստոնեական համայնքները: «Եթե քրիստոնեությունը մինչև այժմ գլխավորապես ստրուկների... և աղքատ արհեստավորների կրոնն էր հանդիսանում,—գրում է 3-րդ դարի մի հեղինակ,—ապա հիմա նա գնալով ավելի շատ կողմնակիցներ է գտնում նաև բարձր, կրթված խավերի շարքերում»:

Քրիստոնեությունն իր աստիճանական փոփոխություններով վեր է ածվում շահագործող դասակարգի գաղափարախոսության, սրբագործում է ֆեոդալական իշխանությունը և դառնում աշխատավորական լայն խավերի շահագործման միջոցներից մեկը։ Հռոմի լծից անկախության ձգտող Արևելյան ժողովուրդների իշխող դասերի համար քրիստոնեությունը հաճախ կռվի զենք էր դառնում։ Այդ երկրների աշխատավորական խավերի մեջ նրա ծավալուն օգտագործումն էր նույն երկրների իշխող դասի կողմից։ Սրան փայլուն օրինակ կարող է ծառայել այն, որ Արևելքում Եդեսիայի թագավորությունը երկրորդ դարի վերջին քրիստոնեությունն առաջին անգամ պետական կրոն է հայտարարում։ Ասորիքում, Կապադովկիայում, Փոքր Հայքում և կայսրության ասիական այլ գավառներում վաղուց լայն ծավալ էր ստացել քրիստոնեությունը։

Երրորդ դարում քրիստոնեությունը դադարում է ստրկության գաղափարախոսությունը լինելուց։ Քրիստոնեական համայնքների մեջ են մտնում սոցիալական տարբեր շերտեր, այսինքն շահագործող դասակարգի զանազան խմբավորումները, որոնք փոփոխման են ենթարկում այդ համայնքների սոցիալական կազմը, իսկ սրանք էլ իրենց հերթին անհրաժեշտ ուղղումներ ու փոփոխություններ են մտցնում քրիստոնեական կրոնի մեջ՝ ելնելով շահագործող դասակարգի շահերից։ Այդ շրջանից սկսած քրիստոնեությունը ձևակերպվում է որպես տիրապետողների կրոն. այդ կրոնն օգտագործում է շահագործողների իշխանությունը, որն այն դարձնում է աշխատավորական մասսաների շահագործման հիմնական միջոցներից մեկը։ Այդ պայմաններում նա Հայաստանում չէր կարող լայն ընդունելություն գտնել աշխատավորական մասսաների մեջ։ Դրան ապացույց կարող է ծառայել այն պայքարը, որ ցուցաբերել են ազգաբնակության լայն խավերը, նույնիսկ քրիստոնեությունը պետական կրոն հաստատելուց հետո։

Քրիստոնեության տարածումը Հայաստանում

Քրիստոնեությունը նախքան պետական կրոն հայտարարվելը մուտք էր գործել Հայաստան ասորի և հույն քարոզիչների միջոցով. ուստի՝ պետք է ընդգծել քրիստոնեության մուտքը Հայաստան և նրա պետական կրոն դառնալու երկու շրջանները։ Մծբինից, Եդեսիայից, Ասորիքից, Կապադովկիայից և Փոքր Հայքից Հայաստան եկող քրիստոնյա քարոզիչներն ու առաքյալները որոշ աշխատանք էին կատարել երկրորդ դարի վերջում և երրորդ դարի ընթացքում։ Դրսից եկած քրիստոնյա քարոզիչների ազդեցության տակ Հայաստանում կազմակերպվում են քրիստոնեական համայնքներ, որոնց մեջ կարևոր դեր էր կատարում Վանա լճի շրջակայքում հիմնված Մերուժան եպիսկոպոսի համայնքը։ Քրիստոնեության պրոպագանդայի այդ երկու ուղիները՝ Հարավից—Եդեսիայից և Արևմուտքից—Կեսարիայից—որոշակի երևում են 4-րդ դարի պատմական անց ու դարձերում, երբ այդ երկու հոսանքների ներկայացուցիչները հայ եկեղեցու գերիշխանության շուրջն ուժեղ պայքար են մղում միմյանց դեմ։ Երրորդ դարի ընթացքում իշխող դասակարգի գաղափարախոսության վերածված քրիստոնեության այդ պրոպագանդան Հայաստանի աշխատավորական լայն խավերում շատ թույլ էր տարածվում։ Հայկական միջավայրում պահպանված վկայաբանական ավանդությունները, որոնք հետագա դարերից միայն գրավոր հասել են մեզ, հատկապես հայսմավուրքները, ցույց են տալիս, որ որպես քրիստոնեության տարածման ջատագով հանդես են եկել արքունական պալատի անձեր երկու սեռից՝ իշխաններ, հարուստ մեծատուններ, կալվածատերեր, բժիշկներ, իշխանական կամ հարուստ դասի կանայք։ Քրիստոնեության տարածման գործին շատ քիչ են մասնակցել արհեստավորները, իսկ գյուղացիները կարծես բնավ չեն հետաքրքրվել և նրանք միայն հարկատուներն են հիշատակվում։

Հայկական սկզբնաղբյուրներում կրոնական այս հեղաշրջումը բացատրվում է առասպելական ձևով և հրաշքներով, որտեղ իբրև կենտրոնական անձնավորություններ հանդես են գալիս ժամանակի թագավոր Տրդատ 3-րդը և Գրիգոր Պարթևը, որը հետագայում «Լուսավորիչ» է կոչվել։

Հայաստանը երրորդ դարում անընդհատ պատերազմների ասպարեզ էր դառել, դրա համար էլ այդտեղ մուտք գործող քրիստոնեությունը չէր կարող հասնել իր նպատակներին։ Բայց 297 թվին կնքված պայմանագրի հետևանքով ստեղծված քառասունամյա խաղաղության շրջանում, երբ Տրդատ 3-րդը հաստատվեց իր հոր գահի վրա, քրիստոնեությունը Գրիգոր Լուսավորչի միջոցով մեծ նվաճումներ կատարեց։ Սակայն, Տրդատ 3-րդը հետևելով հռոմեական կայսրների օրինակին՝ մի շարք հալածանքներ սկսեց քրիստոնյաների դեմ, բայց, վերջիվերջո նա որոշ քաղաքական հանգամանքներ նկատի ունենալով՝

ստիպված եղավ 4-րդ դարի սկզբում ընդունել քրիստոնեությունը և այն հայտարարել պետական կրոն։ Անշուշտ այդ գործում մեծ դեր է կատարել Գրիգոր Լուսավորիչը, որը հայ ժողովրդի պատմության նշանավոր գործիչներից մեկն է եղել։

Գրիգոր Լուսավորչի կենսագրության ու գործունեության մասին տեղեկությունները քիչ կան, եղած փաստերն էլ առասպելական զրույցների բնույթ են կրում։ Ըստ հայկական պատմագիրների՝ Գրիգորն Անակ իշխանի որդին էր, որը, ինչպես գիտենք, սպանեց հայոց Խոսրով թագավորին։ Դրանից զայրացած՝ հայ իշխանները կոտորում են Անակի տոհմը, ազատվում է միայն փոքրիկ Գրիգորը, որին նրա դայակ Եվթաղը փախցնում է Կապադովկիայի Կեսարիա քաղաքը, որը հանդիսանում էր քրիստոնեական կրոնի կենտրոն։ Նա Կեսարիայում կրթվում ու դաստիարակվում է քրիստոնեական ոգով, ամուսնանում է և ունենում երկու որդի, ապա կնոջից բաժանվելով 280-ական թվականներին գալիս է Հայաստան, ձեռք է բերում իր հոր կալվածները և զբաղվում է քարոզչությամբ ու նոր թափ է տալիս քրիստոնեական կրոնի տարածմանը։ Բայց, երբ Տրդատ 3-րդը թագավոր է դառնում, իմանալով Գրիգորի ով լինելը, բանտարկել է տալիս Արտաշատի Խորվիրապում։ Բայց թե Տրդատը երբ է նրան ազատել բանտից, պատմական ստույգ տեղեկություններով այդ ճշտել հնարավոր չէ։

Ավանդության ասելով, երբ Տրդատն սպանել է տալիս 40 կույսերին, հիվանդանում է և հնարավոր չէր բուժելը։ Նրա քույր Խոսրովադուխտը, որ համակրում էր քրիստոնյաներին, երազ է տեսնում, որ իր եղբորը կարող է բուժել միայն 14 տարի առաջ Խորվիրապում բանտարկված Գրիգորը։ Օտա Ամատունին գնում է Արտաշատ, Խորվիրապի բանտից հանում է Գրիգորին և բերում Վաղարշապատ, ուր նա 66 օր քարոզելով բուժում է Տրդատին, իսկ վերջինը բուժվելով ընդունում է քրիստոնեությունը և անմիջապես Գրիգորի հետ միասին մոգական մի գավազանի հարվածով քրիստոնեական կրոնը տարածում են ողջ երկրում։

Քրիստոնեության ընդունումը Տրդատի կողմից, քաղաքական ակտ է եղել։ Ֆեոդալական Հայաստանի համար քրիստոնեությունը, որպես ֆեոդալական գաղափարախոսություն, չորրորդ դարի սկզբում Հայաստանի իշխող դասի կողմից գերադասվում էր հեթանոսական կրոնից, որը առաջացած լինելով այլ արտադրական հարաբերություններից, այլևս չէր համապատասխանում նոր հասարակական հարաբերություններին։

Զրադաշտական կրոնի և հունական աստվածների ազդեցության տակ կազմված հայկական պանթեոնը շահագործվող մասսաներին չէր հրապուրում «հանդերձյալ աշխարհի արքայությամբ»։ Իդեոլոգիական բնագավառում հեթանոսական կրոնը չէր բավարարում շահագործող դասակարգին, սոցիալական հակասությունից առաջացած դասակարգային անտագոնիզմը թըմբեցնելու համար։ Քրիստոնեությունը, որ այս իրական աշխարհում տառապողներին խոստանում էր այն աշխարհում վայելքներ, հարմարագույն զենք էր դառնում ֆեոդալական շահագործող դասակարգի ձեռքում։

Նոր գաղափարախոսության պրոպագանդան առհասարակ թույլ էր տարածվում Հայաստանում, բայց նրա պետական կրոն ընդունելը բացի վերև նշված հանգամանքից կարևոր էր նաև քաղաքական տեսակետից։ 4-րդ դարի սկզբին հայ Արշակունիների արքունիքի կողմից քրիստոնեության ճանաչումը և նրա պետական կրոն հայտարարելը բացատրվում է Արշակունի թագավորության քաղաքական վիճակով, որը սերտորեն կապված էր Պարսկաստանի ու Հռոմի քաղաքական անց ու դարձի հետ։ Հայ Արշակունիները 297 թվի դաշնագրությամբ կապված լինելով Հռոմից՝ իրենց դիրքերն ուժեղացնելու համար անհրաժեշտ էին գտնում Հայաստանի ֆեոդալական դասակարգի մեջ ուժեղ ազդեցություն ձեռք բերած զրադաշտական կրոնը ոչնչացնել և վերացնել պարսկական ազդեցությունը Հայաստանից։

Քրիստոնեության դեմ կատարված հալածանքով, որ հայկական միջավայրում ստեղծված առասպելները խոսում են Գրիգորի անձի վրա, Տրդատ 3-րդն իր թագավորության սկզբնական շրջանում անմիջականորեն գործադրում էր Հռոմից եկած հրահանգները։ Կայսրությունն այս շրջանում ներքին օպոզիցիոն (քրիստոնյա) տարրերի նկատմամբ ամենախիստ միջոցներով վարում էր «Ուժեղ բռունցքի» քաղաքականություն։ Մինչև Դիոկղետիանոս կայսրի մահը (305) ուժեղ չափով շարունակվում էին այդ հալածանքները, մի քաղաքականություն, որին հետևողական կերպով հետևում էր նաև Տրդատը։ Բայց չորրորդ դարի սկզբին Հայաստանի համար բացի պարսկական վտանգից մի նոր և ավելի լուրջ սպառնալիք էր ստեղծվում նաև Հռոմը։

305 թվից հետո քաղաքական նոր իրադրություն է ստեղծվում Հայաստանի համար։ Միաժամանակ չորս կայսրներ Հռոմի կայսրությունը բաժանում են իրենց միջև։ Այդ կայսրների միջև

գերիշխանության համար տեղի են ունենում ուժեղ կռիվներ։ 305 թվին Արևելքում կեսար նշանակված Մաքսիմիանոս Դայան 308 թ. կայսր է հռչակում իրեն. Նա ծրագրում է Արևելքի վասալ թագավորությունները վերացնել և նրանց երկրամասերը միացնել կայսրությանը։ Այդ նպատակով 311 թվին Մաքսիմիանոս Դայանի հռոմեական բանակները հարձակվում են Հայաստանի վրա։ 305 թվից սկսած Հայաստանի համար ստեղծվում է ծանր կացություն. Արշակունյաց թագավորության գոյության հարցն է դրվում։ Այս պայմաններում, երբ մի կողմից Հայաստանին սպառնում էր Պարսկաստանը, իսկ մյուս կողմից Հռոմի Արևելյան նոր կայսրությունը հանձին Մաքսիմիանոս Դայանի։ Սասանյան Պարսկաստանի թշնամի հայ Արշակունի արքունիքը հենվում է Դայան կայսրի թշնամիների վրա, որոնք քրիստոնեությունը դրոշ էին դարձրել Հռոմեական կայսրության դեմ իրենց մղած պայքարի ընթացքում։ Այս շրջանում հարևան Կապադովկիան (Կեսարիա), Փոքր Հայքը, Կիլիկիան, Սիրիան և Մծբինն ու Օսրոյենը, որտեղ ուժեղ կերպով ծավալվել էր քրիստոնեությունը, հանդես են գալիս հայ արքունիքի կողմ պայքար մղելու Մաքսիմիանոս կայսրի և պարսկական արքունիքի դեմ, որոնք սպառնում էին վերոհիշյալ երկրներին։ Ահա այս շրջանում է, որ Տրդատը քրիստոնեությունը պետական կրոն է հայտարարում, այսինքն 303—308 թ. թ. շրջանում։

Մաքսիմիանոս Դայա կայսրի կողմից 311 թվին Հայաստանի վրա կատարված հարձակումը ետ է մղվում։ Դեպքերը տարբեր ընթացք են ստանում կայսրության արևմտյան մասում, որտեղ Կոստանդին կայսրը, Դիոկղետիանոսի մահվանից հետո օգոստոսների տարբերի պայքարի ընթացքում, վարում էր քրիստոնեությունը հեթանոսության հետ հաշտեցնելու քաղաքականություն։ 313 թ. հրապարակվում է Միլանի հայտնի էդիկտը՝ հրովարտակը, որով քրիստոնյաներին տրվում էր դավանանքի ազատություն։ Կոստանդինի կողմից Դայա կայսրին հաղթել ու սպանելը (312 թ.), կայսրության մայրաքաղաքը նախ Նիկոմեդիա և ապա Բյուզանդիոն տեղափոխելը, քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելը, Տրդատի կողմից կատարված կրոնական խոշոր հեղաշրջումն ամրապնդում է Հայաստանում և քրիստոնեությունը աստիճանաբար հաղթանակում ու դառնում է պետական կրոն։

Կրոնական հեղաշրջման հետևանքով Հայաստանում առաջ է գալիս ուժեղ դիմադրություն։ Սկսվում է արքունիքի սրի և խաչի քաղաքականությունը, ծավալվում է երկար արյունալի կռիվների շրջան, որոնց արձագանքները գտնում ենք հայկական միջավայրում ստեղծված «Տարոնի վեպ»-ի մեջ։ Այդ կռիվների ընթացքում կործանվել են ոչ միայն հեթանոսական տաճարները և մեհյանները, այլև ողջ հեթանոսական շրջանի կուլտուրական արժեքները։ Ժողովուրդը կապված էր իր հին կրոնին, հեթանոս քրմերն անցնում են ժողովրդի գլուխ, պայքարի են դուրս բերում քրիստոնյաների դեմ, որոնք աշխատում էին բռնի—զենքի միջոցով տարածել նոր կրոնը։ Քրիստոնյաները անխտիր կործանում են հեթանոսական մեհյաններն ու տաճարները, արձաններն ու տաճարներում եղած բոլոր արժեքները և համառ կերպով տարածում նոր կրոնը ժողովրդի մեջ։ Սակայն այդ նոր կրոնը ժողովրդին ընդունել էին տալիս առանց նրանց ներքին համոզման, այդ պատճառով էլ պայքարը շարունակվեց երկար, մի դարից ավելի։ Դեռևս 5-րդ դարում հեթանոսների հետևորդներն իրենց գոյությունը պահպանել էին։ Հին ու նոր կրոնների պայքարի ընթացքում հաղթանակով է դուրս գալիս քրիստոնեությունը զենքի օգնությամբ, վերևից վար, արքունիքից և ազնվականությունից դեպի ժողովուրդը։ Բայց քրիստոնյա քարոզիչները չեն կարողանում բնակչության միջից միանգամից արմատախիլ անել հեթանոսական հավատքի մնացորդները և ստիպված են լինում նրանցից մի քանիսին ընդունել և մտցնել նոր կրոնի մեջ։ Օրինակ տոների, ուխտագնացությունների, մեռելների պաշտամունքի, մատաղի—զոհի սովորությունները քրիստոնեական կրոնի մեջ են մտել հեթանոսական կրոնից։ Բացի այդ, քրիստոնեական եկեղեցին քրմության դիմադրությունը թուլացնելու նպատակով հենց նույն քրմերից և նրանց որդիներից մարդիկ էր վերցնում նոր կրոնին սպասարկելու համար, պահպանում է մի շարք քրմերի իրավունքները կալվածների վրա, որոշ մեհյաններ չեն քանդում, այլ ուղղակի վերածվում են եկեղեցիների ու վանքերի։ Նման միջոցներով քրիստոնյաները ժողովրդին և քրմերին կապեցին իրենց հետ և 4-րդ—5-րդ դարերում քրիստոնեական կրոնը դուրս եկավ հաղթանակով։

Քրիստոնեական եկեղեցին դառնում է մեհյանական հարստությունների ժառանգը, մեհյանների, տաճարների գանձերն ու կալվածներն անցնում են քրիստոնյա եկեղեցուն ու նրա սպասարկու հոգևորականությանը։ Տրդատ թագավորը և հայ իշխանները

Նորանոր կալվածներ նվիրաբերեցին նոր եկեղեցուն ու հոգևորականությանը, կառուցեցին նոր վանքեր ու եկեղեցիներ, Վաղարշապատ (Էջմիածին) քաղաքում, արքունի մեհյանների վայրում կառուցեցին Էջմիածնի վանքը, իսկ Մուշի Աշտիշատում՝ Վահագնի մեհյանի տեղում հիմնեցին Ս. Կարապետի վանքը, որը նույն դերն ու նշանակությունն ունեցավ. ինչ որ Վահեվահյան տաճարը։ Կազմակերպվեցին եպիսկոպոսական թեմեր, սկզբնական շրջանում սակավաթիվ, իսկ հետագայում՝ խոշոր նախարարությունների մեծ մասում։

Գրիգոր Լուսավորիչը, որ քրիստոնեության ընդունման և տարածման գործում մեծ դեր էր կատարել, կանգնում է հայ եկեղեցու գլուխը։ Տրդատի համաձայնությամբ 16 մեծամեծ իշխաններ տանում են նրան Կապադովկիայի մայրաքաղաք Կեսարիա, որտեղ սովորել էր նա։ Այստեղ և ձեռնադրվում է եպիսկոպոսհայրապետ-կաթողիկոս և վերադառնում Հայաստան։ Նրա տոհմը ժառանգական իրավունքով կանգնում է հայ եկեղեցու գլուխ և կառավարում է այն, իսկ հետագայում հայ եկեղեցին Գրիգոր Լուսավորչի անունով կոչվում է Լուսավորչական։ Ինքը, Գրիգորը Հայաստան վերադառնալով անմիջապես ձեռնադրում է 12 եպիսկոպոս, որոնց մեջ նաև Աղբիանոս եպիսկոպոսին, որի տոհմը հետագայում խոշոր դեր է կատարում Հայաստանում Լուսավորչի տոհմից հետո։ Քրիստոնեական եկեղեցին իր ձեռքը վերցնելով նաև դպրոցական գործը՝ աստիճանաբար ուժեղանալով հայ քաղաքական կյանքում սկսում է կատարել խոշոր դեր, հատկապես իրանիզմի դեմ մղած պայքարում ժողովրդին կազմակերպելու գործում, հայերի միջից բարբարոսական սովորությունները վերացնելու, գիր ու գրականություն ստեղծելու և կուլտուրան զարգացնելու գործում։ Դրանով քրիստոնեությունը մի քայլ առաջ էր նախորդ կրոնից և վաղ քրիստոնեական վանքերը հանդիսացան հայ կուլտուրայի օջախներ։ Քրիստոնեությունը միաժամանակ հայերին ավելի է կապում Արևմտյան կուլտուրապես զարգացած ժողովուրդների հետ, և հաճախ այդ ժողովուրդների հետ միացած հայերը դուրս էին գալիս Սասանյան նվաճողների դեմ։

Դ) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Ֆեոդալիզմի հաստատումը

Հայ Արշակունիների թագավորության ժամանակաշրջանում ֆեոդալական հարաբերությունները Հայաստանում ընդունում են իրենց վերջնական ձևավորումը։ Դեռ-

ևս Սելևկյան և Արտաշեսյան շրջաններից սկսած՝ դասակարգային հասարակությունն ապրեց փոխանցման երկար մի շրջան, և վերջի ֆեոդալական հարաբերությունների կազմավորումը տեղի ունեցավ Արտաշեսյան դինաստիայի վերջում։ Արտաշեսյան թագավորության շրջանի զինվորականները, պաշտոնյաները և պալատականները կենտրոնական պետության թուլացման հետևանքով աստիճանաբար սեփականացնում են հողային տարածությունները, ամրություններ են կառուցում իրենց հողամասերում և իրենց շուրջն աշխատող գյուղացիությանը տնտեսական ու քաղաքական կախման մեջ դնում։ Խոշոր հողատիրության այդ պայմաններում արտադրությունը վարվում էր պրիմիտիվ ձևով՝ ցրված, մանր գյուղացիական տնտեսություններում բնատնտեսության շրջանակում։ Այս կերպ կազմավորվում է ֆեոդալական արտադրական եղանակ, ընդ որում, իբրև արտադրական գլխավոր և հիմնական միջոց հանդես է գալիս հողը։

Ֆեոդալական հասարակարգը տարբեր երկրներում հանդես է եկել տարբեր աստիճանավորումներով և փոփոխականներով։ Այդ նկատվում է հատկապես ասիական երկրների ֆեոդալական հասարակարգի մեջ։ Այս աստիճանավորումներն ու փոփոխակներն առաջացել են առանձին երկրների հատուկ պայմաններից։

Ինչպես ասիական այլ երկրներում, նույնպես և Հայաստանում ֆեոդալական հասարակարգը երկար դարեր պահպանել է իր գոյությունը։ Հայաստանում շահագործող դասերը, հատկապես Հայաստանին տիրող ժողովուրդները, դարեր շարունակ ճնշել են լավագույն կյանքի ձգտող աշխատավորության մղած պայքարը, թույլ չեն տվել նրանց շունչ քաշեն, աշխատավորությունը հաճախ ականատես է եղել տարիների ծանր աշխատանքով կազմակերպված իր տնտեսության բռնական ոչնչացմանը, հրկիզմանն ու ավերածությանը։ Շատ դեպքերում վտանգվել է նրա ֆիզիկական գոյությունը։ Հակառակ այդ բոլորի՝ հայ ժողովրդի լավագույն զավակները տոկուն կամքով և հարատև աշխատանքով երկրի ավերակների վրա նորն են կառուցել։ Հայաստանի պատմության առանձնահատուկ, բայց և ամենաբնորոշ կողմերից մեկն է այս։

Հայոց թագավոր Տրդատ 1-ինի օրով Հայաստանի ավատական ազնվականությունն ոտք է դնում ամուր հողի վրա, որից հետո աստիճանաբար զարգանալով երկրորդ և երրորդ դարերում հասնում է կազմակերպության այն աստիճանին, որ հայտնի է դառնում

նախարարության անունով, որը կազմվում է մի կողմից Պարսկաստանի, իսկ մյուս կողմից՝ արևմտյան երկրների ազդեցությունների տակ:

Նախարարների ծագումը

Հայ նախարարության ծագումը շատ հին պատմություն ունի, նա գալիս է խալդական շրջանից ու հասնում մինչև 14-րդ դարի 2-րդ կեսը: Հայաստանի հնագույն պետություններից ամենաուժեղը, դա Ուրարտուն էր, որը երկար մաքառումներից հետո քայքայվեց Ասորեստանի և Կիմերոսկյութական ու մարական հարվածների տակ: Կանգ առավ խալդերի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքը: 7-րդ դարում, մեր էրայից առաջ, Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքը տակն ու վրա եղավ, բնիկները խառնվեցին եկվորների հետ և կազմեցին քաղաքական նոր միություններ: 6-րդ դարի կեսին, մեր էրայից առաջ, Իրանում հանդես եկավ հզոր Աքեմենյան դինաստիան, որը նոր ուղղություն տվեց մյուս ժողովուրդներին ու ցեղերին:

Հայաստանը երկար ժամանակ մնաց Աքեմենյան Պարսկաստանի տնտեսական, քաղաքական և կուլտուրական ազդեցության տակ: Դեռ նոր էր կազմակերպվում հայ ժողովուրդը որպես էթնիկական միավորում, երբ ենթարկվեց հզոր Աքեմենյան պետությանը: Այդ ժամանակ Հայաստանում կային 20-ից ավելի ցեղախմբեր, այսպես օրինակ, հայասաներ, արմեններ, ալարոդներ, պակտիներ, սասպիրներ, մարդեր, մոքսեր, կոլխեր, տաոխներ, սակեր և այլն: Վերոհիշյալ ցեղախմբերը, որոնք ունեին խառնածին կառուցվածք, ասիմիլյացիայի ենթարկվելով կազմեցին հայկական էթնոսը: Վերոհիշյալ ցեղերն սկզբում ապրում էին տոհմերով և բնակվում էին գյուղերում, իսկ սատրապության շրջանում նրանք անցել էին գյուղական համայնքի շրջանը, կազմվել էր ընտանիքը, որ հանդես էր գալիս որպես արտադրական միավոր: Ուստի և գյուղական համայնքի անդամներն ունեցվածքի տեսակետից շերտավորված էին և առաջացել էին ունևորների և աղքատների խավերը:

Յուրաքանչյուր ցեղը, կամ տոհմ ուներ իր տոհմապետը, որին հույները կոչում էին կոմարխ, սա հանդիսանում էր գյուղի համայնքի ղեկավարը, այսինքն գյուղապետը: Գյուղապետների իշխանությունը հայրական էր, որոնց պարսիկ սատրապները դարձրին կառավարչական պաշտոնյաներ: Հայաստանի հարավում

կոմարխին կոչում էին մախսագ, որը սեմական ծագում ունի և նշանակում է տիրապետող: Դա միաժամանակ նշանակում է, որ Հայաստանի հարավային մասերում բնակվել էին սեմական ցեղեր, կամ թե կրել էին նրանց ուժեղ ազդեցությունը: Հայաստանի արևելյան մասերում ցեղապետերը պարսկական ազդեցության տակ, կոչվում էին ռապետ, որ նշանակում է գլխավոր: Հայաստանի հյուսիսային մասերում տարածված է եղել ամիկ, որ նշանակում է հայր, իսկ արևմտյան մասում կոչվում էին տեր: Մարդերը կոչում էին պետ:

Վերոհիշյալ տոհմա-ցեղային խմբավորումները գնալով կորցնում են իրենց նշանակությունը և ձուլվում են հայերի հետ, որոնց ղեկավարները Սելևկյան և հատկապես Արտաշեսյան թագավորության շրջանում դառնում են պետական պաշտոնյաներ, զինվորականներ և պալատականներ. իսկ Արտաշեսյան թագավորության անկումից հետո իրենց ենթակա շրջաններում ձեռք են բերում հողային տարածություններ և աստիճանաբար դառնում են հողատեր, կալվածատերեր: Այսպիսով, Արշակունյաց պետության շրջանում ձևակերպված հայ նախարարություններն իրենց ծագումով զգալի մասով գալիս էին նախասելևկյան շրջանից:

Հողատիրական հարաբերությունները

Հողային խոշոր սեփականություններ Հայաստանում կենտրոնացել էին նախարարների (սկզբնական ձևը «նահարար», որ նշանակում է «ցեղի պետ» կամ «ժողովրդի պետ») ձեռքում, ուստի ֆեոդալական կարգերի փոխարեն հաճախ գործ է ածվում նախարարական կարգեր:

Նախարարական Հայաստանում հողերի մեծ մասը կենտրոնանում էին նախարարությունների, հոգևորականության և արքունիքի ձեռքում:

1. Նախարարական կալվածներ.—Խոշոր կալվածներ ունեցել են Հայաստանի 4 բդեշխները՝ Գուգարաց, Նոր-Շիրական, Ծոփաց և Աղձնյաց բդեշխությունները, որոնց կալվածները գտնվել են Հայաստանի 4 սահմանամերձ շրջաններում և որոնց հանձնված է եղել Հայաստանի սահմանների պաշտպանությունը: Բդեշխությունները հիմնվել էին Տիգրան 2-րդի ժամանակ և կոչվում էին դահերեց իշխաններ, բայց ենթակա թագավորին կամ սյուզերենին:

Ապա գալիս են ավագ և կրտսեր նախարարությունները, որոնք հանդես են գալիս որպես ֆեոդալական Հայաստանի կենտ-

րոնական կազմակերպություն: Յուրաքանչյուր նախարարություն
մի աշխարհում և կամ թե գավառում ունենալով իր հիմնական
կալվածքը, հողամասեր է ունեցել նաև երկրի այլ գավառներում:
Նախարարական այդ կալվածները չեն ներկայացրել քաղաքական
սահմաններով մի ամբողջություն, այլ ցրված են եղել ֆեոդալա-
կան Հայաստանի տարբեր գավառներում: Հայաստանի ծայրա-
մասերում՝ Սյունիքում, Մոքսում, և Տայքում (Օլթիի և Թոր-
թումի գետահովիտները) գտնվում էին Սյունյաց, Մոկաց և Մա-
միկոնյան նախարարությունների կալվածները:
Տուրուբերան աշխարհի գլխավոր մասը՝ Տարոն գավառը
պատկանում էր Սլկունի նախարարության, որը հետո անցնում
է Մամիկոնյանների ձեռքը: Սպերը (Ճորոխի հովտում) և Բագ-
րեվանդը (Ալաշկերտը) կազմել են Բագրատունի նախարարու-
թյան սկզբնական կալվածները: Կամսարականները տիրում էին
Շիրակի մի մասին, որը կոչվել է Արշարունիք: Տուրուբերանի
Հարք գավառը պատկանել է Մանավազյան նախարարությանը:
Այդ գավառին կից եղել են՝ Ապահունի, Խորխոռունի և Բզնունի
նախարարությունների կալվածները: Վասպուրական նահանգում
կալվածներ են ունեցել Մարդպետունի (Մարդպետականում),
Արծրունի (Աղբակում), Ռշտունի (Ռշտունիքում), Ամատունի (Ար-
տազում), նախարարությունները, որոնց շուրջը համախմբվել են
մի շարք կրտսեր նախարարություններ:
Այսպիսով, բացի 4 բդեշխություններից, որոնք իրենց կալ-
վածներում լայն ինքնուրույնություն են վայելել, գոյություն
են ունեցել նաև բազմաթիվ խոշոր նախարարական տներ, որոն-
ցից հիշեցինք միայն գլխավորները Սյունյաց, Մամիկոնյան, Բագ-
րատունի, Արծրունի, Ռշտունի, Մոկաց, Կամսարական, Մարդ-
պետունի, Մանավազյան, Խորխոռունի, Բզնունի, Ամատունի և
այլ նախարարությունները:
Գառնական տարբեր շրջաններում նախարարական տների
թիվը մեծ փոփոխության է ենթարկվել: Արշակունիների թագա-
վորության անկմանը հաջորդող ժամանակաշրջանից մեզ հասած
երկու վավերագրերից, «Գահնամակ» և «Զորանամակ», ինչպես
նաև մատենագրական բազմաթիվ վկայություններից ելնելով՝
այդ նախարարական տների թիվը հաշվում են 70—80-ի սահ-
մաններում:
Նախարարական կալվածներից նրանք, որոնք օժտված էին
ժառանգական իրավունքներով, կոչվել են «հայրենիք», իսկ նման

կալվածների սեփականատերերը «հայրենատեր նախարարու-
թյուն»: Արքունիքի, բդեշխների և ավագ նախարարությունների
կողմից իրենց ենթակա վասալներին տրված հողային նվիրա-
տվությունները կոչվել են «պարգևականք»: Հողային այս երկու
տեսակի սեփականությունները համապատասխանում են Արևմտ-
յան Եվրոպայի ֆեոդալական «ալոդ» և «բենեֆիցիա» սեփակա-
նություններին: Ապարանում (հնում՝ Նիգ գավառ) գտնված հու-
նարեն մի արձանագրությունից, ինչպես նաև մատենագրական
մի շարք այլ վկայություններից պարզվում է, «պարգևականք»
սեփականությունների առաջացումը: Համաձայն այդ արձանագ-
րության, «Մեծ Հայքի թագավոր Տրդատ մեծը նվիրել է Գըն-
թունի տոհմի այսինչ մարդու այսինչ որդուն (մի) քաղաք և
Նիգ գավառը...»:
«Հայրենիք»-ը հնագույն շրջանից առաջացած սեփականու-
թյուն է, որ ժառանգաբար անցնում է նույն նախարարական
տոհմի անդամներին: «Պարգևականք»-ը ժառանգելու իրավունքն
իրագործվում էր պարգևատու սինյորի թույլտվությամբ: Ավելի
ուշ շրջանում նախարարները կալվածներ են ձեռք բերել նաև
դրամով, որոնք կոչվում էին «գանձագինք» կամ «քսակագինք»:
Նախարարության ստորադիր մասը կազմել են «Ազատ»-
ները, որոնք ժառանգական հողատիրության իրավունքով որոշ
հողաբաժիններ են ստացել նախարարական հողամասերից և ար-
քունի կալվածներից: «Ազատ»-ների այդ հողաբաժինները կոչ-
վել են «խոստակ», իսկ նրանից օգտվելու իրավունք ունեցողը
«խոստակդար»: Հայաստանի ֆեոդալական դասակարգի մի մասը
կազմել են բարձր հոգևորականները:
2. Եկեղեցական և վանքապատկան կալվածներ.—Մենք տե-
սանք, որ արքունիքի կողմից քրիստոնեությունը պետական
կրոն հայտարարվելուց հետո բավական երկար ժամանակ է
պետք եղել նրա տարածման համար: Հեթանոսական քրմական
դասի դեմ իր մղած պայքարում քրիստոնեական եկեղեցին իր
սեփականությունն է դարձնում այդ քրմերի կալվածներն ու
գանձերը: Խոշոր կալվածատեր է հանդես գալիս կաթողիկոսական
տունը, որը Հայաստանի 15 գավառներում ցրված կալվածներ է
ունեցել: Այսպես՝ նա կալվածներ է ունեցել Տարոնում, Թիլում,
Այրարատում, Դարանաղիում և այլ վայրերում: Հինգերորդ դա-
րում Սահակ կաթողիկոսն արու զավակ չունենալու պատճառով
Տարոնում ունեցած իր կալվածները հանձնում է Մամիկոնյան
նախարարությանը:

Կաթողիկոսական տունն ամբողջ 4-րդ դարում աշխատել է տնտեսապես և քաղաքականապես ամրացնել իր դիրքերն ընդդեմ Արշակունյաց թագավորության: Սկզբնական շրջանում Արշակունյաց արքունիքը լայն կերպով հովանավորում էր քրիստոնյա հոգևորականությանը: Այն գյուղերում, ուր տարածվել էր քրիստոնեությունը, Տրդատ 3-րդի օրոք եկեղեցուն տրվել էր յոթ, «երդ» (հողաբաժին) հող, ագարակներում՝ չորս «երդ»: Տըրդատ 3-րդի հաջորդ Խոսրով Կոտակ թագավորի ժամանակ Մանավազյան և Որդունյան ապստամբ նախարարների կալվածները հարքունիս են գրավվել և հատկացվել եպիսկոպոսական թեմեր կազմակերպելուն: Կաթողիկոսական տնից հետո խոշոր հողատերեր են հանդիսացել եպիսկոպոսական թեմերը: 4-րդ դարում քրիստոնեության թույլ ծավալումը Հայաստանում բացատրվում է եպիսկոպոսական թեմերի խիստ սակավությամբ: Սակայն դրությունը փոխվում է 5-րդ դարի առաջին կեսից, երբ քրիստոնեությունն աստիճանաբար լայն կերպով տարածվում է և ամեն մի խոշոր նախարարություն ունենում է իր եպիսկոպոսը: 451 թվին նրանց թիվը հասնում էր արդեն 15-ի:

Քրիստոնեության տարածմանը զուգընթաց կառուցվում են նշանավոր վանքեր, ուր համախմբվում են բազմաթիվ վանականներ, վանահայրերի գլխավորությամբ: Վանքերը դառնում են իրենց շրջակայքի գյուղացիության հողամասերի հափշտակողները: Այդ բոլորը կատարվում էր «հոգվո փրկության» անունով արված նվիրատվություններով: Կաթողիկոսն արքունիքում, եպիսկոպոսները նախարարական կալվածներում, վանահայրերը շըրջաններում աշխարհիկ ֆեոդալների կողքին կազմում են հոգևորական ֆեոդալական դաս: Քրիստոնեական եկեղեցին կազմակերպվում է նախարարական կարգերի օրինակի վրա: Ֆեոդալական ազնվականությունը կոչվել է «ազատ», «ազատորյա» կամ «ազատանի»: Ֆեոդալ դասակարգի գլուխն էր կանգնած Արշակունի թագավորական տունը, որն ուներ իր սեփական կալվածները:

3. Արքունի կալվածները.—*Արքունի կալվածները բաժանվում էին երկու մասի՝ Արքունի տան և արքունի: Արշակունի թագավորության տան բուն կալվածը կազմում էր Այրարատ նահանգը, որը կոչվում էր «Ոստան» (Արքունի կալվածք): Հայաստանի մյուս նահանգներում Արշակունի տոհմի սեփականություն են կազմել նաև Հաշտյանք, Աղբերանի և Աղիովիտ գավառները: Այս կալվածները կազմելով արքունի տան սեփականություն չէին օտարացվում, այլ ժառանգաբար անցնում էին*

որդոց որդի: Այսպիսով, Արշակունի թագավորական տունը երկրի ամենամեծ ֆեոդալն էր: Իսկ արքունի կալվածները ենթակա էին օտարացման ու մշտապես շարժման մեջ էին դրվում: Այդ կալվածային ֆոնդը կազմվում է ապստամբ նախարարների բռնանագրաված հողերից և նոր գրաված երկրամասերից: Հողային այդ ֆոնդը, թագավորը որպես «պարգևականք» նվիրում էր իր հավատարիմ իշխաններին՝ նրանց լավ ծառայությունների համար: Արշակունի թագավորները, որպես երկրի իշխողներ, իրավունք ունեին երկրի բոլոր հողերի—կալվածների վրա, որպես «բնակ տեր» երկրի:

Չորրորդ դարում Արշակունի թագավորների և նախարարների միջև ուժեղ պայքար էին տեղի ունենում կալվածների շուրջը: Արշակունիներն աշխատում էին ոչնչացնել «հայրենատեր» նախարարությունների և նրանց պատկանող կալվածները պետականացնել: Այդ կալվածները տրվում էին «ազատանիներին» որպես «պարգևականք», որոնց ժառանգության տնօրինումը կախված էր թագավորից: Արշակունի թագավորությունն այս ճանապարհով աշխատում էր ուժեղացնել կենտրոնական իշխանությունը, իրենց «բնակ տեր» երկրի թագավորական իշխանության իրավունքը: Չորրորդ դարի քաղաքական անց ու դարձերը բազմաթիվ փաստեր են տալիս Արշակունի թագավորության դեմ ապստամբած Մանավազյան, Որդունի, Բզնունի, Արծրունի, Կամսարական, Ռշտունի նախարարների, ինչպես և Աղձնիքի ապըստամբ բդեշխի կալվածների բռնագրավման և այլ «ազատանի» դասին պատկանող տոհմերին նվիրելու մասին:

«Ազատանի» դասին պատկանող զանազան շերտերը տարբերվել են իրենց արտոնություններով, իրավունքներով և միմյանցից կախյալ լինելով:

Ֆեոդալական վասալական հարաբերություններ

Նախարարական կազմակերպության մեջ հավասարների շարքում առաջինը (Արևմտյան Եվրոպայում՝ Սյուզերենը) հանդիսանում է Արշակունիների տունը՝ իր արքունական կազմակերպությամբ: «Ազատանի» դասին պատկանողներն Արշակունի տան վասալներն էին, որոնց պարտավորությունները կոչվում էին «ծառայություն», իսկ իրենք՝ վասալները համարվում էին թագավորի «ծառաները»: Թագավորի «ծառա» նախարարությունները պարտավոր էին իրենց զորքով օժանդակել արքունիքին և տուրքեր վճարել:

Արշակունիների ժամանակ թագավորական իշխանությունը ժառանգական էր, արքունիքում մեծանում ու դաստիարակվում էր միայն թագաժառանգը, իսկ թագավորական տոհմի մյուս անդամներն ուղարկվում էին արքունական հեռավոր կալվածներում ապրելու, որովհետև արքունիքում մնալով նրանք շատ անգամ դավադրություն էին կազմակերպում գահը միմյանցից խլելու համար։

Արշակունյաց արքունիքի շուրջը համախմբված էին որոշ նախարարական տոհմեր, որոնք վարում էին բուն արքունիքին վերաբերող գործերը, ինչպես և պետական բարձր պաշտոնները։ Դրանք կոչվում էին «գործակալություն»։ Արքունի պաշտոններից գլխավորներն էին՝ Թագադիր ասպետությունը, Հայր մարդպետությունը, Մաղխազությունը, Սպարապետությունը, Հազարապետությունը և Վերին դատավորությունը։ Այս պաշտոնէության կարգը սահմանում է Տրդատ Առաջինը։

Թագադիր ասպետի պարտականությունն էր թագավորի թագադրության ժամանակ թագ դնել նրա գլխին։ Այդ պաշտոնը ժառանգաբար վարում էին Բագրատունի նախարարները։

Հայր Մարդպետի պարտականությունն էր արքունի բերդերի, կալվածների, և գանձերի պահպանումը, ինչպես նաև թագավորի կանանոցի և արքունիքի վերահսկողությունը։ Այս պաշտոն վարողները շատ դեպքերում ներքինացվում էին։ Մարդպետական նախարարությունն Արշակունյաց պալատում ձեռք էր բերել մեծ ազդեցություն։ Լինելով ներքինի, ուստի և անժառանգ, հայր մարդպետները 4-րդ դարում հանդես էին գալիս Արշակունիների գործուն օժանդակողներ՝ նրանց կենտրոնական իշխանության ամրացման փորձերում։

Մաղխազը թագավորի անձի պաշտպանության և նրա թիկնապահ գնդի հրամանատարն էր, որը նշանակվում էր Խորխոռունի նախարարական տոհմից։

Սպարապետություն.— Առանձին գավառների նախարարական տոհմերի զինվորական գնդերն արքունի գնդերի հետ միասին կազմում էին Արշակունյաց թագավորության ընդհանուր բանակը՝ որի գլուխն էր կանգնած սպարապետը բանակի ընդհանուր հրամանատարը։ Սպարապետության պաշտոնը ժառանգաբար վարում էր Մամիկոնյան տոհմի անդամներից մեկը։ «Ազատ»-ներից կազմված բանակը կոչվել է «Ազատագոր» կամ «Ազատագունդ», որը միաժամանակ կազմում էր «Հայոց այրուձին» —

հեծելազորը։ Արշակունիների թագավորության վերջին շրջանում և հատկապես պարսկական տիրապետության ժամանակ «ռամիկ»-ներից ևս կազմվել է հեծելազոր, որն առանձին արտոնություններ էր վայելում։ Այդ զորքը պարսկական արքունիքի կողմից զինվորական ծառայության էր ուղարկվում հեռավոր վայրերը։ Պարսկական տիրապետության ժամանակ հեծելազորի թիվը կրճատվում և հասնում է 30,000-ի, իսկ արաբական տիրապետության ժամանակ Հայաստանի հեծելազորի թիվը կրճատվելով հասնում է 15,000-ի։ Հեծելազորի հրամանատարությունը վարում էին Բագրատունի նախարարները, բայց ենթակա ընդհանուր հրամանատար սպարապետին, որը ղեկավարում էր թե հետևակ և թե հեծյալ զորամասերը։

Արշակունիների թագավորության շրջանում, նույնիսկ պարսկական տիրապետության ժամանակ, հայկական բանակը համաձայն մատենագրական տեղեկությունների՝ բավական մեծ է եղել։ Նրա թիվը հավասար է եղել մոտ 120 հազարի, որից 36 հազարը կազմում էին արքունական գնդերը, իսկ 84 հազարը՝ իշխանների զորքը։

Հազարապետություն.— Արշակունիների պետության մեջ կարևոր դեր էր կատարում հազարապետության պաշտոնը, որի պարտականությունն էր, կարգավորել երկրի տնտեսությունը, հոգ տանել հողի մշակման ու ոռոգման, արքունի եկամտի բարձրացման, հարկերի նշանակման և գանձման մասին, այսինքն նա երկրագործության և արդյունագործության գլխավոր հսկողն էր։ Հազարապետը երկրի «Աշխարհատես» խնամակալն էր։ Արշակունիների թագավորության ժամանակ այդ պաշտոնը վարում էին Գնունյաց տոհմի նախարարները, իսկ պարսկական տիրապետության սկզբնական շրջանում՝ Ամատունի նախարարները։

Դատավորություն.— Կարևոր գործակալություն էր նաև Վերին դատավորությունը։ Հեթանոսական շրջանում այս պաշտոնը վարում էին քրմերը, որոնց գլխավորը կամ քրմապետը սովորաբար նշանակվում էր արքայական տոհմից։ Չորրորդ դարում կաթողիկոսական և թագավորական իշխանության միջև ուժեղ պայքար էր տեղի ունենում այդ հողի վրա, իսկ Արշակունիների թագավորության անկումից հետո պարսկական արքունիքն այդ պաշտոնը նորից վերապահեց բարձր հոգևորականությանը կաթողիկոսի գլխավորությամբ։

Դատական օրենքները հին Հայաստանում կրել են շատ

խիստ դասային բնույթ, «շինական»—«ռամիկ» դասի համար
սահմանվել են մարմնական պատիժներ, պարտադիր աշխատանք,
բանտարկություն և տուգանք, իսկ իշխանների համար սահման-
ված է եղել միայն տուգանք և ապաշխարություն: Դատում էին
իշխանը իշխանի և շինականը շինականի հետ, շինականը իշխա-
նի հետ դատվել չէր կարող, որովհետև յուրաքանչյուր իշխան
միաժամանակ իրեն ենթակա գյուղացիների կամ ռամիկների
դատավորն էր հանդիսանում: Կաթողիկոսը միջամտում և լու-
ծում էր թագավորական տոհմի անդամների և թագավորի ու
իշխանների միջև տեղի ունեցած վեճերը: Եպիսկոպոսները կամ
վարդապետները լուծում էին նախարարական տոհմի անդամնե-
րի վեճերը, իսկ ռամիկների միջև տեղի ունեցած վեճերի խնդիր-
ները լուծում էին վարդապետները և քահանաները: Հին Հայաս-
տանում, բացի ապստամբություններից, ամենածանր հանցան-
քը համարվել է մարդասպանությունը: Հին հայերի մոտ գոյու-
թյուն է ունեցել արյան վրիժառություն, այսինքն՝ սպանողին
սպանել: Բայց քրիստոնեության մուտքից հետո աստիճանաբար
արյան վրիժառությունը փոխվել է արյան գնով: Արյան գնից
դատելով՝ մեկ իշխանը հավասար է եղել երկու շինականի, իսկ մեկ
շինականը՝ երկու գեղջկուհու: Այս հարաբերությունը իշխանի և
շինականի միջև ցույց է տալիս, որ հին Հայաստանում թեև
օրենքները խիստ դասային բնույթ են կրել, բայց սոցիալական
տարբերությունն այնքան էլ խոր չի եղել, այսինքն 1—2.ի:
Բացի վերոհիշյալ պաշտոններից արքունիքում գոյություն են
ունեցել նաև մի շարք երկրորդական պաշտոններ, օրինակ՝ որ-
սապետներ, ախոռապետներ, սակառապետներ, սենեկապետներ, գրա-
շակալիրներ և այլն:

Արշակունյաց թագավորները թեև ունեին իրենց արքունի-
քը համապատասխան պալատականներով, խորհրդականներով,
բայց նրանց պետությունն իր բնույթով միապետական էր, պե-
տության գլուխ կանգնող թագավորն երկրի միահեծան տերն
էր: Բայց նա չէր խառնվում երկրի ներքին գործերին, ամեն
մի նախարար ինքն էր կառավարում իր գավառը: Արշակունյաց
թագավորությունը գերազանցապես վարում էր արտաքին քա-
ղաքականություն, դեսպաններ էր նշանակում և ընդունում,
պատերազմ էր հայտարարում, խաղաղության պայմանագիր
կնքում և այլն:

Թագավորից հետո ֆեոդալական սանդուղքի հաջորդ երկրորդ
աստիճանի վրա հին Հայաստանում նստում էին չորս բդեշխ-

ները, որոնք կոչվում էին «սահմանապահք», «սահմանակալք»
կամ «կողմնակալք»: Սրանք Արշակունի թագավորության սահ-
մանները պաշտպանելու, պատերազմների ժամանակ արքունիքին
զինվորական օժանդակություն ցույց տալու պարտավորություն ու-
նեին: Նրանք իրենց սահմաններում վայելում էին ներքին լայն ինք-
նավարություն: Հայ արքունիքում նախարարական տոհմերի հա-
մար գոյություն ուներ «պատիվ» կամ «գահ» (բարձ): Նախա-
րարներն իրենց զինվորական կարողության համաձայն դրա-
վում էին իրենց տեղը: Բդեշխները նստում էին թագավորի աջ
և ձախ կողմերին որպես նրան հավասարներ:

Բդեշխներից հետո ֆեոդալական հիերարխիայի 3-րդ աստիճա-
նի վրա նստում էին ավագ նախարարները, 4-րդ աստիճանի վրա
կրտսեր նախարարները: Ամեն մի նախարար իր կալվածում ու-
ներ ամրոցներ, որոնք շրջապատված էին գյուղերով: Ամրոցները
կառուցում էին անառիկ վայրերում, իրենց գաղտնի ելք ու մուտ-
քերով, պարիսպներով, բարձր աշտարակներով: Ամրոցներն իշխում
էին ամբողջ շրջակայքի վրա և պաշտպանության ամուր վայ-
րեր էին ֆեոդալական կալվածներում: Ամրոցներում էին կու-
տակում ավարառություններից և շահագործումից գոյացած նա-
խարարական գանձերն ու հարստությունները: Այդպես էին Ար-
տագերսը, Անին, Դարույքը, Անգեղը, Բնաբերդը, Բաղաբերդը և
մի շարք այլ ամրություններ:

Ավագ և կրտսեր նախարարները որոշվում և տարբերվում
էին իրենց ռազմական ուժով. ով որ թագավորին շատ զորք
տար, նա էլ անցնում էր ավագ նախարարների շարքը:
Ավագ նախարարները, համաձայն իրենց ռազմական
ուժի, կարողության, կոչվել են «բյուրավորք» (10 հա-
զար հոգի ունեցող) և «հազարավորք» (հազար հոգի ունեցող):
Նախարարներն իրենց զորագնդերը կռվի դաշտ էին առաջնոր-
դում՝ ամեն մեկն իր առանձին դրոշակներով և զինանշաններով:
Խոշոր նախարարական տները բդեշխների հետ հավասարապես
կոչվել են «աշխարհատիարք», «աշխարհակալք» կամ «գավառա-
տիարք»: «գավառակալք»:

«Հայրենատեր» նախարարներն իրենց գավառների սահ-
մաններում ինքնուրույն էին և իրենց ժողովրդով, հողերով, ամ-
րոցներով կազմում էին մի տուն, որ կոչվում էր նախարարու-
թյուն, տանուտերություն: Նախարարությունների ներքին գործերի
կարգադրիչ-կառավարիչը կոչվում էր «նահապետ», «տեր» կամ
«տանուտեր», որը ժառանգական էր տոհմի ավագ անդամի հա-

մար, բայց պիտի վավերացվեր թագավորի կամ սյուզերենի կողմից։ Այս տերմիններն արտացոլում են հնագույն ցեղապետական շրջանում գոյություն ունեցող կարգերը։ Ամեն մի նախարարություն իրենից ներկայացնում էր մի փոքրիկ պետություն, իր տանուտեր արքայով, զորքով, հարկ դնելու կարողությամբ և վարչական ու դատաստանական իրավունքներով։ Նախարարական տոհմի անդամները կոչվում էին «սեպուհ» և ավելի ստորադաս դիրք ունեին։ Պետական կարևոր գործերի համար գումարվում էր «ավագանի»-ների խորհուրդը, որին մասնակցում էին ֆեոդալական դասի բարձր ներկայացուցիչները։ Արքունի պալատում իշխանները նստում էին առանձին բարձերի—գահերի վրա, որոնք դասավորված էին նախարարների դիրքի ու աստիճանի համաձայն։ Առաջին բարձն ու պատիվը Սյունյաց իշխանինն էր, երկրորդը՝ Բագրատունյաց, երրորդը՝ Արծրունյաց, չորրորդը՝ Խորխոռունյաց (Մաղխազին), հինգերորդը՝ Մամիկոնյան և այլն։

Ֆեոդալական սանդուղքի ստորին կամ 5-րդ աստիճանի վրա կանգնած էին «ազատ»-ները և «ոստանիկ»-ները։ «Ազատ» է կոչվել նաև ամբողջ ազնվականությունը, հոգևորականների հետ միասին, որը հակադրվել է «անազատ»-ների դասին։ «Ազատ»-ները, որպես առանձին շերտ, հանդիսանում էին մանր հողատերերը և իրենց տերերից նեղ վասալական կախման մեջ էին գտնվում։ Սրանցից են կազմվում հեծելազորը։ Վերը հիշված հինգ աստիճանավորությունները միասին կազմում էին ազնվականություն և նստում էին գյուղացիության վզին ու ապրում նրա հաշվին։

Ֆեոդալական դասակարգին էր պատկանում նաև հոգևոր դասը։ Քրիստոնեական եկեղեցին նախարարական կարգերի օրինակի վրա կազմակերպել էր իր ֆեոդալական հաստատությունները, որոնց գլուխն էր կանգնած կաթողիկոսը։ Արշակունի թագավորների անկումից հետո կաթողիկոսությունը պարսկական արքունիքից քաղաքական խոշոր իրավասություններ էր ստանում, որոնց մասնակից էին դառնում առանձին գավառների եպիսկոպոսական թեմերը։ Արքունիքում կամ վարչական կենտրոնում ինչ դիրք որ կաթողիկոսն էր գրավում, գավառներում առանձին նախարարություններում նույն դիրքը գրավում էին եպիսկոպոսները, որոնք հաճախ նույն գավառի նախարարական տոհմից էին լինում։ Ապա գալիս էին առանձին վանքերի վանահայրերը և ստորին հոգևորականությունը։

Ազնվականության «ազատ»-ների այդ դասն իր ապրելակերպով, կենցաղով, վայելած բարիքներով ու առանձնաշնորհումներով հակադրվում էր «անազատ»-ների դասին, որը կազմում էր երկրի միակ արտադրող մասսան։ Աշխարհիկ ազնվականությունն իր ժամանակն անց էր կացնում պատերազմներում և կռիվներում, զբաղվում էր ռազմական վարժություններով, որսորդությամբ, խնջույքներով և բազմապիսի խաղերով։ Իրենց ամրակուռ դղյակներում նստած՝ շվայտ և ցոփ կյանք էին վարում։ Հոգևոր դասը «աստվածային պատվիրաններով» հավերժացնում էր ֆեոդալական շահագործումը, ճնշում և հալածում իշխող դասի դեմ ուղղված ամեն մի ապստամբական շարժում, հոգ էր տանում «հոգևոր փրկության» համար ստացած կալվածներն ընդարձակելու և շահագործման շղթաներն ավելի ամրացնելու մասին։ Գոյություն ունեցող այդ շահագործումը հայերին «Դատաստանագրքի» հեղինակը՝ Մխիթար Գոշը դարեր հետո այսպես է ձևակերպում. «Մարդկային բնությունն արարչի կողմից ազատ է ստեղծվել, իսկ տերերին ծառայելն առաջ է եկել հողի և ջրի կարիքից»։

Անազատների դաս

Ազնվական դասին չպատկանողները կոչվել են անազատ, որի ճնշող մեծամասնությունը կազմում էր գյուղացիությունը, որը միաժամանակ կոչվել է շինական դաս, իսկ ընդհանուր առմամբ «անազատ»-ների դասին պատկանողները կոչվել են նաև ռամիկ. այդ դասը կազմված էր գյուղական և քաղաքային ազգաբնակչությունից։ Շինական բառը ծագել է ոչ թե շեն բառից, որ նշանակում է բնակության տեղ, այլ շինել—կառուցել բառից։ Դա ցույց է տալիս գյուղացիության սոցիալական դրությունը, այսինքն, որ նրան հատուկ է աշխատել հողակցությունը։

Արշակունիների թագավորության մասին եղած մատենագրական վկայություններից հայտնի է, որ ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը կազմող շինականությունը, երկրի արտադրող հիմնական դասը, գտնվում էր «ի հարկի ծառայություն և ի սարկություն» դրության մեջ։ Շինականությունը պարտավոր էր աշխատել, հողը մշակել և հարկ վճարել պետությանը, ֆեոդալին ու եկեղեցուն։ Հարկերը բազմազան էին և կոչվում էին մուտք, հաս, սակ, բաժ, պտուղ ու գանձվում էին բնամթերքով, իսկ հինգերորդ դարից սկսած՝ նաև դրամով։ Գյուղացիները հողն ստանում էին ֆեոդալներից մանր հողակտոր-

ներով, ֆեոդալները ստիպում էին նրանց հողը մշակել և վճարել հարկ. գյուղացիների այդ հողաբաժինը կոչվում էր կալվածարար, վիճակ և կյանք։

Չորրորդ դարի 2-րդ կեսին վերաբերող մի վկայությունից պարզվում է, որ իշխանավորները «չափից ավելի հարկերով» բավական նեղություններ էին պատճառել հարկատուներին։ Վճարված հիմնական հարկը «բնահարկն» էր, վերջին դարերի «բահրան», որ համապատասխանում է հայկական հնագույն աղբյուրների մեջ հիշատակված պտուղին կամ «պտղի հարկին»։ Արշակունի թագավորության ժամանակ հոգևորականության գանձած այս հարկը նրան անցել էր նախարարական կարգերից։

Պտուղ բնահարկի հետ գանձվել է նաև «տասանորդ», որը պատմական տարբեր շրջաններում տարբեր չափ է ունեցել։ Գյուղատնտեսական արտադրություններից բնարդյունքային ձևով վճարված այս և այլ հարկերի կողքին գոյություն է ունեցել ձրի պարտադիր աշխատանքի սիստեմ, որը կիրառվել է աշխարհիկ և հոգևոր տերերի համար։ Շինականների այդ պարտավորությունը կոչվել է «կոռ» ու «բեգյառ» (պարսկերեն՝ բեգառ ամարան=«աշխատանքի գնալ» դարձվածքից)։ Այս պարտավորությունը համապատասխանում է ֆեոդալական Արևմտյան Եվրոպայի «կորին», որը ֆեոդալի հողամասի վրա ճորտերի կողմից կատարվող ձրի պարտադիր աշխատանք էր։ Հարկադրական աշխատանքի սիստեմը լայն չափով կիրառվել է ֆեոդալական շինարարությունների՝ բերդերի, ամրոցների վանքերի, արքունի պալատների, ոռոգման առուների կառուցման, ճանապարհների շինարարության գործում, ինչպես և ֆեոդալական դասի համար որսորդական վայրեր պատրաստելու աշխատանքներում։

Չորրորդ դարի Արշակունյաց թագավորներից Խոսրով Կոտակը նման հարկադրական աշխատանքով Գառնիի և պատմական Դվինի միջև ընկած տարածության վրա 50 կմ. երկարությամբ և 30 կմ. լայնությամբ անկել է տալիս Խոսրովակերտ անտառը, այդ տարածությունն ամբողջովին պարսպել է տալիս և ապա հրամայում է ամեն տեսակ էրեներ և գազաններ ժողովել շրջապատից և լցնել ներս, որպեսզի իր թագավորության ժամանակ որսի և ուրախության համար վայրեր լինեն։ Նման հարկադրական աշխատանքների ծանրության մասին գաղափար կազմելու համար բավական է այցելել այն բազմաթիվ վանքերի ու ամրությունների մնացորդները, որոնք այնքան առատու-

թյամբ գտնվում են ամենուրեք Հայաստանում։ Այն ժամանակվա պրիմիտիվ տեխնիկայով, ամենածանր պայմաններում կատարված աշխատանքների նմուշ կարող է ծառայել առաջին դարում Գառնիում կառուցված հոյակապ ճարտարապետական կոթողը, որի կառուցման վրա գործադրված բազալտե հսկայական քարերից կան այնպիսիները, որոնք կշռում են 7 հազար 200 կիլոգրամ։

Մատենագրական հնագույն վկայություններում հիշատակված ամրոցներ՝ Արտագերսը, Անգեղը, Անին (Երիզա ավանում), Ողականը, Բնաբերդը, Դարույքը, Օշականը, Երինջակի ու Զարեձորի բերդերը՝ կառուցված բարձր, անմատչելի և շինարարական աշխատանքների համար խիստ դժվարին վայրերում վկայում են մարդկային այդ բազմությունների դառն ու դաժան ճորտատիրական աշխատանքի մասին։ Այդ բոլոր շինությունները կենդանի վկաներ են այն անլուր շահագործման ու տառապանքների, որ կրել են այդ շինությունները կառուցող ճորտերը։ Շինականն ամենապրիմիտիվ միջոցներով և Հայաստանի որոշ շրջանների ամենածանր պայմաններում մշակում էր այն հողաբաժինը, որ ստանում էր ֆեոդալից։

Երկրի բնական, աշխարհագրական և կլիմայական պայմաններից առաջացած ջրառատությունը և արհեստական ոռոգման անհրաժեշտությունը ծանր պայմաններ էին ստեղծում աշխատավոր գյուղացիության համար։ Սրանով է բացատրվում ամենահնագույն շրջանից ջրի պաշտամունքի լայն տարածումը Հայաստանի աշխատավոր բնակչության մեջ։ Դեռևս Խալդ-ուրարտական շրջանից ջրաշինարարական աշխատանքի մասին մեզ հասած վկայությունները և վերջապես ջրի ու հողի միասնական հասկացողությունը, որի մասին վկայում են գրավոր աղբյուրները, ինչպես՝ «տերերին ծառայելը առաջ է եկել հողի, ջրի կարիքից», ցույց են տալիս ջրին տրված խոշոր կարևորությունը։ Իսկ ինչքա՜ն նզովք են կարդացել հետագա դարերի «հոգևոր» հայրերը, վանքերի վրա թողած իրենց արձանագրություններում այն շինականների մասին, որոնք համարձակվել են ջուր «գողանալ» վանքապատկան առուներից։

Եթե նկատի ունենանք նաև բնական աղետները, ինչպես օրինակ՝ կարկուտը, մորեխը, մուկը, որոնց մասին դարեր շարունակ սարսափով է հիշել իր ամբողջ ունեցվածքն ու աշխատանքը հողին հանձնած գյուղացին, ինչպես նաև Հայաստանի

հողի վրա տեղի ունեցած պարբերական պատերազմները, արշավանքները և նրանց պատճառած ավերածությունները, որոնցից գլխավորապես տուժում էր աշխատավոր գյուղացիությունը, այն ժամանակ կստանանք լրիվ պատկերը։ Այս բոլորին հաջորդող սովի տարիներին ու համաճարակներին, որոնց մասին այնքան առատ տեղեկություններ են պահպանվել հետագա դարերի գրավոր վկայություններում, լիակատար քայքայման դուռն էին հասցնում շինականի տնտեսությունը։ Պարբերաբար կրկնվող այս դրությունը հիմնական արգելակիչ գործոններից մեկն է արտադրողականության ուժերի զարգացման։ Հայաստանի տնտեսական կյանքի զարգացումն ընթացել է անօրինակ դանդաղությամբ։

Դարը դարով հայ շինականն անսպառ տոկունությամբ դիմագրավել է իր տերերի և լծակիր պետությունների շահագործումներին, բնական աղետներին ու ավերիչ պատերազմների պատճառած արհավիրքներին, կոտորվել է, գերեվարվել, բայց քարայրներում, ժայռերի ծերպերում իր ֆիզիկական գոյությունը պահպանած շինականն ու ռամիկը ավերված հայրենիքում, համարյա սկզբից վերսկսել է իր տնտեսությունը կարգի բերելու աշխատանքը, պայքարել է իր գոյության համար, ընդվզել է բնիկ շահագործողների դեմ, ապստամբել լծակիր պետությունների դեմ։

«Փափկացյալ ազատ»-ներից խիստ կերպով տարբերվել են «վշտացյալ գեղջուկ»-ները։ Նրանք «պատվական» դասին էին պատկանում, իսկ վերջինները՝ «անարգ»-ների դասին։ Մատենագրական բազմաթիվ վկայությունները ցույց են տալիս, որ «տանձնաշնորհյալ» դասը հակադրվել է «շինական»-ին և «ռամիկ»-ին։ Մեծամեծաց խոսքերից՝ «մարդ չէ, շինական է» դարձվածքը խտացնում է իր մեջ սոցիալական այն խոր անտագոնիզմը, որ գոյություն է ունեցել այդ երկու հակադիր դասերի միջև։

Սակայն, գյուղացիներն ամբողջությամբ վերցրած միևնույն տնտեսական պայմաններում չեն գտնվել, ուստի և նրա տարբեր շերտերը տարբեր կախյալ դրության մեջ են եղել ֆեոդալներից։ Հարևան Աղվանից աշխարհում 5-րդ դարում՝ Վաչագան թագավորի գումարած ժողովի կանոններից մեկի միջոցով մեզ վկայություն է հասել այդ երկրի գյուղացիության շահագործման մասին։ Այդ կանոնի մեջ սահմանվում էր գյուղացիության կողմից քահանաներին վճարվելիք «պտուղ»-ը։ Միաժամանակ չէր կատարվում այդ

հարկումը։ Գյուղացիությունը բաժանվում էր երեք շերտի. ա) «վար և այգի չունեցող», բ) «տառապյալ», գ) «Թվանիկ», այսինքն ունևոր գյուղացիություն։

Արշակունի թագավորության ժամանակ, որ բնորոշեցինք որպես ֆեոդալական հարաբերությունների վերջնական ձևավորման մի ժամանակաշրջան, գյուղացիության մեջ գոյություն ուներ հարևան Աղվանից աշխարհում տիրող դրությունը։ Շինականության մեջ գոյություն է ունեցել մի շերտ, որը դատական հայց հարուցելու, ինչքը ժառանգելու իրավունք է ունեցել, ինչպես և ազատ է եղել իր ներքին անձնական կյանքում։ Ագարակների, գյուղերի ու ավանների գյուղացիների միջև գոյություն են ունեցել սոցիալական տարբերություններ։ Ագարակների բնակիչները սոցիալական տեսակետից ավելի ցածր են դասվել, քան գյուղերի և ավանների բնակիչները։

Տարոնի Հացեկաց գյուղում հիշվում են «կարճազատներ», որոնց աղջիկների հետ ամուսնացող ազնվականները որպես ոչ օրինական կնոջ էին վերաբերվում և իբրև հարճ էին նկատում նրանց։ Հուսիկ կաթողիկոսի Պապ որդու հարճը Հացեկաց գյուղից էր։ Մեսրոպ Մաշտոցը, որ նախ քան հոգևորական դառնալը Արշակունի արքունիքում քարտուղարի պաշտոն էր վարում, Տարոնի Հացեկաց գյուղի «Երանելի» Վարդանի որդին էր։ Նշանակում է՝ Հացեկաց գյուղի բնակչությունը սոցիալական տարբեր դիրք է ունեցել, քան ճորտացած գյուղացիությունը, որը «ազատ»-ների շարքում դասվելու համար պետք է տիրոջից նախապես ստանար իր անձնական ազատությունը։

Քաղաքներն եվ քաղաքային բնակչությունը

Գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ պարապող շինականությունից զատ, «անազատ»-ների դասին են պատկանել նաև արհեստավորներն ու առևտրականները։ Վերևում տեսանք, որ սկսած Տրդատ 1-ինից, հատկապես հարյուրամյա խաղաղության շրջանում քաղաքային կյանքի զարգացումը Հայաստանում նոր շրջան է թևակոխում։

Արևելքի և Արևմուտքի միջև հետզհետե աշխուժացող տարանզիտային առևտուրը ներքին շուկայական հարաբերությունների ընդարձակման ուղղությամբ իր ներգործությունն է ունենում։ Հետագայում Դվինը, Այրարատյան Արտաշատը, Վաղարշապատը, Արաքսի ստորին հովտում, Վանը՝ Հաշրջանում, Նախիջևանը՝ Աղձնիքում սահմանայաստանի հարավում, Տիգրանակերտը՝

քեր իրենց շուրջն էր համախմբում ավելի մեծ թվով ազգաբնակություն։ Արհեստն ու առևտուրն աստիճանաբար դառնում են ուրույն զբաղմունք։ Քաղաքային ազգաբնակչության մեջ զգալի մասն էին կազմում եկվորները, հատկապես հրեաները, որոնց մի մասը 4-րդ դարում գերեվարվել է Պարսկաստան։ Քաղաքային ազգաբնակչությունը թեև մտնում էր «անազատ»-ների դասի մեջ և նույնպես «ի հարկի ծառայության» մեջ էր, բայց սոցիալական, տնտեսական և իրավական տեսակետից ավելի բարձր է դասվել շինականներից։ Դա, երևում է Մովսես Խորենացու այն վկայությունից, ուր ասում է, թե շինականները հարգանք ու պատիվ են տալիս քաղաքացիներին։ Արշակունիների շրջանում են հիմնվել հին Հայաստանի ներկայումս էլ գոյություն ունեցող Վաղարշապատը և, Կարին-Թեոդոսուպոլիս-Էրզրում քաղաքները, որոնք խոշոր դեր են կատարել հայ ժողովրդի պատմության մեջ։ Իսկ Հայաստանի հնագույն քաղաքները՝ Արտաշատն ու Տիգրանակերտը շարունակում էին իրենց գոյությունը որպես խոշոր միջազգային նշանակություն ունեցող քաղաքներ, մանավանդ Արտաշատը, որը համարվում էր միջազգային առևտրի ու մաքսային խոշոր կենտրոններից մեկը։ Նրա վրայով էր անցնում Արևելքից դեպի Արևմուտք տանող հյուսիսային մեծ ճանապարհը։

Արշակունիների շրջանում աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների ամրոցներն ու վանքերը որպես ուրույն տնտեսություններ, ունեցել են իրենց արհեստանոցներն ու արհեստավորները։ Քաղաքային արհեստավորությունն աշխատում էր ըստ պատվերի և կամ շուկի արհեստավորներ էին։ Դարբինը, զինագործը, ոսկերիչը, կավագործը, հյուսնը, քարտաշը, որմնադիրը, բրուտը, մագաղաթ պատրաստողը և լայն սպառման նյութեր արտադրող արհեստավորներ աշխատում էին հատկապես ազնվական դասի համար։ Թույլ էր զարգացած աշխատանքի հասարակական բաժանումը գյուղի և քաղաքի միջև։ Այս շրջանում, մի կողմ թողած հիշատակված քաղաքները, մնացած վայրերում քաղաք տերմինի տակ մեծ մասամբ հասկացվում էին ամրացված վայրերը։ Քաղաքային տիպի բնակավայրերը սակավաթիվ էին. եղած քաղաքների ազգաբնակչության զգալի մասի հիմնական զբաղմունքը մնում էր գյուղատնտեսությունն ու այգեգործությունը։ Հումույթի վերամշակման բնագավառում տնայնագործությունը հանդիսանում էր տիրապետող ձևերից մեկը։ Գյուղական ընտանիքը մեծ մասամբ ինքն էր պատրաստում իրեն անհրաժեշտ արտադրական

միջոցները, ինչպես նաև լայն սպառման անհրաժեշտ նյութերը հատկապես սրանով էր պայմանավորված արհեստների զարգացման ու ներքին շուկայական հարաբերությունների թույլ ծավալումը։

Ազգագրական նյութերի հիման վրա կարելի է ասել, որ գյուղական ընտանիքներում տնայնագործական կարևոր ճյուղերը կազմել են փայտեղենի մշակումը, կողովագործությունը, կավագործությունը, պրիմիտիվ կաշեգործությունը թաղիքագործությունը բրդից թել պատրաստելը, պարանագործությունը, կտավագործությունը և այլն։

Գյուղական ընտանիքն ինքն էր պատրաստում իր բնակարանը, որի շինությունը խիստ տարբեր է եղել Հայաստանի տարբեր գավառներում, նայած թե տվյալ գավառում ինչպիսի աշխարհագրական և կլիմայական պայմաններ են եղել։ Կաթնատնտեսական և գյուղատնտեսական հումույթների վերամշակումը կատարվել է գյուղական ընտանիքում։ Մի ընտանիքի աշխատավորական և տնտեսական ուժերից վեր աշխատանքները՝ ինչպես օրինակ բնակարանային շինարարությունը, կաթնատնտեսական հումույթի վերամշակումը (յուղ, պանիր պատրաստելը և այլն) կազմակերպել են համայնական օգնության եղանակով։ Բայց երկրի արհեստավորական արտադրանքի բնագավառում տնայնագործությունը չէր իշխում, այլ քաղաքային արհեստավորական արտադրանքը, որը և տոն էր տալիս երկրի թե տնտեսական և թե առևտրական կյանքին։

Գյուղը երկար դարեր ինքնամփոփ շարունակել է իր նահապետական կենցաղը։ Նման պայմաններում քաղաքների զարգացումն ընթանում էր խիստ դանդաղ։ Այս պայմաններում քաղաքային դասն առանձին կշիռ չուներ երկրի հասարակական-քաղաքական կյանքում։ Երկրում իշխում էր փակ նատուրալ տնտեսություն։ Արշակունյաց թագավորության վերջին շրջանում տեղի ունեցող խոշոր քաղաքական անց ու դարձերում մենք ոչինչ չենք լսում քաղաքային բնակչության մասին։

ե) Հայաստանը 4-րդ դարում

Թագավորի եվ նախարարների մրցության սկզբնավորումը

Տրդատ 3-րդը քրիստոնեությունը պետական կրոն հայտարարելով և Հռոմեական կայսրության հետ (Կոստանդին կայսրի շրջանում) իր նախկին հարաբերությունը վերահաստատելով՝ կարողանում է պահպանել Արշակունյաց թագավորության անկախությունը։ Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև շարունակվող քաղաքական խաղաղությունը նպաստում է երկրի տնտեսական կյանքի խաղաղ զարգացմանն ու առանձին նախարարական տոհմերի ուժեղացմանը։

Տրդատ 3-րդի ժամանակվանից սկսած՝ հայ Արշակունյաց պետությունը, հատկապես նրա թագավորները, շատ արագ թափով ազգայնանում են։ Փաստորեն մինչև Տրդատ 3-րդի թագավորության սկիզբը հայկական թագավորները պահպանում էին իրենց պարսկական հատկանիշները, իսկ շատ դեպքերում պարսկական պարթևական թագավորների որդիներից կամ եղբայրներից էին նշանակվում։ Տրդատ 3-րդից սկսած հայոց թագավորները ոչ միայն Տիզբոնից չէին գալիս, այլև թշնամի էին դառնում նրան և իրենց ավելի կապված էին զգում հայ ժողովրդի հետ։ Արշակունի թագավորների արագ հայացման շնորհիվ հայկական պետությունը գնալով ավելի ու ավելի ինքնուրույն է դառնում և ուժեղացնում է իր միապետական կենտրոնաձիգ ձգտումները։

Տրդատ 3-րդի հետագա գործունեության մասին մեզ տեղեկություններ չեն հասել, սակայն, նրան թունավորելով սպանելը ցույց է տալիս, որ արքունիքի և նրա շուրջը համախմբված նախարարական առանձին տոհմերի կատարած հեղաշրջումն ուժեղ ընդդիմադրության է հանդիպել Հայաստանի առանձին գավառների նախարարների կողմից, որոնց մեջ կարևոր տեղ են գրավում Սյունյաց, Վասպուրականի և Աղձնիքի նախարարու-

թյունները։ Այս հանգամանքը հաստատվում է հետագա շրջանի պատմական անց ու դարձերով։

Տրդատ 3-րդի հարաբերությունները Հռոմի հետ լավանում են հատկապես այն ժամանակվանից, երբ երկու երկրներում էլ վերջնականապես հաղթանակում է քրիստոնեությունը և դառնում պետական կրոն։ Մանավանդ Տրդատ թագավորի և Կոստանդին կայսրի միջև կնքված դաշնագրությունից հետո երկու երկրների քաղաքական հարաբերությունները ոչ միայն լավանում են, այլև լուրջ բեկում են առաջացնում, որը խանգարվել էր Մաքսիմիանոսի ժամանակ։ Այլ էր Սասանյան արքաների դիրքը։ Քանի որ Հռոմեական կայսրները հալածում էին այլ քրիստոնյաներին, նրանք ոչ միայն անտարբեր էին, այլ և նույնիսկ հովանավորում և Պարսկաստանում տեղ էին տալիս հալածանքի ենթարկված քրիստոնյաներին։ Բայց երբ այդ կրոնը կայսրության մեջ հաղթանակում է և դառնում պետական պաշտոնական կրոն, այն ժամանակ պարսից գահակալները զինվում են նրա դեմ, որովհետև նոր կրոնը Արևելյան ժողովուրդների ուշադրությունն ու համակրությունը թեքում էր դեպի Արևմուտք։ Այդ քաղաքականության առաջին հերթին ձեռնամուխ են լինում սասանյան թագավորներից՝ Շապուհ 2-րդը (310—379), որը իշխում է մոտ 70 տարի։ Սա պատրաստ էր շարունակ ուժեղացող Հայաստանին ոտի տակ տալով թուլացնել. բայց կապված էր 297 թվին կնքված խաղաղության դաշնագրով։ Այդ պատճառով դիմում է խորամանկ միջոցների։

Հայ նախարարներն իրենց կալվածների ընդարձակման և իրավունքների լայնացման ձգտում ունենալով՝ թշնամի էին թե՛ իրար և թե՛ պետությանը։ Նրանք մի առ ժամանակ լուռ էին Տրդատի հզոր բազկի ու քրիստոնեության հաջողության առաջ։ Նոր կրոնը շատ նախարարների համար անհասկանալի էր իր վերացական գաղափարներով, իսկ մի կարգ իշխանների համար էլ անընդունելի էր իր բարոյական խիստ պահանջներով, որովհետև, ինչպես գրում են պատմիչները, ժողովուրդը դեռ «վայրենաբարո» էր, նոր կրոնի միջոցով հնարավոր չէր կարճ ժամանակվա ընթացքում «ազնվացնել» նրանց։ Իշխանական տոհմերից շատ շատերը քրիստոնյա էին դարձել միայն թագավորի հրամանով։ Տրդատը իր սուր հզորությամբ ուժ քաղաքական ուղղություն ունեցող էր հնազանդեցրել տարբեր

նախարարներին։ Նրանց լռությունը ժամանակավոր էր, հարկավոր էր մի դրդիչ ձեռք, որ կրկին անգամ բորբոքվին կրքերը և տակն ու վրա անեին երկրի կյանքը։

Հայաստանի այս ներքին քաղաքական կյանքին շատ լավ տեղյակ ու ծանոթ էր Շապուհ Պարսիկը, որի խրախուսանքներից սիրտ առած՝ Սղուկ Սլկունյաց իշխանը (երկրի սպարապետը) իր կողմն է գրավում Սիմ լեռան բնակիչներին, ապստամբում է Տրդատ թագավորի դեմ, սպանում է թագավորի հավատարիմ իշխաններից Օտայլին, գրավում է Տարոնի Ողականի ամրոցը և ամրանում այնտեղ։ Միաժամանակ Շապուհի դրդմամբ երկրի հյուսիսային կողմից Հայաստանի վրա են հարձակվում սկյութական ցեղերը։ Տրդատը թագավորական գնդերով դուրս է գալիս սկյութացիների դեմ, իսկ ճենացի Մամգուն իշխանին (Մամիկոնյանների տոհմի հիմնադիրը) հանձնարարում է ճնշել ապստամբ Սղուկ իշխանին։ Գարգարացոց դաշտում տեղի է ունենում մի մեծ ճակատամարտ։ Տրդատը հայկական զորքով ջարդում է սկյութացիներին և հալածում դեպի Հոների երկիրը, իսկ ճենացի Մամգունը ճնշում է Սղուկ Սլկունու ապստամբությունը։ Մամգունը բարեկամ ձևանալով գնում է Սղուկ իշխանի մոտ, ձեռք է բերում նրա վստահությունը, ապա մի օր որսի ժամանակ դավադրաբար սպանում է նրան, կոտորում նրա տոհմին ու գրավում է Ողականի ամրոցը։ Տրդատ թագավորն իր խոստման համաձայն Տարոնի գավառը Ողականի ամրոցով, որպես վարձատրություն, տալիս է Մամգուն իշխանին՝ սպարապետության պաշտոնի հետ միասին, և Մամիկոնյանները Տայքից փոխադրվում են Տարոն իրենց ձեռքը պահելով նաև Տայքի կալվածները։ Ճենացի Մամգունով Տրդատ 3-րդ թագավորի ժամանակ պատմական ասպարեզ են գալիս Մամիկոնյանները, որոնք խոշոր դեր են կատարում հայ ժողովրդի պատմության մեջ 4—8-րդ դարերում։

Հայոց Տրդատ թագավորը քաջ գիտակցելով, որ պարսիկները վերջիվերջո արշավելու են Հայաստան, հատուկ ուշադրություն է դարձնում երկրի պաշտպանության վրա։ Հյուսիսային սահմանների պաշտպանությունը նա հանձնում է Գուգարաց բդեշխին, այստեղ բարեկամական հարաբերություններ է հաստատում Վրաստանի և Աղվանքի հետ։ Երկրի Արևելյան և հարավային սահմանները պարսիկներից պաշտպանելու համար այդ սահմանների վրա առանձին զորամասեր է պահում Բագ-

րատ Բագրատունի, Վահան Ամատունի, և Մանաճիհր Ռշտունի իշխանների ղեկավարությամբ։ Բայց Տրդատի ժամանակ Տիգրա-նն առանձին լուրջ խռովություններ չի կատարում Հայաստանի հանդեպ և Տրդատի երկարամյա թագավորությունն անցնում է խաղաղ։

Տրդատի թագավորության վերջին տարիների մասին տեղեկություններ չկան։ Ավանդությունն ասում է, որ նա գահը թողել և առանձնացած կյանք է վարել, բայց պատմիչների ասելով՝ նախարարները նրան թունավորել են 330 թ. և թաղել են Թորթում գյուղում, որտեղ թաղվել է և Գրիգոր Լուսավորիչը։ Տրդատ 3-րդ կոչվել է նաև Մեծ։

Խոսրով 2-րդ.—Տրդատ մեծն իր որդի թագաժառանգ Խոսրով 2-րդին թողնում է մի այնպիսի պետություն, որը բավական ուժեղ էր և շատ դեպքերում առանց Հռոմի օգնության կարողանում էր պաշտպանել իր սահմանները պարսիկների հարձակումներից։ Բայց դրան զուգընթաց հայկական պետության համար ստեղծվել էր ծանր կացություն։ Նախ՝ Հայաստանի և Պարսկաստանի քաղաքական հարաբերություններն արմատապես փոխվել էին դեպի վատը, երկրորդ՝ Հայաստանի ներսում ստեղծված ներքին խմբավորումներն ու նրանց տարաձայնությունները վտանգավոր երևույթ էր երկրի անկախության համար։ Չորրորդ դարում հայ նախարարական կազմակերպությունը բռնում է իր զարգացման ուղին և իրեն շատ ավելի զգալ է տալիս, քան նախորդ դարերում։ Իսկ Տրդատ 3-րդից հետո նախարարները պայքարի են դուրս գալիս մեկը մյուսի, ապա՝ Արշակունյաց թագավորության դեմ։ Արշակունյաց թագավորները կենտրոնացած պետություն ստեղծելու նպատակով ուժեղ պայքար են սկսում խռովարար իշխանների դեմ։ Նրանք զանազան միջոցներով աշխատում են թուլացնել նախարարների ուժը, բայց սրանք ավելի կատաղի դիմադրություն են ցույց տալիս Արշակունիներին։ Սկսած Խոսրով 2-րդից մինչև Արշակունյանց թագավորության անկումը, թագավորների և իշխանների միջև առաջացած այդ պայքարը ծանր է նստում երկրի վրա և Արշակունյաց պետությունը հասցնում է իր անկմանը։

Չորրորդ դարում թագավորական իշխանության կողքին սկիզբ է առնում հայ եկեղեցին՝ իր կազմակերպչական մեծ ունակություններով, որն իր կալվածային հզորությամբ խոշոր կազմակերպություն էր դարձել։ Միայն Լուսավորչի տոհմը 15

գավառ կալված ունեին: Հայ հեթանոսական մեհյաններն ու տաճարները և նրանց սպասարկու քրմերը շատ քիչ քաղաքական դեր էին կատարում Հայաստանում, նրանք միշտ էլ հնազանդ են եղել արքայական իշխանությանը: Հայ քրմությունը միշտ էլ կապված է եղել պարսկական կրոնական հայացքների հետ: Բայց քրիստոնեության հաղթանակից հետո հայ նոր եկեղեցին և նրա սպասարկու հոգևորականությունը կապված էր Արևմուտքի հետ և թշնամություն էր հանդես բերում դեպի Պարսկաստանը: Այսպիսով, հայ եկեղեցին և նրա սպասարկու հոգևորականության հիմնական մասը, լուսավորչի տոհմի գլխավորությամբ, հարում էր այն նախարարական թևին, որն իր շահերով կապված էր արևմտյան երկրների հետ: Հայ եկեղեցին աշխատում էր թագավորների և նախարարների միջև պահպանել իր անկախությունը: Կաթողիկոսները շատ ու շատ դեպքերում ձգտում էին հավասարվել թագավորներին: Նրանք ոչ միայն չէին ուզում ենթարկվել թագավորներին, այլ և աշխատում էին իրենց ազդեցության տակ առնել Արշակունյաց գահակալներին և որոշ դեպքերում հաջողվում էր այդ: Հայ եկեղեցին թագավորական իշխանության կողմն էր այնքան ժամանակ, որքան նպաստում էր իր հզորանալուն: Իսկ երբ թագավորները փորձում էին ստեղծել ուժեղ կենտրոնացած պետություն և աշխատում էին իրենց ենթարկել նաև եկեղեցուն, այն ժամանակ հոգևորականները, կաթողիկոսի գլխավորությամբ, դուրս էին գալիս թագավորի դեմ պայքարելու կամ թե չեզոք դիրք էին բռնում ու նրանց մենակ էին թողնում իրենց թշնամիների դեմ:

Թեև 4-րդ դարում Հայաստանում կային հեթանոսական կրոնի մնացորդներ, բայց քրիստոնեությունն արդեն հաղթանակ էր տարել: Հայ հոգևորականության ներսում նույնպես կային տարաձայնություններ: Հոգևորականները բաժանվում էին երկու հոսանքի՝ Լուսավորչականներ և Աղբիանոսականներ: Երկրորդ հոսանքը, որ գլխավորում էր Աղբիանոսի տոհմը, դեմ էր Լուսավորչի և նրա կողմնակիցների մոլի հունասիրությանը: Այդ հոսանքը կոչվում էր պահպանողական թև, որը չուներ Լուսավորչի տոհմի վերանորոգչական խիզախ գործունեությունը, չէր հետևում արևմտյան կուլտուրային ու քաղաքակրթության և նորմուծություններին, այլ ձգտում էր քրիստոնեական կրոնին տալ տեղական, ազգային բնույթ, չխառնվել քաղաքական գործերին և միշտ հավատարիմ մնալ թագավորներին: Հոգևո-

րականների այս հոսանքը, անշուշտ, պարսկական օրիենտացիայի կողմնակից չէր, այլ գտնվում էր ասորական հոգևորականների խիստ ազդեցության տակ և միշտ էլ հնազանդ էր թագավորներին: Այդ պատճառով, երբ թագավորները գժտվում էին Լուսավորչի տոհմի անդամների հետ, կաթողիկոսական աթոռը հանձնում էին Աղբիանոսի տոհմին, որից դուրս էին մնում նաև այն նախարարները, որոնք դժգոհ էին Լուսավորչի տոհմից: Աղբիանոսի տոհմն իր դիրքով, ծագումով, հզորությամբ և հեղինակությամբ չէր կարող չափվել Լուսավորչի տոհմի հետ, դրա համար էլ այդ երկու տոհմերի ու նրանց շուրջը համախմբված հոգևորականների պայքարը միշտ վերջանում էր Գրիգոր Լուսավորչի տոհմի հաղթանակով:

Արշակունյաց թագավորների և նախարարներին, ինչպես նաև աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների փոխադարձ կռիվներն ու պայքարը հիմք են կազմում 4-րդ դարի հայ քաղաքական դեպքերին: Հայաստանի այդ ներքին կռիվներին ավելանում է նաև Հայաստանի համար պայքարող Հռոմի և Պարսկաստանի մրցումը: Ահա այսպիսի ծանր ժամանակաշրջանում Արշակունյաց թագավորության գլուխ է կանգնում Խոսրով 2-րդը Կոտակ (կարճահասակ) մականունով (330—339), որը կամքից թույլ մի անձնավորություն էր:

Խոսրով 2-րդը շարունակում է վարել իր հոր 40-ամյա խաղաղության ժամանակաշրջանի քաղաքականությունը, բայց առանց հոր քաջությունն ունենալու: Նրա օրով Արշակունիների արքունիքի գլխավոր դերակատարներն էին սպարապետությունը՝ հանձին Վաչե Մամիկոնյանի, որ մի քաջ ռազմիկ էր, և հունական հոսանքի հոգևորականությունը՝ հանձին Գրիգոր Լուսավորչի որդի Վրթանես կաթողիկոսի, որը հաջորդել էր Արիստակես կաթողիկոսին: Վերջինս սպանվել էր Ծոփաց աշխարհում, պարսկական քաղաքականություն վարող իշխաններից մեկի՝ Արքեղայոսի կողմից: Խոսրով 2-րդը հոր նման աշխատում էր բարձրացնել հոգևորականության դիրքը, նա պաշտպանում էր քրիստոնեությունը ոչ միայն Հայաստանում, այլև հարևան երկրներում: Խոսրովի նպատակն էր սպարապետի ու կաթողիկոսի միջոցով ամրապնդել իր իշխանությունը:

Խոսրով Կոտակի թագավորության սկզբից երկրի ներսում ծայր են առնում ներքին խռովությունները: Նախարարներն իրենց շատ անհանդիստ են պահում: Տարոն գավառում Վրթա-

նես կաթողիկոսի դեմ մահափորձ է կազմակերպվում, որը, սակայն անհաջող է անցնում: Այս գործի մեջ խառն էր նաև Թագուհու մասը, որը գլխավորում էր հակաքրիստոնեական հոսանքը: Բայց միայն Վրթանեսի մահափորձով չի վերջանում դժգոհությունը: Այս անգամ սկսվում են Մանավազյան և Որդունյան նախարարությունների ապստամբությունները: Այդ նախարարությունները տոհմական թշնամությամբ, բռնված հարձակվում են իրար վրա և խանգարում երկրի խաղաղ կյանքը: Նրանց կռիվները դադարեցնելու համար արքունիքն ու կաթողիկոսությունը Ալբիանոս եպիսկոպոսին ուղարկում են պատգամավոր՝ նախարարներին հաշտեցնելու համար: Բայց նրանք «հայհոյանքներով անպատվում են» պատգամավորներին և «սկսում են ավերել արքունի կալվածները»: Այդ ժամանակ նրանց վրա է գնում սպարապետ Վաչե Մամիկոնյանը և դաժանորեն ճնշում է խռովարար իշխանների ապստամբությունը ու բնաջինջ անում նրանց տոհմերը: Թագավորը Մանավազյանների կալվածները Մանազկերտ քաղաքի հետ հանձնում է Ալբիանոսի տոհմին, իսկ Որդունյաց կալվածները՝ Բասենի եպիսկոպոսական թեմին:

Ներքին այդ խռովությունները ճնշելուց հետո Խոսրով Կոտակն սկսում է զբաղվել շինարարական աշխատանքներով: Դվինում նա կառուցում է արքունի ապարանք, որի շուրջը համախմբվում են մեծ թվով բնակիչներ և հետագայում նա դառնում է Դվին քաղաքը: Գառնիի արքունական բերդից սկսած Ազատ գետի երկայնքով տնկել է տալիս կաղնիների «Խոսրովակերտ» անտառը, որ ամբողջովին պարսպով շրջապատել է տալիս և դարձնում որսի վայր: Ֆեոդալական զվարճության համար տնկված այս անտառը Արարատյան դաշտի կլիմայական պայմանների վրա ունենում է բարերար ազդեցություն: Բազմամյա խաղաղության ժամանակաշրջանում վերականգնվում է գյուղատնտեսությունը, երկրի տնտեսական կյանքը վերելք է ապրում: Պատմիչները Խոսրով Կոտակի թագավորության խաղաղ շրջանի մասին ընդգծում են, որ այդ օրով «շինությունը, մարդաշատությունն ու առողջությունը, պտղաբերությունը, առատացածաշատությունն ու շահեկանությունն աճելով բազմացավ»:

Խոսրով Կոտակի թագավորության վերջին շրջանում Առաջավոր Ասիայում երկու մրցակից պետությունների միջև շարունակվող քառասնամյա խաղաղության շրջանը հասնում է իր

վախճանին: Պարսկական ազնվականությունը հանձին Շապուհ 2-րդի (310—379 թ. թ.), ծրագրում է 297 թվին Մծբինում կնքված հաշտությանը վերջ տալ: Շապուհ 2-րդը, նախքան հյուսիսային Միջագետքում Հռոմի կայսրության դեմ պատերազմներ սկսելը աշխատում է իրեն ենթարկել Հայաստանն ու Վրաստանը: Այդ նպատակով, նա նախ, օգտագործում է հյուսիսային ցեղերին, որոնք մազքութների թագավոր Սանեսանի գլխավորությամբ սպանում են Աղվանից եպիսկոպոս Գրիգորիսին և հարձակվում արևելյան Հայաստանի վրա, հասնում մինչև Ատրպատական, ապա դառնալով դեպի Արարատյան երկիրը՝ պաշարում են Վաղարշապատ քաղաքը: Իսկ թագավորն ու կաթողիկոսն ապաստանում են Բագրևանդ գավառի Դարեվից բերդում: Այն ժամանակ նորից հանդես է գալիս սպարապետ Վաչե Մամիկոնյանն իր անհաղթ բազկով հայոց այրուձիով և ջարդում է թշնամուն նախ Վաղարշապատի մոտ, ապա Օշականի առապարներում: Սպարապետի զորավարներից մեկը՝ Վահան Ամատունին կռվի ժամանակ ձիուց վայր է նետում Սանեսանին, սպանում, ապա գլուխը կտրում և ուղարկում Խոսրով թագավորին, որն ի նշան այդ քաջագործության՝ Օշական գյուղը նվիրում է Վահան Ամատունուն: Այնուհետև Վաչեն իր քաջ ռազմիկներով ջարդում, Հայաստանից դուրս է քշում թշնամիներին:

337 թվին լրանում է Մծբինում կնքված պայմանագրի քառասուն տարին, նույն թվին մահանում է նաև Հռոմի կայսր Կոստանդինը: Շապուհ 2-րդը, օգտվելով դրանից, մի կողմից պատերազմական գործողություններ է սկսում, իսկ մյուս կողմից աշխատում է Հայաստանում ներքին խռովություններ ու ապստամբություններ առաջ բերել Խոսրով 2-րդի դեմ: Պարսկական զորամասերը հարձակվում են Հայաստանի վրա Մարաստանի կողմից: Թագավորը Բզնունյաց Դատաբե իշխանին կարգադրում է պաշտպանել երկրի սահմանները թշնամուց, մինչև որ ինքն ու սպարապետն օգնության կհասնեն: Սակայն Դատաբեն դավաճանում և անցնում է թշնամու կողմը, ջարդել է տալիս հայկական զորքերի մի մասը, ապա իր զորքերով միանում է պարսկական բանակին ու շարժվում դեպի Վանա լիճը: Շուտով սպարապետ Վաչեն Խոսրով 2-րդի հետ հայկական բանակով հասնում են Վանա լճին, հարձակվում են պարսիկների ու դավաճան հայերի վրա, տեղի է ունենում մի մեծ ճակատամարտ, թշնամին գլխովին ջարդվում ու դուրս է շպրտվում

Հայաստանի սահմաններից, Դատաբեն գերի ընկնելով սպանվում է, իսկ նրա տոհմը սրի է քաշվում, որ ապաստանել էր Աղթամարի կղզում: Նրա կալվածները, որ գտնվում էին Վանա լճի հյուսիս-արևելյան մասում, պետականացվում են:

Դեռ նոր էին ճնշել դավաճան Դատաբեի ապստամբությունը, Հայաստանից դուրս քշել պարսիկ նվաճողներին, երբ նույն Շապուհի թելադրությամբ ապստամբություն է բարձրացնում Աղձնյաց Բակուր բդեշխը և անցնում թշնամու կողմը: Դավաճանի դեմ դուրս է գալիս հայկական բանակը, Բակուրը պարտվում է և կռվի դաշտում ընկնում են ինքն ու իր եղբայրները: Նրա տոհմը նույնպես սրի է քաշվում: Ազատվում է միայն մի տղա, որը դիմել էր Վաչե զորավարի գթությանը: Դավաճանի կալվածները նույնպես պետականացվում են, բայց հետո նորից տրվում են ազատված տղային: Սակայն, չնայած դրան, պարսկական զորքը մտնում է Հայաստան: Կռիվները երկարում են: Արշակունի թագավորությունն ընկնում է ծանր դրության մեջ: Նախարարների հանդեպ անվստահությունը հասնում է մեծ չափերի: Խոսրով Կոտակը կարգադրում է, որ «մեծամեծ ավագանին, երկիր կառավարող և երկրների տեր նախարարները, որոնք տասը հազար և հազար զորքի տեր էին, թագավորի մոտ մնան, նրա հետ շրջեն և ոչ ոք նրանցից արքունի զորքերի հետ չգնա, որովհետև վախենում էր նրանց ապստամբությունից»: Սպարապետ Վաչե Մամիկոնյանը մի քանի տարի կռվում է պարսիկների դեմ, ջարդում նրանց և հետ մղում Հայաստանի սահմաններից, բայց ինքն էլ վերջում սպանվում է ճակատամարտերից մեկում: Խոսրովը սպարապետության պաշտոնը հանձնում է Վաչեի որդի Արտավազդին, որը դեռ մանուկ էր, բայց նրան խնամակալ է նշանակվում Շիրակի ու Արշարունիքի տեր Կամսարականը և Անդովկ Սյունեցին: Հենց այդ ժամանակ էլ մահանում է Խոսրով Կոտակը, որն ըստ Մ. Խորենացու՝ «քաջության ոչ մի գործ չկատարեց, բոլորովին զուրկ լինելով ազնվական մտածողության գաղափարից, զբաղված էր զբոսանքներով, թաչնորսությամբ և այլ որսերով»: Խոսրովին թաղում են Անի ամրոցում:

Խոսրով Կոտակի շրջանի այս դեպքերը լուսարձակի նման նախախոսրովյան շրջանի մոտավոր անցյալն են լուսավորում և ցույց են տալիս Արշակունի թագավորների հեղինակության անկումը:

Տիրանը և կենտրոնական իշխանության ուժեղացման փորձերը

Խոսրով 2-րդին հաջորդում է նրա որդի Տիրանը (339—350 թ.թ.), որը հորից ժառանգում է ծայրահեղորեն թուլացած մի թագավորություն: Դրությունը գնալով բարդանում է նաև նրանով, որ Պարսկա-հռոմեական պատերազմներն սկսվում են Վերին Տիգրիսի հողամասերի տիրապետության շուրջը և պատերազմների թատերաբեմը դառնում է Հյուսիսային Միջագետքը: Շապուհ 2-րդն իր թիկունքը հյուսիսից ապահովելու նպատակով շարունակում է Հայաստանի նախարարներին սիրաշահել, որի հետևանքով Հայաստանի նախարարների մի զգալի մասը թեքվում է պարսիկների կողմը: Կենտրոնախույս տարրերի անջատողական ձգտումներն էլ ավելի են խորանում: Խոշոր նախարարներն աշխատում են Արշակունիներից ինքնուրույն դառնալ: Պարսից արքունիքն էլ իր կողմից խրախուսում է հայ նախարարների այդ ձգտումները:

Արշակունյաց թագավորությանը դեմ են դուրս գալիս Պարսկաստանի սահմանամերձ երկու խոշոր նախարարական տները՝ Արծրունի և Ռշտունի նախարարությունները, որոնց ապստամբությունով ավելի է թուլանում Հայաստանի թագավորական իշխանությունը: Կրկնվում է այն, ինչ տեղի էր ունեցել Խոսրով Կոտակի ժամանակ՝ Բզնունյաց նախարարության և Աղձնիքի բդեշխության կողմից: Հոգևորականությունն էլ հանձին Հուսիկ կաթողիկոսի, անվերջ ընդհարումների մեջ էր արքունիքի հետ:

Երկրում ստեղծված այս դրության հետևանքով Արշակունիների արքունիքի և նրա շուրջը համախմբված իշխանների առաջ խնդիր է դրվում ամրացնել կենտրոնական իշխանությունը և ակարացնել կենտրոնախույս ուժերը: Տիրան թագավորը, Հայր Մարդպետի անմիջական մասնակցությամբ փորձեր է անում ամրապնդել թագավորության դիրքերը: Մարդպետական նախարարությունը համարյա միշտ հետամուտ էր եղել կենտրոնական իշխանության ամրացման քաղաքականությանը: Դրան զուգընթաց՝ Տիրան թագավորը չհետևեց իր հոր վարած հռոմեասեր քաղաքականությանը, նա աշխատեց Հյուսիսային Միջագետքում տեղի ունեցող Պարսկա-հռոմեական պատերազմների ընթացքում չեզոքություն պահպանել, որ համապատասխանում էր Հայաստանի շահերին: Տիրանի բռնած այս քաղաքական դիրքը երկիրն ապահովում էր արտաքին հարձակումնե-

րից, միաժամանակ հնարավորություն էր տալիս արքունիքին իր դիրքերն ամրացնելու համար գործնական քայլերի դիմելու։

Տիրանն ուժեղացնելով կենտրոնական իշխանությունը՝ պայքար է ծավալում երկու ուղղությամբ թե՛ պարսկական և թե՛ հռոմեական քաղաքականություն վարող իշխանների ու հոգևորականների դեմ, բայց առաջին հերթին իր պայքարն ուղղում է հռոմեական քաղաքականություն վարող հոսանքի դեմ, որի գլուխ կանգնած էր Լուսավորչի տոհմը՝ հանձին Հուսիկ կաթողիկոսի, որը միաժամանակ Տիրան թագավորի փեսան էր։ Կաթողիկոսը թագավորին ստիպում է հետևել նախորդ թագավորների վարած քաղաքականությանը և հաշվի առնել Հռոմին։ Այդ հողի վրա սկսվում է նոր պայքար, կաթողիկոսը մինչև անգամ թագավորին արգելում է եկեղեցի մտնել։ Այսպես, երբ մի անգամ թագավորն ուզում էր մտնել Ծոփաց աշխարհի Բնաբեղ գյուղի եկեղեցին, Հուսիկը, արգելում է նրան։ Թագավորը զայրանալով այնքան է ծեծել տալիս, որ կաթողիկոսը մահանում է։ Նույն վախճանին է արժանանում նաև երկրում ու արքունիքում մեծ ազդեցություն ունեցող Դանիել եպիսկոպոսը։ Տիրանը միաժամանակ «բնաջնջում է ապստամբ Արծրունյանց և Ռշտունյաց նախարարական տոհմերին, և նրանց ինչքը հարքունիս գրավում»։ Մամիկոնյան նախարարությունը, նրա որոշ անդամները, ոչ միայն հավանություն չեն տալիս Տիրանի քաղաքականությանը, այլ և դրանում իրավամբ տեսնում են «հայրենի տերերի» առանձնաշնորհումների ոտնահարում։ Մամիկոնյանները թողնում են արքունիքը և ամրանում Տայոց աշխարհի իրենց հինավուրց կալվածներում և երկար ժամանակ չեն խառնվում արքունի գործերին։ Բնորոշ է Փավստոս Բյուզանդի վիպական այն վկայությունը, որի համաձայն բնաջնջման ենթարկվող նախարարական տոհմերի պաշտպանի դերում հանդես է գալիս Մամիկոնյան նախարարությունը, որը դեռ Խոսրով Կոտակի ժամանակ բնաջնջված Աղձնյաց Բդեշխության տոհմից ազատում է մի արու զավակ, որպեսզի հետագայում ժառանգ դառնա։ Նույնը կատարում է Արծրունյաց նախարարական տոհմի կոտորածի ժամանակ։

Այս դեպքերի ընթացքում հոները հարձակվում են Աղվանքի, Ատրպատականի ու Հայաստանի վրա և մեծամեծ վնասներ են պատճառում այդ երկրների բնակիչներին ու պարսիկներին։

Հայոց Տիրան թագավորը պարսկական գնդերի օգնությամբ, որ ուղարկել էր Շապուհը, դուրս է գալիս հոների դեմ, ջարդում և ետ է մղում նրանց։ Այս հանգամանքը Տիրանին ստիպում է որոշ չափով հաշվի առնել պարսիկներին, չնայած իր վարած ինքնուրույն քաղաքականության։ Բայց Հռոմը հայոց թագավորից պահանջում է, որ նա հեռանա պարսիկներից։ Տիրանը ստիպված է լինում կատարել կայսրի պահանջը և իր երկու թոռներին՝ Գնելին ու Տիրիթին պատանդ է ուղարկում Բյուզանդիոն։

Մինչ Հայաստանում այս դեպքերն էին տեղի ունենում, Հյուսիսային Միջագետքում փոփոխակի հաջողություններով կռիվները շարունակվում էին Հռոմի կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև։ Տիգրիսի ափերին ավերածությունները շարունակվում էին, սակայն Մծբինն ուժեղ դիմադրություն էր ցույց տալիս պարսկական բանակներին (338—346 թ. թ.)։ Ի վերջո պարսկական բանակները ջարդվելով ետ են մղվում Կոստանդ կայսրի (337—361 թ.թ.) զորավարների կողմից։

Տիզբոնի արքունիքը, որ մինչ այդ Արշակունյաց թագավորության չեզոքությունը պահպանելու նպատակով բարեկամական հարաբերությունների մեջ էր Հայաստանի հետ, Տիրանի վարած ինքնուրույն քաղաքականության մեջ տեսնում է Արշակունյաց թագավորության ուժեղացումը, մի բան, որ բնավ ձեռնտու չէր իր ծրագրերի իրականացման տեսակետից։ Թեև Հռոմը հաղթել էր Պարսկաստանին, բայց այժմ նա զբաղված էր կայսրության արևմտյան մասերով։ Շապուհ 2-րդն օգտվելով այդ դրությունից՝ իր զորավար Ներսեհի (ըստ Փավստոսի՝ Վարազ Շապուհի) միջոցով խորամանկությամբ Տիրան թագավորին և նրա ընտանիքին բերել է տալիս Տիզբոն իբր թե Շապուհ 2-րդի հետ բանակցություններ վարելու։ Սակայն նրա նպատակն էր նվաճել Հայաստանը, վերացնել Արշակունյաց դինաստիան և վերջ տալ Հայաստանի համար Հռոմի հետ շարունակ տեղի ունեցող պատերազմներին։ Շապուհ 2-րդը Տիրանին ձերբակալում, կուրացնում է և բանտարկում (350 թ.)։ Տիրանի բանտարկությունից հետո Պարսկաստանը պատրաստվում է նվաճել Հայաստանը և կենսագործել իր վաղեմի ծրագիրը։ Բայց հայոց թագավորի նենգաբար կուրացումն ու բանտարկությունը Հայաստանում մեծ զայրույթ ու վրդովմունք է առաջ բերում

և Հռոմում։ Հայ իշխանները դիմում են Հռոմի կայսրության օգնությանը։ Կոստանդ կայսրը, որը մինչ այդ իր հաշիվները մաքրել էր Արևմուտքի հետ, ուշադրություն է դարձնում Արևելքի վրա և մեծ բանակով գալիս է Հայաստան, հայկական զորքի օգնությամբ պարսիկների հետ ճակատամարտ տալիս Բասենի գավառում։ Հայ-հռոմեական միացյալ բանակը ջարդում է թշնամուն։ Գոռոզ Շապուհն իր կյանքը փրկում է փախուստի միջոցով, թողնելով արքայական հարեմը հայերի ու հռոմայեցիների ձեռքը։ Գործը վերջանում է պարսկական հարեմի ու գերիների փոխանակումով հայոց թագավորի ու նրա ընտանիքի հետ։ 350 թ. Տիրանը վերադառնում է Հայաստան, բայց զրկված լինելով աչքերից՝ գահը զիջում է իր որդի Արշակ 2-րդին։ Իսկ ինքը քաշվում է Կվաշ (Կոշ) ավանը, որտեղ առանձնացած կյանք է վարում մինչև իր մահը։ Կոստանդ կայսրն էլ իր բանակով հեռանում է Հայաստանից, և թագավորել է սկսում Արշակ 2-րդը (350—368 թ. թ.)։

Արշակ 2-րդը եվ նրա վարած ներքին քաղաքականությունը

Արշակ 2-րդը թե՛ Հռոմի և թե՛ Պարսկաստանի կողմից ճանաչվում է Հայաստանի թագավոր, բայց երկու պետություններն էլ աշխատում էին նրա միջոցով ապահովել իրենց շահերը Հայաստանում։ Հռոմի կայսրն այդ նպատակով Փոքր Ասիայում գտնվող հայոց թագավորական կալվածների հարկը շնորհում է նրան։ Արշակ 2-րդն ամուսնանում է հռոմայեցի Օլիմպիա իշխանուհու հետ (350—351 թ.թ.), մյուս կողմից Շապուհ 2-րդն ամեն կերպ ընդառաջելով աշխատում է ապահովել Արշակ 2-րդի չեզոքությունը հետագա Պարսկա-հռոմեական պատերազմների ընթացքում։

Տիրանի որդի Արշակ 2-րդը 40-ից անց տարիք ուներ, երբ իշխանության գլուխ է կանգնում Հայաստանում։ Նա հին հայ թագավորների շարքում իր դերով ու գործունեությամբ բռնում է 2-րդ տեղը, զիջելով առաջնությունը միայն Տիգրան 2-րդին։ Նրա մասին պատմական հարուստ տեղեկություններ են տալիս ոչ միայն հայ աղբյուրները՝ Փավստոս Բյուզանդը և Մ. Խորենացին, այլև հռոմեական աղբյուրները, հատկապես Ամիանոս Մարկելլինոսն իր հռչակավոր «Պատմության» մեջ։ Արշակ 2-րդն օժտված էր պետական, վարչական մեծ ունակություններով, հայրենասիրական գաղափարներով։ Նա նշանավոր

դիվանագետ էր, ստացել էր իր ժամանակի բարձր կրթություն, ծանոթ էր նաև հռոմեական և պարսկական պետական ու վարչական սիստեմներին։ Նա իր վարած ներքին ու արտաքին քաղաքականությամբ հետևում էր իր հորը՝ Տիրանին, այսինքն ստեղծել ուժեղ կենտրոնացած պետություն, չեզոք դիրք բռնելով Հռոմի, Պարսկաստանի հանդեպ։

Արշակ 2-րդի թագավորության 1-ին տարիներն (350—357 թ.թ.) անցնում են խաղաղ, որովհետև դադարում են Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև տեղի ունեցող պատերազմները։ Պարսկաստանն իր բանակներն ուղարկում է արևելյան թշնամիների դեմ։ Պատերազմների ընդմիջումը Հայաստանին բերում է մոտ տասը տարվա խաղաղության մի շրջան, որն օգտագործում է Արշակ 2-րդը երկրի ներսում կարգը վերականգնելու համար։ Անհրաժեշտ էր երկրի ազդեցիկ ֆեոդալական տները համախմբել արքունիքի շուրջը։ Արշակ 2-րդը միաժամանակ հաշվի առնելով, որ առանց երկրի երկու ազդեցիկ տների՝ Մամիկոնյան և Լուսավորչի տոհմերի հնարավոր չէր կենտրոնական իշխանության ամրապնդումը, Տիրանից դժգոհ և քաղաքական աշխատանքներից հեռացած Մամիկոնյաններին նորից գործի է հրավիրում։ Վաչե սպարապետի թոռներ՝ Վարդանին հանձնում է Մամիկոնյան տանուտերությունը, Վասակին՝ սպարապետությունը, իսկ փոքր թոռ Վահանին էլ զինվորական բարձր պաշտոն է տալիս բանակում։ Մամիկոնյան տոհմին մոտիկ կանգնած Գնունիներին տալիս է հազարապետության պաշտոնը։ Արշակ 2-րդը հիմնվելով սրանց և Մարդպետի վրա՝ կարգավորում է բանակը, հնազանդեցնում խռովարար նախարարներին և երկրի սահմաններն ամրացնելու նպատակով սահմանակալ նախարարներին՝ բդեշխների գլխավորությամբ զորագնդեր է նշանակում այդ վայրերում։ Երկիրը մի պահ նորից սկսում է շունչ քաշել, իրենց տեղերն են վերադառնում նախորդ խառը ժամանակաշրջանում երկրից փախածներն ու թագնվածները, և ավերիչ պատերազմների հետևանքով կանգ առած տնտեսական կյանքը նորից վերականգնում է։ Երկրում կարգ ու կանոն մտցնելուց և բանակն ու սահմանները ամրացնելուց հետո կենտրոնական իշխանության դիրքը մասամբ կայունանում է։ Այդ կայունացումն ավելի հաստատուն դառնալու նշաններ է ցույց տալիս այն ժամանակ, երբ Արշակ 2-րդը կարողանում է արքունիքի շուրջը համախմբել երկու նշանավոր դեմքերին՝ Ներսես կաթողիկոսին և

Հասակ սպարապետին։ Այս ժամանակաշրջանը Փավստոս Բյուզանդը բնութագրում հետևյալ բնորոշ խոսքերով. «Նորոգվեց, զվարթացավ Հայաստանի պետությունը, և ամեն ոք խաղաղությամբ վայելում էր իր ունեցածը»։

Արշակի պես հմուտ պետական գործիչը չէր կարող հաշվի չառնել և մոռացության տալ երկրում մեծ ազդեցություն ունեցող Լուսավորչի տոհմին։ Նա պալատ է կանչում սպանված Հուսիկ կաթողիկոսի թոռ Ներսեսին, Մամիկոնյանների փեսային, որն Արևմուտքից Հայաստան էր վերադարձել։ Նրան է հանձնում արքունի քարտուղարի և սենեկապետության պաշտոնները։ Բայց, չնայած դրան, շուտով կաթողիկոսի ընտրության խնդիր է առաջ գալիս և թեկնածու է առաջադրվում արքունիքում նոր պաշտոններ ձեռք բերած Ներսեսը։ Արշակ 2-րդը նույնպես աշխատում էր, որ կաթողիկոսության աթոռը նորից անցնի Լուսավորչի տոհմին։ Թագավորի հրամանով 353 թվին Ներսեսն ընտրվում է կաթողիկոս։

Ներսես առաջինը, որը հայտնի է նաև Մեծ անունով, իր կրթությունն ստացել էր արևմտյան երկրներում։ Նա տիրապետում էր իր ժամանակի բարձր գիտությանն ու կուլտուրային, օժտված էր մեծ ունակություններով, 4-րդ դարի տաղանդավոր գործիչներից էր և հայ լուսավորչական եկեղեցու խոշոր հայրերից մեկը, որը մեծ ծառայություն է մատուցել ոչ միայն եկեղեցու բարեկարգմանը, այլ և երկրի քաղաքական կյանքին։ Արշակ թագավորը հովանավորում և լայն արտոնություններ ու իրավունքներ է տալիս Ներսես կաթողիկոսին ամրապնդելու եկեղեցին և նրան համախմբելու պետության շուրջը։ Այդպիսով Ներսեսը դառնում է խոշոր դեմք, թագավորի աջ բազուկը՝ լըծակիցը և հայ հոգևորականության գլուխ կանգնելով՝ խոշոր դեր է կատարում։ Թեև մոտ կես դար էր, ինչ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն էր հայտարարվել, սակայն դեռևս խոր արմատներ չէր գցել բնակչության լայն շերտերի մեջ և քրիստոնեական եկեղեցու դերը դեռ բավական թույլ էր։ Հեթանոսական շրջանի բարքերն ու սովորությունները իշխող էին ոչ միայն այն գավառներում, ուր քրիստոնեությունը չէր թափանցել, այլև այն վայրերում, ուր վերևից պարտադրվել էր քրիստոնեությունը։ Փաստորեն հայերն անունով էին դարձել քրիստոնյա, նրանք դեռ կանգնած էին իրենց հին բարքերի վրա, ավետարանի լեզուն անհասկանալի էր, նա կարդաց-

վում էր հունարեն և ասորերեն լեզուներով, շատ դեպքերում կարդում էին հույն և ասորի հոգևորականները, որոնք իբրև օտարականներ՝ իրենց անձնական շահերի համար էին գործում և ոչ թե հայ ժողովրդի կուլտուրայի համար։ Այս բոլորը լավ էր հասկանում և ըմբռնում Ներսեսի նման կրթված ու գիտուն անձնավորությունը։ Նա իր ձեռքն է առնում եկեղեցու վերանորոգման գործը։ Այդ հանգամանքը հարկադրում է տիրող դասակարգին՝ օգնելու հոգևորականությանը նրա մի շարք ձեռնարկումների մեջ, որոնք նպատակ ունեին քրիստոնեության ազդեցությունն ավելի խորը տարածելու բնակչության մեջ և ամրացնելու եկեղեցու դերն ու հեղինակությունը։

Արշակունիների արքունիքի քարտուղար, ապա կաթողիկոս Ներսեսը մի հաստատակամ, ազդեցիկ ու եռանդուն, գործունյա անձնավորություն, լծվում է այդ գործին։ Նա 354 թվին Աշտիշատում հրավիրում է եկեղեցական ընդհանուր ժողով, ուր մշակվում են մի շարք եկեղեցական կանոններ, որոնք դյուրություն էին ընձեռնում հոգևորականությանն ավելի լայն գործունեություն ծավալելու։ Այդ ժողովի որոշումներով վանական կյանքի հիմք է դրվում, հիմնվում են վանքեր, նրանց կից միաբանություններ ու կուսանոցներ՝ երկու սեռի համար։ Կարևոր որոշում է կայացվում վանականներին կրթելու մասին։ Ներսեսի մշակած օրենքների համաձայն քրիստոնյա եկեղեցին մտնում է բարոյական սկզբունքների մեջ։ Վանքերը շատ շուտով լցվում են աբեղաներով, վարդապետներով ու կույսերով։ Վանական խորհրդավորությունը դեպի իրեն է ձգում ժողովրդական լայն զանգվածներին և վանքերը լցվում են ուխտավորներով, որոնք մեծամեծ նվերներ են տալիս։ Այդպիսով հայ եկեղեցին աստիճանաբար դառնում է ժողովրդական մի հաստատություն։

Սակայն, Աշտիշատի եկեղեցական ժողովը, որ գումարվել էր Ներսես կաթողիկոսի գլխավորությամբ, չի բավարարվում միայն եկեղեցական խնդիրներով։ Արշակ թագավորի թույլտվությամբ և ցուցումով ժողովը զբաղվում է նաև աշխարհիկ կանոնների և օրենքների մշակումով, որովհետև հայերի մեջ, չնայած նրանց հազարամյա գոյությանը, դեռևս կային բարբարոսական սովորություններ։ Մշակված օրենքների համաձայն, հայերի միջից վերացվում են մեռելների վրա ողբալու հեթանոսական կարգը, սատկած անասունի միս ուտելը, որը հիվանդությունների պատճառ էր դառնում։ Ամուսնությունը

կարգ ու կանոնի տակ է դրվում—արգելվում է անչափահասների, մոտիկ ազգականների ու բարեկամների ամուսնությունը, բազմակնությունը, կին թողնելը։ Այստեղ արգելվում են բարոյական հանցանքներն ու անասնական ախտերը, արբեցողությունը, սուտ երդվելը, զրկողությունը, արվագիտությունը, իգամոլությունը, անասնագիտությունը, պոռնկությունը և այլն։ Այդ մասին Փավստոսը գրում է. «Եւ արարին զամենայն ժողովուրդս երկրին Հայոց իբրև կարգ—միաբանութեան վանականաց համաշխարհի, բայց միայն ամուսնութեան օրինացն»։ Վերոհիշյալ օրենքները հայ ժողովրդի միջից վերացնում էին բարբարոսական սովորությունները և դնում նրան քաղաքակրթության ճանապարհի վրա։

Ներսես կաթողիկոսը ժողովի որոշումից հետո վանքերին կից բաց է անում դպրոցներ, ուր ասորերեն և հուներեն լեզուներով ուսուցանում են քրիստոնեական վարդապետությունը և պատրաստում այդ ուսմունքի քարոզիչներ, Դպրոցներում ուսուցիչների մեջ մեծ թիվ են կազմում հույները։ Նրանք գնում էին Աթենք, սովորում և վերադառնում էին երկիր ու նվիրվում ժողովրդի կրթության գործին։ Ներսեսի ժամանակ Աթենքում դեռ կենդանի էր հայ նշանավոր գիտնական Պրոերեսիոսը, որի շուրջը համախմբվում էին հայ երիտասարդները՝ հունական կուլտուրան ու գիտությունը յուրացնելու համար։ Այդ երիտասարդները զինված գիտությամբ վերադառնում էին հայրենիք ու լծվում դպրոցական-գիտական գործին, կրթում ուսման ծարավ պատանիներին։

Այդ բոլորից հետո, Աշտիշատի ժողովի որոշման համաձայն հիմնվում են մի շարք ձեռնարկություններ, այսպես օրինակ՝ հիվանդանոցներ, անկելանոցներ, որբանոցներ, ուրկանոցներ, աղքատանոցներ՝ օթևաններ կամ հյուրանոցներ օտարականների և ճանապարհորդների համար։ Այդ հիմնարկությունները բացվելուց հետո բոլոր անտեր երեխաներին հավաքում են որբանոցներում, աշխատանքի անընդունակներին և տեր չունեցող ծերերին հավաքում են անկելանոցներում։ Աղքատներին նպաստ է սահմանվում, վերացվում է մուրացկանությունը։ Փավստոս Բյուզանդի ասելով՝ բոլոր աղքատները բավարարվում են հիմնարկություններում և կարիք չկար, որ նրանք դուրս ելնեին իրենց անկյուններից։ Բոլոր հիվանդներին հավաքել են տալիս հիվանդանոցներում և սահմանում բժշկություն, իսկ անբուժելի հիվանդներին՝ բորոտների, ընկնավորնե-

րի, վեներական հիվանդություններով տառապողների և նման այլ հիվանդների համար, որոնք մինչ այդ արհամարհված էին և իրենց բախտին թողնված, հիմնում են մշտական հիվանդանոցներ և սահմանում խնամք, մի բան, որ հատուկ չէր Արևելքին, այլ Ներսեսը բերել էր Արևմուտքից։ Այս բոլոր հիմնարկությունների կարիքները բավարարելու համար Արշակ 2-րդը տալիս է միջոցներ ու կալվածներ, իսկ գյուղացիներն իրենց հերթին պետք է մասնակցեին այդ ծախսերին։ Հոգևորականներին ու եկեղեցուն թագավորի կողմից տրվում է նոր արտոնություններ։ Եկեղեցականներն ազատվում են հարկերից և զինվորական ծառայությունից։ Եկեղեցին ու հոգևորականները ձեռք են բերում ընդարձակ կալվածներ ու հարստություն և շատ եպիսկոպոսներ ու լուսավորչի տոհմը իրենց կալվածներով մրցում էին նախարարների հետ։ Այս բացառիկ արտոնություններով ու եկեղեցու գործունեությամբ հայ եկեղեցու և նրա սպասարկու հոգևորականի դերը շատ է մեծանում երկրում, իսկ Ներսես կաթողիկոսն իր ազդեցությամբ բացառիկ հեղինակություն է ձեռք բերում արքունիքում։

Հոգևորականության հեղինակության ուժեղացումը առաջ է բերում դժգոհություններ։ Արքունիքում տրտունջներ է լսվում եկեղեցու կալվածների շատության մասին, հատկապես այն ժամանակից, երբ Ներսեսն սկսում է միջամտել պետական գործերին։ Արքունիքում եղած դժգոհությունները գլխավորում էր Հայր Մարդպետը։ Նա մի անգամ Աշտիշատում Ներսեսի մոտ եղած ժամանակ, դժգոհելով նախատինք է կարդում Արշակունիների հասցեին. թե ինչու նրանք երկրի լավ հողերը հանձնել են «կանացահանդերձ» մարդկանց, այսինքն կրոնավորներին և սպառնում էր, որ եթե հասնի Արտաշատ, թագավորի միջոցով ետ վերցնել կտա այդ հողերը։ Հենց այդ հողի վրա էլ Աշտիշատից վերադառնալիս ճանապարհին Հայր Մարդպետը սպանվում է Շավասպ Արծրունու ձեռքով։ Այդ սպանությանը խառն էր հոգևորականների մատը։ Անշուշտ, Հայր Մարդպետի արտահայտած մտքերը բխում էին արքունիքում տիրող կարծիքից։ Հայր Մարդպետի սպանությունից հետո Արշակ թագավորի և Ներսես կաթողիկոսի հարաբերությունները սկսում են սառել։ Հարկավոր էր մի չնչին առիթ, որ նրանց տարաձայնությունը բորբոքվեր, որ և շուտով տեղի է ունենում։

Գնելը Հայմից վերադառնալուց հետո բնակվում էր Կվաշ ավանում՝ իր պապ Տիրանի մոտ: Նա զարգացած և մեծ գիտելիքների տեր մարդ էր, մեղմ բնավորությամբ: Երկրի աչքի ընկնող շատ նախարարները իրենց երեխաներին ուղարկում էին նրա մոտ՝ սովորելու: Նա ամուսնացել էր Սյունյաց իշխան Անդովկի աղջիկ Փառանձեմի հետ, որը հայտնի էր իր գեղեցկությամբ: Գնելի ձեռք բերած հաջողություններին նախանձում էր նրա հորեղբոր որդի Տիրիթը, որը համոզում է Արշակին, թե իբր Գնելն իշխաններին իր կողմն է գրավում գահը հափշտակելու համար: Արշակ 2-րդը հավատում է դրան և սպանել է տալիս Գնելին, հետո էլ Տիրիթին, որ իրեն խաբել էր: Վերջում էլ կնության է առնում Փառանձեմին, որն իր հերթին թունավորում է Օլեմպիադային և դառնում Հայաստանի թագուհին:

Ներսես կաթողիկոսն անտարբեր չէր կարող մնալ կատարված դեպքերի հանդեպ: Նա գժտվում է թագավորի հետ և հեռանում գործերից: Արշակն առանց տատանվելու կաթողիկոս է ձեռնադրում Չունակ եպիսկոպոսին, որը հնազանդ էր թագավորին: Բայց ուժեղացող հոգևորականությունը չէր ճանաչում Չունակին և բացարձակ թշնամացել էր թագավորի դեմ: Այդպիսով կաթողիկոսի և հոգևորականության ազդեցության ուժեղացումն արքունիքում սպառնալից է դառնում Արշակունյաց թագավորության համար:

Թեև Ներսես կաթողիկոսը հուսալի հենարան չի դառնում Արշակ 2-րդի համար, բայց դրա հակառակ՝ Արշակունյաց թագավորության նեցուկն է դառնում սպարապետ Վասակ Մամիկոնյանը, 4-րդ դարի հայ ամենախոշոր զորավարը: Սա Վաչե զորավարի թոռն էր, օժտված պետական, վարչական մեծ ունակություններով, տաղանդավոր զորավար էր և մեծ հայրենասեր: Իր ռազմական ունակություններով Վասակը հետևողական ժառանգ դարձավ իր պապին: Նրա համար ամենից բարձրն ու վսեմը հայրենիքի գաղափարն էր. ով որ այն մոռանա, կամ դավաճանի, պետք է սպանվի, թեկուզ նա լինի եղբայր կամ որդի, միևնույն է: Վասակի համար բարձր էին ու վսեմ՝ հայրենիք, ժողովուրդ և պետության հասկացողությունները: Այդ պատճառով նա մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց հայ երկրին, ժողովրդին և Արշակունյաց գահին:

Արշակ 2-րդի թագավորության առաջին 7 տարիներն անցան խաղաղ և նա այդ տարիներին իր կատարած մի շարք ներքին

միջոցառումներով ամրապնդեց պետությունը: Բայց թագավորի
վարած կենտրոնացած պետություն ստեղծելու քաղա-
քականությունը հանդիպում էր ոչ միայն հոգևորակա-
նության, այլև կենտրոնախույս տրամադրություն ունե-
ցող նախարարների դիմադրությանը: Սակայն, պետական մի
գործիչ, որպիսին էր Արշակ 2-րդը, չէր կարող անտեսել իր հոր
ու պապի ժամանակ կենտրոնացած իշխանության դեմ նախա-
րարների կատարած ոտնձգությունները: Կենտրոնացած ուժեղ
պետություն ստեղծելու միտումն Արշակի ներքին քաղաքակա-
նության առանցքն էր կազմում, և նա իր այդ ծրագիրը կեն-
սագործելու նպատակով ձգտում էր իր համար մի կռվան ըն-
տեղծել ընդդեմ կենտրոնախույս նախարարների, հիմնվելով
սպարապետ Վասակ Մամիկոնյանի և Մարդպետական տան
վրա: Չնայած Արշակի ձեռք առած մի շարք միջոցառումներին,
այնուամենայնիվ թագավորի և նախարարների հարաբերու-
թյունները վատանում են, երկրում տիրող անհանգիստ վիճակը
խանգարում է Հայաստանի անդորրությունը, նախարարների
արհամարհանքը դեպի թագավորական իշխանությունը՝ թուլաց-
նում է բացարձակ միապետության հիմքերը: Այդ պատճառով
Արշակ 2-րդը վճռում է վերջ տալ նախարարների և հոգևորա-
կանների գժտություններին ու ենթարկել նրանց արքայական
իշխանությանը: Այդ նպատակով փորձում է օգտագործել սոցիա-
լական մյուս խավերին: Նա Մասիսի ստորոտում, Կոգովիտ գա-
վառում, բարգրևանդից ոչ հեռու, առևտրական ճանապարհի վրա
կառուցել է տալիս մի քաղաք, որն իր անունով կոչվում է
Արշակավան: Թագավորական հրովարտակով ազատություն է
շնորհում բոլոր նրանց, ովքեր գժգոհ էին իշխաններից և հող-
վորականներից: Արշակավան ապաստանողներն ազատվում էին
իրենց ունեցած հանցանքներից ու պարտքերից: Այնուհետև,
ինչպես պատմիչներն են ասում, այդ քաղաքն են թափվում,
«ծառաներ, ավարառուներ, պարտապաններ, հանցավորներ, գո-
ղեր, մարդասպաններ ու քաղաքը մեծանում, բազմանում և լցը-
վում է ամբողջ հովիտը»: Արշակավան քաղաքը գտնվում էր
թագավորի իրավասության ներքո: Իշխաններն ու հոգևորակա-
նությունը նրա վրա ոչ մի իրավունք չունեին: Մատենագիր-
ները, որոնք արտահայտում են ֆեոդալների գժգոհությունները
Արշակավանի դեմ, ամենամռայլ ածականներով են որակում
Արշակավանը և այնտեղ ապաստան գտած բնակչությանը:
Նրանց նկարագրությունից պարզ երևում է, որ Արշակավան

էին հավաքվել ֆեոդալների շահագործումից փախած նոր գյուղացիներն ու ծառաները։ Արշակ 2-րդը փորձում է նախարարներից դժգոհ այդ տարրերից հենարան ստեղծել անհնազանդ իշխանների դեմ։ Երկրի կենտրոնախույս տարրերը դժգոհ էին թագավորի այդ ձեռնարկումից, որը լուրջ կերպով հարվածում էր նրանց շահերին։ Ներսես կաթողիկոսի առաջադրած Խադ եպիսկոպոսը հրաժարվում է Արշակավանի եկեղեցին օծելուց, իսկ ֆեոդալները հարձակվում են քաղաքի վրա։ Տեղի է ունենում արյունահեղ կռիվ, որը դասակարգային պայքարի մի հոյակապ նմուշ էր հին Հայաստանում։ Ֆեոդալները հոգևորականների օգնությամբ գրավում են քաղաքը և հիմնահատակ կործանում այն։ Դրանով էլ սկիզբ է դրվում Արշակի ժամանակ կենտրոնախույս և կենտրոնաձիգ ուժերի պայքարին։ Այդ պայքարի ընթացքում սպանվում են Գնել և Տիրիթ Արշակունիները, գահակալական խռովությունները կանխելու համար, որոնք անշուշտ կապ են ունեցել դժգոհ նախարարների հետ։ Մինչ այդ, հայ նախարարները Արշակավանի կառուցման դեմ բողոքում են Շապուհ 2-րդին, որ անշուշտ հաշտ աչքով չէր կարող նայել Արշակունյաց թագավորության ուժեղացման վրա։ Նախարարների բացահայտ պայքարը Արշակունիների արքունիքին ստիպում է վճռական գործողությունների դիմել աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների դեմ։ Բազմաթիվ նախարարների կալվածները պետականացվում են և «Հայրենատեր» տոհմերը որի են քաշվում, Արշակունյաց թագավորությունն աշխատում է «Հայրենատեր» նախարարներից խլած հողերը դարձնել «պարգևական» և նոր վասալ նախարարներին համախմբել իր շուրջը։ Արշակին հաջողվում է Վասակ սպարապետի օգնությամբ ճնշել խռովարար իշխանների ապստամբությունը և մի առ ժամանակ ուժեղացնել թագավորական իշխանությունը։

Արշակ 2-րդի արտաքին քաղաքականությունը

Իր վարած արտաքին քաղաքականության մեջ Արշակը շատ զգույշ էր։ Նա համակրում էր Հռոմին, որի պատճառով, ինչպես նշել ենք, ամուսնանում է Կոստանդ կայսրի ազգական Օլիմպիադայի հետ, որովհետև 353 թվին Կոստանդը հաղթել էր իր բոլոր թշնամիներին ու դարձել միահեծան կայսր։ Հայոց թագավորը հատուկ պատգամավորների միջոցով, որի գլուխ կանգնած էր Ներսես կաթողիկոսը, շնորհավորում է նրա հաղթանակները և միաժամանակ վերանորոգում է կայսրի հետ Կոստանդինի և Տրդատի միջև կնքված բարեկամական պայմանագիրը։ Դրանից հետո Կոստանդ կայսրն ազատ է արձակում Բյուզանդիայում գտնվող պատանդներ՝ Գնելին և Տիրիթին։

Հայոց թագավորը շատ զգույշ քաղաքականություն էր վարում նաև Տիզբոնի հետ։ Նա թշնամության ոչ մի առիթ չէր տալիս և աշխատում էր հասկացնել, որ ինքը Տիզբոնի արքունիքի բարեկամն է, իսկ Շապուհ Պարսիկն էլ Արշակին խոստանում էր մինչև անգամ Ատրպատականի թագը, եթե նա հեռու մնար Հռոմից։ Այսպիսի քաղաքականություն վարելով՝ Արշակը 13 տարի իշխեց, առանց արտաքին աշխարհի հետ կռիվների մեջ մտնելու։

358 թվին վերսկսվում են Պարսկա-հռոմեական պատերազմները։ Շապուհ 2-րդը հաջողությամբ վերջացնելով արևելյան ժողովուրդների դեմ իր մղած կռիվները՝ 359 թվին հարձակվում է Հյուսիսային Միջագետքի վրա և հարյուր-հազարանոց բանակով պաշարում Ամիդ քաղաքը։ Երկուս ու կես ամիս պաշարելուց հետո կարողանում է գրավել այն 30.000 զորք կոտորելով միայն։ Բայց կատաղած թշնամին իր զորքի վրեժը լուծելու համար կործանում է քաղաքը, իսկ բնակիչներին ու զորքին սրի քաշում։ Պարսիկները Միջագետքում գրավում են նաև հռոմեական մի քանի ամրոցներ։ Շապուհի այս նոր արշավանքը ստիպում է Կոստանդին կայսրին՝ թողնել Հուլիանոսի դեմ մղած կռիվները և 360 թվին մեծ բանակով շարժվել դեպի Արևելք։ Հռոմի կայսրն աշխատում էր թանկագին նվերներով սիրաշահել Հայաստանին և մասնակից անել պատերազմին իր կողմից։ Թեև Արշակունյաց թագավորության համար ծանր դրություն է ստեղծվում, սակայն Արշակ 2-րդը չեզոք դիրք է բռնում։ Կոստանդ կայսրը թեև մի քանի հաջող կռիվներ է մղում Միջագետքում, բայց մահանում է 361 թվին և կայսր է դառնում նրա հակառակորդ Հուլիանոսը, որը հեթանոսությունը վերականգնելու համար «ուրացող» անունն է ստանում։ Սա վերանորոգում է նախկին կայսրի պատերազմները և 363 թվին 70.000 բանակով Սիրիայից հարձակվում է Միջագետքի վրա, իսկ բանակի մի մասը 20,000 հոգի Պրոկոպիոս և Սեբաստիանոս զորավարների գլխավորությամբ ուղարկում է Հայաստան, որպեսզի հայկական զորքի հետ Մարաստանի մի մասը գրավելուց հետո Մոկաց և Կորդվաց երկրներով մտներ Պարսկաստան։ Հուլիանոսը նախօրոք սպառնացել էր Արշակին, որ ան-

պայման իր զորքով մասնակցի պատերազմին: Սակայն հռոմեական բանակը խորանալով Միջագետքի խորքերը՝ նեղվում է ուտելիքի պակասությունից և Արբիլայի ճակատամարտում մատնվում է անհաջողության, իսկ ինքը՝ Հուլիանոս կայսրը վիրավորվելով մահանում է: Հռոմեական բանակը ծանր կացության մեջ է ընկնում. այդ դրությունից դուրս գալու համար զորավարներից մեկին, մորթապաշտ և թույլ Հովիանոսին կայսր են հռչակում, որն անմիջապես պայմանագիր է կնքում Տուրայում (363 թ. հուլիս) և բանակով վերադառնում է Հռոմ իր հետ տանելով նաև Հայաստանում եղած զորամասը:

Տուրայում կնքված պայմանագրի համաձայն՝ 1. Երկու երկրների միջև եղած սահմանը Տիգրիսից տեղափոխվում է Եփրատ գետը, 2. պարսիկները ստանում են 297 թվի դաշնագրությամբ կորցրած հողամասերը՝ Անդրտիգրիսյան նահանգները՝ Աղձնիք, Մոկք, Ծավդեք, Կորդուք, Ռեհիմենե (15 բերդերով), Մծբին, Սինգարա, Կաստրա և այլ քաղաքները, 3. Պարսկաստանին են անցնում նաև Միջագետքի հռոմեական բոլոր ամրությունները և 4. Հռոմը պարտավորվում է չօգնել Հայաստանին, երբ Պարսկաստանը հարձակվի նրա վրա: Ամմիանոս Մարկելինոսը «ամոթալի» է անվանում վերը հիշված պայմանագիրը, որովհետև դրանով «Քրիստոնյա» Հռոմն իր դարավոր բարեկամ «Քրիստոնյա» Հայաստանը վաճառում էր Տիգրոնին և հայ Արշակունիների թագավորությունը ստանում էր մահացու հարված:

Հայ-պարսկական պատերազմները

Պարսկա-հռոմեական կռիվների շրջանում Հայաստանում նորից բորբոքվում են ներքին խռովություններն ու ապստամբությունները: Օտար տերությունների գործակալների միջոցով հայ իշխանների մի մասը, իրենց անհատական շահերից ելնելով, ձգտում էր դեպի Տիգրոն, իսկ մի մասը՝ դեպի Հռոմ: Արշակ 2-րդը հիմնված Մարդպետական տոհմի, Վասակ սպարապետի, Սյունյաց իշխանության (Արշակը Փառանձեմի հետ ամուսնանալուց հետո Սյունիքը, հանձին Անդովկ իշխանի, հուսալի հենարան էր դարձել արքայական իշխանության համար), ինչպես նաև մի շարք այլ հավատարիմ իշխանների ու ժողովրդի վրա՝ պայքար է ծավալում այդ երկու հոսանքների դեմ, կենտրոնական իշխանությունն ամրապնդելու համար:

Այդ կռիվների ժամանակ Մամիկոնյան տոհմի երկու անդամները՝ Վարդանը, և Վահանը անցնում են պարսիկների կողմը և բարեկամանում Շապուհ 2-րդի հետ, որպեսզի վերջինի հեղինակությամբ ազդեն հայոց թագավորի վրա: Վասակ սպարապետը չէր կարող տանել իր մեծ եղբայր Վարդանի դավաճանական քայլը: Նա Արշակ 2-րդի խորհրդով սպանում է Վարդանին Տայքի իրենց կալվածում լվացվելու ժամանակ: Այդ սպանության մեջ խառն էր նաև Փառանձեմ թագուհին, որովհետև Վարդանը մասնակից էր եղել իր նախկին ամուսնու՝ Գնելի սպանությանը: Վարդանի սպանությունը ոտքի է հանում նրա կողմնակից իշխաններին, որոնք Կամսարականների գլխավորությամբ նոր խռովություններ և հուզումներ են առաջ բերում: Սակայն, դրանք ճնշվում են թագավորի կողմից, բնաջնջվում է Կամսարականների տոհմը (ազատվում է միայն Սպանդարատ անունով մի տղա, որն իր փրկությունը գտնում է Վասակի մոտ): Կամսարականների Շիրակի և Արշարունիքի կալվածները հարքունիս են գրավվում: Արշարունիքում էր գտնվում Արտագերս հինավուրց բերդը, որը ամրացվում և դառնում է արքունական մթերանոց:

Հայաստանը Պարսկաստանի համար երկու կարևոր նշանակություն ուներ: Նախ՝ որպես տնտեսական շահագործման օբեկտ և երկրորդ, ռազմաստրատեգիական տեսակետից: Այդ էր պատճառը, որ նա դարեր շարունակ կովախնձոր էր դառել Արևելքի և Արևմուտքի միջև:

Սասանյանների ժամանակ Պարսկաստանում ոչ միայն ուժեղացան մոգությունն ու ազնվականությունը, այլև որոշ թագավորներ մոգերի ձեռքին խաղալիք դարձան: Մազդեական կրոնի սպասարկու մոգերն ատելություն էին սերմանում քրիստոնյաների նկատմամբ: Այդ ատելությունը Տիգրոնի արքունիքի ձեռքին զենք է դառնում Պարսկաստանի թշնամիների դեմ: Հայերը քրիստոնեությունն ընդունելով, ավելի սերտ կերպով կապվել էին արևմտյան երկրների հետ, իսկ մյուս կողմից հայերը հարևան Վրաստանում և Աղվանքում օժանդակելով քրիստոնեական կրոնի տարածմանը, իրենց ազդեցության տակ էին առել այդ երկրները, մի հանգամանք, որ լուրջ սպառնալիք էր Պարսկաստանի համար: Տիգրոնի արքունիքը Շապուհի գլխավորությամբ փորձում է խորտակիչ հարված հասցնել հայ եկեղեցուն և վերացնել Արշակունյաց թագավորությունը:

ստիպել հայերին ընդունել զրադաշտական կրոնը և նրանց կտրել արևմտյան ազդեցությունից, կապել իրանական աշխարհի հետ, և աստիճանաբար ձուլել պարսիկների հետ։ Սասանյան դինաստիայի այս քաղաքականության հիմնադիրը հանդիսանում է Շապուհ 2-րդը, որը 363 թվին Թուլյ Հովիանոս կայսրին ստիպում է կնքել վերը հիշատակված խայտառակ պայմանագիրը։

Պարսկաստանը դեռ նոր էր պատրաստվում հարձակվելու Հայաստանի վրա, երբ նորից գլուխ են բարձրացնում երկրի դժգոհ ուժերը, հատկապես պարսկական քաղաքականություն վարող իշխանները, որոնց գլուխն այս անգամ կանգնում է Շավասպ Արծրունու որդի Մերուժանը, որը Վարդան և Վասակ Մամիկոնյանների քեռին էր։ Որքան Շավասպը կապված էր հայ հոգևորականության ու Ներսես կաթողիկոսի հետ, այնքան Մերուժանը թշնամի էր նրանց և հայ Արշակունիներին։ Մերուժանի մեջ խտացած էր մարդկային փառասիրության բոլոր հատկանիշները։ Նա ատում էր հայ Արշակունյաց թագավորությունը որպես երկրի խորթ դինաստիայի, չնայած որ այդ դինաստիան արդեն Հայաստանում իշխում էր մոտ 350 տարի։ Մերուժանը հանդիսացավ երկրի կենտրոնախույս տրամադրություն ունեցող իշխանների կամքի արտահայտիչը, որոնք ձգտում էին իրենց ձեռքին խաղալիք դարձնել հայ թագավորներին։ Չորրորդ դարում կենտրոնախույս նախարարների Արշակունյաց թագավորության դեմ մղած պայքարի ամենախոշոր ղեկավարը հանդիսանում է Մերուժանը։ Նա ատում էր Արշակունիներին նաև նրա համար, որ նրանք իրենց քաղաքականությունն առաջ տանելու համար կանգ չէին առնում արքունիքից դժգոհ մի շարք նախարարական տների բնաջնջման առաջ։ Օրինակ, Տիրանի հրամանով սպանվում են իր պապերը, Արշակ 2-րդն սպանել էր տվել իր քեռի Վարդան Մամիկոնյանին, Կամսարականներին և նույնիսկ պատրաստ էր բնաջնջել նորանոր տոհմեր։ Մերուժանը գտնում էր, որ պետք է հիմնվել Պարսկաստանի հզորության վրա, ոչնչացնել Արշակունյաց թագավորությունը Հայաստանում և նրա տեղը դնել մի նոր ավելի կենսունակ տոհմի իշխանություն։ Տիզբոնի արքունիքը խոստանում էր Հայաստանի գահը հանձնել իրեն՝ Մերուժանին, եթե նա օգնի պարսիկներին հայերին ջախջախելու գործում։ Շապուհ 2-րդը նկատելով Մերուժանի փառասիրական տենչանքները, անում էր ամեն տեսակ խոստումներ, միաժամանակ ասելով, որ Արծրունիներն իրենց կալվածներով, հզորությամբ, բնիկությամբ իրավասու են ժառանգելու հայկական գահը, որ ընկած էր «պիղծ» Արշակունիների ձեռքը։ Մերուժանի այդ ձգտումներին ուժեղ դիմադրում էր նաև քրիստոնեական եկեղեցին, որը մեծ ուժ էր ներկայացնում, ուստի Մերուժանը մտածում էր եկեղեցին ևս զոհել, Հայաստանը դարձնել Զրադաշտական երկիր և դուրս բերել նրան Հռոմի դեմ։

Այս գաղափարներով ու ծրագրերով տարված Մերուժանը վերցնում է իր քրոջ որդի Վահան Մամիկոնյանին, Վասակ սպարապետի փոքր եղբորը, որը նույնպես փառասեր էր ու աչք ուներ սպարապետության պաշտոնին, և մեկնում են Տիզբոն, ընդունում են զրադաշտական կրոնը և իրենց ծառայությունն են առաջարկում պարսից թագավորին։ Շապուհ 2-րդը խոստանում է Մերուժանին տալ Հայաստանի թագը, իսկ Վահանին՝ սպարապետությունը։ Մերուժանով ու Վահանով չէր վերջանում դավաճան իշխանների ցանկը, նրանք երկրում ունեին իրենց համախոհները, որոնք իրենց ուժերով պարսիկ զորքերի հետ պատրաստ էին կործանելու տիրող իշխանությունն ու եկեղեցին։

363 թվի դաշնագրությամբ Սասանյան Պարսկաստանը մեկուսացնելով Հայաստանին, ձեռնամուխ է լինում նրա նվաճմանը։ Պարսկական բանակը գլխավորությամբ դավաճան Մերուժանի և Վահան Մամիկոնյանի, որն ամուսնացել էր Շապուհի քրոջ Որմիզդուխտի հետ և առանձին պաշտոն էր ստացել պարսկական բանակում, Հայաստանի վրա է արշավում հարավից և հերթականությամբ գրավում Աղձնիքը, Ծոփքը, Դարանաղին՝ Անի ամրոցով։ Թշնամին Մերուժանի հրամանով քանդում է Անի ամրոցի պարիսպները, հափշտակում այնտեղ գտնվող արքունի գանձերը, քար ու քանդ է անում Արշակունյաց թագավորների գերեզմանները։ Մերուժանի նպատակն էր բնաջնջել Արշակունիներին Հայաստանից և սրբել նրանց փոշին երկրի երեսից, դրանով լուծել սպանված Արծրունիների վրեժը։ Սանատրուկի և մյուս թագավորների ոսկորները վերցրած, պարսկական բանակի գլուխն անցած՝ նրանք շարժվում են դեպի Բասեն և այնտեղից մտնում Արարատյան դաշտը, երկրի սիրտը, հրի ու սրի մատնելով ճանապարհին եղած քաղաքներն ու գյուղերը, կոտորելով բնակչությանը։ Մերուժանին և պարսիկներին հայերը դիմադրություն են ցույց տալիս Տիգրանակերտ քաղաքում։

Տեղի են ունենում փողոցային կատաղի մարտեր, թշնամին մեծ ջարդ է կրում, բայց վերջ ի վերջո մեծ զոհերով գրավում է քաղաքը և ավարի ու ավերի ենթարկում այն։ Քաղաքի բնակչության մեծագույն մասը կոտորվում և գերեվարվում է։ Բնակչության նկատմամբ գործադրվում է ամենադաժան բարբարոսական միջոցներ, կանանց ու երեխաներին սպանում էին սայլերի ցցերի նվրա անելով։

Ծանր էր Արշակ 2-րդի դրությունը։ Պարսիկների ներխուժման ժամանակ սահմանապահ բդեշխները և սահմանամերձ ու միջնաշխարհի մի շարք նախարարները լքում են նրան։ Հռոմեական կայսրությունը մերժում է օգնել նրան, Հայաստանի ռազմական ուժի մի մասը վայր է դնում իր զենքը կամ թե չեզոք դիրք է բռնում։ Սակայն թագավորին հավատարիմ էին մնացել ժողովուրդը և մի քանի աչքի ընկնող իշխաններ ու սպարապետ Վասակ Մամիկոնյանը, որ մի անվեհեր, քաջ ու ռազմիկ անձնավորություն էր։ Սա կարճ ժամանակվա ընթացքում հավաքում է երկրի ռազմական ուժերը, նախարարների զորքերը միացնում է արքայական գնդերի հետ, գյուղացիներին զենքի է կանչում, ու կազմում է 60.000 հոգուց բաղկացած կանոնավոր բանակ և դուրս է գալիս պարսիկ նվաճողների դեմ։

Վասակ սպարապետն իր կազմակերպված բանակով գնում է Ատրպատականի սահմանագլուխը և սպասում թշնամուն, բայց վերջինս Հայաստանի վրա էր հարձակվել Հարավից, հին Սասանյան թագավորների ռազմուղիով, Արևմտյան Տիգրիսի հովտով։ Մինչև սպարապետը իմանում է այդ և վերադառնում, թշնամին արդեն գրավում է Աղձնիքը, Բարձր Հայքը, մտնում է Այրարատյան աշխարհը, և սպառնում Արտաշատ ու Վաղարշապատ քաղաքներին։ Հենց այդտեղ էլ Ատրպատականի սահմանագլխից վերադարձած հայկական բանակը Վասակ սպարապետի գլխավորությամբ հարձակվում է թշնամու վրա։ Տեղի է ունենում ուժեղ ճակատամարտ։ Թեև թշնամին թվական տեսակետից գերազանցում էր հայերին, բայց ջախջախիչ հարված է ստանում և դուրս շպրտվում Հայաստանից։ Վասակը Մերուժանի ձեռքից խլում է թագավորների աճյունները և թաղում Արագածոտնի Աղձք գյուղում։ Դրանից հետո Վասակը դիմում է Կովկասյան ցեղերին՝ ալվաններին ու հոներին, և նրանցից օգնություն ստանալով՝ մի քանի տարի շարունակ համառ ու

կատաղի կռիվներ է մղում պարսիկների ու դավաճան հայ նախարարների դեմ։

Այս կռիվներից է սկսվում Վասակ սպարապետի հերոսական դյուցազնավեպը, որի մասին տեղեկացնում է Փավստոս Բյուզանդն իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ։ Վեպը խտացած գույներով նկարագրում է, թե ինչպես Մերուժան Արծրունին մի քանի անգամ պարսկական զորքերի գլուխն անցած հարձակվում է Հայաստանի վրա, բայց միշտ էլ ջարդվում է Վասակի կողմից և շատ դեպքերում հազիվ է կարողանում ազատել իր գլուխը։ Հայոց սպարապետը թեև կարճահասակ էր, բայց անպարտելի ու քաջ զորավար էր։ Պարսիկները գերբնական ուժ էին վերագրում նրան, հավատալով, որ իբր Մամիկոնյան տիրոջ՝ Վասակին հաղթել չի կարելի։ Մի կողմ թողած վեպի խտացած մասերը, ճիշտ էր այն, որ Վասակը քաջ սպարապետ էր և 4 տարվա (364—368 թ.թ.) անընդհատ կռիվների ժամանակ միշտ էլ հաղթող էր դուրս եկել։ Նա այդ տարիների ընթացքում մշակում է Հայաստանի լեռնային պայմաններին համապատասխան պատերազմական գործողությունների տակտիկա։ Նա գիշերով մթության մեջ հայոց այրուձիով գաղտնի հարձակվում էր թշնամու ճամբարի վրա, խուճապի մատնում ու հեռանում, իսկ թշնամին ամբողջ գիշերը իրար կոտորելով՝ առավոտյան թողնում, հեռանում էր Հայաստանից։

Թեև Վասակ սպարապետը մշտապես հաղթանակով էր դուրս գալիս պարսկական կռիվներից, բայց խորամանկ ու նենգ Մերուժանին հաջողվում է որոշ չափով ավելացնել իր կողմնակից հայ իշխանների թիվը և Հայաստանի տարբեր մասերում առաջ բերել ապստամբական շարժումներ։ Դավաճանն այնքան հեռու է գնում, որ համոզում է իշխաններին, թե իբրև Տիզբոնի արքունիքը պաշտպանում է իրենց հողային իրավունքները և Հայաստանի ինքնուրույնությունը։ Արշակ 2-րդի դեմ ապստամբելով՝ Շապուհի կողմն են անցնում Հայաստանի հետևյալ գավառներն ու նահանգները—Աղձնիքը, Կորդվաց աշխարհը, Փայտակարանը, Արցախը, Ուտիքի մի մասը (Գարդմանաձոր) և Գուգարքը։ Հակաարշակունյաց պրոպագանդան ու ագիտացիան իր ազդեցությունն է թողնում նաև երկրի մյուս իշխանների վրա։ Նախարարների մի մասը դիմում է Ներսես Կաթողիկոսին և բողոքում Արշակից, հայտարարելով, որ իրենք այլևս չեն ուզում

կռվել, որ կռիվներից ձանձրացել են և այլևս թագավորի հետ չեն գնում։ Կաթողիկոսը թեև ինքն էլ այն կարծիքին էր, որ Արշակունիները վատ են և շատ չարիքներ են պատճառել երկրին, բայց չի ուզում նրանց փոխել հեթանոս Շապուհի հետ և վտանգել երկրի ինքնուրույնությունը։ Բոլոր իշխանների մեջ անսասան է մնում Վասակը։ Նա սպարապետական սուրը ձեռքն առած, սպիտակ ձին հեծած, անդուլ կերպով գիշեր ու ցերեկ շրջելով երկրի տարբեր նահանգները՝ ժողովրդին ոտքի է հանում երկրի ներքին ու արտաքին թշնամիների դեմ։ Նա ճնշում է մի շարք նախարարների խռովությունները, ուժեղացնում է բանակը և դիմագրում պարսիկների նորանոր հարձակումներին։ Հայ-պարսկական կռիվները մեծ մասամբ տեղի էին ունենում Ատրպատականի և Հայաստանի սահմանագլխին։ Ուշագրավ է Ատրպատականի Գանձակ քաղաքի մոտ պարսիկների դեմ տված ճակատամարտը, որը վերջանում է պարսիկների լիակատար պարտությամբ։ Այնուհետև Վասակը ոչ միայն ետ է մղում պարսիկների նորանոր հարձակումները, այլև Հայաստանը մաքրում է նրանցից և փրկում երկրի անկախությունը։

Պարսիկների դեմ քաջ սպարապետի գլխավորությամբ հայերի մղած երկարամյա պատերազմները Շապուհին բերում են այն եզրակացության, որ հայերի հետ զենքով հաշիվ մաքրելը հնարավոր չէ։ Ուստի նա վերջ է տալիս պատերազմներին և դիմում է դիվանագիտական ու խորամանկ միջոցների։ Նա խարդախությամբ Արշակին ու Վասակին կանչում է Տիզբոն որպես թե հաշտության բանակցություն վարելու։

Հայոց թագավորն ու սպարապետը խաբվում են Շապուհի թագավորական երդմնագրով և երկուսով իրենց թիկնապահ գնդերով 368 թվին մեկնում են Տիզբոն՝ երկու երկրների հարցերը խաղաղ կերպով լուծելու։ Սկզբում Տիզբոնում հայոց թագավորին ու սպարապետին ցույց են տալիս լավ ընդունելություն, մի քանի օր անընդհատ ճաշկերույթներ են տալիս նրանց պատվին։ Բայց Շապուհը շուտով երդմնազանց է լինում և ձերբակալել է տալիս թե Արշակին, թե Վասակին, ասելով թե Հայաստանի օրինավոր թագավորն է Մերուժանը, իսկ սպարապետը՝ Վահանը։

Արշակ 2-րդին ձերբակալելով՝ կապում է արծաթյա շղթաներով, կուրացնում և ապա բանտարկում Անհուշ բերդում, որտեղ մեծ զրկանքների ենթարկելուց հետո, ըստ Ամմիանոսի սպանել է տալիս, իսկ ըստ հայկական ավանդավեպի Արշակն ինքնասպանություն է գործում ներքինի Դրաստամատի սարքած ճաշկերույթից հետո։ Հայկական ավանդավեպը չի մոռացել հայ նշանավոր թագավոր Արշակին և նրա մասին ստեղծել է մի վեպ։ Ըստ այդ վեպի՝ երբ Պարսից Շապուհ թագավորը Արշակին կանչում է Տիզբոն, Արշակը շատ է խեղճանում, կուչ է գալիս Շապուհի առաջ և այնպես է թվում, թե նա անվտանգ է դարձել Տիզբոնի արքունիքի համար։ Բայց խորամանկ Շապուհն իր գիտնականների խորհրդով ուզում է ստուգել այդ։ Նա Հայաստանից հող է բերել տալիս և փռում է իր վրանի մի մասում։ Ապա Արշակին թևանցուկ արած մոտն է գալիս վրանում։ Երբ քայլում են պարսկական հողի վրա, պարսից թագավորը նրան նախատինքներ տալով ասում է, թե՝ ես քեզ սիրում էի, ուզում էի իմ աղջիկը քեզ տալ և բարեկամանալ քեզ հետ, բայց դու չլսեցիր ինձ ու թշնամացար։ Արշակը նրան պատասխանում է, թե՝ ես քո առաջ հանցավոր եմ, ինչ պատիժ ուզում ես սահմանիր։ Ապա Շապուհը նրան առաջ տանելով կանգնեցնում է հայկական հողի վրա, և այդ ժամանակ հայոց թագավորն ուժ առնելով դառնում է համարձակ, նախատինքներ է տալիս Շապուհին, համարելով նրան չարագործ և հայտարարում, թե ինքը պիտի նրանից լուծի իր նախնիների վրեժը։ Այնուհետև պարսից արքան նրան նորից ետ է դարձնում և կանգնեցնում է պարսկական հողի վրա։ Արշակը նորից խեղճանում ու կուչ է գալիս պարսից արքայի առջև։ Այսպես բազմիցս անգամ կրկնելով նույն պատկերը, Շապուհն այլևս չի կարողանում համբերել, ձերբակալել է տալիս Արշակին և շղթայակապ ուղարկում Խուժաստանի (Հարավային Պարսկաստան) Անհուշ բերդը։

Արշակ 2-րդի շուրջն ստեղծված հողի այս առասպելն իր էությամբ շատ նման է հունական Անթեի առասպելին, որ իր զեկուցումներից մեկում բերել է ընկեր Ստալինը։ Արշակի մասին եղած առասպելը ցույց է տալիս, որ հայոց թագավորը հզոր է և ուժեղ այն ժամանակ, երբ նա գտնվում է Հայաստանում, կանգնած մայր հողի վրա, իր շուրջն է համախմբված ժողովուրդն ու զորքը, որոնց վրա հիմնվելով՝ միշտ էլ կարող էր պայքարել իր թշնամիների դեմ, բայց, երբ նա հեռու է գտնվում իր հայրենի երկրից, հողից ու ջրից, ժողովրդից ու զորքից, պարզ է, որ պիտի խեղճանար և ոչինչ չպիտի կարողանար անել։

Արշակ թագավորին շղթայակապ բանտարկելուց հետո Շապուհը ձերբակալված Վասակ սպարապետին էլ գլխատել է տալիս, մորթազերծ անում, պահածոյատանի մեջ դարման է լցնում ու դնում Անհուշ բերդում՝ Արշակի աչքի առաջ։ Հայ ժողովուրդը չի մոռացել իր քաջ զորավարին, որ հերոսաբար ջարդում էր թշնամու զորաբանակներին և պաշտպանում հայրենի հողն ու ջուրը։ Վեպի ասելով Շապուհը շատ դաժան է վարվում Վասակի հետ։ Նա ծաղրելով Վասակի կարճ հասակը՝ ասում է. «Աղվես, դո՞ւ էիր, որ այնքան տարի շարունակ կոտորում էիր պարսկական զինվորներին։ Այժմ դու պիտի աղվեսի նման սպանվես»։ Քաջ սպարապետը, առանց ահ ու երկյուղի պատասխանում է. «Մի ժամանակ առյուծ էի ես, իսկ այժմ աղվե՛ս եմ դարձել։ Երբ ես Վասակ էի, այն ժամանակ հսկա էի, մի ոտս դրած մի լեռան, իսկ մյուսը մի ուրիշ լեռան վրա։ Երբ հենվում էի ձախ ոտիս վրա, ձախ լեռն էր անդունդ իջնում, երբ հենվում էի աջ ոտիս վրա, աջ լեռն էր իջնում անդունդը»։ Շապուհը չհասկանալով Վասակի խոսքերի իմաստը՝ հարցնում է, թե այդ ինչ լեռներ են։ Սպարապետը պարզաբանում է, թե լեռներից մեկը՝ ինքը՝ Պարսից Շապուհն է, իսկ մյուսը՝ Հռոմի կայսրը, իսկ ինքը՝ Վասակը, հայկական բանակի գլուխն անցած ջարդել է թե՛ պարսկական և թե՛ հռոմեական զորքերին։

Արշակին բանտարկելուց և Վասակին գլխատելուց հետո, Տիզբոնի արքունիքը լուրջ քայլ է անում Հայաստանը գրավելու և իր ծրագիրն այնտեղ կենսագործելու ուղղությամբ։

Արշակն ու Վասակը 4-րդ դարի հայ երկնակամարի ամենափայլուն աստղերն էին, որոնք ոչ մի ջանք չխնայեցին կազմակերպելու երկրի ռազմական ուժերը պարսկական ագրեսիային դիմադրելու և Հայաստանը թշնամու նվաճումներից փրկելու համար։ Թշնամին զենքով չկարողանալով մարել այդ երկու աստղերին, դիմեց խորամանկության և հասավ իր նպատակին։

Պապը եվ հայ պարսկական կռիվների վերջը

Հայաստանի ինքնուրույնության համար մղվող պայքարն Արշակ 2-րդի բանտարկությամբ և Վասակ սպարապետի մահով չի վերջանում։ Թագավորի բանտարկության և սպարապետի գլխատման լուրը շուտով հասնում է Հայաստան և ծանր տպավորություն է գործում երկրում։ Իշխաններից ոմանք բռնում են չեզոք դիրք և ամրանում իրենց բերդերում, մյուսներն ուղղակի անցնում են դավաճան Մերուժանի կողմը։ Երկրում տիրում է հուսահատություն։ Այդ ընդհանուր հուսահատության մեջ իրեն չի կորցնում Փառանձեմ թագուհին, որն ուժեղ կամքի տեր կին էր։ Նա իր շուրջն է համախմբում հավատարիմ նախարարներին. սպարապետության պաշտոնը հանձնում է Վասակի որդի Մուշեղին, որը նույնպես տաղանդավոր զորավար էր և իշխանների շրջանում մեծ ազդեցություն ուներ։ Նրան բախտ էր վիճակված հորից ոչ պակաս գործեր կատարելու։ Ինքը՝ Փառանձեմ թագուհին, իր որդի, թագաժառանգ Պապի և աչքի ընկնող իշխանների ընտանիքների ու արքունի գանձերի հետ ամրանում է Արտագերս բերդում, որը գտնվում էր Արշարունյաց գավառում, շինված Արաքսի ժայռոտ բարձրունքներից մեկի վրա և հայտնի էր իր ամրություններով։

Շապուհը մի մեծ բանակ է կազմում և Մերուժանի ու Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ ուղարկում է Հայաստանը գրավելու։ Բայց Ամմիանոս Մարկելլինոսի ասելով՝ նա բանակը հանձնում է դավաճան հայ իշխաններից ներքինի Կիլակին և զորապետ Արտավանին, որոնք, հավանաբար, պետք է լինեն հայ աղբյուրներում հիշատակված Մերուժանն ու Վահանը։ Պարսկական բանակի արշավանքով կռիվների նոր շրջան է սկսվում Հայաստանում։ Այս կռիվները շատ ծանր են նստում երկրի վրա։ Թշնամու բանակն առանց լուրջ դիմադրության մտնում է Հայաստանի կենտրոնական գավառները և 368 թվին պաշարում Արտագերս ամրոցը, որտեղ ապաստանել էր Փառանձեմ թագուհին։ Պարսիկներին չի հաջողվում հեշտությամբ գրավել ամրոցը. այնտեղ կար 11 հազար հոգուց բաղկացած բերդապահ զորք, որը համառ դիմադրություն էր ցույց տալիս։ Ամրոցը պաշարողները փորձեր են անում համոզել, որ հայերն անձնատուր լինեն, բայց ամեն անգամ մերժում են ստանում և պաշարումը երկարում է։ Փառանձեմ թագուհին տեսնելով, որ կարող է վտանգ սպառնալ ամրոցին, բերդի գաղտնի անցքերով թագաժառանգ Պապին ուղարկում է Հռոմի կայսեր մոտ՝ նրանից օգնություն խնդրելու։ Պապը խոստում ստանալով կայսրից՝ Կ. Պոլսում եղած հայ նախարարների հետ միացած կապ է հաստատում պաշարված բերդապահների հետ և հուսադրում նրանց, որ անձնատուր չլինեն, մինչև որ օգնություն հասնեն։ Սա ցույց է տալիս, որ Արտագերսը կտրված չէր դրսի աշխարհից։

Վաղես կայսրը թեև Պապին ընդունում է, բայց բնակության տեղ է հատկացնում ոչ թե Կ. Պոլսում, այլ Պոնտոսի Նեոկեսարիա քաղաքում։

Արտագերսում պաշարված հայերը մի անգամ բանակցությունների մեջ են մտնում բերդը պաշարող պարսիկների հետ և երկու օր ժամանակ են խնդրում անձնատուր լինելու համար։ Թշնամին հավատում է դրան և պաշարումը թուլացնում, իսկ հայերը դրանից օգտվելով գաղտնաբար մի զորաբանակ են դուրս բերում բերդից, հանկարծակի հարձակվում պարսիկների վրա և մեծ ջարդ տալիս ու փախցնում։ Այդ դեպքից ոգևորված՝ Բյուզանդիայում գտնվող հայ նախարարները, ինչպես նաև արտագերսցիները, հատուկ նամակով խնդրում են Վաղես կայսրին՝ Պապին ճանաչել հայոց թագավոր։ Կայսրն ընդառաջում է հայերի խնդրանքին։ Նրա կարգադրությամբ Տերենտիոս զորավարը 369 թվին Պապին բերում է Հայաստան և հռչակում Հայաստանի թագավոր։

Շապուհ 2-րդը տեղեկանալով Հայաստանում կատարված անցքերի մասին՝ կատաղում է։ Նա կազմում է մի նոր, ավելի մեծ բանակ, և այս անգամ ինքն անձամբ բանակի գլուխն անցած Մերուժանի և Վահանի օգնությամբ հարձակվում է Հայաստանի վրա։ Պապ թագավորն օգնություն չստանալով Բյուզանդիայից՝ փախչում է Տայքի անմատչելի լեռները, որտեղ թաքնված է մնում հինգ ամիս։ Պարսիկները չեն կարողանում բռնել նրան, բայց այդ հինգ ամիսն էլ բավական էր, որ Շապուհն ամայացներ Հայաստանը։ Նա իր բանակը շարժում է Արտագերսի վրա, պաշարում և գրավում է այդ հինավուրց ամրոցը, գերի վերցնում Փառանձեմ թագուհուն, բազմաթիվ իշխանների ընտանիքների հետ, հափշտակում է արքայական գանձերը, ապա Մերուժան Արծրունու և Վահան Մամիկոնյանի օգնությամբ ձեռնամուխ է լինում Հայաստանի ամայացմանը։

Պարսից նենգավոր արքան առաջին հերթին ավերում է Այրարատյան աշխարհը, քանդում ու կողոպտում է Արտաշատ և Վաղարշապատ քաղաքները, Արշարունյաց գավառի Երվանդաշատ, Բագրևանդ գավառի Զարեհավան, Աղիովիտ գավառի Զարիշատ և Վասպուրական նահանգի՝ Վան քաղաքները։ Այդ բոլոր վայրերից հազարավոր հայ և հրեա ընտանիքներ բռնի կերպով տեղափոխում են Նախիջևան, ապա այնտեղից Նախիջևան քաղաքի բնակչության հետ քշում Պարսկաստան, իր երկիրը հայ և հրեա առևտրականների ու արհեստավորների միջոցով զարգացնելու և Հայաստանի տնտեսական կյանքը թուլացնելու նպատակով։ Այդ բոլորից հետո նա իր բանակով նորից մտնում է Այրարատյան նահանգը, ասպատակում այն. նրա անցած ճանապարհին ծխում են քաղաքներն ու գյուղերը։ Երկրի ռազմական ուժը՝ նախարարները ցիրուցան եղած ամրանում են անառիկ վայրերում, թողնելով Հայաստանը դաժան թշնամու ձեռքին։ Պարսիկ նվաճողները կողոպտում են երկիրը, երեխաներին ու կանանց հավաքում են Շապուհի մոտ, Զարեհավան քաղաքում, որը նույնպես կողոպտվել էր։ Գազանացած Շապուհը շատ դաժան է վարվում Զարեհավան հավաքված հայ բնակչության հետ. բոլոր տղամարդկանց տրորել է տալիս փղերի ոտքերի տակ, կանանց ու երեխաներին սպանել է տալիս ցից հանելով, կանանց անարգում է, գեղեցիկներին ուղարկում իր վրանը, որով արյունռուշտ պարսիկը հրապարակով խայտառակում է հայ կանանց։ «Հազար-հազարաց—գրում է Փավստոս Բյուզանդը—և բիւրք բիւրոց սպանին, զի ոչ գոյր, թիւ կամ համար սպանելոցն»։

Շապուհը նվաճելով Հայաստանը՝ նրա կառավարումը հանձնում է Մերուժանին ու Վահանին, իսկ ինքը բազմաթիվ գերիներով ու ավարով վերադառնում է Պարսկաստան, իր հետ տանելով նաև Փառանձեմ թագուհուն, որին անարգելով սպանում են հրապարակորեն՝ ցից հանելով։ Բայց դրանով դեռ չի վերջանում Հայաստանում կատարված ոճրագործությունը։ Պարսկական բանակի հիմնական մասը Մերուժանի և Վահանի գլխավորությամբ մնում է Հայաստանում։ Երկու հայ դավաճանները գրավում են երկրի բոլոր բերդերն ու ամրոցները, վերանորոգում և պարսկական զորքերին տեղավորում են նրանց մեջ։ Մերուժանը նոր պատերազմ է սկսում իր հակառակորդ հոսանքի դեմ և աշխատում է ընկճել իր թշնամի բոլոր նախարարներին։ Նա քար ու քանդ է անում վանքերն ու եկեղեցիները, այրում է բոլոր եկեղեցական գրքերը, փակում է հայկական դպրոցները, կառուցել է տալիս ատրուշաններ և բաց է անում մոգության դպրոցներ, ստիպում է հայերին, որ բոլորն էլ սովորեն միմիայն պարսկերեն լեզուն։ Նա պայքար է ծավալում քրիստոնեական կրոնի վերացման և նրա փոխարեն զրադաշտական կրոնը տարածելու համար։ Այդ հողի վրա նորից սկսվում են հալածանքներ ու կոտորած, բարբարոսություններ և դաժանություններ։

Այդ վայրագությունների ժամանակ Մերուժանին օգնում

էր Վահան Մամիկոնյանը, որը Վանի բերդի պարսպից կախել է տալիս իր ազգականուհի՝ Ռշտունյաց Գարեգին իշխանի կին Համազասպուհուն՝ կրոնափոխ չլինելու պատճառով: Վահանի որդի Սամվելը չի կարողանում տանել իր հոր ու մոր արարմունքները: Նա մի հայրենասեր պատանի էր, վարակված Մուշեղի հայրենասիրական գաղափարներով: Նա սպանում է իր դավաճան հորը և ուրացող մորը ու փախչում է Տայոց աշխարհը՝ Մուշեղի մոտ: Նրա այդպիսի ծանր պահին էր, որ հայրենի գահի վրա պիտի բազմեր Պապ թագավորը և փրկեր երկիրը կործանումից:

Տայքում եղած ժամանակ Պապը անգործ չի մնում. այդ կողմերում ապաստան գտած նախարարներին ու նրանց զորքերին հավաքում է իր շուրջը: Հոր նման նա էլ սկզբում հենվում է սպարապետության և կաթողիկոսության վրա: Ինչպես նշել ենք, դեռ Փառանձեմ թագուհին սպարապետության պաշտոնը հանձնել էր Վասակի որդի Մուշեղին, որը պարսիկների դեմ մղած կռիվներում քաջ ռազմիկի անուն էր վաստակել: Պապը նորից կաթողիկոսությունը հանձնում է Ներսեսին, որն իր հեղինակությամբ մեծ դեր է կատարում արքունիքում և երկրի ռազմական ուժերի հավաքման գործում:

Տայքում և Հայաստանի լեռնային մյուս մասերում հավաքված զորքերի գլուխն անցած՝ Մուշեղ Մամիկոնյանը հանկարծ հարձակվում է պարսիկների վրա, որոնք գործում էին Հայաստանում Մերուժանի գլխավորությամբ: Մուշեղը մի քանի վայրերում ջարդում է պարսիկներին, դուրս քշում երկրից և Պապին հաստատում իր գահի վրա: Այս հաղթանակը ոգևորում է հայերին և ամեն կողմից համախմբում Պապի և Մուշեղի շուրջը: Դրան զուգընթաց Վաղես կայսրը Արինթեոս զորավարի գլխավորությամբ մի զորագունդ է ուղարկում Հայաստան, օգնելու հայերին, եթե պարսիկները փորձ անեն հարձակվել Հայաստանի վրա: Շապուհն այդ իմանալով՝ նորից դիմում է խորամանկության, այսինքն աշխատում է լեզու գտնել Պապի հետ և նրան իր կողմը գրավել: Երիտասարդ թագավորը հաշվի առնելով իր երկրի շահերը աշխատում է օգտագործել Տիզբոնի արքունիքի այդ դիրքը: Շապուհը Պապի հետ բանակցություններ վարելուն զուգընթաց դեսպան է ուղարկում Վաղես կայսրի մոտ և պահանջում, որ նա հաստատ մնա Հովիանոսի պայմանագրին և չմիջամտի հայկական գործերին: Վաղես կայսրը ոչ միայն մերժում է Շապուհի առաջարկությունը, այլև պահանջում է Վրաստանի մի մասը, որտեղից պարսկական զորքերը դուրս էին քշել հռոմայեցիներին: Կայսրն իր այդ պահանջը կենսագործելու համար, Արինթեոսից հետո, Տերենտիոս զորավարի գլխավորությամբ մի հատուկ զորաբանակ է ուղարկում Վրաստան: Տիզբոնն ստիպված է լինում հաշվի նստել Հռոմի հետ: Վրաստանը բաժանվում է երկու մրցակից պետությունների միջև: Հռոմն ստանում է Վրաստանի արևմտյան մասը, իսկ Պարսկաստանը՝ արևելյան մասը, ինչպես և Աղվանից աշխարհը:

Փավստոս Բյուզանդացու ասելով՝ 370 թվի կռիվների ժամանակ Հայաստանը պարսիկներից մաքրելու գործում մեծ դեր է կատարում Մուշեղ Մամիկոնյանը: Նա մի անգամ շրջապատում է պարսկական մի ընտիր զորաբանակ, որի ղեկավարն ինքը՝ պարսից արքա Շապուհն էր: Սպարապետ Մուշեղը հայկական զորագնդով ջարդում է պարսկական բանակին: Շապուհը մատակ ձի նստած փախչում է և հազիվ փրկում իր կյանքը, թողնելով թշնամու ձեռքը արքայական վրանը, հարեմն ու գանձերը և արքայական ընտիր զորագնդերը: Սակայն, որքան Շապուհը գազանաբար վերաբերվեց հայ կանանց և բնակչության նկատմամբ, այնքան Մուշեղը վեհանձնորեն է վարվում Շապուհի կանանց ու զորքի հետ: Նա բոլորին ազատ է արձակում և ուղարկում Պարսկաստան: Այս փաստն ապացուցում է ոչ միայն Մուշեղ զորավարի անձնական, ասպետական բարեմասնությունները, այլ և Հայաստանի ու Պարսկաստանի կուլտուրական-բարոյական տարբերությունները: Շապուհը զարմանում է Մուշեղի այս ազնվության, առաքինության և քաջության վրա: Նա Մուշեղին միշտ հիշելու նպատակով իր գինու բաժակի և ճաշկերույթի ափսեի վրա նկարել ու փորագրել է տալիս Մուշեղին՝ ճերմակ ձիու վրա նստած: Այդ ափսեն հասել է մեզ և գտնվում է Էրմիտաժում (Լենինգրադում): Մուշեղը թեև Շապուհի հարեմին և զորքին անվնաս ետ է դարձնում, բայց 600 զորավարների ու զորապետների գլխատում, մորթազերծ է անում, մորթիների մեջ խոտ լցնում և ուղարկում Պապ թագավորին՝ ի պատասխան իր հոր, Վասակի հետ նման ձևով վարվելուն: Նա բռնագրավում է նաև պարսկական բանակի ռազմամթերքը և ավարը:

Վաղես կայսրի մերժողական պատասխանը, Վրաստանի մի մասի գրավումը և Մուշեղ Մամիկոնյանի կատարած սխրագործությունները Հայաստանում, կատաղեցնում են ծերունի Շա-

գունդին: Նա պայմանագիր է կնքում արևելյան և հյուսիսային ժողովուրդների հետ, կազմում է մի մեծ բանակ և 371 թվի գարնանը պատերազմական գործողություններ է սկսում հռոմայեցիների և հայերի դեմ: Կայսրն իր փոխարեն հռոմեական զորքերի հրամանատար է նշանակում Տրայանոս կոմսին: Սա Մուշեղ սպարապետի և հայկական հեծելազորի հրամանատար Սմբատ Բագրատունու հետ կազմակերպում է հայ-հռոմեական զորամասերը և մի մեծ ճակատամարտ տալիս Արածանիի վերին հովտում, Նպատ լեռան ստորոտում, Ձիրավ կոչված դաշտում, այժմյան Ալաշկերտի հովտում: Հիմնականում բանակը բաղկացած էր հայերից: Զորավարները թույլ չեն տալիս Պապին մասնակցելու պատերազմին: Նա բարձրանում է Նպատ լեռան գլուխը, ուր գտնվում էր նրանց շտաբը և Ներսես կաթողիկոսի հետ այնտեղից դիտում կռվի ընթացքը: Ձիրավի ճակատամարտն սկսում է վաղ առավոտյան և տևում է մի ամբողջ օր: Սկզբում հաղթանակի շանսերը պարսիկների կողմն էր, բայց հետո փոխվում է հօգուտ հայերի: Հռոմեական կանոնավոր զորամասերը պաշտպանում էին հայերին և հայ հեծելազորին հնարավորություն էին տալիս պաշտպանվելով հարձակվելու: Մուշեղ Մամիկոնյանի զորագունդը հաջող մանևրելու հետևանքով խրվում է թշնամու զորքի մեջ, մեծ ջարդ է տալիս և խուճապի մատնելով հետ քշում: Մյուս զորամասերը ոգևորված ուժեղացնում են իրենց հարձակումները և երեկոյան կողմը թշնամին մեծ զոհեր տալով նահանջում է: Այնուհետև Մուշեղը հետապնդում է թշնամուն: Նա վիրավորում է Աղվանից Ուռնայր թագավորին: Սպանդարատ Կամսարականը ճեղքում է գեկերի, լեզգիների գունդը և գետին տապալում նրանց թագավոր Շերգերին ու սպանում, իսկ փախուստի ճանապարհին Կոգովիտի եղեգնուտի ափին Սմբատ Բագրատունին հասնելով Մերուժանի գնդին, կոտորում է նրա գունդը, իրեն՝ Մերուժանին էլ գերի վերցնում, որովհետև նրա ձին վիրավորվել էր և չէր կարող արագ փախչել: Սմբատը հաշվի առնելով, որ Ներսես կաթողիկոսը և Պապ թագավորը կարող են փրկել դավաճանի կյանքը, նրան նրանց մոտ չի տանում, այլ տեղն ու տեղը շիկացած շամփուրը պսակաձև նրա գլխին դնելով ասում է. «քեզ պսակում եմ Մերուժան, որովհետև դու ձգտում էիր հայոց վրա թագավորելու և իմ՝ ասպետիս պարտքն է քեզ պսակել իմ հայրենի իշխանության կարգով»: Այսպիսով դավաճան չարագործը, որ աչք էր դրել

հայկական գահին և որի համար գործեց անթիվ ու անհամար չարագործություններ, ստանում է իր արժանի պատիժը: Այնուհետև Մուշեղն ու Սմբատը կրնկակոխ հետապնդելով նահանջող թշնամուն՝ ջարդում և քշում են մինչև Ատրպատականի Գանձակ քաղաքը և Հայաստանի սահմաններից դուրս են քշում պարսկական զավթիչներին, որոնք 7 տարի անընդհատ ներխուժում էին Հայաստան և մեծ ավերածություններ գործում:

Ձիրավի ճակատամարտով վերջանում է հայ ժողովրդի մղած 7 տարվա հերոսական գոյամարտը պարսկական նվաճողների դեմ: Կնքվում է մի պայմանագիր, որով Հայաստանը մի առ ժամանակ ևս շունչ է քաշում: Պապը հաստատվում է հայկական գահի վրա և ձեռնամուխ է լինում երկրի շինարարական գործին: Իսկ Մուշեղ Մամիկոնյանը, որը հաստատվել էր սպարապետության պաշտոնում, կազմակերպում է երկրի ռազմական ուժերը, բանակի թիվը ավելացնելով հասցնում է մինչև 90 հազարի և հայկական պետությունն աստիճանաբար նորից իր առաջնակարգ տեղն է գրավում Մերձավոր Արևելքի փոքր պետությունների շարքում: Մուշեղը հայկական բանակով մի քանի ամիս զբաղվում է երկրի ծայրամասային գավառների նվաճումներով, որոնց մի մասը ապստամբել էր երկրի իշխանության դեմ, իսկ մի մասն էլ 363 թվի պայմանագրով անցել էր պարսիկներին: Մուշեղը հերթով գրավում է Անձիտը, Անգեղտունը, Ծոփքը, Աղձնիքը, Տմորիքը, Կորդուքը, Նոր Շիրական աշխարհ՚ը, Ատրպատականի հայկական մասը, Մարաց երկիրը, Փայտակարանը, Արցախը, Ուտիքը, և Գուգարքը: Վերոհիշյալ գավառները տարածվում էին Հայաստանի Հարավ-Արևմտյան և հյուսիսային կողմերում: Այս շրջանների մեծ մասը համառ ու կատաղի դիմադրություն էր ցույց տալիս Մուշեղին: Գուգարքի բդեշխի ապստամբությունը ճնշելուց հետո Մուշեղը նրան բռնում և գլխատում է, իսկ երեխաներին և կնոջը գերի տանում: Մի քանի վայրերում ապստամբ իշխաններին խաչ է հանում, մի մասին ձերբակալելով տանում է Պապի մոտ: Խիստ պատժի է ենթարկում Ատրպատականի սահմանի պահապան Գլակ մարզպետին: Այդպիսով սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը գրավում և Հայաստանին է միացնում երկրի բոլոր անջատված մասերը լրիվ չափով վերականգնում Արշակունյաց պետության սահմանները, Հայկական լեռնաշխարհի բնական ամբողջությունը:

Պապի վարած քաղաքականությունը

Պապի նպատակն էր ստեղծել ուժեղ կենտրոնական միապետություն, զերծ արտաքին ազդեցություններից։ Բայց Ջիրավի ճակատամարտից հետո Հայաստանը փաստորեն դարձել էր Հռոմին վասալ երկիր։ Հռոմեական դուքս Տերենտիոսի հրամանատարությամբ, կայսրությունը հատուկ բանակ էր պահում Հայաստանում՝ Պարսկաստանի ոտնձգությունները և ներքին ապստամբությունները կանխելու համար։ Պապի ձգտումն էր դուրս հանել հռոմեական զորքերին և երկիրը դարձնել ինքնուրույն։ Այդ գործը նա կատարում է հաջողությամբ, առանց Հռոմի հետ իր հարաբերությունները վատացնելու։ Հռոմը թեև իր զորքերին ու հրամանատարին դուրս է բերում Հայաստանից, բայց Տերենտիոս զորավարին նշանակում է Պոնտոսի կուսակալ, որպեսզի այնտեղից հետևի Հայաստանի ներքին գործերին։

Արշակ 2-րդի ժամանակ և նրա բանտարկությունից հետո տեղի ունեցած պատմական իրադարձությունները, Շապուհ 2-րդի արշավանքներն ու ավերածությունները, Հայաստանի նախարարների ապստամբությունները ճգնաժամային դրություն էին ստեղծել Արշակունյաց թագավորության համար։ Կենտրոնական կայուն իշխանություն ստեղծելը դարձել էր հրամայական անհրաժեշտություն։ Իսկ այդ ծրագրի իրագործումը պահանջում էր ուժերի մեծ լարում։ 371 թվից հետո Սասանյան Պարսկաստանը, կնքելով պայմանագիր Հռոմի հետ, նոր փորձեր չի անում Հայաստանը գրավելու։ Օգտվելով այդ հանգամանքից՝ Արշակունյաց արքունիքը ձգտում է ամրացնել թագավորական իշխանությունը։

Պապն սկսում է ինքնուրույն քաղաքականություն վարել և երկիրը դարձնել անկախ։ Այդ քաղաքականությամբ նրան հաջողվում է իր շուրջը համախմբել ազնվականության զգալի մասը՝ Մարդպետի գլխավորությամբ։ Պապը շատ երախտապարտ էր, երբ բարձրացավ Արշակունյաց գահը, բայց նա բյուզանդական արքունիքում եղած ժամանակ ծանոթացել էր բյուզանդական պետական-վարչական սիստեմին, նրա ներքին կյանքին, միաժամանակ ստանալով բյուզանդական կրթություն։ Նա թեև Հռոմի օգնությամբ էր իր գահը ձեռք բերել, բայց աշխատում էր Հայաստանը հաշտ պահել նաև Պարսկաստանի հետ։ Այդ պատճառով մի շարք իշխանների իրավունքները վերականգնում է, Սպանդարատ Կամսարականին էլ վերադարձնում է հայրենի

կալվածները և իշխանական իրավունքները։ Այդպիսով Պապն արքունիքի շուրջն է համախմբում ոչ միայն գահին հավատարիմ իշխաններին, այլ և հռոմեական ու պարսկական քաղաքականության վարողներին և նրանց օգնությամբ կարճ ժամանակում ամրացնում է արքունիքը, վերակազմում և ուժեղացնում է բանակը, թագավորական իշխանությանն ենթարկում 359—363 թվականներին և հետագայում ապստամբած ու Հայաստանից անջատված ծայրամասերի խոշոր նախարարական տներին։

Պապ թագավորն սկզբում շատ մոտ էր Ներսես կաթողիկոսի հետ և անմիջապես գործի է կանչում նրան, որ նա էլ իր հերթին ամրապնդի հոգևոր իշխանությունը։ Ներսես կաթողիկոսն առաջին հերթին պայքար է ծավալում պարսկական ազդեցության դեմ, ոչնչացնում է Մերուժանի կառուցած ատրուշանները, մոգության դպրոցները, այրում է զրադաշտական կրոնի գրքերը, վերջ է տալիս պարսկական լեզվի ուսուցմանը, և ապա ձեռնամուխ է լինում քրիստոնեության ամրացման գործին և այն աշխատանքների ավարտմանը, որ Արշակ 2-րդի հետ ընդհարվելու հետևանքով կիսատ էին մնացել։ Նա նորից բաց է անում հիվանդանոցները, որբանոցները, դպրոցները, անկելանոցները, կուսանոցները և մի շարք բարեգործական այլ հաստատություններ, որոնք հսկայական միջոցներ էին կլանում։ Վերաշինվում են բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ, սկսում է ծաղկել եկեղեցական կյանքը, հոգևորականների հեղինակությունը բարձրանում է ժողովրդի աչքին, առանձնապես բարձրանում է Լուսավորչի տոհմի հեղինակությունը։ Ներսեսն աշխատում էր իր ազդեցության տակ առնել նաև երախտապարտ թագավորին։ Բայց կաթողիկոսի ձեռնարկած գործերը վերջ ի վերջո խանգարում էին Պապի ծրագրերին, որը կենտրոնաձիգ քաղաքականության կողմնակից էր և ձգտում էր Արշակունիների արքունիքին ենթարկել թե՛ նախարարներին և թե՛ հոգևորականներին։ Այդ հողի վրա նորից մրցում է սկսվում կենտրոնաձիգ և կենտրոնախույս ուժերի միջև։ Պապը վճռական գործողություններ է սկսում նաև հոգևոր ֆեոդալների դեմ, որոնց ազդեցությունը, հանձին Ներսես կաթողիկոսի, շատ էր ուժեղացել։ Ներսես կաթողիկոսը հենված Մամիկոնյան նախարարության վրա, տիրական դիրք է գրավում Արշակունյաց արքունիքում։ Թագավորական իշխանության ուժեղացման ձեռնար-

կումները, ի հաշիվ «հայրենատեր» նախարարությունների, հանդիպում է բարձր հոգևորականության և նրանց շահերի պաշտպան Մամիկոնյան նախարարության դիմադրությանը։ Բայց երիտասարդ թագավորը, որին Մամիկոնյանների ոգով գրող Բյուզանդը ամենամռայլ գույներով է ներկայացնում, վճռական միջոցներով աշխատում է հոգևորականությունը ենթարկել թագավորական իշխանությանը։ Ահա այս մրցման ժամանակ անակնկալ մահանում է Ներսես կաթողիկոսը թոքային հիվանդությամբ և ազատ է արձակում թագավորի ձեռքերը։ Պատմիչներ՝ Բյուզանդի և Խորենացու ասելով Ներսեսը մահացել է թունավորման հետևանքով և իբրև Պապը խառն է եղել այդ գործին։ Սակայն պատմիչների այդ վկայությունը հերքվում է պատմագիտության կողմից. Ներսեսը հանկարծ մահացել է բերանից արյունահոսության հետևանքով, որ արդյունք է եղել ներքին հիվանդության։

Պապը Ներսեսի մահվանից հետո կաթողիկոս է նշանակում ասորական հոսանքի ներկայացուցիչ Աղբիանոսի տոհմից՝ Շահակին (Հուսիկ 2-րդ, 373), որը հնազանդ էր թագավորին։ Կայսրության ազդեցությունը Հայաստանի վրայից վերացնելու նպատակով հայոց կաթողիկոսին ըստ հին սովորության օծվելու համար Կեսարիա ուղարկելու փոխարեն օծել է տալիս հայ եպիսկոպոսների կողմից։ Դրանով նա ցանկանում էր հայ եկեղեցին ազատագրել արտաքին ազդեցությունից, որպեսզի նա լինի ազգային և ճանաչի միայն հայոց թագավորի հեղինակությունը։ Դրանով Պապը ուզում էր Հռոմի կայսրի նման կանգնել նաև եկեղեցու գլուխը, իր կամքով բաժանել եպիսկոպոսական թեմերը և կաթողիկոսին ենթարկել իրեն։ Դրանից հետո երիտասարդ թագավորը ձեռնամուխ է լինում հոգևորականության տնտեսական և քաղաքական ազդեցության թուլացման գործին։ Նա փակում է Ներսեսի բաց արած հիվանդանոցների, որբանոցների, անկելանոցների, աղքատանոցների, դպրոցների և կուսանոցների մեծ մասը։ Վերացնում է Ներսեսի օրով սահմանված հեթանոսական սովորությունների, կենցաղի ու բարքերի դեմ ուղղված մի շարք կանոնները, ինչպես նաև կրոնական և բարոյական բազմաթիվ հաստատությունները։ Պապը կույսերին ստիպում է ամուսնանալ, իսկ աղքատներին՝ աշխատել։ Որոշ չափով հեշտացնում է ամուսնությունը՝ վերացնելով եկեղեցու սահմանափակումները։ Այնուհետև եկեղեցական կալվածների մեծագույն մասը պետականացնում է, այսինքն յոթը հողաբաժնից թողնում է միայն երկուսը։ Վերացնում է նաև «պտղի» և «տասանորդի» հարկերը, որ շինականները վճարում էին եկեղեցուն։ Կրճատում և խիստ սահմանափակում է կրոնավորների ու միաբանությունների թիվը։ Որոշ չափով կանոնավորվում է գյուղացիների տնտեսությունը, իրավա-քաղաքական հարաբերությունները, թեև այդ մասին տեղեկությունները շատ սակավ են։ Այդպիսով, Արշակունյաց արքունիքը, թագավորական իշխանությունն ուժեղացնելու և ժողովրդի բարեկեցությունը բարձրացնելու նպատակով բարձր հոգևորականության դեմ մղած իր պայքարի ընթացքում իր հենարանն է դարձնում ազգաբնակչության լայն խավերին։ Այս պայքարի ընթացքում արքունիքի և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի հարաբերությունները լարվում են, սպանվում է արքունիքի խոշոր դեմքերից մեկը՝ Գլակ Մարդպետը։ Այդ սպանության մեջ խիստ կասկածելի է դառնում Մուշեղ Մամիկոնյանը։

Արշակունյաց թագավորության ինքնուրույնության և անկախության համար մղվող պայքարը, Տիզբոնի հետ բարեկամական հարաբերությունների հաստատումը Հռոմի կայսրությունը դիտում է որպես թշնամական գործողություններ, իսկ Մուշեղ Մամիկոնյանի ինտրիգները գալիս են ավելի ուժեղացնելու այդ կասկածները։ Պոնտոսի կուսակալ Տերենտիոսը քաղաքական դեր է խաղում նաև Հայաստանում։ Հռոմի այդ նենգամիտ կուսակալն իր ուղարկած զեկուցագրում մատնանշում է այդ հանգամանքը և Պապին կասկածելի է դարձնում կայսրի աչքերին։ Այդ պատճառով Վաղես կայսրը Պապին Կիլիկիայի Տարսոն քաղաքն է կանչում նրան վնասելու նպատակով։ Պապը 300 թիկնապահներով գնում է և մեծ հարգանքով ընդունվում, բայց հետո իմանալով իրեն կյանքին սպառնացող վտանգի մասին՝ իր թիկնապահական գնդով փախչում է Տարսոնից և բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով կարողանում է ազատել իրեն հետապնդող հռոմեական հեծելազորից և հասնել Հայաստան։ Բայց Պապը դրանով չի ազատվում. կայսրը Տերենտիոս կուսակալի հաջորդ Տրայանոսին, հրամայում է հայոց թագավորին մեջտեղից վերացնել։ Տրայանոսը Մուշեղ սպարապետի օգնությամբ խորամանկ ճանապարհով սիրաշահում է Պապին՝ վերջ է տալիս նրա մեջ եղած կասկածանքներին և մի

որ իր մոտ ճաշի է կանչում հայոց թագավորին ու դավաճանաբար սպանել է տալիս իր մարդկանց ձեռքով (374)։

Ժամանակակից հույն պատմիչ Ամմիանոս Մարկելլինոսը զայրույթով է խոսում այդ եղեռնագործության մասին։ Նա դատապարտում է հռոմեական զորավարի ամարդի քայլը։ Նրա վկայությամբ կազմակերպված այդ դավադրության մեջ առանց անունը հիշելու, պարզ երևում է Մուշեղ Մամիկոնյանի և հունասեր հայ նախարարների ու հոգևորականների մասնակցությունը։

Պապի սպանությունը ծանր է նստում հայ երկրի վրա, որովհետև նա զրկվում է երիտասարդ, տաղանդավոր մի թագավորից, որը ձգտում էր իր երկրին բերել անկախություն և երջանկություն, մի գործիչ, որի նմանների խիստ կարիք ուներ կեղեքվող Հայաստանը։ Պապի ժամանակ իր գագաթնակետին հասած կենտրոնաձիգ ու կենտրոնախույս ուժերի պայքարը նրա հաջորդ Վարազդատի օրով վերջանում է Արշակունիների թագավորության պարտությամբ։

Զ) ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Հայաստանի 1-ին բաժանումը

Պապ թագավորի սպանությունից հետո հայ նախարարները Մուշեղի գլխավորությամբ ժողով են գումարում կատարված դեպքը քննության առնելու և համապատասխան վերաբերմունք ցույց տալու համար։ Մուշեղ Մամիկոնյանի միտումնավոր ճառի ազդեցության տակ նախարարների մեծ մասը գալիս է այն եզրակացության, որ քաղաքականությունը չպետք է փոխել և հայոց թագավոր պետք է ստանալ Հռոմի կայսրից և ոչ թե Տիգրոնի արքայից։ Հայ նախարարների պայմանով Վաղես կայսրը Հայաստանի թագավոր է նշանակում Պապի հորեղբորորդի Վարազդատին (374—377)։ Սա իր կրթությունն ստացել էր Հունաստանում, մասնակցել էր Օլիմպիական խաղերին և քաջ ռազմիկի համբավ էր ձեռք բերել։

375 թվին Սասանյան Պարսկաստանը ծրագրում է արմատական լուծում տալ դարավոր վեճին և Սուրեն իշխանի գլխավորությամբ դեսպան է ուղարկում Կ. Պոլիս, առաջարկելով Բյուզանդիային՝ բաժանել Հայաստանը։ Այդ ժամանակ Պարսկաստանի զորքն ուժեղ էր Առաջավոր Ասիայում։ Վաղես կայսրը թեև սկզբում համաձայնվում է, բայց բանակցությունները ձգձգում է, որը բացատրվում է այն տարաձայնություններով, որ ծագել էին բաժանման ենթակա հողամասերից մրցակից պետություններին հասանելիք բաժինների շուրջը։ Վերջի վերջո Վաղես կայսրը մերժում է Պարսկաստանի պահանջը՝ Հայաստանի բաժանման մասին։ Սակայն գործն ավելի ձգձգելու համար կայսրը Վիկտոր Մագիստրանոսի գլխավորությամբ մի դեսպանություն է ուղարկում Տիզբոն։ Մագիստրանոսը հակառակ Վաղեսի հրահանգի՝ Հայաստանի բաժանման շուրջը համաձայնության է գալիս պարսկական արքունիքում։ Բայց կայսրը մերժում է այդ համաձայնությունը, իսկ Ծերունի Շապուհ 2-րդը պատասխանում է Հայաստանի գրավման սպառնալիքով։ Մինչդեռ երկու արքունիքներում Հայաստանի բաժանման սակարկություն էր տեղի ունենում, Հայաստանում Վաղեսի պայքարն իր վերջին փուլն էր ապրում։

Մուշեղ Մամիկոնյանը կայսրի կարգադրությամբ հսկողություն է սահմանում Վարազդատ թագավորի վրա, որպեսզի նա Հռոմին հակառակ քաղաքականություն չվարի: Սակայն երիտասարդ թագավորը հետևում է Պապի քաղաքականությանը և որոշում է բարի դրացիական հարաբերություններ հաստատել նաև Պարսկաստանի հետ և երկու հզոր պետությունների միջև պահպանել Հայաստանի ինքնուրույնությունը: Այդ հողի վրա պայքար է սկսվում թագավորի և սպարապետի միջև: Մուշեղն արհամարհում է Վարազդատին և ինքնագլուխ գործեր է կատարում. նա բանակցություններ է վարում Վաղես կայսրի հետ՝ նոր ամրոցներ կառուցելու, բերդերը զորքերով լցնելու և կայսրության հաշվին հայերին զինելու համար: Թագավորը կասկածում է Մուշեղի վրա, մանավանդ, երբ Բատ Սահառունուց իմանում է, որ Պապի սպանության գործում նրա մատը խառն է եղել: Մամիկոնյան նախարարության նրա համախոհների ազդեցությունը թուլացնելու համար Վարազդատը Պապի սպանության մեջ Մուշեղ Մամիկոնյանի մեղսակցությունը պատճառ բռնելով աշխատում է այդ ուժեղ հակառակորդին վերացնել: Այդ նպատակով թագավորը մի ճոխ ճաշկերույթ է սարքում, որտեղ հրավիրվում է նաև Մուշեղը: Խնճույքի պահին Վարազդատը դուրս է գալիս, այդ ժամանակ ներս են մտնում մարդասպանները, բռնում են Մուշեղի ձեռքերը, և Բատ Սահառունին սպանում է նրան: Դաշունահար եղած Մուշեղի հարցին, թե՝ ինչ է այս, թագավոր, Վարազդատը պատասխանում է՝ գնա Պապ թագավորի մոտ, հարցրու և տես թե ինչու համար է այդ:

Մուշեղի սպանությունից հետո Վարազդատն սպարապետության պաշտոնը հանձնում է իր խորհրդական Բատ Սահառունուն: Բայց Պարսկաստանից նոր վերադարձած Մանվել Մամիկոնյանն էլ իրեն է սպարապետ հայտարարում և երբ Վարազդատը նրան առաջարկում է ենթարկվել թագավորի իշխանությանը, հետևյալ խրոխտ պատասխանն է ուղարկում. «Մենք չենք եղել ձեզ ծառաներ, այլ եղել ենք ձեր ընկերները և ձեզանից ավելի բարձր»: Հակամարտությունը հասնում է պատերազմի: Ճակատամարտը տեղի է ունենում Կարնո դաշտում: Մանվելը հենված պարսկական օգնական ուժի վրա՝ պարտության է մատնում Արշակունիների զորամասերին, Բատ Սահառունուն բռնում է ու սպանում, իսկ Վարազդատ Արշակունուն դուրս է քշում երկրից (377):

Մանվել Մամիկոնյանը Պարսկաստանից, Շապուհ 2-րդի կողմից եկել էր Հայաստան՝ Հռոմի թեկնածու Վարազդատին այնտեղից դուրս քշելու: Այդ ժամանակ Վաղես կայսրը զբաղված էր հոների արշավանքով, հաշտվել էր պարսիկների հետ և իր զորքը դուրս էր բերել Հայաստանից: Մանվել Մամիկոնյանը փոքր հասակից պատանդ էր եղել Պարսկաստանում, կրթվել ու մեծացել էր Տիզբոնում և լավ հարաբերությունների մեջ էր Սասանյան արքունիքի հետ: Այդ պատճառով պարսիկները ոչ միայն չէին խանգարում նրան, այլև օգնում էին: Նա յոթը տարի կառավարում է Հայաստանը խնամակալի իրավունքով: Այդպիսով, Արշակունյաց թագավորությունը ներքին պայքարի ընթացքում հասնում է այն դրության, որ ուժեղ նախարարություններից մեկը հայտարարում է, թե ինքն ավելի բարձր է, քան թագավորությունը և այդ հայտարարությունը կենսագործում է զենքի ուժով: Հայաստանը գտնվում էր այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ նախարարական տների մեծագույն մասի ամրությունները քանդվել էին և Հայաստանն ամրացնելու համար Մամիկոնյանների կողմից Բյուզանդիային արված առաջարկությունն անհետևանք էր մնացել:

Մանվել Մամիկոնյանն իր տարած հաղթանակից հետո, Պապի կին Զարմանդուխտի և հայ նախարարների համաձայնությամբ, առանց կայսրի գիտության, Հայաստանի թագավոր է հռչակում Պապի երկու փոքր որդիներին՝ Արշակին և Վաղարշակին, Մամիկոնյան և Բագրատունյաց տոհմերի խնամակալությամբ: Բայց Վաղարշակը շուտով մեռնում է և թագավորությունը մնում է Արշակ 3-ին (377—386), որի հետ Մանվելն ամուսնացնում է իր աղջկան և դառնում թագավորահայր խնամակալ: Այս պայմաններում Սասանյան Պարսկաստանը Բյուզանդիային արած իր սպառնալիքն իրագործում է Սուրեն զորավարի գլխավորությամբ: Նա 10 հազար զորք է ուղարկում Հայաստան Մանվելին պաշտպանելու: Պարսից զորավարը թանկագին ընծաներ է բերում հայոց թագավորին և թագավորամորը: Սկզբում Մանվելի և Սուրենի հարաբերությունները լավ էին ընթանում, բայց երբ մահանում է Շապուհ 2-րդը (379), նրանց հարաբերությունները գնալով փչանում են, որովհետև Սուրենը դավադրություն էր սկսել Մանվելի դեմ: Վերջինս օգտվելով Շապուհ 2-րդի մահվան հետևանքով Պարսկաստանում առաջ եկած ներքին խռովություններից՝ Սուրենին դուրս է քշում Հայաստանից: Տիզբոնից ուղարկված նոր զորամասերը նույնպես պարտ-

վում են և նա շպրտվում։ Դրանով Հայաստանի անկախությունը պահպանելու վերջին փորձն է արվում։ Այս շրջանում պայքարի ու կռվող կողմերի պարագլուխներն են լինում Մամիկոնյան և Արծրունյաց նախարարությունները։

Այնուհետև Շապուհ 2-րդի հաջորդ Արտաշիր Սասանյանը թողնում է Տիզբոնի նվաճողական ծրագրերը և ձեռք է քաշում Հայաստանից։ Հռոմայեցիներն էլ զբաղված էին կայսրության արևմտյան մասերով և Մանվելն օգտվելով դրանից խաղաղ կառավարում է երկիրը մինչև իր մահը. 384 թ.։ Նրա մահվանից հետո Հայաստանում կրկին անգամ ծայր են առնում ներքին խռովությունները։ Արշակ 3-րդը մի շարք նախարարների հետ, որոնց կալվածները գտնվում էին Արևելյան մասում, արքունի գանձերով անցնում է Հայաստանի Արևմտյան մասերը (386), իսկ Արևելյան մասում մնացած հայ նախարարների պահանջով պարսից Շապուհ 3-րդը նոր թագավոր է նշանակում Արշակունյաց տոհմից Խոսրով 3-րդին (386—391)։ Ահա այս ժամանակ է, որ Հայաստանի բաժանումը սակարկող պետությունների բանակցություններն ավարտվում են Շապուհ 2-րդի և Վաղես կայսրի կայացրած համաձայնությամբ։ 387 թվի Տիզբոնի դաշնագրությամբ ձևակերպվում է Հայաստանի առաջին բաժանումը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև։

Արշակունյաց թագավորության և հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալների միջև 4-րդ դարի ընթացքում տեղի ունեցած պայքարը ցույց է տալիս, որ Արշակունիների թագավորությունը գոյություն ունեցող ուժեղ նախարարությունների շարքում մոտավորապես հավասարներից մեկն էր։ Այդ պայքարը միաժամանակ պարզում է այն իսկական պատճառը, թե ինչու երկու մրցակից պետությունները լուծում էին տալիս դարավոր վեճի առարկա դարձած հայկական հարցին։ Ամբողջ 4-րդ դարի ընթացքում տեղի ունեցած ներքին պայքարն օրինականացվում էր դաշնագրությամբ։ Բաժանման իրավական ձգձգումը բացատրվում է երկու պետությունների՝ Հայաստանից ստանալիք բաժնի շուրջը գոյություն ունեցող վեճերով։ Ֆեոդալական հասարակարգին հատուկ այդ պայքարը Հայաստանում հաճախ ստանում էր հարևան պետություններից մեկին կամ մյուսին հարելու քաղաքական արտահայտություն։ Ներքին պայքարը հաջողությամբ վարելու խնդրում մի ուժեղ պետության օժանդակությունն ապահովելը նվազ դեր չէր խաղում։

Արշակունյաց թագավորությունն աշխատում էր ապստամբ «հայրենատեր» նախարարություններին ոչնչացնել և նրանց կալվածների պետականացումով մի կողմից ուժեղացնել իր դիրքերը, իսկ մյուս կողմից գահին հլու հնազանդ նոր վասալներ ստեղծել պետականացված կալվածներից «պարգևականք» (հողաբաժին) նվիրելով։ Այդպիսով, Արշակունյաց թագավորությունը ձգտում էր պահպանել Հայաստանի անկախությունը, որը Շապուհ 2-րդի կողմից անմիջական սպառնալիքի տակ էր գտնվում։ «Հայրենատեր» նախարարությունների ոչնչացման այդ քաղաքականության մեջ Մամիկոնյան նախարարությունը տեսնում էր իրեն սպառնացող մոտալուտ վտանգը։ Ներքին այդ հակամարտությունը բարդանում էր երկու մրցակից պետությունների հակամարտություններով, որոնք իրենց անդրադարձումն էին գտնում Հայաստանում գործող հունական հոսանքին հարող բարձր հոգևորականության գործելակերպի մեջ։

Պապն ու Վարազդատը սկսած Տրդատից՝ պայքարի վերջին պահակներն էին հանդիսանում։ Պայքարի վերջին մոմենտում Մանվել Մամիկոնյանի կողմից Վարազդատ թագավորին ուղղված պատասխանը ցույց է տալիս Արշակունյաց թագավորության թափած ջանքերի ապարդյուն անցնելը։ Եվ այդպիսի պատասխան էր տալիս այն նախարարությունը, որի կալվածները 5-րդ դարի առաջին կեսին ազգակից Կամսարական նախարարության կալվածների հետ ներկայացնում էին մի ամբողջ երկրամաս։ Այդ կալվածները Տայքից իջնելով, Արշարունիքի և Բագրևանդի վրայով հասնում էին մինչև Բաղեշի քարածերպերը և Հայաստանը բաժանում երկու մասի։ Դրանով է բացատրվում այն ազդեցիկ դիրքը և պայքարը, որ Մամիկոնյան նախարարությունն ունեցել է 4-րդ դարի 2-րդ կեսի և նրա հաղթությունն Արշակունյաց թագավորության դեմ, մի պայքար, որ պատճառներից մեկն է դառնում Հայաստանի բաժանման Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև։

Թեոդոս կայսրի և Շապուհ 3-րդի միջև կնքված դաշնագրության համաձայն Հայաստանի մեծագույն մասը՝ 4/5-րդն անցնում է Սասանյան Պարսկաստանին, իսկ 1/5-ը Հռոմեական կայսրությանը։ Կայսրությանը բաժին ընկած Արևմտյան Հայաստանը, որ Այրարատ նահանգի տարածությունն էր, իր մեջ ընդգրկում էր—հյուսիսում՝ 11 գավառ (Դերջյան, Կարին, Եկեղյաց, Դարանաղի և այլն), հարավում՝ պատմական Ծոփաց աշխարհն

էր հինգ բաժիններով և Անգեղտունը։ Բաժանման սահմանագիծն անցնում էր Սև ծովի ափից՝ այժմյան Ռիզե քաղաքից իջնում էր հարավ և Կարինի (Էրզրումի) մոտից դեպի հարավ կտրելով Արածանիի հոսանքը, Նփրկերտ քաղաքով ուղղվում էր դեպի Մծբին՝ Բաթմանչային զուգահեռ, թողնելով Մծբինը Տիզբոնին, իսկ Կարինը Բյուզանդիային։ Այդպիսով Հայաստանում առաջանում է երկու թագավորություն, երկուսն էլ Արշակունի։

Արևմտյան Հայաստան տեղափոխված նախարարներից մի քանիսը վերցնում են Արշակ 3-րդի գանձերը և գալիս Արևելյան Հայաստան։ Այդ հողի վրա երկու թագավորի միջև Երևելի դաշտում (այժմյան Լենինականի և Ղարսի միջև) տեղի է ունենում ճակատամարտ, Արշակ 3-րդը պարտվում է ու հահանջում, իսկ հետո մահանում է 389 թվին։ Հռոմեական կայսրությունը նրա մահվանից հետո այլևս թագավոր չի նշանակում, այլ Հայաստանի այդ մասը վեր է ածում մի նահանգի, կցում կայսրությանը և իր կողմից նշանակում է կառավարիչներ, որոնք կոչվում են կոմեսներ։ Հայաստանի այդ տերիտորիան համարվում է մի զինվորական երկրամաս, որտեղ սկզբնական կառավարչական ձևը գրեթե նույնն է մնում մինչև Հուստինիանոս կայսրի ժամանակը (527—567)։ Եփրատի հովտում եղած ճանապարհները պաշտպանելու համար հռոմայեցիներն ամրացնում են Մելիտենեն և Ամիդը։ Թեոդոս 2-րդը (Փոքր-408—450) կառուցում է Կարնո բերդը, որտեղ հատուկ բանակ էր պահվում պարսիկներից պաշտպանվելու համար։

Արևելյան Հայաստանում Արշակունյաց թագավորությունն իր գոյությունը պահպանում է մինչև 429 թվականը։ Սասանյան Պարսկաստանը հայ Արշակունյաց թագավորությունն երկար ժամանակ պահպանելով Արևելյան Հայաստանում, որոշ նպատակներ էր հետապնդում։ Հայաստանում իբրև նախկին դրությունը պահպանելով՝ Տիզբոնի արքունիքը աշխատում էր սիրաշահելով այդ մասի հայ նախարարներին՝ ետ դարձնել Արևմտյան Հայաստան մնացած հայ նախարարներին, որոնց կալվածները գտնվում էին Արևելյան Հայաստանում և Հայաստանը դուրս բերել Արևմտյան ազդեցությունից։ Այս հիմնական նպատակն իրագործելու համար Տիզբոնի արքունիքն ավելի քան 40 տարի պահում է հայ Արշակունյաց խարխուլ թագավորությունը։

Սասանյան Պարսկաստանն իր վարած այդ քաղաքականության մեջ որոշ հաջողություն է ունենում։ Նախարարների մի մասը հաշվի առնելով քայքայվող Հռոմեական կայսրության խիստ քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում՝ (Արշակունյաց թագավորության վերացումը, նախարարների իրավունքների սահմանափակումներ և այլն)։ Խոսրով 3-րդ թագավորի թույլտվությամբ և Գազավոն Կամսարականի գլխավորությամբ վերադառնում են Արևելյան Հայաստան և ձեռք են բերում իրենց հողային ու նախարարական իրավունքները։ Խոսրով 3-րդն այդ ճանապարհով իր շուրջն է համախմբում աշխարհիկ և հոգևոր ֆեոդալներին ու ձգտում է իր թագավորական իրավունքները տարածել նաև Արևմտյան Հայաստանի վրա։ Նա համաձայնվում է Արևելյան Հայաստանում մնացած Ասպուրակես կաթողիկոսի մահվանից հետո կաթողիկոս ընտրել Ներսեսի որդի Սահակ Պարթևին, որն իր քաղաքական հայացքներով հակված էր դեպի Արևմուտք և իր ժամանակի ամենակրթված, գիտուն ու կուլտուրական անձնավորություններից էր, օժտված հայրենասիրական մեծ գործունեությամբ, որը կարող էր մեծ օգնություն ցույց տալ Խոսրովին, Հայաստանը վերամիավորելու և անկախությունը վերականգնելու ուղղությամբ։ Խոսրով 3-րդը վերջում դիմում է Բյուզանդիային իրեն ճանաչելու նաև Արևմտյան Հայաստանի թագավոր, խոստանալով այնտեղի հարկը Բյուզանդիա ուղարկել։ Թեոդոս կայսրը (Մեծը-379—395) տալիս է իր համաձայնությունը։ Այդպիսով Խոսրով 3-րդ թագավորը լուրջ քայլեր է անում Հայաստանը դուրս բերելու Պարսկաստանի ու Բյուզանդիայի գերիշխանությունից և վերականգնելու կորցրած անկախությունը։

Տիզբոնի արքունիքին ձեռնտու չէր Խոսրովի այդ քաղաքականությունը։ Դրանում նա տեսնում էր Արևմուտքի ազդեցության ուժեղացում Արևելյան Հայաստանում և հայկական թագավորության վերականգնման փորձեր։ Այդ իսկ պատճառով պարսկական արքունիքը Տիզբոն է կանչում Խոսրովին, ապա մեղադրելով նրան հռոմեական քաղաքականություն վարելու մեջ, գահընկեց է անում և մի շարք նրան համախոհ նախարարների հետ բանտարկում Անհուշ բերդում (391), իսկ Խոսրովի տեղը հայ նախարարների համաձայնությամբ թագավոր է նշանակում նրա եղբայր Վաղարշակին (391—415), որը Պարսիկների կողմից անվանվում է Վռամշապուհ։ Տիզբոնի արքունիքը չի վավերաց-

նում նաև Սահակի կաթողիկոսությունը: Վռամշապուհի խորհրդով ու նրա առաջարկությամբ Սահակ Պարթևը 392 թվին մեկնում է Տիզբոն՝ իրավունքները հաստատել տալու համար. դա առաջին անգամն էր, որ Լուսավորչի տոհմի կաթողիկոսը գնում էր պարսկական արքունիքը: Դրանով Վռամշապուհ թագավորն աշխատում էր Արևմտյան քաղաքականության վարողների պարագլուխներից մեկին, հատկապես Լուսավորչի տոհմին սիրաշահել և հաշտեցնել Տիզբոնի արքունիքի հետ, որոնք ոխերիմ թշնամիներ էին իրար հետ, մի բան, որը շատ ձեռնտու էր Պարսկաստանի համար: Դրանով Վռամշապուհը Սահակ Պարթևին պահպանում էր կաթողիկոսական աթոռի վրա, լծակից էր դարձնում իրեն, որպեսզի միասին պայքարեն երկրի կուլտուրայի և անկախության համար:

Սահակ Պարթևին Տիզբոնում մեծ ընդունելություն են ցույց տալիս: Նա մեծ հաջողություն է ձեռք բերում, վավերացնել է տալիս իր կաթողիկոսությունը, ներում է ստանում մի շարք իշխանների նկատմամբ, որոնք Խոսրովի հետ զրկվել էին իրենց իրավունքներից: Սպարապետության պաշտոնից հեռացված Մամիկոնյանների համար վերականգնում է նախկին իրավունքը: Սահակ կաթողիկոսի փեսա Համազասպ Մամիկոնյանն ստանում է Հայաստանի սպարապետության պաշտոնը և Մամիկոնյան տան տանուտիրական իրավունքը: Մամիկոնյանների տոհմը վերստանում է իր նախկին դիրքը՝ նախարարության 5-րդ բարձը—գահը: Կամսարականները և Ամատունիները վերստին ստանում են իրենց կալվածները, «պատիվ»-ն ու «բարձր»-երը հայ Արշակունիների արքունիքում: Սահակ կաթողիկոսն այս բոլոր գործերը կարգավորելուց հետո վերադառնում է Հայաստան և Վռամշապուհի հետ միասին լծվում երկրի տնտեսական, քաղաքական և կուլտուրական առաջադիմության՝ գործին:

Վռամշապուհի թագավորությունը տևում է մոտ 25 տարի: Նրա ժամանակ Առաջավոր Ասիայում խաղաղություն է տիրում, առանց ներքին և արտաքին կռիվների, մի հանգամանք, որը Հայաստանի տնտեսական ու կուլտուրական կյանքի զարգացման խթան է հանդիսանում: Չորրորդ դարի 2-րդ կեսի Սասանյան Պարսկաստանն Այսրկովկասի հռոմեական վասալ թագավորությունների հողամասերը գրավում և առևտրական խոշոր կենտրոն Մծբինի հետ միասին մի ամբողջական երկրամաս է ստեղծում: Արտաշատը, Վաղարշապատը, ապա Դվինը սկսում են խոշոր դեր խաղալ: Չորրորդ դարի 60-ական թվականներին Շապուհ 2-րդի ավերածություններից հետո կյանքը վերելքի շրջան է ապրում, զարգանում են առևտուրն ու արդյունագործությունը, քաղաքները, գյուղատնտեսությունը և խոշոր հողատիրությունը: Վռամշապուհի թագավորության ժամանակ է, որ կատարվում է կուլտուրական մի այնպիսի քայլ, որը դառնում է հայ ժողովրդի ազգային գոյության հիմքերից մեկը: Արշակունյաց պետությունը կանգնած էր քայքայման դռան առաջ, նա փլվելու վրա էր, անհրաժեշտ էր մի նոր գործոն, որ միացներ հայերի բաժան-բաժան ու երպատակված մասերը: Այդ շաղկապող օղակը դառնում է հայերեն գրերի ու գրականության ստեղծումը, որի հիմքը դրվում է 407 թվին հայ նշանավոր գիտնական ու լուսավորիչ Մեսրոպ Մաշտոցի ձեռքով:

Արշակունյաց պետության անկումը

Վռամշապուհի մահվանից հետո հայ ֆեոդալների միջնորդությամբ Տիզբոնի արքունիքը Հայաստանի գահը նորից հանձնում է Անհուշ բերդում բանտարկված Խոսրով 3-րդին (415 թվին), որը հազիվ կարողանում է երկիրը կառավարել 8 ամիս և մահանում է նույն թվին: Դրանից հետո պարսից թագավոր Հազկերտ 1-ինը (399—420) Հայաստանի թագավորությունը հանձնում է իր որդի Շապուհին (416—419), որը Հայաստան գալով՝ անմիջապես փորձ է անում սահմանափակել հայ նախարարների իրավունքները և նախապայմաններ ստեղծել վերացնելու հայ Արշակունյաց թագավորությունը: Նրա ձեռնարկությունները ուժեղ դիմադրության են հանդիպում հայ իշխանների կողմից: Շապուհը երկար չի մնում Հայաստանում: Տիզբոնում ծագած խռովությունների ու հոր սպանության լուրն ստանալով՝ անմիջապես մեկնում է Պարսկաստան՝ գահը ժառանգելու համար՝ իսկ Հայաստանում թողնում է իր տեղակալին զորքով, կարգադրում է նրան, հայերի աչքի ընկնող իշխաններին ձերբակալել և ուղարկել Պարսկաստան: Սակայն ինքը դեռ նոր էր բարձրացել Տիզբոնի գահը, երբ սպանվում է բռնկված ապստամբությունների պատճառով: Հայերն օգտվելով Տիզբոնում տեղի ունեցած խռովություններից, ինչպես նաև Պարսկա-բյուզանդական պատերազմներից (420—421) նախարարների գլխավորությամբ ապստամբության դրոշ են բարձրացնում պարսիկների դեմ: Ապստամբ հայերը Շապուհի տեղակալին ու պարսկական բանակին դուրս են քշում Հայաստանից: Բայց երբ լսում են, որ Պարսկաստանում վերջ է դրվել ներքին խռովություններին և նոր թագավոր Վռամ 5-րդը

(422—439) Բյուզանդիայի հետ հարյուրամյա խաղաղության) դաշինք է կնքել, վերջ են տալիս ապստամբությանը և Սահակ կաթողիկոսի միջոցով հաշտության բանակցություններ են սկսում Պարսկաստանի հետ, միաժամանակ առաջարկելով Հայաստանի գահի վրա թագավոր նշանակել հայ Արշակունիներից: Տիզբոնի արքունիքը հայերին սիրաշահելու համար ժամանակավորապես ընդունում է նրանց առաջարկությունը և թագավոր է նշանակում Վռամշապուհի որդի Արտաշես 3-րդին (423—429), որին Պարսիկները կոչում են Արտաշիր:

Արտաշիրի թագավորությունը Հայաստանում երկար չի տևում: Իր թույլ բնավորությամբ նա չի կարողանում գլխավորել պետությունը և իր շուրջը համախմբել նախարարներին: Նոր թագավորն ավելի շատ իրեն նվիրում է գեղխ ու վավաշոտ կյանքի, քան թե երկրի կառավարման գործին: Արտաշիր թագավորի վարած քաղաքականությունից, դժգոհում էին նախարարները, առանձնապես նրանք, որոնք կապված էին Տիզբոնի արքունիքի հետ: Այդ դժգոհությունները հրահրվում էր պարսկական արքունիքի կողմից, հայ Արշակունյաց թագավորության գոյությանը վերջ տալու դիտավորությամբ:

Արտաշիրից դժգոհ նախարարները դիմում են Սահակ կաթողիկոսին, որը տոգորված էր երկրի անկախության գաղափարով, միանալ իրենց և բողոք ներկայացնել տիզբոնի արքունիքին Արտաշիր թագավորի դեմ: Սահակ կաթողիկոսը, որը մոտիկից ծանոթ էր Տիզբոնի արքունիքին, ինչպես և հայկական պետության ու հայ թագավորի դեմ ուղղված մի շարք հայ նախարարների դավադրություններին, մերժում է դժգոհ իշխանների առաջարկը չփոխելով իր «հիվանդ ոչխարն առողջ գազանի հետ»: Հայրենասեր կաթողիկոսի հանդիմանությունները ոչ մի ազդեցություն չեն ունենում դժգոհ նախարարների վրա: Նրանք իրենց հետ վերցնելով Բզնունյաց Սուրմակ եպիսկոպոսին որպես հոգևորականության ներկայացուցիչ՝ գնում են Տիզբոն և բողոքում Արտաշիրի դեմ: Նրանք միաժամանակ մեղադրում են նաև Սահակ կաթողիկոսին, Բյուզանդիայի հետ քաղաքական հարաբերություն ունենալու մեջ:

Սասանյան դինաստիան, որ վաղուց հարմար առիթի էր սպասում վերջ տալու հայ Արշակունյաց թագավորությանը, օգտվում է ստեղծված իրադրությունից, հայոց Արտաշիր թագավորին և Սահակ կաթողիկոսին կանչում է Տիզբոն, մեղադրելով նրանց

Բյուզանդիայի հետ հարաբերություն ունենալու և ապստամբու-
թյուն բարձրացնելու մեջ, թեև նման քայլ նրանք երբեք չէին
կատարել: Տիզբոնի արքունիքն Արտաշիրին զրկում է թագավո-
րությունից, իսկ Սահակին, կաթողիկոսությունից (429 թ.):

Արտաշիրի գահընկեցությունից հետո Տիզբոնի արքունիքը իր
հետապնդած նպատակները իրագործված համարելով, և տեսնելով
որ դիրքերն ամրացված են Արևելյան Հայաստանում, վերացնում
է Արշակունիների թագավորությունը, Արևելյան Հայաստանը վեր
է ածում մի մարզի, միացնելով այն Պարսկաստանին, որպես
վարչական միավորներից մեկը, բայց ժամանակավորապես պահ-
պանում է նրա ներքին ինքնավարությունը, մինչև որ իր քա-
ղաքականությունը ամրապնդեր այնտեղ: Այդ նոր մարզի կա-
ռավարման իրավունքը հանձնվում է Տիզբոնի արքունիքի կող-
մից նշանակված կառավարիչներին, որոնք կոչվում էին մարզ-
պաններ: Մարզպանները կարող էին լինել թե պարսիկ և թե
պարսկական քաղաքականության կողմնակից հայ նախարարնե-
րից: Հայաստանի առաջին մարզպանը լինում է Վեհմիհրշապուհ
պարսիկը (429—441):

Արևելյան Հայաստանն ավելի քան 200 տարի կառա-
վարվում է Պարսկական արքունիքի կողմից նշանակված մարզ-
պաններով, դրա համար էլ այդ շրջանը կոչվեց մարզ-
պանական շրջան: Տիզբոնի արքունիքն, Արտաշիրին գահընկեց
անելուց հետո, հայկական պետության գույքն ու ունեցվածքը
բռնագրավում է և սեփականացնում, իրեն համարելով հայ Ար-
շակունյաց թագավորության ունեցվածքի իրավատու տերը: Այդ-
պիսով, 429 թվին վերանում է հայ Արշակունյաց թագավորու-
թյունը Հայաստանում, մի թագավորություն, որը տևում է ա-
վելի քան 360 տարի: Դրանով էլ վերջանում է նաև հայ ժողովրդի
անկախությունը: Հայկական թագավորության վերացումով Հա-
յաստանը կորցնում է իր անկախությունը, բաժանվում է երկու
մասի, ենթարկվում տարբեր ազդեցությունների և ընկնում է
պարսկական և բյուզանդական բռնակալների դաժան լծի տակ,
մի լուծ, որ բավական ծանր է լինում հայ ժողովրդի համար:

Հայ Արշակունյաց պետության անկումն ուներ թե ներ-
քին և թե արտաքին պատճառներ: Արևելքն ու Արևմուտքն ան-
վերջ բախվելով Մերձավոր Արևելքի շուրջը՝ պատերազմների թա-
տերաբեմ էին դարձրել Հայաստանը: Հռոմի և Իրանի դարավոր
արյունոտ պայքարը հայկական պետության անկման գլխավոր
պատճառներից մեկն էր: Հայկական պետության անկման մյուս

խոշոր պատճառը ներքին պայքարն էր, որը սնունդ էր ստանում դրսից: Հայ թագավորներից միայն Տիգրան 2-րդին է հաջողվում իր շուրջը համախմբել երկրի իշխաններին: Նրանից հետո գրեթե ոչ մի թագավորի չի հաջողվում իր շուրջը համախմբել նրանց: Միահեծան արքաների իրավունքները ոտնահարվում էին ֆեոդալների կողմից: Հայ նախարարները խմբավորվելով անվերջ կռվում էին իրար և թագավորի դեմ, միշտ էլ սնվելով դրսից: Չորրորդ դարում կազմակերպված քրիստոնեական եկեղեցին ոչ միայն չի մեղմացնում այդ պայքարը, այլ և ինքն է անցնում մի խմբավորման գլուխը և ավելի է բորբոքում պայքարը: Այդպիսով, պետության սոցիալական բազան՝ ֆեոդալականությունն ամուր հիմք ու հենարան չհանդիսացավ Արշակունյաց թագավորության, իսկ երկրի տնտեսական բազան թույլ էր, վաճառականությունն ու առևտրականները այն ուժը չունեին, որոնց վրա հենվելով պետությունը կարողանար ճնշել թե ներքին և թե արտաքին թշնամիներին և պահպաներ իր գոյությունը: Ուստի և 387 թ. և 429 թվի անցքերը պատմականորեն անխուսափելի չէին: Սակայն հայ ժողովրդի պատմական կյանքը դրանով չվերջացավ: Թեև ընկել էր թագավորական գահը, երկիրը բաժանվել էր երկու մասի, բայց դեռ կանգուն էր հայ նախարարությունը հայ ժողովուրդը: Քրիստոնյա եկեղեցին գնալով ուժեղանում էր և կենտրոնաձիգ ուժ դառնում կենտրոնախույս ուժերի միջև և վերջապես հայ ժողովուրդը ստեղծել էր իր գոյության պահպանման հիմքերից գլխավորը՝ գիրն ու դրականությունը, որոնք պետք է նրան դարձնեին ավելի միասնական ժողովուրդ և մտցնեին քաղաքակիրթ ժողովուրդների շարքը:

ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Հեթանոս հայերի կուլտուրայի բնութագրումը

Դարերի ընթացքում հայ ժողովուրդը իր կեցության համաձայն ստեղծել էր իր աշխարհայացքն ու կուլտուրան: Նրա աշխարհայացքի մասին մենք գաղափար ենք կազմում նրա ստեղծած կրոնից, որի մեջ արտացոլվում էր նախնադարյան շրջանի առասպելաբանությունը, հավատալիքներն ու պաշտամունքը, ինչպես այդ տեսանք հայ հեթանոսական կրոնի մասին խոսելիս:

Ինչպես բոլոր ժողովուրդների, նույնպես և հայ ժողովրդի

պատմության հնագույն շրջանում առասպելաբանությունը խոշորագույն տեղ է գրավել: Մովսես Խորենացու «Հայոց պատմության» այն գլուխներում, որոնք վերաբերում են հնագույն շրջանին, առասպելաբանությունն իր ցայտուն արտահայտությունն է գտել Հայկի և Բելի, Արա գեղեցիկի և Շամիրամի առասպելներում: Նրան հաջորդող ֆեոդալական շրջանի բոլոր պատմիչները, ինչպես և հետագայում բուրժուական պատմաբանների մեծագույն մասը, Հայոց պատմությունը ներկայացրել են այդ առասպելներով: Ժողովրդական հնագույն հավատալիքների և պաշտամունքների մասին քրիստոնյա կղերը նրանց դեմ մղած իր պայքարի ընթացքում մեզ հաղորդում են ուշագրավ վկայություններ: Սակայն նրանց մասին անհամեմատ ավելի լրիվ գաղափար ենք կազմում այն մնացորդներից, որոնք մինչև վերջին ժամանակներս պահպանվել են հայ ժողովրդի մոտ Հայաստանի տարբեր շրջաններում:

Դասակարգային հասարակության առաջացումով և նրա խորացումով շահագործող և շահագործվող դասակարգերի աշխարհայացքի միջև գոյություն ունեցող տարբերությունները գնալով խորանում են, որոնք արտահայտվում են կուլտուրայի տարբեր բնագավառներում: Հայաստանը ինչպես իր քաղաքական ու տնտեսական կյանքում, այնպես էլ կուլտուրայի տարբեր բնագավառներում մշտապես փոխազդեցության մեջ է եղել հարևան երկրների ու ժողովուրդների հետ:

Հին դարի կուլտուրայի տարբեր բնագավառները, կրոնը, ժողովրդական բանահյուսությունը, թատրոնը, երգն ու երաժշտությունը, ճարտարապետությունն ու քանդակագործությունը, լեզուն ու գրականությունը դրսևորում են այդ կուլտուրայի դասակարգային բնույթը և հարևան ժողովուրդներից կրած կուլտուրական փոխազդեցությունները:

Ժողովրդական վեպ

Հայերեն գրերի ստեղծումից հետո թարգմանական և ինքնուրույն գրականության մեջ հայոց լեզուն հանդես է գալիս իր կազմավորված կլասիկ ձևով: Անկասկած, լեզվի այդօրինակ մշակումը կատարվել էր անցյալում: Մինչև այժմ մեզ չեն հասել 5-րդ դարից առաջ տարբեր տառերով գրված հայերեն վկայություններ: Համաձայն պատմական վկայությունների, Հայաստանում գործածական են եղել հունարեն, պարսկերեն և ասորերեն լեզուները՝

Թերևս օտար տառերով գրված լինեին հայերեն, բայց մեզ ոչինչ չի հասել։

Արշակունի արքունիքում պաշտոնական գրագրությունների համար գործածական են եղել պարսկերեն և հունարեն լեզուները։ Մովսես Խորենացու վկայությամբ, մեհյաններում կամ տաճարներում պահվում էին հատուկ մատյաններ, որտեղ գրի էին առնում պատմական անց ու դարձերը։ Արտաշիսյան թագավորության շրջանից մեզ հասած դրամների վրա գրված է հունարեն։ Հայտնի է, որ Տիգրան Մեծի որդի Արտավազդ Բ-րդը հունարեն լեզվով գրել է թատերգություններ։

Եթե հայերեն գրավոր խոսքի մասին բացակայում են վկայություններ ու նյութական տվյալներ, ապա ժողովրդական բանավոր ստեղծագործությունների մասին մեր մատենագիրների մոտ (Ագաթանգեղոս, Փավստոս Բյուզանդ, Մովսես Խորենացի, Գրիգոր Մագիստրոս և այլն) պահպանվել են հազվագյուտ հատ ու կտորներ, որոնք հայտնի են ժողովրդական «վեպ», «զրույց» «առասպել», «վիպականական և թվելյաց երգեր» անուններով։ Ժողովրդական ստեղծագործությունների այս հատվածներն ուշագրավ և հետաքրքիր են նաև հայերենի մշակման տեսակետից։ Գողթան գավառի երգիչները դարերի ընթացքում իրենց բամբիռներով երգել են այդ երգերը։ Գերազանցորեն հերոսների կատարած գործերին և նրանց գովքին նվիրված վեպերի այդ հատ ու կտորները մշակված լեզվի մասին են վկայում։ Հայերեն գրական լեզուն կոչվել է գրաբար։

Մովսես Խորենացին իր պատմության մեջ գրի է առել Արտաշիսյան շրջանին վերաբերող մի խոշոր վեպի որոշ հատվածներ, ուր պատմվում է այդ թագավորության հիմնադիր Արտաշեսի կռիվն Ալանաց թագավորի հետ և նրա որդու գերի վերցնելը, Ալանաց թագավորի դուստր Սաթենիկի դիմումն իր եղբորն ազատ արձակելու մասին։

«Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,
Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց.
Եկ հաւանեաց աչագեղոյ դստերս Ալանաց
Տալ զպատանիդ.
Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց
Զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն.
Կամ ծառայեցուցանելով և ի ստրկաց կարգի պահել.
Եվ թշնամութիւն հավիտենական ի մեջ երկուցունց ազգաց
Քաջաց հաստատել»։

Թարգմանություն

«Քեզ եմ ասում, քաջ տղամարդ Արտաշես,
Որ հաղթեցիր Ալանների քաջ ազգին,
Եկ լսիր Ալանների քաջ գեղաչյա դստեր խոսքերին
Եվ տուր պատանուն։
Որովհետև օրենք չէ, որ քենի համար դյուցազունները
Ուրիշի դյուցազուն զարմերի կենդանությունը ջնջեն
Կամ իբրև ծառա ստրուկների կարգը դասեն,
Եվ երկու քաջ ազգերի մեջ
Մշտական թշնամություն հաստատեն»։

Այնուհետև վեպը տալիս է, թե ինչպես Արտաշեսը սիրահարվում է Սաթենիկի վրա և նրա հետ ամուսնանալու առաջարկություն անում, իսկ Ալանաց թագավորը «բազում» գանձ է պահանջում և Արտաշեսը փախցնում է Սաթենիկին։

«Եվ ուստի տացե քաջն արտաշես.
Հազարս ի հազարաց և բիւրս բիւրոց
Ընդ քաջ ազգոյ կույս
Օրիորդին Ալանաց»։

Թարգմանություն

«Եվ որտեղից քաջ Արտաշեսը պիտի տա
Հազար հազարներ ու բյուր-բյուրեր
Քաջերի սերունդ այս կույսի,
Ալանների օրիորդի համար»։

Ապա շարունակում է.

«Հեծաւ արի արքան Արտաշէս ի սեաւն գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկեօղն շիկափոկ պարանն,
Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն,
Եւ ձգեալ զոսկեօղն շիկափոկ պարանն,
Ընկեց ի մէջք Օրիորդին Ալանաց
Եւ շատ ցավեցուց զմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն իւր։

Թարգմանություն

«Հեծավ արի Արտաշես արքան գեղեցիկ սև ձին,
Եվ հանելով ոսկեօղ շիկափոկ պարանը,
Եվ անցնելով գետն իբրև սրաթև արծիվ,

և նետելով ոսկեօղ շիկափոկ պարանն
Զգեց մեջքը Ալանաց օրիորդի,
Արագ իր բանակը հասցնելով»։

Այս ձևարագրում է հարսանիքը

«Տեղ ոսկի տեղայր	«Ոսկի էր տեղում
Ի փեսայութեան Արտաշէսի,	Արտաշեսի փեսայության ժամանակ,
Տեղայր Մարգարիտ	Մարգարիտ էր տեղում
Ի հարսնութեան Սաթինկան»։	Սաթենիկի հարսնության ժամանակ»։

Բայց դժբախտ է լինում Արտաշեսը, որովհետև Սաթենիկը սիրահարվում է Մուրացան իշխան Արգամի հետ։ Դարեր շարունակ պահպանվել է Արտաշիսյան ցիկլի այս վեպը, որից մի կտոր էլ հաղորդում է 11-րդ դարի մատենագիր Գրիգոր Մագիստրոսը։ Արտաշեսը մահվան անկողնում վերհիշում է իր որսորդական հանդեսները.
«Ո տայր ինձ զծուխ ծխանի,
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղանց և. զվազելն եղջերուացն.
Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք,
Որպես օրէն է թագաւորաց»։

Թարգմանություն

«Ով կտա ինձ ծխանի ծուխը,
Եվ Նավասարդի առավոտը
Եղների վազելը, եղջյուրների վազելը,
Մենք փող ենք փչում և թմբուկ ենք զարկում
Ինչպես թագավորների սովորությունն է»։

Մահացած թագավորի թաղման ժամանակ շատերը զոհում են իրենց և մեծամեծ հարստություններ թաղում նրա հետ, այն ժամանակ թագավորի որդին ու նրա հաջորդը՝ Արտավազդը բացականչելով բողոքում է.
«Մինչ դու գնացեր.
Եւ երկիրս զամենայն ընդ քեզ տարար
Ես աւերակացս որպէս թագաւորեմ»։

Թարգմանություն

«Մինչ դու գնացիր, ամբողջն երկիրը քեզ հետ տարար
Ես այս ավերակների վրա ինչպես թագավորեմ»։

Վիրավորված հայրը զայրացում անիծում է որդուն.
«Եթե դու յորս հեծցիս յազատն ի վեր ի Մասիս,
զքեզ կալցին քաջք, տարցին յազատ ի վեր ի Մասիս,
անդ կայցես, զլոյս մի տեսցես»։

Թարգմանություն

Եթե դու հեծնես որսի գնաս, ազատ ի վեր դեպի Մասիս, քաջքերը քեզ բռնեն, տանեն ազատն ի վեր դեպի Մասիս, այնտեղ մնաս և այլևս լույս չտեսնես»։

Վեպը վերջանում է նրանով, որ հոր անեծքը կատարվում է. Արտավազդը որսի գնալիս բանտարկվում է քաջքերի կողմից Մասիս սարի անդունդում։

Չորրորդ դարում—Արշակունյաց շրջանում «պարսից պատերազմների» մասին ստեղծված վեպից հատվածներ է պահպանել Փավստոս Բյուզանդը։ Կարևոր են նաև «Մամիկոնյան տան» և «Տարոնի պատերազմի» վեպերից պահպանված հատվածները։

Երգը, երաժշտությունն ու պարերը

Դյուցազնավեպից և գիցաբանական երգերից զատ, առանձին պատմական դրվագների մասին ստեղծագործել են տաղեր, որոնք դարեր շարունակ երգել են Գողթան գավառի գուսանները։ Այդ մասին վկայություններ ունեն մի շարք հայ պատմիչներ՝ Բյուզանդը, Եղիշեն և Մովսես Խորենացին իրենց աշխատություններում։ Ժողովրդական գյուղերում տեղի ունեցած զվարճությունների և խնճույքների ուխտագնացության վայրերում տեղի ունեցած ուրախությունների, տոների և հարսանիքների ժամանակ ընկերակցել են հեթանոսական շրջանի երգն ու երաժշտությունը և պարարվեստը։ Այդ մասին է վկայում Եղիշեն, երբ մռայլ գույներով ներկայացնելով Վասակ Սյունեցու դիմանկարը՝ հայտնում է, թե նա սովորություն է ունեցել երգ ու նվագի, պարերի, զվարճությունների և արբեցությունների մեջ անցկացնել իր ժամանակը։ Մանավանդ նրան շատ սիրելի են եղել հեթանոսական երգերն ու երաժշտությունը։ Գուսաններն ու Գողթան երգիչներն ունեցել են իրենց նը-

վակելու գործիքները, հունական քնարը, հայկական տավիղն ու բամբիռը և սրինգը։

Երգ ու նվագին ընկերակցել են թատերական ներկայացումները, որոնք տեղի են ունեցել հրապարակներում, արքունական պալատներում ու դղյակներում։ Դեռևս Արտաշիսյան թագավորության շրջանից պատմական վկայություններ ունենք թատերական ներկայացումների մասին։ Տիգրան 2-րդի և նրա որդի Արտավազդ 2-րդի ժամանակ Տիգրանակերտ և Արտաշատ մայրաքաղաքներում գոյություն են ունեցել թատրոններ, որոնք սկզբում թեև խիստ կերպով գտնվել են հունականի ազդեցության տակ, բայց հետո աստիճանաբար ազգայնացել են։ Պատմությունից հայտնի է, որ Տիգրան 2-րդի հաջորդ Արտավազդ 2-րդի ժամանակ, երբ Պարսից արքա Օրոնտը Արտավազդի հետ Արտաշատում դիտում էին հույն թատերգակ Եվրիպիդեսի ողբերգություններից մեկը, նրանց բերում են հռոմայեցի զորավար Կրասոսի կտրած գլուխը։ Դերասան Յասոնը Կրասոսի գլուխը վերցնելով արտասանում է ողբերգության հարմար կտորներից մեկը

«Լեռներից տուն ենք բերում եղջյուրներն այծյամի,
Որ նոր ենք սպանել մեր բախտավոր որսորդությամբ»։

Երկար ժամանակ ինչպես ֆեոդալական շրջաններում, նույնպես և ժողովրդի մեջ լայն տարածում են ունեցել երգերն ու հանդեսները, խաղերն ու ներկայացումները, որոնց դեմ քրիստոնեական եկեղեցին 4-րդ—5-րդ դարերում ուժեղ պայքար է մղել։

5-րդ դարի կաթողիկոս Հովհան Մանդակունուն վերագրված «Թատրոնների, գուսանների լկտի խաղերի մասին» վերնագիրը կրող ճառն ուղղված է ժողովրդական լայն խավերում տարածված երգերի և ներկայացումների դեմ։ Եկեղեցական հոգևոր պետը ողբում է, որ «... Սատանայական թատրոնները ցնծում են խայտալով», որ «գինին և գուսանը գերել են մարդկանց, որոնք հղփացած պարկեշտությամբ աներկյուղ դեպի թատրոններն են շտապում ներկա լինելու անօրեն խաղերին ու սատանայական հանդեսին»։ Այդ ներկայացումներն ու խաղերն անվանում են մահաբեր որոգայթ. բազմատեսակ չարքերի հավաքույթ, ամեն տեսակ ախտերի արվեստանոց»։ Ապա հիշվում են նրանցից այն ամեն կարգի մոլությունները, որոնք բխում են այդ բոլորից «Պետք է քարակոյտերով քարկոծել նրանց, երկրից հալածել և հանել այդ վավաշոտներին գրոտնքի վայրից ...»։ Եկեղեցա-

կան պետերն այդ դաժան հալածանքը կազմակերպել են, որովհետև «մարդիկ ավելի հաճույքով են գնում սատանայի բնակավայրը (հանդեսները), քան եկեղեցի»,—շարունակում է ճառը։

Քրիստոնեական եկեղեցին անդուլ պայքար է մղել լռեցնելու գողթանցի գուսանների բամբիռը, սերը երգող քնարը, որոնք դարերի ընթացքում հնչեցրել են հեթանոսական շրջանի երգերը և պաշտոնական ու ժողովրդական թատրոնները—ներկայացումները։

Ճարտարապետություն ու քանդակագործություն

Հեթանոս հայերի կուլտուրայի և արվեստների պատմության մեջ, կարևոր տեղ են գրավում ճարտարապետությունն ու քանդակագործությունը, որոնց մասին 4-րդ դարից առաջ մեզ շատ քիչ տեղեկություններ ու մնացորդներ են հասել։ Ճարտարապետության պատմությունը գրեթե սկսվում է մարդկային հասարակության պատմությանը զուգընթաց, որովհետև հնագույն շրջանի մարդը ապրուստի միջոցներ հայթայթելուն զուգընթաց մտածել է նաև բնակարաններ կառուցելու մասին։ Եվ ահա պատմական Հայաստանի տերիտորիան ծածկված է նախահայկական շրջանների կոթողներով, բերդերով, բերդշեններով, ամրոցներով, դղյակներով և այլ տիպի հուշարձաններով։

Հեթանոս հայերի ճարտարապետությունը, որն ընդգրկում է մոտ հազար տարվա մի ժամանակաշրջան, սկսած մեր էրայից առաջ 6-րդ դարից մինչև մեր էրայի 4-րդ դարը, թեև աղբյուրների ասելով շինվել են բազմաթիվ հուշարձաններ, բայց նրանց մնացորդները շատ քիչ են հասել մեզ։ Պատերազմների ընթացքում քանդվել և ավերվել են Արշակունիների թագավորության շրջանին վերաբերող ֆեոդալական ամրությունները, որոնց մասին թանկարժեք տեղեկություններ է պահպանել մեծ պատմիչ Մովսես Խորենացին։ Պատմական վկայություններ ունենք Արտաշատի, Տիգրանակերտի, Վաղարշապատի և Դվինի գեղեցիկ շինությունների մասին։ Այդ քաղաքներում կառուցվել են արքայական պալատներ, ֆեոդալական դղյակներ, բուրգերով պաշտպանված պարիսպներ, որոնց շուրջը եղած ջրի խրամների վրա ձգվել են կամուրջներ։ Հայտնի են Տիգրանակերտ քաղաքի արքայական պալատը, պարիսպները, որոնց ավերակների հետքերը հասել են մեզ։ Ուշագրավ են Արշարունյաց գավառում կառուցվ-

ված Արտադերս ամրոցի հոյակապ ամրությունները։ Հեթանոս հայերի ճարտարապետական հուշարձանների մնացորդները որոշ չափով պահպանվել են հին Երվանդաշատ և Երվանդակերտ քաղաքների ավերակներում, որոնք մեծարժեք կոթողների մնացորդներ են հանդիսանում։

Բացի քաղաքացիական շինարարություններից ճարտարապետության արվեստի պատմության մեջ կարևոր տեղ են գրավում նաև հայկական պանթեոնի աստվածների և աստվածուհիների համար կառուցված մեհյանները ու տաճարները։ Ուշագրավ են Դարանաղի գավառի Անի ամրոցի Անահիտի և Աշտիշատի՝ Աստղիկի ու Վահագնի տաճարներն իրենց հոյակապ կառուցվածքներով։

Այս շրջանի խոշորագույն ճարտարապետական և քանդակագործական կոթողն է Գառնիի «Հեթանոսական տաճարը» կամ, ինչպես ժողովուրդն է կոչել, «Տրդատա հովանոց»ը, որի ավերակները մինչև այժմ էլ հիացմունք և զարմանք են պատճառում այցելուներին։ Այս հուշարձանը կառուցել է տվել հայոց Տրդատ 1-ին թագավորը Հռոմից վերադառնալուց հետո, իր հետ բերած վարպետ-ճարտարապետների միջոցով։ Նա շինված է բարձր պատվանդանի վրա, մինչև 1200 կգր. քաշ ունեցող բազալտյա քարերից, յուրաքանչյուր կողմից 6-ական սյուներով իրենց համապատասխան հոյակապ քանդակված խոյակներով։ Կարծիքներ կան, որ այդ շենքը շինվել է Տրդատ 2-դի կամ թե Տրդատ 3-րդի կողմից, բայց ավելի հավանականը Տրդատ 1-ինին վերագրող տեսակետն է։

Հայկական միջավայրում համեմատական ճարտարապետության այդ հոյակապ կոթողը շատ քիչ ազդեցություն կամ ոչ մի ազդեցություն չի ունեցել բովանդակ Հայաստանի ավանդական ճարտարապետության վրա, բացի մի քանի աննշան դետալներից։ «Հայ արվեստի ծագման գլխավոր վառարանը փոխանակ Արևմուտքի, ավելի ուղիղ կլիներ որոնել Արևելքի մեջ, անոր ամենախորն արմատներն անվիճելի կերպով կապվում են Ասորա-քաղդեայի հետ և հետո Ասորա-քաղդեայի հին ավանդություններով վերածնված ու ճոխացած Արքեմենյան ու Սասանյան շենքերի հետ» (ճարտ. Թ. Թորամանյան)։ Անշուշտ Տիգրանակերտի կառույցների վրա հունական ճարտարապետական արվեստի ազդեցությունը մեծ է եղել։

Հեթանոս հայերն ունեցել են իրենց զարգացած արվեստը,

որը կապված է ճարտարապետական հուշարձանների կառուցման ու աստվածների և աստվածուհիների արձանների պատրաստման հետ, որոնք մուծվել են դեռևս Սելևկյան և Արտաշիսյան շրջաններից։ «Ոսկեծին» Անահիտի ոսկե արձանը հռոմայեցի Անտոնիոս զորավարի զինվորները փշրել և ոսկին են ձուլել։ Տիգրանակերտի և Գառնիի հուշարձանի հոյակապ քանդակները մի կողմից հավերժացնում են հեթանոս հայերի քանդակագործական արվեստը, իսկ մյուս կողմից ցույց են տալիս նկարչության արվեստի առկայությունն ու զարգացումը։

Հեթանոսական շրջանի ճարտարապետական և քանդակագործական կոթողները ենթարկվել են քրիստոնեական եկեղեցու ավերումներին։ Հեթանոսական տաճարներից մի քանիսը վեր են ածվել քրիստոնեական եկեղեցիների։ Օրինակ՝ Տեկորի տաճարը, Երերույքի և Դիրաքլարի եկեղեցիները, ինչպես այդ ցույց է տըվել հայկական ճարտարապետության պատմության խոշոր ուսումնասիրողը՝ ճարտարապետ Թորոս Թորամանյանը։ Վերջապես 5-րդ դարից կանգուն վիճակով մեզ հասած հոյակապ կոթողների առկայությունը, զգալի չափով հեթանոսական շրջանի ճարտարապետության արդյունքն է անշուշտ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա) Արշակունյաց դինաստիայի հիմնումը և Տրդատ 1-ինը էջ 3

Հայաստանի քաղաքական դրությունը 1—50 թ. թ.: Տրդատը Հայաստանում: Կորբուլոնի Արշավանքը: Տրդատի վերադարձը Հայաստան և Պետոսի արշավանքները: Հռանդիայի դաշնադրությունը: Տրդատի մեկնումը Հռոմ և վերադարձը: Տրդատ Ա.:

Բ) Հայաստանը II—III դարերում. 33

Տրդատ Առաջինի հաջորդները և Տրայանոս կայսրի արշավանքները: Հայաստանի քաղաքական դրությունը 2-րդ դարի կեսին: Կարակալայի արշավանքները: Սասանյան դինաստիայի առաջացումը Պարսկաստանում: Հայ Արշակունիները և Սասանյանները:

Գ) Քրիստոնեության տարածվելը Հայաստանում. . . 54

Հայերի հեթանոսական կրոնը: Քրիստոնեության ծագումն ու զարգացումը: Քրիստոնեության տարածումը Հայաստանում:

Դ) Հայաստանի սոցիալ-տնտեսական և դասակարգային հարաբերությունները Արշակունիների ժամանակ . 70

Ֆեոդալիզմի հաստատումը: Նախարարների ծագումը: Նախարարական կալվածները: Եկեղեցական կալվածները, արքունի կալվածները: Ֆեոդալական վասալական հիերարխիան: Ազատների դասը: Քաղաքներ և քաղաքային բնակչությունը:

Ե) Հայաստանը 44-րդ դարում. 90

Թագավորի և նախարարների մրցության սկզբնավորումը: Տիրանը և կենտրոնական իշխանության ուժեղացման փորձերը: Արշակ 2-րդը և նրա վարած ներքին քաղաքականությունը: Արշակ 2-րդի արտաքին քաղաքականությունը: Հայկական—պարսկական պատերազմները: Պապը և հայ—պարսկական կռիվների վերջը: Պապի վարած քաղաքականությունը:

Զ) Արշակունյաց թագավորության անկումը . . 133

Հայաստանի առաջին բաժանումը: Խոսրով 3-րդը և Վռամշապուհը: Արշակունյաց պետության անկումը:

Է) Կուլտուրան. 144

Հեթանոս հայերի կուլտուրայի բնութագրումը: Ժողովրդական վեպ: Երգը, երաժշտությունն ու թատրոնը: Ճարտարապետությունը և քանդակագործությունը:

Ը) Բովանդակություն 154

Պատ. խմբ. Մ. ՀԱՄՐԱԹՅԱՆ

АРМЕНИЯ В ЭПОХУ
АРШАКИДОВ
(На армянском языке)

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.

ՎՖ 02667, պատ. № 157, տիրաժ 600, 9 3/4 տպ. մամուլ

ՀՍՍՌ Հեռակա Մանկավարժական Ինստիտուտի տպար., Երևան, Տերյան 127